ՂՈՒԿԱՍԵԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

Գ.

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

ԱՐԱՐԵԱԼ

ԿԻՐԱԿՈՍԻ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԳԱՆՁԱԿԵՑԻՈՅ

ԹԻՖԼԻՍ

ԷԼԵԿՏՐԱՇԱՐԺ ՏՊԱՐԱՆ ՕՐ. Ն. ԱՂԱՆԵԱՆԻ ՊՈԼԻՑ 7.

1910

Գ(47.925)
4-53

ՂՈՒԿԱՍԵԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

Գ.

19

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

ԱՐԱՐԵԱԼ

ԿԻՐԱԿՈՍԻ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԳԱՆՁԱԿԵՑՒՈՅ

1221

Թ Ի Ֆ Լ Ի Ս
ԷԼԵՔՏՐԱՇԱՐԺ ՏՊԱՐԱՆ ՕՐ. Ն. ԱՂԱՆԵԱՆՑԻ ՊՕԼԻՑ 7
1909

Ի ՅԱՒԵՐԺԱԿԱՆ ՅԻՇԱՏԱԿ

ԱՒԵՏԻՔԱՅ ԲԱԼԱՅԵԱՆ

ՂՈՒԿԱՍԵԱՆՑ

Ձօնեցաւ

Կիրակոս Գանձակեցու այս տպագրությունն արտատպված է Օսկան Տէր-Յովհաննիսեանց Երեւանցու 1858 թուին Մոսկուայում հրատարակած օրինակից։

ԶԵԿՈՒՑՈՒՄՆ

ԱՌԱՋԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՉԻ

Կիրակոս վարդապետ Գանձակեցին, որ տասներեքերորդ դարում ծաղկած մեր ազգային պատմագիրներից մեկն է, Վանական մականուանած Յովհաննէս վարդապետ Տաւուշեցու աշակերտն էր և Մեծ Վարդան վարդապետ Բարձրբերդացու աշակերտակից։ Սրանն է այս պատմագիրքը, որի մէջ առաջադրում է մեր ազգի պատմութիւնը՝ սկսած սուրբ Գրիգոր Լուսաւորչից և Տրդատ թագաւորից մինչև իւր օրերը, այն է՝ մինչև Հեթում Ա. թագաւորը, կամ մինչև Փրկչի 1260 թուականը։ Թէպէտ աշխատութեանս սկզբում համառօտ կերպով է անցնում առաջին անցքերի պատմութիւնը, սակայն իւր ժամանակի պատմութիւնը, իբրև ականատես, լիովին է նկարագրում, մանաւանդ երբ

խօսում է թաթարների հարուածների մասին։

Կիրակոս Գանձակեցին վախճանուեցաւ Փրկչի 1271 թուին Գետկայ վանքում, ուր սնուել և ուսել էր։

ՅԱՌԱՋԱԲԱՆ

ՀԵՂԻՆԱԿԻՆ

Կիրք որ 'ի բնութեան մարդկան՝ յայս հաստատեալ է խնամօք յարարչէն՝ քննասէր լինել իրաց ինչ անցելոց, և կամ 'ի հանդերձեալն լինելոց։

Իսկ այժմ ոչ է հնարք այլազգ հասու լինել և իմանալ, բայց թէ բազում աշխատութեամբ՝ և յերկար ջանիւ։

Իւծիլ և մաշիլ տաժանմամբ, և յոյժ վաստակօք, զի թերևս գտցէ ինչ պիտանացու, որ կարողն իցէ նուազ զփափաքս բղձից խնդրողին։

Բարունարար երկօք, և ոչ վարկպարագի անցանել ընդ պատմութիւնս ժամանակաց, ներքնոց և արտաքնոց։

Ակնարկելով և ազդեցութեան հոգւոյն, որ կարողն է իմաստնացուցանել զագէտս, և բանաւոր առնել զանբանս։

Կարող և ձեռնհաս զնա հաւատալ առանց երկմտութեան և թերութեան։

Որով և ամենայն ինչ ըստ կամաց նորա յօրինի և կազմի, երևոյթքն և աներևոյթքն։

Սրբապէս մօք և անշարութեամբ մատուցանել զունկն վերին և ներքին աստուածային բանից և գրոց և պատմութեանց. որք կարող են հասուցանել զխնդրողն խնդրելոյն։

Քանզի և այս օրէնք են աստուածայինք, ցուցանել հարանց՝ որդւոց, զի ծանիցի յազգ այլ. որպէս մարգարէն Դաւիթ հրամայէ. զի յայս խրատէր մեծն 'ի մարգարէս Մովսէս զորդիսն Իսրայէլի և ասէր. Խօսեսջիք 'ի սոսա 'ի տան և 'ի գիշերի՝ 'ի նստել 'ի տան, 'ի գնալ 'ի ճանապարհ, 'ի ննջել և 'ի յառնել։ Եւ այսոցիկ որք յօժանդակ են և ձեռն տան, յոլովք են յաստուածայնոց արանց, որք կենդանի արձան թողին զգիրսն յետ իւրեանց յամենայն ազգաց։ Որպէս մեծն Եւսեբիոս գերկուս գիրսն եթող, զքրոնիկոնն, սկսեալ 'ի նախնոյն Ադամայ, զխժակսն անուանս նահապետացն՝ զոր գրեցին արտաքինքն, համեմատելով ընդ աստուածային արանց պատմութիւնս. և բերեալ հասուցանէ մինչ 'ի գալուստն Քրիստոսի և այսր, զյոլովից ազգաց նահապետս և զթագաւորս, և զեկեղեցւոյ պատմութիւնն, սկսեալ 'ի ծագմանէ արեգականն արդարութեանն՝ զժամանակս թագաւորաց, և զառաքելոցն սրբոց քարոզութիւնս, և թէ ո՛ 'ի սոցանէ զինչ գործեաց, և յոր կողմ չոգաւ իւրաքանչիւր ոք, և կամ թէ ո՛րպէս վկայեցին. և զեպիսկոպոսաց սրբոց, և զերևելի արանց զգործ

և զքաջութիւն. և բերեալ հասուցանէ մինչև յաւուրս Կոստանդիանոսի բարեպաշտի, և անդ դադարի։ Եւ ապա մեծիմաստն Սոկրատէս կորովակի բանիւք, սկսեալ 'ի սրբոյն Սեղբեստրոսէ Հռոմայ հայրապետէն, և 'ի Կոստանդիանոսէ մեծէ, և ածէ մինչև յաւուրս Թէոդոսի փոքու, զարարս և զգործս իւրաքանչիւր թագաւորաց և եպիսկոպոսաց, և զառաքինեաց և զվատթարաց, զժողովելոց բազմաց եղելոց՝ պիտանեաց և խոտանաց ընդարձակ և յաճախ պատմութեամբ աւարտէ։

Իսկ Հայոց ազգի պատմագիրք յոլովք ցուցին աշխատութիւն։ Որպէս սքանչելի և կորովամիտն Ագաթանգեղոս, որ թարգմանի բարի հրեշտակ, որ եցոյց հրամանաւ մեծազօր և քաջ արքային Տրդատայ զհանդամանս իրաց եղելոց առ Հայս 'ի ձեռն սրբոյն Գրիգորի Պարթևի և խոստովանողի Քրիստոսի, զգործս նշանաց և արուեստից և սքանչելագործութեանց, և զպատճառս լուսաւորութեան Հայոց աշխարհիս, գեղեցիկ և պայծառ պատմութեամբ աւարտէ։ Եւ զկնի նորա ամենահարուստն գիտութեամբ, և մեծն իմաստութեամբ քան զյոլովս սուրբ այրն Աստուծոյ Մովսէս Խորենացի, որ զՀայոց պատմութիւնն շարագրեաց բազմահանճար և յոգնազբուսաւ բանիւք. համառօտ պատմութեամբ և ընդարձակ մօք 'ի նախնի մարդոյն սկսեալ՝ զյոլովից ազանց իրս և զգործս և զարարս, բերեալ

մինչև յաւուրս Տրդատայ և սրբոյն Գրիգորի, և անտի մինչև ցկատարումն սրբոյն Սահակայ Հայոց հայրապետի, և զորս անցեալ 'ի վերայ աշխարհիս Հայոց, անդանօր դադարեցուցանէ։ Եւ յետ նորա սուրբն Եղիշէ, որ պատմէ զքաջութիւն Վարդանայ, թոռին սրբոյն Սահակայ, և զընկերաց նորա, որք յաւուրս Քրիստոսի զանձինս 'ի մահ եդին և պսակեցան 'ի Քրիստոսէ, և զարիական մահ սրբոց Յովսեփեանցն, և զկամաւ տալն զանձինս 'ի կապանս արքունի նախարարացն Հայոց վասն յուսոյն որ 'ի Քրիստոս, և զհամբերող նահատակութիւն սրբոցն Խորենայ և Աբրահամու, զոր սուգութեամբ ցուցանէ այրն սքանչելի։ Եւ ապա Ղազար Փարպեցի ճարտասան, սկսեալ յաւուրցն սրբոյն Սահակայ, և զնոյն ոճ պատմէ։ Եւ զկնի նորա Փաւստոս Բիւզանդ, որ գեղեալ իւս պատմէ Հայոց աշխարհիս ընդ Պարսիկս, և 'ի նոցանէ ընդ մեզ։ Եւ Հերակլ 'ի Սեբիոսէ եպիսկոպոսէ ասացեալ։ Եւ պատմութիւն սքանչելի առն Կորեան։ Եւ Խոսրով։ Եւ Ղևոնդ երիցու պատմութիւն, որ զի՞նչ գործեցին Մահմետ և աթոռակալք նորա ընդ աշխարհս ամենայն, և առաւել ևս ընդ ազգս Հայոց։ Եւ Թովմայ վարդապետի, պատմագիր տանն Արծրունեաց։ Եւ Շապուհ Բագրատունի։ Եւ տէր Յովհաննէս կաթողիկոս Հայոց։ Եւ Մովսէս Կաղանկատուացի, պատմագիր Աղուանից։ Եւ Ուխտանէս եպիսկոպոս Ուռհայի, որ գրեաց

զբաժանումն Վրաց 'ի Հայոց 'ի ձեռն Կիւրոնի։ Եւ Ստեփանոս վարդապետն մականուն Ասողիկ։ Եւ Արիստակէս վարդապետ, կոչեցեալն Լաստիվերտցի։ Եւ Մատթէոս՝ վանաց երէց, Ուռհայեցի։ Եւ Սամուէլ քահանայն կաթուղիկէին Անւոյ։ Եւ ապա մեծիմաստ և հանճարեղ վարդապետն անուանեալն Վանական. որոց փոյթ եղև սոցա իւրաքանչիւր սրբոցս գրով թողուլ զյիշատակ բարի, զկնի եկելոցս, յօգուտ լսողացն և 'ի փառաւորութիւն նոցուն սրբոցն անջինջ լինել յիշատակ մինչ յօրն Քրիստոսի։

Իսկ մերս ձեռնարկութիւն մի ումեք յանդգնութիւն համարեսցի, այլ առաւել բարեաց նախանձու գործ. զի հարկանեն զմեզ միտք մեր, ոչ տալ լռութեան զայսպիսի աղէտ տարակուսանաց, զոր լուաք ականջօք մերովք, և տեսաք աչօք. զի 'ի գլուխ ելին ամենայն սրբոց մարգարէութիւնք՝ որք յառաջագոյն գուշակեցին վասն նեղութեանցս, որ հանդերձեալ էր լինել. և առ մեզ գործովք կատարեցաւ. զոր և ասաց փրկիչն մեր և Աստուած տէր Յիսուս Քրիստոս, թէ «յարիցէ ազգ յազգի վերայ, և թագաւորութիւն 'ի թագաւորութեան». և այն, ասէ՝ սկիզբն է երկանց յայտնութեան որդւոյն կորստեան, որ երկնչիմք՝ մի՞ գուցէ երևեսցի նա 'ի մերում աւուրս. զի գործք ամենայն որ գործին այժմ, զնոյնն նշանակեն։ Սէր՝ ցամաքեալ, և ան-

զթութիւն տիրեալ. աստուածպաշտութիւն նուազեալ, և անհաւատութիւն բարձրացեալ. սեղանք և պատարագք լռեալ, և քահանայք անողորմ 'ի սուր անկեալ. կանայք և մանկունք գերեալք, և արք դառնամանք լեալք. զի զոր զուշակեաց այրն Աստուծոյ սուրբն Ներսէս վասն ազգին Նետողաց և աւերման աշխարհիս Հայոց, այժմ կատարեցաւ յազգէ՝ որ Թաթարն կոչի. զի զբազում ազգս և զազինս ջնջեաց սա, զոր յիւրում տեղւոջն պատմեցուք՝ եթէ տէր կամեսցի։ Բայց իւրաքանչիւր ոք յառաջին աշխատասիրացն եդին տեղի ինչ բուռն հարկանելոյ, կամ թագաւոր երևելի և կամ նահապետութիւնք ազգաց յայտնի։ Իսկ մեր յայսմ յամենայնէ թափուր եղեալ. զի թագաւորութիւնն վաղ ուրեմն բարձեալ, Արշակունին և Բագրատունին, և իշխանքն ոչ ուրեք երևեալ Հայկազնի, բայց թէ ուրեք ուրեք զօղեալք և թաքուցեալք յօտար աշխարհի, բայց միայն յոյս մի եղեալ առաջի՝ զաւուրս շնորհ և զխորհրդոյս զօրութիւն, զի յայսմ աւուր յորում ձեռնարկեցաք 'ի սմա, տօն է զալստեան ամենասուրբ Հոգւոյն 'ի վերնատանն 'ի դասս առաքելոցն՝ հրեղէն լեզուօք հրաշազարդեալ զնոսա ընդ տիեզերս կոչել զամենեսեան ուղղափառ աւետարանին 'ի կեանս անմահականս։ Եւ մեք 'ի նոյն Հոգի վստահ եղեալ, արկաք զանձինս յաշխատութիւն, որ 'ի վեր է

քան զկար մեր։ Վասն որոյ աղաչեմք զկնի եկեալսդ ոչ պարսաւել զաշխատութիւնս մեր, որպէս անուսմունք. և խնչել քթօք, և յօնօք պատել. այլ զիջանել եղբայրաբար, և ձեզ թողուլ յիշատակ ապագայից. զի Քրիստոսի աշակերտացն ամենայն ինչ հաւանութեամբ է, որպէս ուսանիմք 'ի գրոց։ Այլ մեք բուռն հարցուք զիրէս՝ զոր սկսաք, և ցուցցուք նախ զանուանս աթոռակալացն սրբոյն Գրիգորի. 'ի նմանէ սկսեալ մինչև առ մեզ՝ սուղ ինչ համառօտիւք. զի լիցի սա մեզ արձան զերեզմանի, ոչ ըստ նմանութեան Աբիսողոմեան քարին, այլ կենդանի, զի յիշեսցի 'ի սմա անուն Կիրակոսի։

ՀԱՄԱՌՕՏ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԵՒ ՑՈՅՑՔ ԱՆՈՒԱՆՑ

ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ

ԵՒ ՈՐՔ ՅԵՏ ՆՈՐԱ ՅԱՋՈՐԴԵՑԻՆ ԶԱԹՈՌ ՆՈՐԱ

Ամենայն գովեստից արժանի, և յիշատակաւ բարեաւ հռչակեալ հայրն մեր հոգևոր. և ըստ աւետարանին ծնող սուրբն Գրիգորիոս՝ յետ լուսաւորելոյ նորա զՀայաստան աշխարհս աստուածգիտութեամբ և ամենայն ուղղափառ կարգօք և օրէնսդրութեամբ, և ձեռնադրելոյ եպիսկոպոս աւելի քան զչորս հարիւր և երեսուն, գնալ եղև նմա և մեծի արքային Տրդատայ 'ի Հռոմ 'ի տեսութիւն նշխարաց սրբոց առաքելոցն Պետրոսի և Պօղոսի, և մեծ թագաւորին Կոստանդիանոսի, և սրբոյ հայրապետին Սեղբեստրոսի, գնել ուխտ և դաշինս 'ի մէջ իւրեանց: Եւ ընկալեալ մեծաւ պատուով սուրբն Կոստանդիանոս և մեծ հայրապետն աշխարհամուտ զրան, մեծարանս արա-

բեալ սրբոյն Գրիգորի, որպէս խոստովանողի և առաքելաշնորհ վկայի Քրիստոսի, տայ նմա պատիւ հայրապետութեան, որպէս աթոռակալին Պետրոսի. տայ նմա և մասն ինչ 'ի նշխարաց առաքելոցն, և զաջն ձեռն Անդրէի առաքելոյ, և այլ ընծայս բազում. և յԵրուսաղէմ զԳողգոթայ՝ զտեղի խաչելութեանն Քրիստոսի և զսուրբ Յակովբն, և տեղի մի պատարագի 'ի մէջ սուրբ յարութեանն։ Ասեն կախեաց կանթեղ մի սուրբն Գրիգոր՝ 'ի վերայ գերեզմանին Քրիստոսի, և խնդրեաց յԱստուծոյ աղօթիւք առանց զգալի լուսոյ լուցանել 'ի սուրբ պասեքի տօնին, որ լինի մինչև ցայսօր նշանն։ Նոյնպէս և զմեծն Տրդատ մեծարեաց, որպէս վայել էր նորա քաջութեան՝ արեամբն Քրիստոսի, և հաւատովն որ 'ի նա, դաշինս կռեալ, անքակ ունել զսէրն 'ի մէջ երկուց ազգացս յետ նոցա։

Եհարց Կոստանդիանոս զսուրբն Գրիգոր. ո՞րքան ուրախութիւն է առաջի հրեշտակաց 'ի գիւտ այսքան մոլորեալ ոչխարաց։ Պատասխանի ետ՝ բազում յոյժ, բայց մի՛ ոչխար համարին աղամայինքս առ վերնոց բազմութիւն։ Եւ կայսրն ասէ. և փրկեալքս մի՞ վերջասցուք հանդիսանալ ընդ նոսա եկաւորիդ ձեր։ Եւ հրամայեաց ամենայն քաղաքին խրախանալ զենմամբ խաշանց։ Եւ Հրեայքն և Հեթանոսքն որք մնացեալ էին յանհաւատութեան, լուանային յօրհնութեան աղին.

զի սուրբն Գրիգոր և Սեղբեստրոս աղ օրհնեցին։ Եւ ասէ սուրբն Գրիգոր ցՀրեայսն՝ դուք զթլփատութիւնն անթլփատութիւն արարիք հակառակ օրինացն. և ասէ՝ անասունք որ մատչին պատարագ Աստուծոյ, կամ նուէր սրբոց, կամ յիշատակ ննջեցելոց, առանց օրհնութեան աղի, իբր զոհ հեթանոսաց է։

Եւ ապա եկեալ յաշխարհս մեր՝ մեծաւ ցնծութեամբ և հոգևոր ուրախութեամբ, մեծապէս զարդարէին զաշխարհս մեր ամենայն քրիստոնէական կարգօք։ Եւ 'ի կենդանութեան իւրում ձեռնադրեաց զորդին իւր զսուրբն Արիստակէս՝ եպիսկոպոսապետ Հայոց, և Վրաց, և Աղուանից. և ինքն բուռն հարեալ զմիայնակեաց կարգաց. զի ամենայնիւ պսակեսցի առաքելականաւն և մարտիրոսականաւն և հայրապետականաւն և միայնաւորութեամբն, որ առաւել ընտանեցուցանէ զմարդն Աստուծոյ անզբաղապէս ընդ նմա խօսելով։ Եւ յորժամ եկն Արոստակէս 'ի ժողովոյն Նիկիոյ, այնուհետև սուրբն Գրիգոր այլ ոչ ումեք երևեցաւ. կեցեալ ժամանակս յոլովս՝ հանգեաւ 'ի Քրիստոս, կալեալ զհայրապետութիւնն ամս երեսուն։ Եւ գտեալ զնա հովուաց վախճանեալ, կարկառ քարի կուտեցին ի վերայ նորա։

Եւ յետոյ ազդեցութեամբն Աստուծոյ եգիտ զնա Գառնիկ ոմն ճգնաւոր սուրբ, և տարեալ հանգուցին 'ի գեօղն Թորդան։ Եւ յաւուրս Զե-

նոնի կայսեր տարան 'ի նշխարաց նորա և 'ի սրբոց Հռիփսիմեանցն 'ի Կոստանդնուպօլիս. և տարեալ տապան արծաթի՝ եդին 'ի նմա զնշխարս սրբոյն, գրելով գիւրաքանչիւր անուանս 'ի վերայ. եդին 'ի մարմարեայ տապանի, և կնքեցին մատանեաւ: Եկաց ժամանակս յոլովս անյայտ ոչ գիտելով ո՛յր ուրուք է, բայց զայս միայն՝ թէ սրբոց է: Իսկ յաւուրս Վասլի կայսեր, և Աշոտոյ Բագրատունւոյ Հայոց թագաւորի, յայտնի եղև այսպէս. Պատանի մի ըմբռնեալ յոգւոյ չարէ, մինչդեռ յաղօթս էր 'ի նմին եկեղեցւոջ՝ ուր կային նշխարք սրբոցն, վերացուցեալ գիւին զպատանին՝ ընկէց 'ի վերայ տապանի սրբոցն. աղաղակէր և ասէր. Սուրբդ Գրիգորիոս՝ լուսաւորիչ Հայոց, մի՛ տանջեր զիս, և դու տիկին Հռիփսիմէ եկիր տանջել զիս, և դու Գայիանէ տանջեցես զիս. և զայս աղաղակէր 'ի բազում ժամանակս: Եւ զայս լուեալ բազմութեանն՝ ազգ արարին թագաւորին: Եւ հրամայեաց բանալ զտապանն. և իբրև բացին, լոյս սաստիկ փայլատակէր 'ի նշխարաց սրբոցն: Եւ հրամայեաց կայսրն զմարմարեայ տապանն պատել ոսկւով, և գրել զանուն սրբոցն 'ի վերայ. զի ամենայն ոք գիտասցէ, թէ ո՛յր է տապանն: Զայս ամենայն եկեալ Ներքինի մի կայսեր, պատմեաց թագաւորին Աշոտոյ. և նորա լուեալ՝ եա փառս Աստուծոյ, և կարգեցին զօրն զայն տօն սրբոյն Գրիգորի,

որ 'ի վեցերորդ շաբաթու ազուհացիցն շաբաթ աւուրն կատարի մինչև ցայժմ:

Իսկ սուրբն Արիստակէս բարիոք հովուէր զհօտն, որ հաւատացաւ նմա, և յանդիմանէր անաչառութեամբ՝ զոչ եկեալսն յուղղութիւն: Վասն որոյ Արքեղայոս ոմն, որ էր վերակացու կարգեալ, Չորրորդն կոչեցեալ Հայոց, յանդիմանեալ 'ի նմանէ վասն չար գործոց իւրոց. պատահեալ նմա 'ի Ծոփաց գաւառին, սպան զնա, և ինքն երկուցեալ յարքայէն Տրդատայ, գնաց փախստական 'ի Տարսոն Կիլիկեցւոց, զեօթն ամ կալեալ զեպիսկոպոսութիւն՝ մարտիրոսական մահուամբ փոխեցաւ առ Քրիստոս:

Եւ կացոյց փոխանակ նորա յաթոռ հայրապետութեան Տրդատ արքայ զերէց որդի սրբոյն Գրիգորի զմեծն Վրթանէս՝ զեղբայր սրբոյն Արիստակիսի. և ինքն սիրեաց զվարս միայնակեցութեան, որպէս զսուրբն Գրիգոր. այնուհետև ընդ ժամանակս ժամանակս անյայտ լինէր 'ի զօրաց իւրոց. քառասնօրեայ ժամանակս ձգեալ պահօք և աղօթիւք. և երթեալ զօրացն նորա՝ աղաչէին զնա ունել զթագաւորութիւնն: Իսկ նա ոչ հաւանէր, ասելով տիրանենգս զնոսա, և առ աչս մարդկան ունել զատուածպաշտութիւնն. և նոքա երդմունս արարեալ, և մուրհակս կնքեալ, սրբութեամբ ունել զքրիստոնէութիւնն և միամտութեամբ ծառայել նմա. և նորա հաւանեա

կամաց նոցա, դառնայ յաթոռն իւր, և ամենայն կարգաց առաքինութեան ինքն լինէր օրինակ։ Իսկ նոքա տաղտկացեալք 'ի բարեպաշտութենէ նորա, խորհեցան նենգութեամբ սպանանել զնա. և տարեալ զնա յորս՝ զբօսանաց աղագաւ, և հարեալ նետիւ՝ խոցեն զնա՝ իբր անգիտութեամբ. և տեսեալ թէ ոչ մեռանի յայնժամն, տան նմա դեղ մահու։ Եւ այսպէս լուծին զնա 'ի կենցաղոյս, զայն որ թշնամիք իւր ոչ կարացին սանձանել նմա, որ հսկայաբար քաջութեամբ յաղթէր ամենայն պատերազմաց, որ անհնարինն էր համարել ուժով, որ համբաւ քաջութեան նորա ելեալ էր ընդ ամենայն տիեզերս, զնա եւս սպանին նենգութեամբ, և յանձանց իւրեանց շիջուցին զբազմալոյս ջահն։ Այսպէս հանգեաւ բարեպաշտ և աստուածասէրն Տրդատիոս, կալեալ զթագաւորութիւն զամս յիսուն և վեց։

Իսկ մեծն Վրթանէս, երթեալ առ Կոստանդին կայսրն թագաւորեցուցանել զԽոսրով զորդի քաջի և առաքինւոյն Տրդատայ, զոր և արար իսկ. զոր բազում տուեալ յօգնականութիւն նմա ընդդէմ կալ պատերազմաւ թագաւորին Պարսից Շապհոյ։ Բայց Սանատրուկ, որ կողմանցն Աղուանից վերակացու կարգեալ էր 'ի Տրդատայ, իբրև լուաւ զմահ նորա, սպանանէ զսուրբն Գրիգորիս զորդին Վրթանիսի, զեղբայր Յուսկանն. կապեալ զնա զագւոյ յամեհի ձիոյ 'ի դաշտին

Վատնեան, և ինքն երթայ առ Շապուհ արքայ Պարսից, և ընդունի զձև թագաւորութեան, հատուածէ զաշխարհն 'ի Խոսրովայ։ Եւ Խոսրովու բաւական համարեալ զմնացեալ աշխարհն իւր, ոչ ինչ փոյթ զպատերազմաց արարեալ, այլ խաղաղական կենօք կեցեալ, հնազանդեալ խրատու մեծին Վրթանայ, փոխէ զԱրտաշատ քաղաք 'ի Դուին, և տնկէ անտառս կաղնեաց տեղի զբօսանաց. և թագաւորեալ ամս ինն՝ վախճանի բարեպաշտութեամբ։ Եւ թագաւորէ փոխանակ նորա Տիրան որդի նորա։

Իսկ սուրբն Վրթանէս բարւոք կարգաւորութեամբ վարեաց զժամանակս կենաց իւրոց. թէպէտ բազում անգամ կամեցան սպանանել զնա նախարարքն, այլ Աստուած ոչ ետ թոյլ այնպէս լինել, այլ՝ խաղաղական մահուամբ փոխեցաւ առ Քրիստոս յոյսն ամենեցուն։ Եւ թագաւորն Տիրան կացոյց փոխանորդ նորա զորդի նորա զսուրբն Յուսիկ, զեղբայր Գրիգորիսի Աղուանից կաթուղիկոսի. բայց Տիրան ոչ ըստ իրաւանցն Աստուծոյ վարէր զթագաւորութիւնն, այլ չար գործովք. զոր յանդիմանէր սուրբն Յուսիկ անաչառութեամբ։ Իսկ Տիրան ատէ զնա, յետոյ և սպան զնա, այսպիսի պատճառաւ. եղև զի յետ մահուան Կոստանդնի կայսեր, որդւոյ մեծի Կոստանդիանոսի, թագաւորէ Հռոմայեցւոց ուրացողն Յուլիանոս, և առաքէ տախտակ մի, յորոյ

վերայ նկարեալ էր պատկերն սատանայի, և մերձ առ նմա Յուլիանոսին, զնել զայն յեկեղեցին Հայոց. և Տիրան առ երկիւղին նորա առնէ զհրամայեալսն։ Իսկ սուրբն Յուսիկ զիմացարձ եղեալ, ոչ տայր թոյլ մուծանել յեկեղեցին, այլ առեալ 'ի ձեռաց նորա ընկէց յերկիր. և կոխան արարեալ զնա ոտից իւրոց՝ մանրեաց զնա. և բարկացեալ Տիրան, հրամայեաց ջայլոտիւք հարկանել զնա մինչև մեռցի. որ կալաւ զաթոռ եպիսկոպոսութեան զամս վեց։

Իսկ Տիրան կոչէ զմեծ քորեպիսկոպոսն Դանիէլ, ազգաւ Ասորի, զոր կացուցեալ էր սրբոյն Գրիգորի տեսուչ գաւառաց, այր սուրբ և սքանչելագործ. և նորա եկեալ յանդիմանէ զնա սաստիկ անիծիւք վասն սպանման սուրբ քահանային Յուսկանն. և բարկացեալ Տիրան՝ հրամայեաց խեղդել զնա, կատարեցաւ սուրբ մարտիրոսական մահուամբ։ Եւ յետ այնորիկ կացոյց Տիրան յաթոռ քահանայապետութեան զՓառներսեհ ոմն, ոչ յազգէ սրբոյն Գրիգորի, այլ 'ի Տարօնոյ, 'ի գեղջէ Աշտիշատոյ, որ կալաւ զաթոռն ամս հինգ։

Եւ Շապուհ արքայ Պարսից կոչէ զՏիրան առ ինքն խաբէութեամբ, և 'ի ճանապարհին կուրացուցանեն զաչս նորա ածղով, վրէժխնդրութիւն լեալ յԱստուծոյ անիրաւ մահուանցն, զոր արար նա ընդ Յուսիկ և ընդ Դանիէլ։ Եւ

յետոյ խեղդեաց զնա որդի իւր Արշակ, որ թագաւորեաց ամս երեքտասան. և առնու զաթոռ թագաւորութեանն նորա Արշակ հրամանաւ Շապհոյ։ Եւ եկին առ նա ամենայն նախարարքն իւր, և ամենայն եպիսկոպոսք աշխարհիս Հայոց. և խնդրէին 'ի նմանէ հայրապետ յարժանաւոր ցեղէ սրբոյն Գրիգորի, և գտին մանուկ մի գեղեցիկ հասակաւ, և բարւոք տեսանելով տեսոյն, որում անուն էր Ներսէս, որդի Աթանագինի, որդւոյ Յուսկանն, զի էին նորա երկու որդիք, անուն միոյն՝ Պապ, և միւսոյն՝ Աթանագինէս. և մինչդեռ կենդանի էր Յուսիկն, ոչ ձեռնադրեաց զոք 'ի նոցանէ 'ի գործ ինչ եկեղեցւոյ. քանզի չէին արժանիք. և յետ մահուան նորա, ձեռնադրեն զնա 'ի սարկաւագութիւն բռնութեամբ։ Իսկ նորա թողեալ զգործ եկեղեցւոյ, ուտելոյ և ըմպելոյ պարապեալք. և փոխանակ սաղմոսից և երգոց հոգևորաց, զուսանօք և վարձակօք և բոզիւք շուայտանային. և յաւուր միում նստեալ յեկեղեցւոջն յուտել և ըմպել կանամբք և մանկտիւք, հուր անկաւ յերկնից և այրեաց զերկոսեանն, նորանշան մահուամբ խայտառակեալ. և զաւուրս բազումս 'ի ներքս եկեղեցւոջն թողեալ ոչ ոք իշխէր մտանել և հանել արտաքս զդիս նոցա։ Բայց սքանչելին Ներսէս արժանի էր կոչմանն՝ յոր կոչէին զնա, զի էր նա այր արդար և սուրբ. և էր նա զինուորեալ

արքային Արշակայ, որ զուսերն պողովատիկ 'ի սպասու նորա բարձեալ ունէր, որ և զանձն անարժան համարէր այնպիսոյ պատուոյ: Իսկ արքայն Արշակ, հրաման ետ ծերունի եպիսկոպոսին Փաւստի ձեռնադրել զնա սարկաւագ, և ապա զօր բազում կազմեալ, առաքէ զնա 'ի Կեսարիա 'ի ձեռնադրել զնա հայրապետ. և եկեալ անտի, լուսաւորէ զաշխարհս Հայոց զանազան կարգաւ. շինէր վանորայս և աղքատանոցս, և ժողովէր զուրուկս և զհալածեալս. և կարգէր զարմանս և ռոճիկս նոցա:

Բայց Արշակ ըստ խրատուց Աստուծոյ ոչ վարէր զթագաւորութիւնն. զի սպան նա զեղբօրորդին իւր զԳնէլ, և առ զկին նորա զՓառանձեմ. անէծ զնա սուրբն Աստուծոյ Ներսէս. այլ և թշնամիք եղեն նմա Շապուհ արքայ Պարսից, և Վաղէս կայսրն Յունաց, որ յետ Յուլիանոսի բարեպաշտի. և աղաչէ Արշակ զՆերսէս գնալ դեսպանութեան աղագաւ առ Վաղէս կայսր: Եւ գնաց սուրբն Ներսէս խաղաղութիւն առնելով 'ի մէջ երկուց թագաւորացն: Բայց Վաղէս՝ քանզի խոտորեալ էր յաղանդն Արիոսի և Մակեդոնի, հալածիչ էր ուղղափառաց: Իբրև ետես զսուրբն Ներսէս՝ և լուաւ եթէ սքանչելագործ այր է, ասէ ցնա՝ բժշկեա՛ զորդի իմ. քանզի հիւանդ էր մերձ 'ի մահ. ասէ սուրբն՝ եթէ 'ի բաց կացցես յանհանճար աղանդոյդ՝ ես

բժշկեցից զնա. և յանձն առ 'ի բաց կալ. և աղօթեալ սուրբն, յարեաւ մանուկն յախտէն, և Վաղէս դարձաւ 'ի նոյն հերձուածս. դարձեալ և իսկոյն մեռաւ մանուկն, և հրամայեաց աքսորել զսուրբն 'ի կղզի անհնակ՝ յորում ոչ գոյր բոյս դալարուոյ, բայց միայն աւազ. և յաղօթել սրբոյն՝ բղխեաց աղբիւր բարեհամ, և ծովն ընկենոյր ձուկն, և փայտն առանց հրոյ ինքնին լուցանէր, և այնպէս կերակրեալ լինէին զեօթն ամ: Իսկ Արշակ իբրև ետես եթէ աքսորեցաւ սուրբն Ներսէս, սկսաւ գործել մեծամեծ չարիս, շինեաց քաղաք մի և անդ ժողովեաց զամենայն չարագործս, և տայր ոչ լինել իրաւունք որ ոք գործիցէ զչարիս, և անկանիցի անդ. և լցաւ քաղաքն անիրաւութեամբ, և անուանեաց Արշակաւան:

Իսկ Վաղէս կայսր չարամահ սատակեցաւ, զյաւիտենական գեհենին առաջն բերելով զօրինակ հրկէզ եղեալ, և առնու զթագն Թէոդոս մեծ հրամանաւ Գրատիանոսի, և ածեալ զսուրբն Ներսէս յաքսորանացն, առ իւր պահէր մեծաւ պատուով մինչև 'ի հաւաքումն ժողովոյն հարիւր և յիսնիցն որ 'ի Կոստանդնուպօլիս՝ վասն հոգեմարտին Մակեդոնի, յորում ժողովէր Գրիգոր Աստուածաբան և Գրիգոր Նիւսացի եղբայր սըրբոյն Բարսղի, և այլ բազում սուրբ հարք. և ապա տարէ զսուրբն Ներսէս յաթոռ իւր, և տեսեալ

զանիրաւ գործն Արշակայ՝ անէծ զԱրշակունիս, և անդէն սատակեցան բնակիչք նորա չարամահ. և անբնակ եղև քաղաքն բազմամարդ։ Եւ զԱրշակ կոչեաց Շապուհ, և եդ զնա 'ի բանտի անել, և ինքն ձեռօք իւրովք սպան զնա, և թագաւորեաց ամս երեսուն։

Իսկ սուրբն Ներսէս աղաչեաց զմեծն Թէոդոս, և թագաւորեցոյց Հայոց զՊապ՝ որդի Արշակայ։ Իսկ Պապ քանզի զազրագործ էր՝ յանդիմանէր զնա սուրբն Ներսէս, ետ նմա դեղ մահու, և ելոյծ զարդարն 'ի կենցաղոյս։ Եւ սուրբն 'ի մեռանելն իւրում կոչեաց զհօտն իւր, և օրհնեաց զնոսա. և բազում ինչ մարգարէացաւ վասն ազգին Նետողաց, և աւերման աշխարհիս. և վասն նեռին և նեղութեանցն՝ որ 'ի նմանէ ընդ աշխարհս ամենայն. և ապա հանգեաւ սուրբն մարտիրոսական մահուամբ, արտօսր բազում թողեալ հօտին իւրոյ. կալեալ զհայրապետութիւնն ամս երեսուն և չորս. և յաջորդէ զաթոռն Շահակ ոմն 'ի նոյն ազգէ Ալբիանոսի 'ի Հարքա 'ի Մանազկերտոյ ամս չորս։ Իսկ բարեպաշտն Թէոդոս իբրև ետես զչարիսն զոր գործեաց Պապ, կորոյս զնա ըստ իւրում անզգամութեանն, որ թագաւորեաց ամս եօթն։ Եւ զՎարազդատ ոմն յազգէ Արշակունեաց զայր զօրաւոր և ուժեղ։ Եւ յետ Շահակայ առնու զկաթողիկոսութիւնն Զաւէն եղբայր նորա ամս չորս։

Իսկ Վարազդատ խորհեցաւ ապստամբել 'ի Թէոդոսէ, և ձեռն տալ 'ի Պարսիկս։ Վասն որոյ հալածեաց զնա Մանուէլ Մամիկոնեան, եղբայր Մուշեղայ քաջի սպարապետի Հայոց. զոր սպան Վարազդատ նենգութեամբ. և երթեալ յաշխարհն Յունաց, անդ վախճանեցաւ. կալեալ զթագաւորութիւնն ամս չորս։

Եւ յետ Զաւէնայ առնու զկաթուղիկոսութիւնն Ասպուրակէս, եղբայր նոցին, ամս եօթն։ Եւ կացուցանէ Մանուէլ յաթոռ թագաւորութեանն զերկոսին որդիսն Պապայ, զԱրշակ և զՎաղարշակ, զոր փեսայացոյց ինքեան, որ թագաւորեցին ամս չորս։

Եւ ապա թագաւորքն Յունաց և Պարսից զաշխարհս յերկուս բաժանեցին։ Բաժնին Յունաց տիրէր Արշակ հրամանաւ Արկադեայ և Ոնորեայ, որդւոց մեծին Թէոդոսի։ Իսկ արքայն Պարսից Շապուհ կացոյց բաժնին իւրոյ թագաւոր զԽոսրով ոմն 'ի նոյն ազգէ, և էր մարտ 'ի մէջ Արշակայ և Խոսրովու. քանզի իշխանքն՝ որ էին ընդ Արշակայ, առեալ զգանձս նորա, գնացին առ Խոսրով։

Իսկ Խոսրով, յետ մահուանն Ասպուրակիսի, նստուցանէ զսուրբն Սահակ յաթոռ հայրապետութեանն որդի մեծի Ներսիսի։ Եւ յաւուրս յայսոսիկ էր հայրապետ 'ի Կոստանդնուպօլիս զարմանալին և պայծառ ջահն եկեղեցւոյ սուրբն

Յոհան Ոսկեբերանն, որ լուսաւորէր զընդհանուր եկեղեցիս Քրիստոսի վարդապետութեամբ բանին կենաց: Սա՝ զառաջինն յամանց արհամարհեալ լինէր վասն ոչ սեպհական խօսելոյ 'ի բարբառն Յունաց. զի 'ի հօրէ կողմանէ Ասորի էր: Սա՝ յորմէ հետէ մկրտեցաւ, զինի ոչ արբ, և ոչ ծիծաղեցաւ, և ոչ երդուաւ, և ոչ երդմնեցոյց զոք և ոչ զոք նզովեաց. և յորժամ աքսորէին զնա, եհար զձեռն յեկեղեցին և ասաց՝ ողջ մնա, սուրբ եկեղեցի, բնակարան փառաց տեառն, և մի մոռանար զաշխատութիւնս իմ. քանզի 'ի պարգեւացն զոր առի յԱստուծոյ, յաւելի 'ի գանձս քոյ զիրք ութ հարիւր, և ճառք երկոտասան հազար: Սա եկաց հայրապետ հինգ ամ, և երեք ամ յաքսորս; և հանգեաւ 'ի Կոմանայ քաղաքն ամաց:

Եւ թագաւորեալ Թէոդոս ամս հինգ, հանէ զնա արքայն Պարսից 'ի թագաւորութենէ, և թագաւորեցուցանէ զՎռամշապուհ: Իսկ սուրբն Սահակ պայծառացոյց զեկեղեցին Քրիստոսի առաւել քան զամենեսեան զանազան կարգօք առաքինութեան, և կանոնական օրինադրութեամբ: Եւ 'ի ժամանակս սորա ծագեաց լոյս մեծ գիտութեան յաշխարհիս Հայոց. քանզի երանելին Մեսրոպ եկեալ առ սուրբն Սահակ, եթէ հնար ինչ իցէ առեղծանել նշանագիր հայերէն լեզուի. և եգիտ զնա առաւել ես այնմ փափաքող. քանզի ցայն վայր ոչ ունէին գիր հայերէն, այլ Յոյն և Ա-

սորի գրով և նշանագրով վարէին: Եւ ծանուցանեն զխորհուրդն Վռամշապհոյ թագաւորի. և նա ասաց, թէ մինչ էի ես 'ի կողմանս Ասորոց, ասաց ինձ ոմն եպիսկոպոս՝ Դանիէլ անուն, թէ ունիմ ես նշանագիր հայերէն լեզուի, և ես անփոյթ արարի առ ժամն. և առաքեն զնախարար ոմն, Վրախճայ անուն, առ Դանիէլն խնդրել 'ի նմանէ զնշանագիրն. և առաքէ 'ի ձեռն Հաբելի երիցու. իբրև տեսին՝ ուրախ եղեն, և սկսան 'ի հայ լեզու փոխել զամենայն գիրս Աստուածաշունչս. բայց հայեցեալ տեսին զի ոչ է բաւական զամենայն սիղոբայսն ողջ ածել, և զշաղկապս և զբաւս, սկսան զարձեալ 'ի հոգս մտանել վասն այնորիկ: Իբրև թափեցան յամենայն մարդկային հնարից, ապաւինեցան յայն՝ որ ամենայն ինչ հնարաւոր է նմա, աղօթիւք խնդրեալ 'ի տեառնէ՝ յանձն առեալ զպահոց պնդութիւն և զաղօթս: Իսկ այն՝ որ զկամս երկիւղածաց իւրոց առնէ և աղօթից նոցա լսէ, ոչ անտես արար զբարի խնդրուածսն: Երևեալ թաթ ձեռին. հզօրին, գրելով 'ի վերայ վիմի, և ծանուցեալ զամենայն հանգամանսն, և յարուցեալ առեղծ զգիրն: Եւ ժողովեն մանկունս բազումս, և ուսուցանեն զբովանդակ աշխարհն, և բաժանեն զմանկունս մատաղս և քաջուսմունս փափկաձայնս և երկարոգիս յերկուս, և կարգեն դպրոցս ասորերէն և յունարէն. և ուսեալ մանկունքն այնո-

քիկ զամենայն իմաստասիրութիւնս ներքինս և արտաքինս, եղեն թարգմանիչք ճշմարտութեամբ, և թարգմանեցին զամենայն գիրս հին և նոր կտակարանաց, սկսեալ յառակացն Սողոմոնի, բովանդակեցին զամենեսեան: Սոքա ոչ միայն թարգմանիչք, այլ և վարդապետք և ուսուցիչք և մարգարէք պատմողք ապագայից: Սոքա լցեալք Հոգւոյն սրբով, խօսողք լեզուաց ազգաց, և թարգմանողք յազգաց ազգաց, գրանս խրթինս յայտ ածողք, և խորային խօսից պարզ մեկնիչք: Սոքա սիւնք եկեղեցւոյ և ամրափակ պարիսպք որդւոց նորա, աշտանակք լուսատուք, և ջահք բորբոքեալք ընդհանուր ծաւալելով ընդ ոլորտս տիեզերաց: Սոքա Աստուածարանք բանին կենաց, և արբուցիչք պասքելոց անձանց, զովացուցիչք տապոյ ջերմութեան բանսարկուին, և ջեռուցիչք ցրտացելոց 'ի հաւատս: Սոքա երգեցողք ծիծռունք, տատրակք քաղցրախօսք և ողջախոհք, սրբութեան սիրողք՝ և աղտեղութեան անարգիչք: Սոքա մանկանց դաստիարակք, և երիտասարդաց բարի օրինակք, կուսանաց զարդք, ամուսնացելոց օրէնք, ծերոց սփոփիչք և տկարաց մխիթարիչք, գլորելոց կանգնիչք և մեղուցելոց դարձուցիչք, հեղգացելոց խթանք յարուցիչք և մրացելոց 'ի նոյն յօժարացուցիչք, ուսման սիրիչք և ատեցողացն յանդիմանիչք: Որոց վարդապետք և ուսուցիչք սուրբն Սահակ և Մեսրոպ,

և գլխաւորք յաշակերտացն սուրբն Յովսէփ և Յոհան և Ղեւոնդ և Սահակ և Մովսէս քերթողահայր և Մամբրէ վերծանող նորուն եղբայր, Եղնակ և Կորիւն, սուրբն Եղիշէ, Դաւիթ փիլիսոփայ, և Յովհաննէս, տէր Աբրահամ, Արձան, Մուշէ, Խոսրով, Ղազար, և յետոյ Ստեփաննոս Սիւնեաց եպիսկոպոս, և որ զգիրսն յարմարէր գեղեցիկ, Համմանոս Սամոսատցի, և այլք բազումք, յորոց ոմանք և յեպիսկոպոսութեան աստիճան հասին. և այլք առաջնորդք ժողովրդոց կարգեալք, և 'ի նոյանէ ոմանք 'ի վերայ թարգմանութեան և գիրս յինքեանց շարադրեցին. որպէս սքանչելին Մովսէս զհայոց պատմութիւնն՝ 'ի խնդրոյ Սահակայ Բագրատունւոյ, և զպատմութիւն սրբուհւոյ Աստուածածնին և պատկերի նորա՝ 'ի խնդրոյ իշխանացն Արծրունեաց, և զպէտքն՝ 'ի խնդրոյ Թէոդորի ումեմն, և զներբողեան սրբոց Հռիփսիմեանցն, և զՎարդավառին, և այլ ճառս և խօսս իմաստասիրականս: Եւ Կորիւն զպատմութիւն սրբոյն Մեսրոպայ, և այլ ժամանակաց: Եւ Եղիշէ զպատմութիւն սրբոց Վարդանանցն, և զգիրս կանոնացն, և այլ մեկնութիւնս գրոց սրբոց և զչարչարանաց փրկչին: Եւ Ղազար զգիրս իւր: Եւ Եզնակ խօսս յոլովս եթող՝ յօգուտ լսողաց: Եւ Դաւիթ փիլիսոփայ զգիրս սահմանաց և զէակաց, և զմեկնութիւն Արիստոտէլի, և ներածութեանցն Պոր-

փուրի, և այլ հարցմունս և պատասխանիս, և գներբողեանն սրբոյ խաչին, և ծննդեան տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: Նմանապէս և Մամբրէ վերծանող ասաց ներբողեանս 'ի յաւուրն արմաւենեաց 'ի գալուստն Քրիստոսի յԵրուսաղէմ յաւանակաւ: Եւ յետոյ մեծն Ստեփանոս՝ Սիւնեաց եպիսկոպոս, բազում մեկնութիւնս գրոց սրբոց եթող, աւետարանացն համառօտ, և Յոբայ, և Դանիէլի, և Եզեկիէլի, և զպատասխանիս թղթոյն Գերմանոսի պատրիարքի Կոստանդնուպօլսի: Արարին և երգս շարականաց քաղցր և գեղեցիկ եղանակաւ և մեծ խորհրդով ծննդեանն Քրիստոսի և քառասնօրեայ գալստեանն 'ի տաճարն, մկրտութեանն և եկաւորութեանն 'ի Բեթանիա և յԵրուսաղէմ մեծի շաբաթուն չարչարանաց և յարութեանն, համբարձմանն և Հոգւոյ գալստեանն, խաչի և եկեղեցւոյ, և այլ տօնից տէրունականաց, և սրբոց ամենեցուն, ապաշխարութեան՝ և ամենայն ննջեցելոց, պէսպէս և զանազանս և անթիւս, որ մինչև ցայսօր պաշտի յեկեղեցի Հայաստանեայց:

Իսկ սուրբ վարդապետն Մեսրոպ, իբրև ելից զերկիրս Հայոց ուսմամբ և թարգմանութեամբ, յանձն առնէ զամենայն կաթուղիկոսին Սահակայ, և ինքն գնացեալ յԱղուանս՝ առնէ և նոցա նշանագիրս. և վարդապետս թողեալ նոցա՝ գայ յաշխարհն Վրաց, առնէ և նոցա նշանագիրս ըստ

տուելոյ նմա շնորհացն 'ի վերուստ. և այնպէս զուարճացուցեալ զաշխարհս ամենայն անպայման խնդութեամբ, թողեալ և նոցա վարդապետս յիւրոց աշակերտացն, դառնայ 'ի Հայս և գտանէ զմեծն Սահակ 'ի թարգմանութիւնս պարապեալ:

Իսկ թագաւորն Վռամշապուհ, կալեալ զթագաւորութիւնն ամս քսան՝ վախճանի բարւոք. և թագաւորէ դարձեալ Խոսրով եղբայր նորա ամ մի. և ապա Արտաշէս, որ և Արտաշիր, թագաւորէ յետ նորա:

Ընդ այն ժամանակս թագաւորեաց Յունաց բարեպաշտն Թէոդոս փոքր, որդի Արկադեայ: Եւ առաքէ սուրբն Սահակ զվարդապետն Մեսրոպ և զԹոռն իւր Վարդան թղթով առ Թէոդոս կայսր, զի հրաման տացէ այնոցիկ՝ որ ընդ իշխանութեամբ նորա իցեն՝ ուսանել զգիրս հայերէնս, զի վերակացուք նոցա ոչ տային թոյլ ուսանել զգիրսն վասն նախանձու: Իսկ հեզն Թէոդոս մեղադրեաց զառաջինն, եթէ ընդէր յԱսորւոց և ոչ 'ի Յունաց իմաստասիրաց, որ 'ի մերում քաղաքիս, խնդրէիք զգիրս. և պատմեաց Մեսրոպ, եթէ կատարումն արուեստին 'ի շնորհաց Հոգւոյն եղև: Յայնժամ գոհացեալ զԱստուծոյ բարեպաշտ թագաւորն, հրամայեաց զՄեսրոպ պատուել, իբրև զճշմարիտ և զիմաստուն վարդապետ: Նա և պատրիարքն Ատտիկոս և ամե-

նոյն ուխտ եկեղեցւոյն համերձ թագաւորաւն գրեցին զՄեսրոպ ընդ առաջին վարդապետս եկեղեցւոյ՝ ընդ Աթանասի և ընդ Գրիգորեանն, ընդ Բարսղի և ընդ Յովհաննու Ոսկեբերանի. և զվարդան արար առաւելաս բարեպաշտն Թէոդոս. գրեցին Թուղթ և առ մեծն Սահակ, տալով նմա եւ վեհագոյն. և հրաման ետ յիշխանութեան իւրում ժողովել մանկունս մատավարժս յուսանել գգիրսն, և դարմանք՝ և ծախք յարքունուստ կարգեաց. ետ հրաման և յաշխարհին Հայոց շինել քաղաք 'ի Կարին քաղաքի, և անուանեաց զքաղաքն Թէոդուպօլիս, որ այժմ կոչի Կարնոյ քաղաք։ Եւ եկեալ Մեսրոպայ՝ ուսոյց եւ զկէս ազգին, որ ընդ իշխանութեամբ Թէոդոսի։

Իսկ թագաւորն Հայոց մանուկն Արտաշիր էր գաղրագործ գիճասէր, որ ոչ միայն 'ի գիշերի, այլ և 'ի տուընջեան գործէր զգործն անարժան, և խրատու սրբոյն Սահակայ ոչ լսէր։ Վասն որոյ տաղտկացան ամենայն նախարարքն և եկին առ մեծն Սահակ, զի նովաւ համերձ ամբաստան լիցին Պարսից արքային՝ ընկենուլ զԱրտաշիր յաթոռոյն։ Իսկ սուրբն Սահակ ոչ առ յանձն ընկենուլ զգառն գայլոյ։ Եւ նոքա երթեալ առ արքայն Պարսից Վռամ՝ ընկենուն զնա 'ի թագաւորութենէն. հանեն և զսուրբն Սահակ յաթոռոյն, զի ոչ հաւանեցաւ կամաց նոցա։ Եւ ապա բարձաւ թագաւորութիւնն Արշակունեաց յետ

Արտաշրի՝ որ թագաւորեաց ամս վեց, և անկաւ թագաւորութիւնն Արշակունեաց 'ի Հայս ամս շկը։ Դադարեաց և քահանայապետութիւնն յարժանաւոր ցեղէ սրբոյն Գրիգորի, զի թէպէտ եկաց սուրբն Սահակ յետ այնորիկ ամս վեշտասան, և լուսաւոր վարդապետութեամբ պայծառացոյց զաշխարհս, սակայն անարժան վերակացուօք և Պարսիկ մարզպանաւ, որպէս զՎեհմիհրշապուհ՝ փոխանակ Արտաշրի թագաւորին, և զաթոռակալն Սուրմակ՝ փոխանակ սրբոյն Սահակայ, որ եկաց ամ մի։ Եւ յետ Սուրմակայ Բրքիշօ Ասորի, վաստթար քան զնա, ամս երիս։ Եւ յետ նորա Շամուէլ եւ անպիտան ամս հինգ։

Իսկ սուրբն Սահակ աղօթից և վարդապետութեան պարապէր։ Եւ ապա եկեալ նախարարքն հայոց, անկանէին առաջի սրբոյն Սահակայ, զմեղանս յանձն առեալ՝ թողութիւն խնդրէին 'ի նմանէ, և աղաչէին զնա՝ դառնալ ունել զաթոռ իւր, և ոչ հաւանէր նոցա. և իբրև կարի առիպէին, յայնժամ պատմեաց նոցա զտեսիլն՝ զոր ետես, եթէ 'ի տեառնէ եղև այդ, դադարել քահանայապետութեան 'ի ցեղէ սրբոյն Գրիգորի, և թագաւորութեան 'ի տանէ Արշակունի. և թէ մերձ յերևումն նեռին դարձեալ կանգնելոց է Աստուած զթագաւորութիւնն Արշակունեաց և զքահանայապետութիւնն յազգէ սրբոյն Գրիգորի, և ապա թոյլ ետուն նմա կեալ ըստ իւրոց կամաց։ Եւ

արքայն Պարսից զՎարդան մարզպան արարեալ Հայոց, տայ զաշխարհս ’ի ձեռս նորա: Եւ սուրբն Սահակ կալեալ զհայրապետութիւնն ամս յիսուն և մի, փոխի խաղաղական մահուամբ ’ի կարգս հրեշտակաց, տուեալ զաթոռն ցսուրբն Մեսրոպ, որ և նա ’ի նոյն ամի ելից զկենցաղս, յիշատակ բարի թողեալ ապագայից, յիսկզբան առաջին ամի Յազկերտի Պարսից արքայի, որդւոյ Վռամայ երկրորդի: Եւ առնու զաթոռն սուրբն Յովսէփ աշակերտ նորա:

Իսկ Յազկերտ արքայ բռնադատէր զամենայն քրիստոնեայս ուրանալ զՔրիստոս, և դառնալ յօրէնս Մազդեզանց. որում ոչ հաւանեալ զօրացն Հայոց՝ դառնան ընդդէմ հրամանին, սպանանեն զմոգսն և զմոգպետսն, որ եկեալ էին աւերել զեկեղեցիս, և բառնալ զհաւատս: Իսկ Յազկերտ իբրև լուաւ զայն ամենայն, առաքէ զօրս բազումս, պատերազմել ընդ զօրացն Հայոց, որոց գլխաւորք էին՝ սուրբն Վարդան և ընկերք իւր. և Պարսից աւերեալ զաշխարհս, խաղացուցանեն ’ի գերութիւն ’ի խրատու ուրացելոյն Վասակայ զմնացեալ նախարարսն և զսուրբն Յովսէփ և զՍահակ և զՂեւոնդ և զընկերս նոցա, և տան ’ի կապանս արքունի. և յետ այնորիկ սպանեն զսուրբն Յովսէփ և զնորին ընկերս, և զնախարարսն արգելուն ’ի բանտ մինչև յաւուրս Պերոզի արքայի. և ապա արձակեալք ’ի կապանաց

խնամօքն Աստուծոյ, խոստովանական անուն ժառանգեալք, դառնան յաշխարհս Հայոց:

Իսկ յետ մահուան բարեպաշտին Թէոդոսի կայսեր առնու զթագաւորութիւնն Մարկիանոս, որ արար զժողովն Քաղկեդոնի վեց հարիւր երեսուն և վեց եպիսկոպոսաց ’ի քակտումն ուղղափառ հաւատոյ, որ ելից զախեղերս մինչև ցայսօր՝ հայհոյութիւն նոցա:

Յետ սրբոյն Յովսէփայ առնու զկաթողիկոսութիւնն տէր Գիւտ ամս հնգետասան, որ խնդրեաց ’ի Դաւթէ փիլիսոփայէ զԲարձրացուցէքն: Եւ ապա Յոհան Մանդակունի ամս երկոտասան: Սա բազում կարգաւորութիւնս եդեալ յեկեղեցի. կարգեաց քարոզս աղուհացիցն և զաղօթս նոցա զերրորդ ժամուն և զվեցերորդին և զիններորդին, և զեկեղեցւոյ հիմնարկէքն, և ժամհարի, սկհւոյ և մաղզմայի և գիրք և կնունք և խաչ օրհնել և տառկ, զայս ամենայն կարգեալ, այլ և առաջի Պերոզի արքայի համարձակութեամբ խոստովանեցաւ զՔրիստոս, և ոչ երկեաւ ’ի սպառնալեաց նորա, որ հրապուրէր ’ի բաց կալ ’ի Քրիստոսէ, և ’ի հաղորդութենէն Յունաց. և կատարեալ ամենայն առաքինութեամբ՝ փոխի առ Քրիստոս:

Իսկ յետ Մարկիանոսի թագաւորեաց Յունաց Լևոն մեծ, և Պերոզ Պարսից արքայ զՄանդնոս մարզպան արար Հայոց ամս քսան: Յայսորիկ

աւուրս ժամանեաց Մովսէս քերթողահայրն։ Ի սոյն ժամանակի պայծառանայր յերկրի սքանչելի վարուք միայնաւորութեամբ սուրբ հայրն Թաթուլ՝ հանդերձ Վարոսիւ եղբարբ իւրով և Թումայիւ աշակերտիւ։ Եւ յետ Յոհաննու Մանդակունւոյ առնու զկաթուղիկոսութիւնն տէր Բաբգէն ամս հինգ, յաւուրս Զենոնի կայսեր։ Այս Զենոն նզովեաց զժողովն Քաղկեդոնի, երկոտասան գլուխ նզովից կարգեաց ընդդէմ նորա. զամանէ ասեն թէ յաճախ ունէր միս. և յաւուր միում յաճախ ունելոյն քացախեալ յորովայնի նորա կերակուրն, յայնմանէ տագնապեցեալ, օրէնս եդ զերկու շաբաթս բարեկենդանին ոչ ուտել միս, այլ՝ պանիր, զոր Պանրուտն անուանեն մինչև ցայսօր։ Ասեն թէ Յուլիանոս եկեալ 'ի Կոստանդնուպօլիս, հրամայեաց յամենայն կերակուրս վաճառոցն խառնել յարենէ զոհիցն, և սուրբն Թէոդորոս իմացոյց քրիստոնէիցն. և նոքա ասացին, թէ մեզ չէ օրէն այս երկու շաբաթս միս ուտել, այլ պանիր, և զնոյն եդաւ Պանրուտէքն։ Եւ յաւուրս սորա եգիտ Գառնիկ երանելի զնշխարս սրբոյն Գրիգորի 'ի յայրն Մանեայ, և հանգուցին 'ի Թորդան։

Եւ յետ Բաբգենայ առնու զկաթուղիկոսութիւնն տէր Սամուէլ ամս հինգ, յայսմիկ աւուրս պայծառանայր սուրբն Սիմէոն Սիւնական յԱղէքսանդրիայ. և Տիմոթէոս երէց՝ ուղիղ հաւա-

ռով իմաստասիրէր, որ զամենարուեստ զիրսն գրեաց, հաւաքեալ զամենայն բանս աստուածայնոց արանց ընդդէմ ամենայն հերձուածողաց։ Բայց Պերոզ արքայ Պարսից կարի անմարդի բարս ունէր. վասն որոյ սպանաւ 'ի Հեփթաղաց, և թագաւորէ Վաղարշ եղբայր նորա։ Սա զՎահան Մամիկոնեան, զորդին Հմայեկայ, մարզպան կարգէ. այս Վահան պատկեաց զեկեղեցի զանազան իրօք. և զԱկանս արգելականս արար։ Ի սորա յաւուրս էր Ղազար Փարպեցի, ճարտասան և պատմագիր։ Եւ յետ Սամուէլի առնու զկաթուղիկոսութիւնն տէր Մուշէ ամս ութ։

Յետ Զենոնի կայսեր առնու զթագաւորութիւնն Անաստաս, որ և սա ընդ Զենոնի յուղղափառս գրեցաւ. զի կամեցաւ ժողով առնել ընդդէմ անօրէն ժողովոյն Քաղկեդոնի, հաստատել զուղղափառութիւն, և վաղակուր եղեալ մեռաւ։ Եւ թագաւորէ յետ նորա Յուստինոս, այր ագէտ և անաստուած, որ ելից զերկիր արեամբ ուղղափառաց. զի եդ յաշտանակի զՔաղկեդոնին, և կոտորեալ հալածեաց զասողսն մի բնութիւն մարմնացելոյ Բանին։

Յետ Վաղարշու՝ Պարսից արքայի, առնու զթագն Կաւատ, և ապա Զամասպ, և ապա Կաւատ։

Յետ Մուշէի առնու զկաթուղիկոսութիւնն տէր Սահակ ամս հինգ. և ապա տէր Քրիստափոր ամս հինգ. և յետ նորա տէր Ղեւոնդ ամս երկու։

Յաւուրս սորա արեգակն ամենևին նուաղեցաւ, և սով սաստիկ եղև. և ապա տէր Ներսէս ամս ինն։ Յաւուրս սորա Եզրաս Անգեղացի, աշակերտ Մովսիսի եպիսկոպոսի Բագրեւանդայ բազմացոյց զգասս ճարտասանից. զամնայ և Մամբրէ եղբայր Մովսիսի 'ի Հայս, գործէ ասեն երրորդ գրել 'ի փիլիսոփայս։

Յետ Յուստինոսի առնու զթագն միւս Յուստինիանոս քուեր որդի նորա։ Սորա էր կին Թէոդորայ ուղղափառ, և աղաչէր զայր իւր հաստատել զուղղափառութիւն. և նա թէպէտ և կամէր, ոչ իշխեաց յաղէ երկարնակացն, որք սպանանային զնա մահու։ Եւ առ սա եկեալ չարախորհ Հրեայ մի, ասաց՝ թէ պարտ է զՏեառնընդառաջն առնել ընդ ծննդեանն՝ զոր առնեն Յոյնք, և ոչ ըստ յայտնութեանն՝ որ 'ի վեցն Յունվարի, զի մինչև ցայն վայր առաքելական դրութեամբն առնէին ամենայն քրիստոնեայք 'ի ժդ Փետրուարի։ Եւ կայսրն հաւանեալ անօրինին՝ այնպէս առնել, առաքէ յԵրուսաղէմ առնել այնպէս։ Իսկ Երուսաղէմացիքն ոչ առին յանձն փոխել զսուրբ հարցն աւանդութիւնս, որ մինչև ցայն օր պահեալ էր։ Եւ հրամայէ կայսրն զօրավարին բռնութեամբ առնել, և թէ ոք ընդդիմանայ՝ սպանանել. և ամենեքեան 'ի մահ դիմեցին յաղագս ճշմարտութեանն։ Իսկ մարգարէքն Աստուած ոչ եթող զյուսացեալսն իւր ընդ վայր, այլ ահեղ սքանչելեօք

զարհուրեցոյց զյանդգնեալսն. աջ աստուածային երևեցաւ 'ի սուրբ մատրանն, այլ և նշան ահեղ հրաշափայլ յերկինս՝ և արիւնատեսակ, և զարհուրեալ յայնմանէ՝ դադարեցին 'ի խնդրոյն։ Եւ 'ի գալ միւսոյ ամին՝ նոյն խռովութիւն յուզէր. զի հրաման ետ սաստիւ կոտորանել զընդդիմացողսն. և նոքա առ հասարակ պնդեցան 'ի մահ, քան 'ի կեանս խղճիւ։ Եւ տեսեալ բարերարին Աստուծոյ զհաւատս մարդկանն՝ այց արար հօտի իւրում, երևեալ սրբուհւոյ Աստուածածնին 'ի ծիրանի սեանն, ունելով 'ի գիրկս իւր զմանուկն Յիսուս, և ջուր բղխեալ 'ի սեանէ անտի, և որք օծանէին 'ի ջրոյ անտի, բժշկէին յիւրաքանչիւր ցաւոց. և այսպէս դադարեցին յունայն խնդրոյն։ Եւ 'ի ժամանակս Յուստինիանու խաւարեցաւ արեգակն ժը ամիս, զ ժամ լոյս տայր յօրն, և զայն ոչ տիւ և ոչ գիշեր. և պտուղք տարւոյն այնորիկ ոչ հասան. և եղև ամենայն երկիր իբրև զբազմօրեայ հիւանդս։ Եւ եղև մարդամահ տարաժամ, որ ընաւ չէր լեալ, և նախ 'ի Կոստանդնուպօլիս սկսաւ, և մեռան յառաջին օրն հինգ հազար, և յերկրորդն տասն հազար, և յերրորդն հնգետասան հազար, և 'ի չորրորդն ութուտասան հազար, և թուեցին մինչև երեք հազար, որք մեռանէին 'ի յօրն. 'ի մէջ ձեռացն բուշտ երանէր և առժամայն մեռանէր, մեռանէր մարդ 'ի տուն և տեսանէր զամենեսին մեռեալ. և նեխեցաւ քաղաքն,

և ոչ կարէին թաղել զմեռեալս. և տարածեցաւ ընդ ամենայն երկիր. և բազում քաղաքք անմարդ մնացին. բայց միայն Հեմս ապրեցաւ. զի ապաւինեցան 'ի գլուխն Յովհաննու Մկրտչին, որ կայր անդ: Հաշտեցան ընդ միմեանս Յուստինոս և Խոսրով Պարսից արքայ. և ծաղկէր ուխտ ամենայն քրիստոնէութեան ընդ տիեզերս:

Իսկ Վահան Մամիկոնեան փոխանակեալ բարւոք, յետ որոյ եկաց Վարդ եղբայր նորա ամս երիս, և յետ նորա Պարսիկք մարզպանք ամս երիս. և ապա Մեժեժ Գնունի ամս երեսուն և չորս:

Իսկ յետ Ներսեսի առնու զկաթուղիկոսութիւնն տէր Յովհաննէս ամս հնգետասան. յաւուրս սորա մարդամահ սաստիկ եղև, սկսեալ յարևմտից: Եւ յաստանին Հայոց սքանչելի եղև, զի հուր բորբոքեալ այրէր զապարանս Համակարին Պարսկի, որ վերակացու էր աշխարհիս. իբրև ոչ կարէին շիջուցանել, ապաւինէին 'ի խաչն Քրիստոսի և աղաչէին զպաշտօնեայսն փութալ տանել զխաչն. իբրև մօտ եղև նշանն փրկական, առժամայն շիջաւ բոցն, և տեսեալ ամենեցուն՝ փառաւորէին զփրկիչն Քրիստոս, և գովէին զհաւատս քրիստոնէից, յոր հաւատաց երանելին Մախոժ, որ և վկայութեամբ կատարեցաւ 'ի Քրիստոս:

Եւ յետ Յովանիսի առնու զկաթուղիկոսութիւնն տէր Մովսէս. յառաջին ամի սորա սուրբն Մանաճիհր, որ անուանեցաւ Գրիգոր, ազգաւ

Ռաժիկ, մարտիրոսութեամբ կատարեցաւ. և յերրորդ ամի նորա լցեալ լինի 'ի ծննդենէն Քրիստոսի ամք շծգ. և բովանդակեցաւ կանոնք երկերիւրեկին՝ զոր կարգեաց իմաստասէրն Անդրէաս, եղբայր Մանգնոսի եպիսկոպոսի, հրամանաւ Կոստանդնի կայսեր վասն լուսնոյն զատկաց և այլ տօնից. զի իբրև լցաւ երկերիւր ամ, լուսն զատկին 'ի Մարտի ԻԵ էր. և յեկգրան Ապրիլի Դ. և զի ոչ 'ի սկիզբն կարացին գտանել, զի յետ ինէն զժանն էր Ապրիլի. և Թ լուսինք 'ի մէջ կային, և այնր ազգաւ սկսան շփոթիլ տօնք ամենայն, և ամենայն արհեստք տոմարականք: Ապա հայրապետն Մովսէս ժողովեաց զիմաստունսն՝ որ էին 'ի ժամանակին, յորս էր և Աթանաս՝ 'ի վանաց սուրբ Կարապետին, և կարգեցին թուական Հայոց, որով ուղղեցին զզատիկ Տեառն այլովքն հանդերձ: Բայց ոչ կարացեալ կեալ 'ի ճշմարտութեան անսխալ զամս ինն: Իսկ 'ի տասներորդ թուականին Էաս անուն ոմն Աղէքսանդրացի, այր կորովի և իմաստուն, իբրև ետես զայնպիսի շփոթումն, որ յամենայն եկեղեցիս, ձայն արկեալ առ ինքն հաւաքեաց զամենայն իմաստունս որ յամենայն ազգաց, զԱզդէ՝ 'ի Գամրաց, զԳիգան՝ յԱսորւոց, զԵլոգա՝ 'ի Յունաց, զՓենեհէս 'ի Հրէաստանէ, զՅոհան՝ յԱրաբիոյ, և այլ արս երեսուն և վեց իւր նմանիս, և այլ բազմութեամբ. և յառաջ

վարեալ զտումարն Անդրէասի ՇԺԲ, այլ 'ի նոյն դարձաւ: Այսպէս կարգեցին զանտարակուսելի օրինակն որ չեակն անուանի, բազմիմաստ և անսխալ, գլուխ եդեալ բոլորին զԺն Ապրիլի. զի իբրև աւարտի ՇԺԲ ամն, այլ 'ի նոյն դառնայ. և սկսան ուղղել ամենայն տօնք և պատուէսք իրողութեանն: Բայց զԻրոն այն 'ի դրան Յուստինոսի ոչ կոչեցին 'ի ժողովն. քանզի նոքա վարկաւ անձին իւրում. իբրև տարաւ Իրոս իմաստասէր զօրինակն առ թագաւորն, սկսաւ Իրոն քննել մասունս Եկի և Զեկի որ ոչ երբեք լեալ էր. զի Եակն և Զեակն մասունք են՝ մին արեգական և միւսն լուսնի. այլ նա զհակառակն արար. զի փոխեաց զԱպրիլի ԺԷ 'ի ԺԶ, և զԶ 'ի Ե. այն վեշտասանն չբերէ ինչ սխալ, այլ այն Զն եղեալ Զե կիրակի ածէ մեզ. իսկ այն Ե նոցա շարած բառ Իրոնի զործելեացն, և ընդ Հրեայսն առնեն զատիկն, և 'ի սուրբ ժողովոյն Նիկիայ նզովքն անկանին, որք օրինադրեցին ոչ առնել զատիկ ընդ խաչահանուսն: Իսկ մեք 'ի միւս կիրակէն տամք և զերծանիմք 'ի նզովից. զի Հայք ոչ ընկալան զթիւր օրինակն, որպէս և ոչ զժողովն Քաղկեդոնի, ընդ իշխանութեամբ Պարսից գոլով: Զի յետ ութ ամի երևեցաւ եղծումն իւրացն:

Իսկ յետ Մեժեժայ մարզպանի Հայոց Պարսիկք տիրեն ամս երեսուն և վեց: Ընդ ժամանակս ընդ այն վախճանի եպիսկոպոսն Վրաց, և

եկեալ առ տէր Մովսէս, զի տացէ նոցա եպիսկոպոս. և նա ձեռնադրեալ զոմն փակակալ իւրոյ եկեղեցւոյն Կիւրոն անուն, տայ նոցա հաւատացեալ 'ի նա՝ եթէ պահեսցէ զսէր և զմիաբանութիւն առ աթոռ սրբոյն Գրիգորի, զի մինչև ցայն վայր 'ի Հայոց առնուին զձեռնադրութիւնն Վիրք: Այս Կիւրոն, յետ վախճանելոյն Մովսիսի, 'ի բաց քեցեցաւ 'ի դաւանութենէ ուղղափառ եկեղեցւոյն Քրիստոսի. և զՔաղկեդոնի դաւանութիւնն խոստովանեցաւ, զի 'ի մանկութենէ խմորեալ էր յազանդն յաշխարհին Յունաց լինելով նորա, և 'ի ծածուկ ունէր զչարութիւնն, որպէս հուր ընդ յարդիւ թագուցեալ. բայց ոչ իշխէր յայտնել 'ի կենդանութեանն Մովսիսի. զի զերեսուն ամ կալեալ զհայրապետութիւնն տէր Մովսէս՝ վախճանի, և տայ զանեղապահութիւնն աթոռոյն 'ի Վրթանէս քերթող: Իբրև ետես զթերութիւնն Կիւրոնի Մովսէս Ցուրտաւայ եպիսկոպոսն, ազդ առնէ Վրթանիսի՝ զի թերևս կարասցէ ինչ օգնել մոլորեալ մտացն Կիւրոնի, առ որ բազում անգամ գրեաց աղաչանօք 'ի բաց կալ յանհանճար աղանդէն. իսկ նա ոչ միայն ոչ հաւանեցաւ գրելոցն, այլ և հալածեաց զՄովսէս եպիսկոպոս: Իբրև յաջորդեաց զաթոռ կաթուղիկոսութեանն Հայոց տէր Աբրահամ, յետ տէր Մովսիսի, նոյնպէս և նա գրեաց երկիցս և երիցս թուղթ, յիշեցուցանելով զթիւրութիւնն: Իսկ Կիւրոն պատ-

ճառէր ոչ այլ ինչ խորհել, բայց զոր նոքայն խորհին. և ասէր զՄովսէս՝ զրպարտող նորին։ Իսկ իբրև ասացաւ ժողով քննութեան լինել և տեսանել վասն այնր, յայտնապէս խոստովանեցաւ Կիւրիոն զդաւանութիւնն Քաղկեդոնի. յայնժամ իբրև ետես Աբրահամ եթէ ոչինչ օգտեցաւ, այլ առաւել յանդգնութիւն եկն, յայնժամ գրեաց թուղթ շրջաբերական առ վիճակեալս իւր, զի մի ամենևին հաղորդեսցին ընդ Վիրս՝ եկեղեցեաւ, կամ ուխտիւ, կամ ամուսնութեամբ, կամ այլ ինչ հոգևորական իրօք. բայց 'ի վաճառէ իմեքէ՝ որպէս 'ի հեթանոսաց. զի մի մարմնական ծանօթութեամբն 'ի հոգևոր փառս ընկղմեսցին. և յայնմ հետէ բարձաւ ձեռնադրութիւնն Վրաց՝ որ 'ի Հայոց. զի սկսան նոքա զՅունօք թեակոխել։ Զայս ամենայն ստուգութեամբ ուսուցանէ քեզ Ուխտանէս եպիսկոպոս, զի նա զամենայն լիով գրեաց զթուղթսն և զպատասխանիսն, և զքաջախօսութիւնն Պետրոսի եպիսկոպոսի, որ պատգամաւոր էր տեառն Աբրահամու՝ առ Կիւրիոն, զոր Վիրք վասն համարձակութեան նորա՝ Գայլ կոչեցին զնա։

Յետ Յուստինոսի կայսեր՝ միւս Յուստինոս, այր չար և պիղծ, որ զբազումս եհան յուղղափառաց, և ինքն և պատրիարքն Յոհան այսահարեալք մոլեգնէին. և այնպէս սատակեցան։ Եւ ապա թագաւորեաց Տիբեր, և յետ նորա Մօրիկ։

Զսա ասեն 'ի Հայոց, յՕշական գեղջէ, և այլք թէ 'ի Տարօնոյ. աղքատութեան աղագաւ երթեալ 'ի Կոստանդնուպօլիս, և անդ 'ի դիպուածէ իմեքէ բարեբախտիկ եղեալ՝ թագաւորեաց այսպիսի պատճառաւ։ Եղև մեռանել Տիբերի կայսեր, և մեծամեծքն ընդ միմեանս հակառակեալ, ոչ հնազանդելով միմեանց. և էր մարտ անհնարին 'ի մէջ նոցա, որպէս թէ ո՛ յաղթեսցէ՝ թագաւորեսցէ։ Իսկ պատրիարքն 'ի մէջ անցեալ համոզեաց զնոսա արկանել վիճակս, և ում հասանիցէ նմա՝ ունել զթագաւորութիւնն, և այլոցն հնազանդել. և զայս (արարին) երդմամբ՝ և ամենեցուն մուրհակաւ. և էր վիճակն այսպիսի, ընդ լուսանալն բանալ զաւագ դրունս քաղաքին և զայր՝ որ պատահիցէ նոց, թէպէտ կարի յանարգաց իցէ, ածել 'ի պալատն արքունի, և իշխանացն նստել ամենեցուն, և յոյր գլուխ դիցէ զթագն, նմա ունել զթագաւորութիւնն։ Հաւանեցան ամենեքեան և դադարեցին 'ի խռովութենէ. և իբրև եհաս ժամն ժամադրեալ, բացեալ զդրունս քաղաքին, տեսեալ զՄօրիկ առ դուրսն՝ բարձեալ ցորեան ինչ առ 'ի վաճառել և լնուլ զպէտս իւր, և յափշտակեալ զօրացն՝ տարան 'ի բաղանիսն և լուացեալ զնա՝ զգեցուցին նմա հանդերձս ազնիւս, և տարան զնա յարքունիսն։ Եւ իբրև ասացին նմա վասն որոյ կոչեցաւն նա, պահանջեաց 'ի նոցանէ գիրս և երդմունս, զի մի սպանցեն զնա ծնացեալքն 'ի

թագէն։ Եւ նորա երդուեալ նմա սաստիկ, զի անհոգ լիցի յայնմանէ. բազմեալ էին ամենեքեան սնոտի յուսով, և իւրաքանչիւր ոք անձին իւրում ասէր թէ լիցի։ Կայր աթոռն, և 'ի վերայ նորա թագն, և կօշիկքն՝ հուպ առ նմին։ Անց Մօրիկ 'ի մէջ, և առեալ զթագն՝ սկսաւ շրջել ընդ բազմեալսն։ Իբրև եկն առ առաջինն՝ ուրախացաւ նա, բայց տրտմեցաւ երկրորդն՝ իբրև եթող զնա, դարձեալ կալաւ զնա տրտմութիւն, և զընկերն նորա ուրախութիւն. և այսպէս ըստ կարգի, իբրև շրջեցաւ նա երկիցս և երիցս, տրտմեցոյց զնոսա և ուրախացոյց։ Անց նստաւ 'ի վերայ աթոռոյն, և եդ զթագն 'ի գլուխն իւր, և տեսեալ ամենեցուն սխրացան։ Բայց զի երդուեալ էին նմա, թէ յո՛յր գլուխ և դնիցես դու՝ մեք հնազանդիմք նմա, մատուցեալ պատրիարքն՝ ագոյց զկօշիկսն յոտս նորա. և երկիր եպագ նմա, նոյնպէս ամենեքեան երկրպագեցին և ասեն՝ կեցցէ արքայ Մօրիկ։ Սա արար ժողով քննութեան վասն դաւանութեան Քաղկեդոնի. կոչեաց զվարդապետս Հայոց. և չոգան Վրթանէս և Գրիգոր և այլ վարդապետք, և ոչ ինչ օգտեցուցեալ զՅոյնս՝ դարձան նզովելով։ Առ սա ապստամբեալ նախարարացն Հայոց, փախուցեալք 'ի տէրութենէն Պարսից։ Իսկ սա անմարդի բարս ցուցեալ՝ ոչ ընդարձակեաց նոցա, այլ և զկարգեալ ռոճիկսն յառաջին թագաւորացն արգել 'ի նոցանէ։ Ասեն

զնմանէ՝ թէ առաքեաց առ հայր իւր թողուլ զպանդխտութիւնն և գալ վայելել 'ի փառս նորա. և եթէ ոչ՝ խրատ առաքել նմա, որով կարասցէ վարել զթագաւորութիւնն. և երթեալ սպասաւորացն, գտին զնա՝ զի զարմանէր պարտէզ, և ասացին նմա զհրամանն արքունի. նա պատասխանի ետ և ասէ, Թագաւորի հայր ես ո՛չ վայելեմ, և ինքն սկսաւ զմեծամեծ կաղամբսն՝ որ 'ի պարտիզի անդ, արմատախիլ առնել, կտրել զգլուխսն և ծածկել ընդ հողովն, և զմանունսն փայփայել և յօրինել. և արանցն տեսեալ զայն՝ համարեցան զնա բախած. և թողեալ 'ի բաց գնացին։ Իսկ զոր ինչ արար նա, նոքա ոչ գիտացին. և գնացեալ առ թագաւորն՝ պատմեցին զամենայն, և զխմարութիւնն՝ զոր գործեաց 'ի պարտիզին։ Իսկ Մօրիկ իբրև լուաւ, ծիծաղեցաւ և ոչ ինչ յայտնեաց. և կալեալ զմեծամեծսն՝ զոր կարծէր թէ սասան են թագաւորութեան նորա, եբարձ զամենեսեան՝ զի մի՛ դաւ ինչ լիցին թագաւորութեան նորա, և զփոքունսն 'ի տեղիս նոցա կարգեաց. և կոչեցեալ զարսն զայնոսիկ՝ զոր առաքեաց առ հայր իւր, ասէ ցնոսա. ա՛յս են խրատ հօր իմոյ՝ զոր արար 'ի պարտիզին, և դուք ոչ իմացայք։ Կէսք ասեն զսա յԱրփասու գեղջէ Կապադովկացւոց, զոր յետոյ քաղաք շինեաց, և զօրավար Տիբերի։ Բայց Մօրիկ վասն խստութեան բարուցն ազգաւ և որդւովք ողորմաւես մահուամբ կորնչի

յուրոց զօրաց. քանզի յարեան 'ի վերայ նորա զօրք իւր, որոց առաջնորդ էր Փոկաս, որ թարգմանի հուր, և սպան զնա, և ինքն թագաւորեա՛ց ընդ նորա։

Եւ յետ Որմզդի Պարսից արքայի թագաւորէ Խոսրով ձեռնտուութեամբ Մօրկայ։ Աստանօր Սմբատ Բագրատունի բազում մարտս յարդարէր առնել քաջութեամբ առ թշնամիսն Խոսրովայ, վասն որոյ պատուեալ զՍմբատ՝ տայ նմա զմարզպանութիւնն Վրկան աշխարհի. և նա երթեալ գտանէ ազգս գերեալս 'ի Հայոց անդ՝ որ Սագաստանն կոչի, մոռացեալ զլեզու և զգպրութիւն, զոր նորոգեալ Սմբատայ, և զհարել ևս եպիսկոպոս տայ նոցա՝ ձեռնադրեալ կաթուղիկոսին Հայոց, կացոյց վիճակ աթոռ սրբոյն Գրիգորի։

Իտասներորդ ամի տեառն Աբրահամու, և յլէ թուին Հայոց եկին 'ի Հայս Ասորիք, արք քաջարանք, և կամէին սերմանել զաղանդն Նեստորի, և նզովեալ հալածեցին, բայց ոմանք ընկալան. և նոքա թարգմանեցին նոցա գիրս սուտս զՓօրտոսակ. զԿիրակոսակ, զՊօղոսի տեսիլն, զԱդամայ ապաշխարութիւնն, զԴիաթեկ, զՄանկութիւն տեառն, և զՍեբիոս, և զՃիւն օրհնութեան, և զանթաքչելի մատեանն, և զաւետարանի մեկնութիւն զՄանեայ. և որ հաւատայ նոցա, նզովի յուղղափառաց։

Եւ յետ տեառն Աբրահամու առնու զկա-

թուղիկոսութիւնն տէր Յոհան 'ի Կոգովտէ, 'ի գեղջէ Բագրանէ, ամս քսան և վեց. ոմանք 'ի պատմագրաց զերկոսեանն 'ի միում ամի ասեն փոխանեալ զԱբրահամ և զՅոհան, և կէսք ոչ։

Իսկ Խոսրով Պարսից արքայ, իբրև լուաւ զմահն Մօրկայ, վրէժխնդիր եղև, զի դաշնադիրք էին միմեանց, և զբազում գաւառս Յունաց աւերեաց։ Առաքէ և զԽուռիան ոմն զօրավար իւր 'ի Պաղեստինէ, որ երթեալ պաշարեաց զսուրբ քաղաքն Երուսաղէմ, և առ զնա. և կոտորեաց զբնակիչս նորա. գերեաց և զխաչն Քրիստոսի, և տարաւ զնա 'ի Պարսիկս. գնաց բազում զօրօք 'ի վերայ թագաւորին Հերակլի, և 'ի նեղ արկ զթագաւորական քաղաքն Կոստանդնուպօլիս։ Իսկ կայսրն Հերակլէս ձեռնտուութեամբ Խաքանայ՝ Խազրաց թագաւորի՝ գնաց յաշխարհն Պարսից. սպան զԽոսրով, դարձոյց և զսուրբ Խաչն, և տարեաց յԵրուսաղէմ։ Զայս Խաքան ծաղր արարին բնակիչք քաղաքին Տփխեաց. առեալ դդում մի՝ նկարեցին զպատկերն Խաքանայ 'ի վերայ նորա կայր, որպէս թէ աչք նոցա նեղ են և փոքր, և եդեալ զդդումն 'ի վերայ պարսպին հանդէպ նորա՝ սկսան նետաձիգ լինել։ Իսկ նորա տեսեալ զայն՝ բարկացաւ յոյժ, բայց զի ժամանակ ձմերայնին էր, ոչ ինչ կարաց հատուցանել։ Բայց 'ի գալ գարնան եկեալ պաշարէ զնա, և առնու զքաղաքն. հրամայեաց կոտրել

զարս և զկանայս և զմանկտի, և աւերեալ զքաղաքն, առեալ զինչս նոցա, գնաց 'ի քաղաքն իւր։

Իսկ յետ սպանման մարզպանացն Ճիհր Բուրզենայ, Ճիհր Վշնասպ Սուրենայ, Ճիհր Վշան Միհրանայ, և այլ Տանկատանացն, Դաւիթ Սահառունի մարզպան լեալ ամս երեսուն։ Յաւուր սորա 'ի կը Թուականին եղև շինուած կաթուղիկէին Մրենոյ։

Յետ տեառն Յոհաննիսի առնու զկաթուղիկոսութիւնն տէր Կոմիտաս ամս ութ։ Սա շինեաց զսուրբ տիկնոջն Հռիփսիմեայ զվկայարանն պայծառ և հրաշալի. զի խրթին էր առաջին շինուածն, գտանէ 'ի նմին զնշխարս ոսկերաց սրբոյն, կնքեալ մատանեաւ սրբոյն Գրիգորի և սրբոյն Սահակայ, և ոչ իշխեաց բանալ. այլ իւրով մատանեաւն կնքեալ ամփոփէ անդէն. արարեալ երգս շարականաց սրբոցն հայերէն այբուբենոք, որոյ սկիզբն է՝ անձինք նուիրեալք։

Յետ Խոսրովու Պարսից արքայի առնու զթագաւորութիւնն Կաւատ։ Սա արձակեաց 'ի գերութենէ զՎիրոյ կաթուղիկոսն Աղուանից, զոր 'ի բանտի եդեալ էր հայր նորա. և յետ Կաւատայ Արտաշիր. և ապա Խոռեամ հրամանաւ Հերակլի. և ապա Խոսրով. և յետ նորա Բորն, և Զարմանդուխտ. սոքա ամենեքեան սակաւակեացք. և ապա Ազկերտ։

Իսկ յետ տեառն Կոմիտասայ առնու զկա-

թուղիկոսութիւնն տէր Քրիստափոր ամս երկու. և ապա Եզր ամս տասն։ Իսկ Հերակլի կայսեր եկեալ 'ի Կարնոյ քաղաք, ժողով արարեալ, կոչէ և զԵզր կաթուղիկոս Հայոց։ Իսկ նա ոչ տարաւ ընդ իւր արս իմաստունս, մանաւանդ զՅոհան վարդապետ Մայրավանեցի, որ յոյժ տեղեակ էր աստուածային գրոց։ Երթեալ հաւանի աղանդոյն Քաղկեդոնի։ Եւ տայ նմա պարգևս կայսրն զերիր մասն Կողբայ և զաղն բովանդակ։ Եւ եկեալ (Եզրի) 'ի Հայս, փոխեաց զամենայն ուղղափառ կարգաւորութիւնս եկեղեցւոյ, և զընթերցուածն Յակոբայ և Կիւրղի, փոխանակ այնորիկ զԱրտեմոնին եդեալ, զոր յանդիմանեաց սուրբ վարդապետն Յոհան, եթէ ընդէ՞ր ագխտաբար հաւանեալ եղեր, և լուծեր զբարւոք կարգաւորութիւնն՝ որ 'ի սրբոյն Գրիգորէ մինչև ցայսօր պահեալ էր 'ի մէջ ազգիս Հայոց։ Իսկ նա՝ փոխանակ զղջանալոյ՝ հալածեաց զսուրբն անարգանօք, Մայրագոմեցի կոչելով։ Իսկ մի ոմն յաշակերտացն Յոհանու, Սարգիս անուն, հերձուած յարոյց. և Եզր համբաւեաց՝ եթէ Յոհանու է հերձուածն, և զնա շարագրեաց. և ընդ այլ հերձուածողացն բանս եդեալ, զբանս աշակերտի նորա՝ Յոհանու վերայ գրելով, զոր մի ոք իշխեսցէ բամբասել զսուրբն։ Եւ երթեալ Յոհանու ընտրեաց իւր տեղի լռութեան 'ի կողմանս Գետարակս բերդոյ, և անդ դադարեաց զաւուրս

ինչ՝ հանապազ ընդ Աստուծոյ խօսելով։ Եցոյց Աստուած և մեծ սքանչելիս վկայ լինել սրբութեան նորա. զի էր նորա էշ մի՝ որ սպասաւորէր զպէտս նորա. պատահեաց նմա արջ մի և եկեր զնա։ Եւ իբրև ետես զայն Յոհաննէս, երթեալ ածէ զարջն. որովհետև սպաներ զսպասաւորն մեր, արդ՝ փոխանակ նորա դու սպասաւորեա՛ մեզ։ Եւ երթեալ արջուն սպասաւորէր ամենայն հնազանդութեամբ 'ի բեռնակրութիւնս և յամենայն ինչ ամս բազումս. և յետ ժամանակաց պատահեալ որսորդաց՝ սպանին զարջն, կարծելով վայրենի զնա. և իբրև տեսին եղբարք վանիցն՝ ընկեցին զնա 'ի խորափիտ մի։ Մինչև ցայսօր բնակիչք վայրացն երթան և առնուն հող 'ի տեղւոջէն՝ յորում թաղեցաւ արջն. և լինի դեղ ամենայն ցաւոց անասնոց աղօթիւքն Յոհաննու։ Նոյնպէս և գերեզման սրբոյն դեղ է ամենայն ցաւոց և փառանգելոց, որք հաւատով ապաւինին յաղօթս սրբոյն։

Յետ Դաւթի Սահառունւոյ լինի մարզպան Հայոց Թէոդորոս Ռշտունի ամս քսան և հինգ։ Եւ յետ Հերակլի կայսեր թագաւորէ որդի նորա Կոստանդին։

Իսկ իբրև լցաւ 'ի ծննդենէն Քրիստոսի ամք ոժը, և Հայոց թուականին կէ, յայտնեցաւ ոմն սուտ մարգարէ հեթանոսաց, ազանգեալ 'ի Կեբինթոսէ և յԱրիանոսաց. Մահմետ անուն, Իս-

մայէլի ազգաւ, յորդւոցն Հագարու։ Սա մենչգեա վաճառականութեան աղագաւ երթայր յԵգիպտոս, հանդիպեցաւ միայնակեցի միոջ, որում անուն էր Սերգիս Բխիրայ՝ Արիանոս աղանդով, յանապատին Սինայ։ Սա ուսոյց Մահմետի զսուտ աստուածածանօթութիւն, գովեաց նմա զհին օրէնսն՝ զաւանդն 'ի Մովսէսէ, և ասաց. եթէ լուիցես բանից իմոց, լինիս առաջնորդ և օրէնսդիր 'ի վերայ ազգին քո։ Եւ գնացեալ Մահմետի զճանապարհս իւր՝ յանկարծակի եհաս 'ի նա ոգի պիղծ, և անկեալ փրփրեցաւ։ Եւ ընկերաց նորա տեսեալ զայն՝ կացին առ նմա մինչև սակաւ մի ուշաբերեցաւ. և ապա յարուցին զնա. հարցեալ զպատճառս այնպիսի մոլեգնութեանն, ասէր 'ի հրեշտակէ սրբոյ լինել զայն, և յղել զնա պատգամաւոր յազգն իւր. և երթեալ 'ի քաղաք իւր՝ սկսաւ քարոզել, զոր ուսոյց նմա սուտ քրիստոնեայն։ Էին նմա հօրեղբարք գլխաւորք. նոքա հալածեցին զնա, սպառնացեալք մահու չափ, եթէ այլ այնպիսի բանս ինչ լուիցեն 'ի նմանէ. և նա երթեալ 'ի տուն իւր՝ նստէր տրտում։ Եւ մտեալ Ալի, որ էր նորա հօրեղբօր որդի և փեսայ, և հարցեալ զպատճառս տրտմութեան, և նա ասացեալ՝ թէ վասն զի զԱստուած քարոզեցի նոցա, սպառնացան մահու ինձ. և ասէ Ալի. եկ երթիցուք դարձեալ քարոզեսցուք. եթէ ընդդէմ դառնան մեզ, սպանցուք զնոսա սրով. զի այլ զօրա-

ւոր էր Ալի, և որք զօրաւորք՝ որ ընդ նմա։ Եւ իբրև սկսան քարոզել եղև խռովութիւն յոյժ և պատերազմ. և պարտեցաւ կողմն Մահմետի. և փախեալ գնացին 'ի փոքր Մադինա, ուր էին ժողովեալ Հրեայք երկոտասան հազար, զոր հալածեալ էր Կոստանդնի կայսեր. և առեալ զնոսա Մահմետի, չոգաւ 'ի վերայ այնոցիկ՝ որ հալածեցինն զնա. և կոտորեաց զնոսա։ Իբրև տեսին Հրեայքն զյաջողուած գործոյն, կացուցին զնա իւրեանց առաջնորդ, յարեցան 'ի նոսա և այլ Մադիանացիք. .և քաղրրթ առաջնորդ, և եղեն բանակ մեծ, չոգան 'ի վերայ Պաղեստինի, հարին զզօրն Հոռոմոց, որք յափշտակէին զինչս վաճառականաց նոցա. և իբրև տեսին զյաղթութիւնն, չոգան 'ի վերայ տէրութեանն Պարսից, սպանին զԱզկերտ թագաւոր Պարսից, և զաղարեաց թագաւորութիւնն Պարսից։ Զայսու ժամանակաւ խաւարեցաւ կէս արեգականն. Արեգ՝ աշնան ամիս, մինչև 'ի Քաղոց՝ ամարան ամիս։ Ապա արձակեցին զօրս ընդ երիս կողմանս՝ մի 'ի Հռոմ՝ Յաղ անուն և խրատատու Յովէլ, որք կոտորեցին 'ի Հոռոմոց գեօթանասուն հազար։ Եւ 'ի Պարսից կողմն արձակեցին զՕթման ամիրայ, և զՄաւիէ զօրավար. նոքա հարին զՄիրդատ քառն հազարաւ, և զՄուշեղ սպարապետն Հայոց իւրով սպայիւն, և տիրեցին բոլոր աշխարհիս Հայոց, Պարսից և Ասորւոց, Եգիպտաց-

ւոց, Մարաց և Պարթևաց. սկսան շրջել զհաւատս նոցա, և նոքա ոչ հաւանեցան։ Իսկ Մադիանացիքն և հաւանեալքն նոցա խնդրեցին օրէնս 'ի Մահմետէ, և նա ետ նոցա օրէնս՝ յոյժ խայտառականօք. տալ մարմնաւոր լինել զարքայութիւնն 'ի վերայ երկրի, կերակուր պորտոյ, և անմահութիւն յետ արքայութեանն. և կանանց կոյս մնացելոց հանապազ խառնակութիւն. ուսոյց և օրէնս հակառակ հնոյ և նորոյ օրինադրութեանց, իմանալ զանարժանս, և խօսել զանուղղայս խայտառակաց, մեծապէս ձաղանօք զուխտադրութիւնն Աստուծոյ՝ որ առ Աբրահամ, զի գրեալ է. Թլփատեսցի ձեր ամենայն արու ութօրեայ։ Իսկ սա օրինադրեաց. յորժամ կամեսցի՝ թլպատել, յորում հասակի և իցէ, ոչ միայն զարս, այլ և զկանայս անգամ. և փոխանակ լուսաւոր մկրտութեանն՝ զոր ասաց տէր մեր Յիսուս Քրիստոս, եթէ որ ոչ ծնցի 'ի ջրոյ և 'ի հոգւոյ, ոչ մտանիցէ յարքայութիւն Աստուծոյ. սա ասաց հանապազ գործել զչարիս և ջրով լուկով ողողանել և սրբել, և այլ բազում անարժանս և մոլեկան աւանդութիւնս և ծիծաղելիս։ Սա եղև օրէնսդիր պատգամաբեր ամս հինգ, և կոտորեցին զԲզնունիս, զԱղիովիտ և զՏարօն։ Եւ Մահմետ արգել զսուրն, և բանիւ խրատու նորա հնազանդեցին զմեծ մասն տիեզերաց. և անմնաց երդմամբ կնքեաց մուրհակ Հայոց

աշխարհիս համարձակութեամբ ունել զքրիստոնէութիւն, և վաճառեաց նոցա զհաւատս նոցա՝ յամենայն տանէ առեալ չորս դրամ և երեք մաթ խորբալ՝ որ է ցորեան, և ձիոյ տոպրակ մի և պարան մի մազէ և ձեթնաքար մի: Իսկ 'ի քահանայից և յազատաց և 'ի հեծելոց ոչ հրամայեաց առնուլ զհարկն, և 'ի տիրելն աշխարհաց՝ կոչեցան Ամիրմումնիք: Եւ ի ամին Մահմետի կալան զիշխանութիւնն Իսմայէլի Ապուբաքր, Օթման և Ամր 'ամս երեսուն և ութ:

Յետ Եզրի առնու զկաթուղիկոսութիւնն տէր Ներսէս ամս քսան: Սա շինեաց զվկայարան սրբոյն Սարգսի՝ որ 'ի Դուին. 'ի կոտորելն Իսմայէլի զքաղաքն Դուին երկոտասան հազար՝ արեամբ կոտորելոցն ծածկեցաւ սուրբ սեղանն և աւազանն, և զայլսն գերեցին աւելի քան զերեսուն ու հինգ հազար: Եւ զոսկերս սպանելոցն ամփոփեաց հայրապետն 'ի նոյն վկայարանն. շինեաց և զՎիրապին զանեղիս սրբոյն Գրիգորի. շինեաց և զսուրբն Գրիգոր, զզարմացուցիչն տեսողաց, որ յետոյ աւերեցաւ 'ի Տաճկաց: Առ սա եկեալ Ասորւոց ուղղափառաց՝ խնդրէին 'ի սմանէ եպիսկոպոս. և նա պահանջեաց 'ի նոցանէ գրով խոստովանութիւն հաւատոյ. և նոքա ետուն նմա զայս բան. «Հաւատամք 'ի Հայր և յՈրդի և 'ի սուրբ Հոգին. 'ի Հայր՝ որոյ հայրութիւնն անհասանելի է, 'ի յՈրդի՝ որոյ ծնելութիւնն անբաժանելի է,

և 'ի սուրբ Հոգին՝ որ 'ի Հօրէ ելանէ, և ընդ Հօր և ընդ Որդւոյ երկրպագի և փառաւորի». զոր և կցորդ արարեալ մինչև ցայսօր, պաշտի յեկեղեցիս Հայոց յաւուր ճրագալուցի յայտնութեան տեառն: Եւ ապա ձեռնադրէ նոցա եպիսկոպոս զԱբդիշոյ: Դէպ եղև սմա աշխարհաժողով բազմութեամբ 'ի տօնի Վարդավառին լինել 'ի Բագուան. և բազմացեալ էին երգք շարականաց յեկեղեցիս հայոց, մինչև ոչ գիտել միոյ գաւառի երգեցող՝ զմիւսոյն. և ասացին շարական Վարդավառի հարցինն, և միւս գաւառ ոչ կարաց փոխել զնա, և փոխեցին բազում շարականս, և ոչ զայն ևս գիտէին: Ապա հայրապետն Ներսէս հաւանութեամբ ամենայն ժողովոյն ընտրեցին զպիտանին և զօգտակարն. զի յամենայն յեկեղեցիս յամենայն աւուր մի պաշտօն լիցի ըստ աւուրն խորհրդոյ. և ընտրեցին արս իմաստունս, զի շրջեսցին ընդ ամենայն աշխարհս Հայոց, և զնոյն կարգաւորութիւնս հաստատեսցեն, որ է մինչև ցայսօր:

Յետ Թէոդորոսի եկաց մարզպան Հայոց Համազասպ ամս եօթն: Եւ յետ Ներսէսի առ զկաթուղիկոսութիւնն տէր Անաստաս ամս վեց: Սա կոչեաց առ ինքն զմեծ վարդապետն Անանիա՝ 'ի Շիրակ գաւառէ, այր բանիբուն և հանճարեղ, գիտող յոյժ ամենայն տումարական արուեստից, զի կարգեսցեն անշարժ տոմար Հայոց, որպէս

այլոց ազգաց. զոր արարեալ մեծաւ ջանիւ՝ մինչ կամէին ժողովով հաստատել՝ վախճանի սուրբն Անաստաս, անփոյթ եղեալ իւր գլխի եկեղոյն, այլ առաջին կարգաւն վարէին: Ի հինգերորդ ամի Անաստասայ եղև շինուած կաթուղիկէին՝ որ յաւանն Արուճ, զոր շինեաց Գրիգոր Պատրիկն, յորում մկրտի նահատակն Դաւիթ, ազգաւ Պարսիկ, որ յառաջն Սուրհան կոչէր, և վասն վկայութեանն Քրիստոսի կախեցաւ զփայտէ 'ի Դուին:

Յետ Համազասպայ եղև մարզպան Հայոց Գրիգոր Մամիկոնեան ամս տասն, զոր սպանին Թազիքք: Եւ Ներսէս Շիրակացի իշխան եկաց ամս երեք: Զկնի Անաստասայ եկաց կաթուղիկոս տէր Իսրայէլ ամս վեց. և ապա տէր Սահակ ամս քսան և վեց: Սա չոգաւ դեսպանութեան աղագաւ առ Մահմետ զօրավարն Իսմայէլի, որ գայր 'ի կոտորել զազգս Հայոց վասն ապստամբութեանն 'ի Տաճկաց. և հասեալ 'ի Խառան՝ հիւանդացաւ և մեռաւ իսկ: Եւ դեռ ևս չէր եկեալ Մահմետ 'ի Խառան՝ գրեաց գիր պաղատանաց, եթէ ես եկի ընդ առաջ քո՝ աղաչել զերեսս քո վասն ազգին իմոյ, և ոչ ժամանեցի տեսութեան քո, զի որ ամենեցուն շտեմարանն է՝ կոչեաց զիս: Այլ երդումն տամ քեզ զուխտադրութիւնն Աստուծոյ առ Աբրահամ և առ Իսմայէլ հայրն ձեր, զի մի ինչ արասցես չար ազգիս իմոյ, և հարկեսցին ձեզ.

եթէ լուիցես աղաչանաց իմոց, եկեսցեն օրհնութիւնք իմ 'ի վերայ քո, և եթէ ոչ լուիցես՝ անէծք ժամանեսցեն քեզ. և դարձուսցէ Աստուած զսիրտս զօրաց քոց ոչ առնել զկամս քո: Եւ իբրև եկն Մահմետ 'ի Խառան, ասացին նմա զամենայն, և ետուն նմա զթուղթն. և իբրև ընթերցաւ, եհարց՝ եթէ ուր իցէ գերեզմանն. և ցուցին նմա զտեղին, զի առ ժամայն էր վախճանեալ, և չև ևս էր թաղեալ. և երթեալ փաղփաղակի բաց տեսին իւրեանց՝ ողջոյն ետ մեռելոյն իբրև կենդանւոյ: Եւ ասեն՝ թէ մեռեալ մարմինն պատասխանի ետ, և ընկալաւ զողջոյնն իբրև զկենդանւոյ, և ասաց Մահմետ. 'ի քումմէ գրոյ ծանեայ զքեզ, այր Աստուծոյ. արարից և կատարեցից զամենայն հրամանս քո: Եւ փաղփաղակի եկոյծ զթշնամութիւնն, և ստիպանս առաքեաց Հայոց՝ հարկ եդեալ 'ի վերայ նոցա. և ինքն դարձաւ յաշխարհ իւր: Եւ յետ Սահակայ առնու զկաթուղիկոսութիւնն տէր Եղիայ:

Իսկ յետ Հերակլի առնու զթագն որդի նորա Կոստանդին: Ի սորա աւուրս եղև յարձակումն Իսմայէլի ընդ աշխարհս ամենայն. և յետ նորա որդին իւր համանուն հօրն: Իսկ զիշխանութիւնն Իսմայէլի, յետ Աբուբաքրայ և Օթմանայ և Մարի, առնու Մաւիէ: Իսկ զմարզպանութիւնն Հայոց յետ Ներսեհի առնու Աշոտ՝ որ սպանաւ 'ի Տաճկաց, ամս երիս: Եւ յետ նորա Սմբատ Բագրա-

տունն Բիւրատեան ամս քսան։ Սա պատերազմեցաւ ընդ զօրս այլազգեաց 'ի Վարդանակերտն աւանի, և յաղթեաց քաջութեամբ 'ի Բագրեւանդ գաւառի։ Իժգ ամի սորա Մահմետ զծովն Գեղամայ արձակեաց և առ զՍևան, և 'իժգ ամի սորա Կասմ ամիրայ զիշխանսն Վասպուրականի կոտորեաց։

Եւ յետ Կոստանդնի կայսեր թագաւորեաց Յուստինոս. 'ի վերայ սորա յարեան նախարարք իւր, և հատին զքիթս նորա. և փախեաւ 'ի Խազիրս, և առեալ անտի իւր կին, և զօրս բազումս, և դարձեալ թագաւորէ։ Եւ յետ նորա առնու զթագն Լևոն, և յետ նորա Ափսիմերոս, և յետ նորա Յուստինոս, և յետ նորա Փիլիկոս Վարդան, և յետ նորա Թէոդորոս, և յետ նորա Լևոն։

Եւ զիշխանութիւնն Իսմայէլի յետ Մաւեայ առնու Իզիտ, և յետ նորա Մրվան, և ապա Աբդլմելէք. սա այրեաց զիշխանսն Հայոց 'ի Նախջաւանի յեկեղեցւոջն. և ապա որդի նորա Վլիթ, և ապա Սուլիման. սա զԴարբանդ էառ, և հրամայեաց քակել զպարիսպն. և մինչդեռ քակէին, գտին քար մի՝ յորում գրեալ էր. ես Մանկուն կայսր շինեցի զքաղաքս աշտարակս յիմոց գանձուց. 'ի վերջին աւուրս քակեսցի սա յորդւոցն Իսմայէլի և յիւրեանց գանձուց շինեսցի. և իբրև տեսին զքարն՝ դադարեցին, և շինելոյ սկիզբն արարին։

Զկնի Սուլիմանայ առնու զիշխանութիւնն Ումառ։ Սա գրեաց առ Լևոն կայսր տեղեկանալ վասն քրիստոնէական ուսմանցս, և կայսրն գրէ պատասխանի լի իմաստութեամբ, կարի ձաղելով զօրէնս նոցա։ Եւ իբրև ընթերցաւ Ումառ, ամաչեաց յոյժ, և սկսաւ զպարշելին 'ի դուրս հանել յօրինացն իւրեանց, թէպէտ ոչ համարձակեցաւ զամենայն եղծանել, սակայն բազում ինչ ուղղեաց յանկարգիցն, և այնուհետև բարեմտութեամբ կայր առ ամենայն քրիստոնեայսն, ևս առաւել առ ազգս Հայոց. և հրամայեաց գերելոցն դարձ առնել յաշխարհն Հայոց, յորում ժամանակի արձակեցաւ և Վահան Գողթան տէրն, որ վկայեաց յաւուր շահի Հէշմայ, քանզի յետ Ումառայ առ զիշխանութիւնն Իզիտ, և ապա Շամ, և ապա Վլիթ, և զկնի նորա Մրվան։

Իսկ յետ տեառն Եղիայի առնու զկաթողիկոսութիւնն տէր Յովհաննէս Օձնեցի։ Սա էր այր իմաստասէր և սուրբ, և վայելուչ հասակաւ մարմնով, և հոգւով ևս առաւել գեղեցիկ։ Զսա կոչեաց Հէշմ 'ի դուռն իւր, և վասն վայելչութեան երեսաց նորա մեծապէս պատուեաց զնա. քանզի խարտեալ ոսկի, և արկեալ զմօրուօք իւրովք եմուտ առ նա։ Եւ տեսեալ Հէշմայ զարմացաւ ընդ գեղեցկութիւնն, և առէ ցնա հեզութեամբ. վասն Քրիստոսին ձերոյ ասեն, եթէ կարի յոյժ հեզ էր և խոնարհ, և զաղքատութիւնն

տալ սիրէր. զայս յայտ առնեն և կորդք քրիստոնէից, զի որ նոցա առաջնորդքն են՝ զաղքատութիւն և զգծծութիւն տալ մեծարեն քան զփարթամութիւն և զճոխութիւն. իսկ դու ընդէ՞ր այդպէս զարդարեալ ես: Ասէ ցնա սուրբն. դու քան զծառայն քո տալ ինչ ոչ ունիս, բայց միայն զԹագդ և զհանդերձդ թագաւորական, և վասն այդորիկ երկնչին 'ի քէն և պատուեն զքեզ: Առաջին հարքն մեր նշանագործք էին և սքանչելի վարուք. վասն այնորիկ երկնչէին 'ի նոցանէ ընդ ձեռամբ անկեալքն, և կատարէին զհրամանս նոցա դողութեամբ: Իսկ մեք այնպիսիք ոչ եմք, վասն այնորիկ զարդարիմք մեք 'ի հանդերձս և 'ի ձև, զի մի արհամարհեսցի հրամանք մեր. և մերկացուցեալ զկուրծս իւր՝ եցոյց նմա զմազեղէնն, զոր զգեցեալ էր 'ի ներքոյ հանդերձին երևելոյ, և ասէ. այս է իմ հանդերձ. և զարմացաւ արքայ, և զովեաց զհաւատս քրիստոնէից, և ասէ ցսուրբն. խնդրեա զինչ և կամիս, և արարից քեզ. ասէ հայրապետն. երիս իրս խնդրեմ 'ի քէն, որ քեզ դիւրին է տալ: Առաջինն այս. 'ի քրիստոնէից զոք մի բռնադատեսցես թողուլ զհաւատս իւր, այլ յիւրաքանչիւր կամս թողցես. և երկրորդ՝ զազատութիւն եկեղեցւոյ ընդ հարկաւ մի դնիցես, և 'ի սարկաւագաց և 'ի քահանայից մի ինչ առնուցուս. և երրորդ՝ ուր և իցեն քրիստոնեայք 'ի տէրութեան քում, համարձա-

կութեամբ պաշտեսցեն զպաշտօնս իւրեանց. զայս զրոյց տուր մեզ. և ամենայն ազգ իմ ծառայեսցեն քեզ: Եւ վաղվաղակի հրամայեաց գիր գրել ըստ խնդրոյ նորա, և կնքեաց մատանեաւ իւրով, և ետ նմա պատիւս բազումս, և գումարեաց զօրս բազումս ընդ նմա, և առաքեաց մեծաւ պատուով յաշխարհս Հայոց: Եւ նորա եկեալ հալածեաց զամենայն Յոյնս՝ որք էին յաշխարհին Հայոց, եթէ վերակացուք, եթէ զինուորք. և նոցա փախուցեալք այնքան շտապով, մինչև զգանձս ևս անգամ ոչ ժամանել տանել ընդ իւրեանս. այլ աստէն յաշխարհիս թողեալք, և զհանգամանս տեղւոյն զրով ընդ իւրեանս տարեալ: Եւ սրբոյ հայրապետին զաշխարհս ընդ իշխանութեամբ Իսմայէլի նուաճեալ, ինքն ժողով առնէ 'ի Մանազկերտ. կոչէ և զԱթանաս պատրիարք Ասորւոց. և նա առաքէ վեց եպիսկոպոս, և նզովէ զՅուլիանիան և զապականացու ասողս 'ի Քրիստոս, և զԲարշապուհ և զԳաբրիէլ բանսարկուս Հայոց և Ասորոց, և կանոնական օրինադրութեամբ պայծառացոյց զեկեղեցի, 'ի բաց ընկեցեալ զդաւանութիւնն Քաղկեդոնի, որ յաւուրցն Հերակլի կայսեր և Եզրի զայթակղոսի ունէր անկարգութիւն յաշխարհս Հայոց: Կարգեալ զընթերցուածն սրբոյն Յակոբայ և Կիւրղի, և զամենայն տօնն՝ որպէս կարգեալ էր սրբոյն Գրիգորի՝ տօնեցին 'ի ԺԸ Դեկտեմբերի ամսոյ Դաւթի մարգարէին և Յա-

կորայ առաքելոյն, զոր յայլ ազգս ծննդեան Տեառն առնէին, և երգեաց շարական հարցին. Մեղաք յամենայնի և զպատուէ՛. որ մինչև ցայսօր պաշտի յեկեղեցիս Հայոց, սկսեալ 'ի ՃՂԵ Թուականէն մինչև 'ի ՈՂ Թուականս, որ այժմ յաւուրս մեր է։ Եւ այսպէս կարգաւորեալ զաշխարհս ամենայն առաքինութեամբ, և ինքն վարդապետութեան և աղօթից պարապեալ՝ շինէ և եկեղեցի մեծ 'ի գեւղն իւր Օձուն, որ հուպ է առ քաղաքն Լոռէ, և իւր ընտրեալ տեղի բնակութեան սակաւ մի 'ի բացեայ 'ի գիւղէն՝ անդ դադարէր։ Եւ եղև օր մի՝ զի յաղօթս էր սուրբն, երկու վիշապք ահագինք յարձակեցան 'ի տեղին, ուր կայանքն առաքինւոյն, և տեսեալ պաշտօնէին նորա՝ զարհուրեցաւ, աղաղակեաց առ սուրբն օգնել։ Եւ սուրբն կնքեաց ընդդէմ նոցա, և առժամայն քարացան, և են մինչև ցայսօր. և ջուր բղխեաց 'ի պորտոյ վիշապին և բժշկութիւն է ամենայն օձահարի, որք հաւատով ապաւինին յաղօթս սրբոյն։ Եւ կալեալ զհայրապետութիւնն ամս մետասան, հանգեաւ 'ի Քրիստոս պարկեշտ վարուք։

Եւ յետ նորա առնու զկաթուղիկոսութիւնն տէր Դաւիթ ամս երեքտասան։ Սա էր յԱրմունեաց 'ի Կոտայս գաւառէ. սա փոխեաց զաթոռն 'ի Դւինայ յԱրամոնս՝ շինեալ եկեղեցի և տուն բնակութեան հայրապետական, զի նեղացաւ նա

յոճրագործ ազգէն Մահմետի։ Եւ յետ նորա եկաց կաթուղիկոս տէր Տրդատ ամս քսան և երեք։ Սա էր յՕթմսոյ գեղջէ, այր պարկեշտ և սուրբ, և փայլեալ ամենայն առաքինութեամբք, և յաւուրս սորա դադարեցան հէնքն Իսմայէլի։ Եւ յետ նորա եղև կաթուղիկոս միւս տէր Տրդատ ամս երեք։ Եւ ապա տէր Սիոն ամս ութ։ Սա առ ստամբն Սիմ կոչեցեալ լերին զցամաքեալ աղբիւրն հսկմամբ աղօթից դարձեալ բղխեցոյց։

Իսկ յետ Լևոնի կայսեր թագաւորէ որդի նորա Կոստանդին. սա կոչեցաւ Կաւալինոս այսինքն Թրքաժողով. զի զօրն Տաճկաց բանակեալ էին առ ափն Ալիս գետոյն, հրամայեաց թրիք ժողովել և արկանել 'ի գետն. և նոցա տեսեալ՝ անարեկ եղեն, կարծեցեալք անթիւ լինել զօրացն, և փախեան 'ի նմանէ։ Պատմի 'ի միում աւուր զկնի միմեանց հինգ առիւծ սպանանել սորա։ Սա զԿարնոյ քաղաք էառ, և հետ երկու ամի շինեաց զնա Իգլտ ամիրայ։

Յետ Մրվանայ առնու զիշխանութիւնն Իսմայէլի Ապտլայ, և յետ նորա միւս Ապտլայ, այր ժանդ և արծաթասէր, զոր կոչէին զնա ազգ Ապալ-Դանգի, այսինքն է՝ ծառայ դանգի. զի բառ լեզուին Հագարացւոց՝ այսպէս կոչի. զի զդանգ առաւել սիրէր քան զԱստուած։ Սա շինեաց զՊաղտատ. սա բազում չարիս անցոյց ընդ աշխարհս Հայոց հարկապահանջութեամբ և յա-

փչատակութեամբ, և այնքան նեղեաց, մինչև զմեռելոցն 'ի կենդանեացն պահանջել զհարկս, և հատաւ գլուխ արծաթոյ յաշխարհէս Հայոց, և կոտորումն եղև Քողխու, Մրենոյ, Թալնայ, ուր սպանան ոգիք եօթն հարիւր. և գերեցան հազար և երկու հարիւր։ Եւ Մուշեղ Մամիկոնեան և Սամուէլ այլովք ազատօքն Հայոց կոտորեցան յաւուր զատկացն յիմայէլացւոց։

Յայսմ ժամանակի 'ի Թուականի Հայոց ՄԻԸ էր Ստեփաննոս դրան երէց, որ բանիբուն ճանաչիւր, եհաս 'ի կատարումն ամենայն իմաստասիրական և գրամարտիկոս արուեստից՝ հանդերձ առաքինութեամբ հոգևորականն։ Էին և վարդապետք աշխարհիս Հայոց ընտրեալք և լուսաւորք՝ տէր Եփրեմ և Անաստաս, Խաչիկ և Դաւիթ Հոռոմայրեցի, և մեծն Ստեփաննոս Սիւնեցի աշակերտ Մովսէսի, զոր 'ի վերագոյնն յիշատակեցաք, որ թարգմանիչ եղև 'ի Յունականէն 'ի Հայ լեզու, և 'ի վերայ թարգմանութեանն արար և երգս հոգևորս քաղցր եղանակաւ, շարականս և կցուրդս և այլ երգս. արար և մեկնութիւն համառօտ՝ աւետարանացն, և քերականին, և Յոբայ, և Տէր եթէ շրթանցն գիշերոյ։ Ասի վասն որոյն Ստեփաննոսի, թէ 'ի մանկութեանն վարժ և կիրթ էր գրովք սրբովք։ Հանդիպի նմա հակաճառ ատեան Սմբատ՝ երկաբնակ այր. և թողեալ զնա յանհաւանութեան՝ գնաց 'ի Հռոմս. և

գտեալ անդ միայնակեաց մի ուղղափառ՝ դադարեաց առ նմա, և ուսանէր 'ի նմանէ։ Եւ լուեալ Սմբատայ, գրէ առ Թագաւորն Հռոմոց, թէ Ստեփաննոս հերձուածող՝ որ հայհոյէ զդաւանութիւնդ ձեր, այդր դադարեալ է առ այս անուն միայնակեցի։ Եւ յոյժ ցասուցեալ Թագաւորն՝ խնդրէ զնա. և խրատ ետ նմա միայնակեացն ասել զինքն, թէ մուրացիկ եմ Թափառական։ Եւ լուեալ զայն կայսերն՝ շիջաւ ցասումն բարկութեան նորա։ Եւ գտեալ համարձակութիւն Ստեփաննոսի՝ աղաչեաց զկայսրն բանալ նմա զարկեղս գրոց սրբոց. և գտեալ մատեան մի ոսկետուփ սակս հաւատոյ՝ մատոյց առաջի կայսեր՝ և ընթերցեալ զայն՝ յղէ զնա 'ի Հռոմ քաղաք. բերեալ անտի երիս գիրս՝ համաբարբառս այնմ գրոց՝ յաղագս ճշմարիտ հաւատոյ, զի զաշխարհն յայն կրօնս դարձուսցեն։ Իսկ նորա զգրեանն 'ի Հռոմայ առեալ՝ անփոյթ զհրաման ինքնակալին արարեալ, գայ 'ի Դուին քաղաք՝ զիւր աշխարհն նոքօք լուսաւորել։ Եւ ձեռնադրէ զնա տէր Դաւիթ եպիսկոպոս Սիւնեաց, 'ի խնդրոյ Քուրթոյի և Բաբգենի իշխանաց Սիւնեաց. և զմի ամ կալեալ զաթոռն, սպանեալ եղև 'ի պոռնիկ կանանց 'ի Մոզն գաւառի. զորոյ զմարմինն առեալ բերին յարկազան սենեակն, և անտի 'ի Թանատաց վանս փոխեցին 'ի հանգիստ։ Եւ բերեալ զգրեանսն երանելւոյն Ստեփաննոսի 'ի Հռոմայ՝ յեղխ-

կոպոսութիւնն Միւնեաց, յերրեակ դասու եպիսկոպոսացն Հայոց կարգեցաւ։ Իսկ միայնակեցումն, Նոյ անուն, տեսանէր 'ի տեսլեանն, զի Ստեփաննոս զգոգն արեամբ լի առաջի Փրկչին ունէր և ասէր. տես Տէր զայս, զի քոյ են դատաստանք արդար. և ազդեալ միայնակեցն 'ի գաւառն զգալ բարկութեանն, և բողոքէ կալ յաղօթս։ Եւ անա խաւար 'ի վերուստ անտեսանելի կալաւ զՄոգանն սահմանն, և զաւուրս քառասուն շարժեցաւ վայրն, և խորասոյզ եղեալ ընկղմեցան կենդանւոյն ոգիք իբրև տասն հազար։ Վասն այնորիկ Վայոց Ձոր անուանեցաւ մինչև ցայսօր ժամանակի։ Եւ բազում բժշկութիւնք լինին 'ի նշխարաց նորա, որք հաւատով ապաւինին 'ի բարեխօսութիւն սրբոյն, ախտացելոց 'ի պէսպէս ցաւս և 'ի հիւանդութիւնս. զի Աստուած զփառաւորիչս իւր փառաւորէ աստ և 'ի հանդերձեալն։

Եւ ապա տէր Եսայի, յԵղապատրուշ գեղջէ, կոչի շնորհօքն Աստուծոյ 'ի պէտս ժողովրդեան իւրոյ 'ի քահանայութեան և յեպիսկոպոսութեան կարգէ 'ի հայրապետութիւն արժանապէս ամս երեքտասան։ Եւ յետ վախճանի նորա Իպնդաւկլ կողոպտէ զեկեղեցին, և բազում կաշառօք յաջորդէ տէր Ստեփաննոս ամ մի. սա էր 'ի Դփնայ։ Եւ յետ նորա Յովաբ ամ մի. սա Յուստիանէն 'ի Կուրապաղատէն։ Եւ զկնի նորա տէր Սողոմոն

ամ մի. սա էր 'ի Մաքենոցաց վանիցն ծերացեալ յոյժ։ Եւ յետ նորա տէր Գէորգ ամս երիս, որ Ուղղ Սրբուկն կոչէր. սա էր յԱրագածոտանէ։ Եւ յետ նորա տէր Յովսէփ ամս մետասան. սա էր յԱրագածոտանէ ի բնակչաց սրբոյն Գրիգորի։

Իսկ յետ Կոստանդնի կայսեր առնու զթագն Լևոն, և յետ նորա Կոստանդին, և Եռինէ մայր իւր։ Ի սոցա աւուրս կանգնումն եղև պատկերացն 'ի Հռոմ, և եղև սոցա տեսանել տապան մի մեծ մարմարեայ, և զարմացան և հրամայեցին բանալ զտապանն, և գտին գրեալ 'ի նմա. թէ զինչ օգուտ է ծածկելդ զիս, զի յաւուրս Կոստանդեայ և Եռինեայ մօր նորա տեսանելոց է արեգական զիս. և յետ տասն ամի 'ի միասին թագաւորելոյ՝ ընկէց զմայրն իւր Կոստանդին՝ և ինքն թագաւորեաց ամս հինգ. և ապա ըմբռնեալ մօրն զորդին՝ փորեաց զաչս նորա, և ինքն թագաւորեաց ամս հինգ։ Եւ յետ նորա թագաւորեաց Նիկիփոռ։ Յաւուրս սորա երկու եղբարք Սահակ և Յովսէփ Իսմայէլացիք՝ կատարեցան վկայութեամբ 'ի Քրիստոս 'ի Կարնոյ քաղաք յԱրաց 'ի ձև։ Եւ յետ նորա թագաւորեաց Միքայէլն։ Յաւուրս սորա սով սաստիկ ընդհանուր. յաւուր միում 'ի քաղաքին Կարնոյ գտան մեռեալք երեք հազար։ Եւ յետ նորա Լևոն։ Սա զպատկերսն ընկէց, և շինեաց զԲիւզու և զԱրկադուպօլիս։

Իսկ յետ այրելոյ գլխաւորացն Հայոց 'ի Նախճաւանի, յետ քսան ամի Հայոց մարզպան եղև Աշոտ Բագրատունի ամս եօթն և տասն. և յետ նորա Սմբատ ամս քսան և երկու։ Եւ յետ նորա Աշոտ Մսակերն ամս քսան. և ապա Սմբատ՝ որդի Աշոտոյ, որ Աբլաբաս կոչէր, ամս երեսուն և հինգ։ Սա շինէ զսուրբ քաւարանն մեծապայծառ զարդու յԵրազգաւորս, որ արդ՝ Շիրակաւանն կոչի։

Իսկ գլխաւորութիւնն Իսմայէլի յետ Աբդլայի առնու Մահադի, և ապա Մուսէ, և յետ նորա Ահարոն, և յետ նորա Մահամատ, և ապա Մահմուն, և ապա Ապուսահակ Մահմետ, և յետ նորա Ահարոն։

Իսկ յետ Յովսէփայ եղև կաթուղիկոս տէր Դաւիթ ամս քսան և հինգ։ Սա էր 'ի Մազազայ՝ 'ի գեղջէ Կակաղայ։ Եւ յետ նորա տէր Յովհաննէս ամս քսան երկու։ Սա էր 'ի գաւառէ Կոտայից՝ 'ի գեղջէ Ովայից։ Յութերորդի ամի սորա չարախօսք ոմանք 'ի նմին տանէ բանս հայհոյութեան խօսէին զորոյն, որք չարամահ սատակեցան նանրալեզուքն, որպէս այնոքիկ՝ որք առ Նարկեսոսիւն էին, Երուսաղէմի եպիսկոպոսիւ։ Եւ յետ նորա Զաքարիայ։ Սա էր 'ի Կոտայս գաւառէ՝ 'ի գեղջէն Ձագայ. 'ի միում աւուր ամենայնին արժանաւորեալ՝ սարկաւագութեան և քահանայութեան և կաթողիկոսութեան, այր սուրբ

և առաքինի ամս քսան երկու։ Ի սորա աւուրս եկաց գլուխ Իսմայէլի այր ոմն անօրէն և Աստուածատեաց, Ջաֆր անուն նորա. սա յոյժ մախայր ընդ անունն Քրիստոսի, և զբազումս հրապուրէր յուրացութիւն, և զևս բազումս՝ որք ոչ հաւանէին նմա, սպանանէր դառն տանջանօք։ Բազում չարիս գործեաց նա ընդ աշխարհս, որ ընդ իշխանութեամբ նորա էին, եւ առաւել ընդ աշխարհս Հայոց սպանմամբ և գերութեամբ. քանզի առաքեաց ոստիկան մի Ապուսէթ անուն, որոյ եկեալ կալաւ զիշխանն Տարօնոյ զԲագարատ և զայլս բազումս. զոր իմացեալ բնակիչք լերինն Խոյթայ՝ որ Սասունք անուանէին, եկեալ սպանին զԱպուսէթն. զոր լուեալ Ջաֆրի բարկացաւ յոյժ, և առաքեաց զօրագլուխ մի՝ Բուղայ անուն, Թուրք ազգաւ, այր խորամանկ և անօրէն. որ եկեալ աւերեաց զաշխարհս Հայոց զօր խաբէութեամբ և զօր պատերազմաւ, և խաղացոյց 'ի գերութիւն 'ի Սամարայ, որ և զՍմբատ սպարապետն Հայոց խաբէութեամբ տարաւ առ Ջաֆր. և նա եդ զնա 'ի բանտի, զի ուրասցի զՔրիստոս. որ ոչ հաւանեալ անօրինին, այլ համարձակապէս զՔրիստոս խոստովանեցաւ և պահեցաւ 'ի նմին բանտի, մինչև անդէն մեռաւ, և զխոստովանողական անունն ժառանգեաց. և այլ բազումք վկայեցին վասն Քրիստոսի, և մեռան յանօրինէն։ Եւ զարկաւագ ոմն Ասորի, անուն Նանան, վասն համբաւոյ

վարդապետութեանն նորա ըմբռնեալ ածին առաջի Զամբրի. և համարձակութեամբ խոստովանեցաւ զՔրիստոս. և տանջեալ զնա՝ արգել 'ի բանտ յոլով ժամանակս. յետոյ արձակեցաւ խնամօքն Աստուծոյ, որ և գրեաց զմեկնութիւն աւետարանին Յոհաննու լուսաւոր բանիւք։ Նոյնպէս և յիշխանացն Հայոց Ստեփաննոս անուն, որ Կոնն կոչէր, նահատակութեամբ կատարեցաւ 'ի Քրիստոս, և բազումք ուրացան զճշմարիտն Աստուած վասն երկիւղի մահուն. և այլ յոլովակի չարիս անցոյց ընդ յաշխարհս, զորս գտցես 'ի գիրս Թովմայի և Շապուհոյ և այլոց պատմագրացն։ Ի թուիս Հայոց ճղդ, և Ասորւոց ռճզ, շինեաց Զամբր զԲագդատ 'ի վերայ Տիգրիս գետոյ չորս աւուր ճանապարհաւ հեռի 'ի Բաբիլոնէ. և ծնաւ կին մի, երեսուն տարի ապրեցաւ, ոչինչ կերաւ։

Իսկ զկնի մահուան խոստովանողին Սմբատայ առնու զիշխանութիւնն Աշոտ որդի նորա։ Սա ամենայն նախնեաց վեհագոյն գտաւ, զի զկնի ասպարապետութեան իշխանաց իշխան եղև։ Եւ ապա թագաւորեաց յերկոցունց թագաւորացն յԻսմայելականէն և Յունականէն։ Քանզի յետ Զամբրի առնու զթագն Մահմետ. և ապա Ահմատ. ապա Արգիլա. և ապա Մահմետ։ Սա իշխանացոյց զԱշոտ, և ապա թագ եդ նմա։

Իսկ յետ Լևոնի կայսեր առնու զթագն Միքայէլն. և յետ նորա Թէոփիլոս. և զկնի նորա

Միքայէլն. և յետ նորա Վասիլն։ Զսա ասեն 'ի Տարօնոյ, 'ի գեղջէ Թլայ։ Սա շինեաց զաւրբ Զօրավարն. սա դարձեալ թագ ետ Աշոտոյ 'ի վերայ Իսմայէլականին։ Առ Աշոտ գրեաց թուղթ պատրիարքն Կոստանդնուպօլսի Փոտ, և առաքեաց մասն 'ի խաչէն տէրունական, որոյ պատասխանի գրեաց հրամանաւ Աշոտոյ վարդապետն Իսահակ գեղեցիկ և իմաստասիրական։ Արդ 'ի բառնալոյ թագաւորութեանցն Արշակունեաց մինչև զթագաւորութիւնն Բագրատունեաց լինին ամք չորս հարիւր երեսուն և չորս։

Յլդ թուականին Հայոց թագաւորեաց Աշոտ, այր երկիւղած յԱստուծոյ և բարեպաշտօն, և զարդարիչ եկեղեցւոյ, և սիրող պաշտօնէից Աստուծոյ, որ զարդարեաց զեկեղեցիս Հայոց մեծաւ զարդուք և պայծառութեամբ, երեսուն երկու ամ իշխանաց իշխան կացեալ, և հինգ ամ թագաւորեալ Հայոց, և փոխեցաւ 'ի Քրիստոս բարիոք մահուամբ և ճշմարիտ դաւանութեամբ։ Եւ յետ նորա թագաւորեաց որդի իւր Սմբատ՝ ամս քսան չորս։ Սա վկայութեամբ կատարեցաւ 'ի Քրիստոս 'ի Դուին, կախեալ զփայտէ 'ի Յուսփայ՝ որդւոյն Աբուսաճեայ։

Իսկ յետ Զաքարիայի առնու զկաթուղիկոսութիւնն տէր Գէորգ՝ 'ի քաղաքագեղջէն Գառնոյ. սա գերեցաւ յԻսմայէլացւոցն. և իշխանքն Աղուանից գնեցին և արձակեցին։ Եւ յետ նորա եկաց

կաթողիկոս տէր Մաշտոց՝ ամ մի։ Սա էր այր սուրբ և առաքինի, և լցեալ հանճարով և իմաստութեամբ, բնակէր 'ի կղզւոջն Սևան մեծաւ ճգնութեամբ, զամս քառասուն հաց ոչ եկեր, և ջուր ոչ արբ, միահանդերձ և բոկոտն։ Սա կարգեաց զգիրսն՝ որ ըստ անուան իւրոյ կոչի Մաշտոց, ժողովեալ զամենայն կարգեալ աղօթսն և զընթերցուածսն 'ի միասին յարմարեալ յաւելուածով յիւրմէ, որ ունի յինքեան զամենայն կարգս քրիստոնէութեան, և հասեալ 'ի ծերութիւն պարարտութեան, հանգեաւ 'ի Քրիստոս փառաւորապէս. և եդաւ մարմին նորա 'ի գերեզմանի 'ի Գառնի. և շինեցին 'ի վերայ նորա եկեղեցի վայելուչ։ Եւ յետ նորա յաջորդէ զաթոռն տէր Յովհաննէս աշակերտ նորին և ազգային ամս քսան ութ։ Սա էր այր իմաստուն և բանաւոր՝ 'ի քաղաքագեղջէն Գառնոյ, ուստի սուրբ հայրապետն Գէորգ էր։ Սա գրեաց պատմութիւնս գեղեցկայարմարս, և զոր ինչ գործեցին անօրէն ազգն Հագարացւոց ընդ աշխարհս ամենայն մեծամեծ չարիս։

Արդ յայսմ վայրի կամ է ինձ սակաւ մի երկրորդել վասն պատահման չար ազգի Իսմայելի. զի հրամայէ Փրկիչն մեր և Աստուած տէր Յիսուս Քրիստոս, եթէ ամենայն թագաւորութիւն բաժանեալ յանձն՝ աւերի, որպէս և սոցայս. զի 'ի բազումս բաժանեալ տէրութիւնն. զի Սո-

փարն տիրէր աշխարհին Խորասանու, և Սւալիկն Ապուլթորապ 'ի Բասրացւոց քաղաքին, և Յիսէ Շեխայ որդի 'ի Պաղեստինէ, և որդին Ապլափոյ՝ 'ի Դիլմաց աշխարհին. և այլք ոմանք 'ի տեղիս տեղիս իշխանութիւնս յարուցեալ՝ ջանային բռնութեամբ տիրել իրերաց։ Վասն որոյ և դժուարագիւտ եղև անուանք անբարշտացն, բայց յորոց և է ոստիկանք չարք և անմարդի արձակեալք լինէին յաշխարհս մեր, որպէս գազանաբարոյ Բուղայ և անօրինագոյնն Ափշին, որդի յառաջագոյն եկելոյն չարագործին Ապասճիթայ, և կամ ևս չարագունին Յուսփայ, եղբօր Ափշնոյ, որ սպան զՍմբատ թագաւորն 'ի Դուին, և թագաւորեցոյց զԳագիկ ոմն 'ի տանէն Արծրունեաց, զորդի Դերենկանն, այր բարի և Աստուածասէր, որդի քեռ թագաւորին Սմբատայ Բագրատունւոյ։ Սա շինեաց զկղզին Աղթամար, որ 'ի ծովուն Բզնունեաց, քաղաք թագաւորական, և եկեղեցի հրաշագան և պայծառ յօրինուածով։

Այսոքիկ ամենեքեան չար վերակացուք, որ զոյլին յաշխարհս մեր աւերել և եղծանել, մինչև բարձաւ թագաւորութիւն Ամիրմումնեացն, և փոխանորդեցին Սկիւթացիքն, ոչ Եղլենախորհքն, այլ՝ բարբարոսականքն. քանզի զբազում ազգս հարեալ հնազանդեցուցին, և ինքեանք իշխեցին. ընդ որս և զիշխանութիւնն Տաճկաց հնազանդեցուցին. բայց զի զանուանս նոցա ոչ ուրուք զատք

դրեալ. վասն այնորիկ և ոչ մեք կարացաք դրոշմել. Թուի թէ՝ և ո՛չ 'ի դպրութիւն կենաց, այլ յարձանս անբարշտաց. վասն այնորիկ լքեալ՝ թողցուք զնոսա իբրև զարանց յուսացելոց 'ի զօրութիւնս իւրեանց, որք խլեցան յարկացն Աստուծոյ։

Ի սկսանել թագաւորութեանն Թուրքաց՝ որք յիսուն, Հայ ազգաւ, նեղեալք 'ի նոցունց, ելին յանապատ սպառազինեալք, և եկին 'ի Մարաշ. գտին այր մի քաջ, Փիլարտոս անուն, Հայ, եդին զնա գլխաւոր, և մտեալ 'ի Կիլիկիա, առին զբովանդակ աշխարհն, յորս էին և Ռուբինեանք սերեալք թագաւորազունքն, զի մինչև ցՄելիք շահ Սուլտանն գրեալ էր զպատճառս տիրելոյն նոցա մեծիմաստ վարդապետին՝ որ Սարկաւագն կոչէր, և երկրորդեալ էր Սամուէլ քահանայ։ Այլ և զհօր նորա զարիւնանախանձին Ալփասլանայ և զնորին հօր և հաւուց, որ Տուղրուպէկ և Մահմուտ և Սարչուկ անուանք են նոցա։ Այլ մեք դարձցուք անդրէն 'ի կարգ ճառին, ուստի ելաք. հանցուք արտաքս զմինն և ասասցուք խրախուսութեամբ. Նոքա 'ի ձեռանէ քումմէ մերժեցան. մեք ժողովուրդք և խաշն արօտի քո։

Քանզի յետ մահուանն Սմբատայ Բագրատունւոյ թագաւորէ Հայոց Աշոտ որդի նորա հրամանաւ Ռոմանոսի կայսեր, յետ եօթն ամի սպանման հօրն, ամս ութ։ Իսկ յետ Վասլի կայսեր թագաւորեաց

Լևոն, և ապա Ալէքսն։ Եւ զկնի նորա Ռոմանոս. սա հալածեաց զամենայն կրօնաւորս և զքահանայս Հայոց, որք էին յաշխարհէն Հոռոմոց, զի ո՛չ հաւանեցան դաւանութեանն Քաղկեդոնի. և եկեալ յաշխարհս Հայոց յաւուրս Աբասայ՝ որդւոյ Սմբատայ, հաստատեցին վանորայս զԿամրջաձոր և զԿապոյտ Քարն 'ի գաւառին Արշարունեաց, և զհռչակաւորն Հոռոմոսին կոչեցեալ վանք, և զԴպրէվանք 'ի Շիրակ գաւառին. շինեցին և եկեղեցի մի յանուն ամենասուրբ Աստուածածնին 'ի վանքն՝ որ կոչի Սանահին, 'ի սահմանս Լօռէ քաղաքին, և զի կոչէին զերիցունսն՝ Հոռոմոց երէց, անուանեցին զմի վանքն՝ որ 'ի Շիրակ՝ Հոռոմոց վանք. որ ցարդ ևս Հոռոմեցի վանք։ Եւ յետ Ռոմանոսի թագաւորէ Կոստանդին՝ որդի Լևոնի, և ապա Ռոմանոս, և զկնի նորա Նիկիփոր. և զկնի նորա Կիւժան։

Իսկ յետ Յովհաննիսի առնու զկաթուղիկոսութիւնն տէր Ստեփաննոս ամ մի. և ապա տէր Թէոդորոս ամս մետասան. և ապա տէր Եղիսէ ամս եօթն. և ապա տէր Անանիա Մոկացին ամս քսան երկու։ Յաւուրս սորա էր եպիսկոպոս մի 'ի կողմանցն Սիւնեաց, Յակոբ անուն, որ սկսաւ նորաձևութիւնս առնել խօսից և կարգաց. և այլ միւս եպիսկոպոս, Խոսրով անուն, որ ասէր՝ ո՛չ է պարտ Կիւրակէ առնել զօրն Տէրունի. այլ Կիւրակէ, զի Հոռոմերէն է, ասէ. նմանապէս և հաստակաց

թողուլ առէր զգէսս տղայոց, և ոչ հատանել մինչև երկայնացի և պատ առցէ, զի վասն այնորիկ առէ, կոչի պատանի. և ապա կտրել հրամայէր, վասն այնորիկ առէ, կոչի կորիճ: Եւ առէր ոչ է պարտ եպիսկոպոսի ընծայաբեր լինել եպիսկոպոսի, այսինքն կաթուղիկոսի. զի աւելի օրհնութիւն ոչ ունի առէ. բայց միայն զանուանակոչութիւնն. և այլ այսպիսի անիմաստ բանիւք լցոյց զաշխարհս, և խռովութիւն յարոյց ամենայն ուրեք վասն նորաձևութեան. առ որ գրէ Թուղթս խրատականս տէր Անանիա 'ի բաց կալ յանհանճար և ընդունայն բանիցն: Իսկ նա փոխանակ զղջմանալոյ առաւել ևս անամօթացաւ, զանձն իմաստուն կարծեցեալ, և զնոսա տգէտս. առ որ հարկաւորի դարձեալ գրել երկիցս և երիցս. գրեն և այլ իմաստուն վարդապետք, և յիշեցուցանեն նմա 'ի գրոց զհանգամանս կարգաց: Իսկ նա 'ի նոյն միտս ամբարշտութեան կացեալ, քամահէ զամենեքումբք. և ինքն Յակոբ ապստամբեալ 'ի կաթուղիկոսէն՝ ամրանայր 'ի բերդն Սիւնեաց. զոր ընդ բանիւք արարեալ կաթուղիկոսին՝ գրէ առ տիկինն Սիւնեաց տալ զնա 'ի ձեռս, զի խրատեսցէ զնա, զի թերևս դարձցէ 'ի զղջումն. և նոքա ոչ ետուն զնա 'ի ձեռս նորա. և զնոսա ևս արար ընդ բանիւ կապանաց. և 'ի նոյն միտս եկաց մինչև մեռաւ: Եւ ապա գնաց տէր Անանիա յաշխարհն Սիւնեաց հնազանդել զապստամբ-

Յոյնս. և յետ նորա Կիռ Թողոմն. և ապա Տուկիծն. և յետ նորա Դիւժէնն: Յառաջին ամի սորա մեռաւ Գագիկ Շահնշահ Թագաւորն Վանանդայ. և յութերորդ ամի իշխանութեան նորա ել Դիւժէնն բազում զօրօք 'ի Պարս 'ի պատերազմ, և եկն 'ի Մանազկերտ և առ զնա, զոր լուեալ բռնաւորին Ալփասլանայ՝ եկն ընդ առաջ, և եղև սաստիկ պատերազմ, և պարտեցաւ Դիւժէնն, և ըմբռնեցաւ 'ի նմանէ, և հարկ եդեալ 'ի վերայ նորա՝ եթող: Իսկ ազգն նորա ոչ հնազանդեցան նմա, այլ թագաւորեցուցին զՄիխայէլ որդի Տուկիծին. դարձեալ պատերազմեալ Միխայէլն եհար զԴիւժէնն. և զօրացն բուրձ ագուցեալ նմա, ածին առ Թագաւորն Միխայէլ. և 'ի ճանապարհին զաչս նորա փորեցին հրամանաւ կայսեր. և 'ի կսկծոյն մեռաւ 'ի շիա Թուականին:

Եւ 'ի սմին ամի դատաստանք երկայնամտին և արդարադատին Աստուծոյ յուզեցան 'ի վերայ խրոխտ և անզգամագիր գազանին Ալփասլանայ, մինչդեռ մոլորայր զայրագնութեամբ տիրել տիեզերաց և զմղձկեալ սրտին դառնութիւնն թափեալ և յայնոսիկ՝ զոր ոչ էր ածեալ ձեռամբ, յեղակարծ ժամանակի սրախողխող լեալ՝ բարձաւ ամբարիշտն յերկրէ, և մի՛ տեսցէ զփառս Աստուծոյ: Եւ յետ նորա թագաւորեաց բարբարոս որդի նորա, որ Մելիքշահն կոչիւր. սա ոչ չարութեան հօրն նմանեաց,

այլ զբարի ածեալ զմտաւ՝ զնոյն և արար առ ամենայն հնազանդեալս իւր, յաւէտ առ ազգս Հայոց. զի մտահաճ եղեալ, բառնէր զիմացուածս հօր իւրոյ՝ իբր թէ եղեալ հակառակ խաղաղութեան կենաց մարդկան, արեամբ և զրկմամբ խնդացեալ: Իսկ ինքն իմաստաբար քաղցրավարութեամբ կարգօք հանդերձէր զամենայն: Արդ արին այն և խոհեմ քան զյոլովս 'ի թագաւորաց, հոգ տարեալ ամենայնի, զի արդարութեամբ վարեսցի, զի մի ոք լիցի տրտում 'ի զրկելոց և հպարտ 'ի գոռոզից: Էր ազատաբարոյ և մեծախորհուրդ, այլ և տեսիլ մարմնոյն արժանի թագաւորութեան: Սա 'ի դոյզն ժամանակի զբոլորս հնազանդէր զտիեզերս, ոչ պատերազմաւ և բռնութեամբ՝ որքան սիրով և խաղաղութեամբ. և այսպէս բարի անուամբ կալեալ զիշխանութիւն ամս բազում, 'ի կնոջէն դեղակուր լեալ, վախճանէր:

Եւ ապա անպատմելի լեալ խռովութիւն զամս չորս, զի եղբայր նորա Դուդուշն, և որդի նորա Բեքիարուխն, զայսոսիկ ամս մարտիւ պատերազմի զբարեկարգութիւն աշխարհի 'ի բաց կորեցին, վասն ոչ ընդ փոյթ միոյ 'ի նոցանէն տիրելոյ՝ հոսմունս արեանց իբրև զուխից լինէր, ոչ միայն զինակիր նահատակաց, այլ և առ հասարակ ազանց, և գաւառաց. և այսպէս բարիքն 'ի բաց վճարեցան ընդ խզման կենաց թագաւորին, և ապա տիրեաց Բեկիարուխն՝ սպանեալ

զԴուդուշն, և յետ նորա Խզըլն. սա էառ զԼօռէ քաղաք և զուխտն սուրբն զՍանահինն և զՀաղբատ:

Իսկ յետ Միխայէլի կայսեր առնու զթագն Ալէքսն. 'ի տասն և եօթն ամի սորա՝ Հռոմայեցիք ելին ընդ Թիրակ 'ի կողմանս Ասիացւոց, խնդրեալ զքէն վրիժուց տառապանաց քրիստոնէից 'ի Սկիւթացւոց և 'ի Պարսից հանդերձ Տաճկաստանաւ, և բազում կրեցին նեղութիւն յորդւոցն բելիարայ, Ալէքս կոչեցելոյ, որ էր թագաւոր 'ի Կոստանդնուպօլիս, զաղտնի և յայտնի նենգութեամբ. քանզի հրամայեաց անօրէնն խառնել 'ի կերակուրն դեղ մահու, և այնպէս տալ նոցա, նոյնպէս և յըմպելին. ուտէին և մեռանէին. և 'ի ծովու ևս նենգեաց զնոսա, որ վստահանայինն 'ի նա, իբրև հաւատակից իւրեանց. և բարբարոսացն՝ խորամանկութեամբ օգնէր, որում հատուսցէ Տէր: Քանզի և չէր իսկ քրիստոնեայ՝ որպէս և ոչ մայր նորա. զի բազումք մեռան 'ի Ֆրանգացն, և մնացեալքն ունայն դարձան յԱնտաք՝ և առին զնա և զԵրուսաղէմ, երկու ազունք՝ Մայմունն և Տանգրիլն, և եօթն կոմսունք. և թագաւորեաց յԵրուսաղէմ Կոնտափրի, և ապա Պաղտոյնն ամս եօթն և տասն, և Ամարի ամս տասն և ինն. և եղև այս 'ի շխզ թուին Հայոց: Մեռաւ Սկիւթացի բռնաւորն Խզըլն 'ի յառման քաղաքին Դունայ 'ի զօրացն Պարսից, և ապա 'ի բազումս բաժանի տէրութիւն նոցա, ոմն

բռնացեալ 'ի Խորասան, և ոմն յԱտրպատական, և այլ ոմն 'ի կողմն Կապադովկացւոց և Հայոց. և ոմն յԵգիպտոս. և այլք յայլ տեղիս, որոց անուանքն անծանօթ մեզ։

Ի ՇՀԸ թուականին վախճանեցաւ տէր Բարսեղ, կալեալ զհայրապետութիւնն ամս երեսուն երեք, և յաջորդէ զաթոռն տէր Գրիգորիս, եղբայրն Ներսէսի, մեծաշուք պատուով. սոքա էին յազգէ սրբոյն Գրիգորի։ Վասն որոյ և ընդ նըստելն իսկ յաթոռ սուրբ լուսաւորչին սքանչելի հայրապետն սուրբն Գրիգորիս, պայծառացոյց զսուրբ եկեղեցի զանազան կարգօք և օրինադրութեամբ կանոնականօք, ամենայնիւ ջանայր ըստ օրինակի իւրոց նախնեացն վարել, սրբոյն Գրիգորի և զաւակի նորա նմանել։ Սա փոխեաց զաթոռն հայրապետական 'ի բերդն՝ որ կոչի Հռոմկլայ. քանզի երբև տարան Յոյնք առ իւրեանս զԳագիկ թագաւորն և զտէր Պետրոս, այնուհետև ոչ եղև յարևելս աթոռն հայրապետական, այլ ընդ իշխանութեամբ Յունաց. երբեմն 'ի Սեբաստիա, երբեմն 'ի Ծովքն կոչեցեալ վայր. իսկ սա փոխեաց 'ի Կլայն Հռոմէականն։ Եւ եղև պատճառ փոխելոյն այս. նեղացաւ 'ի Սկիւթականացն և 'ի Տաճկաց, այսր անդր յածելով. ապա ետես զբերդն ամուր՝ բարձեալ զսրբութիւնն իւր, և զսպաս եկեղեցւոյ, տարեալ եդ անդ 'ի պահեստի առ բարեմիտ կին իշխան մի, ազգաւ Փը-

րանգ. և եղև ընդ յաւուրսն ընդ այնոսիկ վախճանել իշխանին, որ էր տէր բերդին, և մնաց կինն նորա այրի, զոր աղաչեալ սրբազան հայրապետին զկինն բարեպաշտօն տալ զբերդն ցը-րհայրապետն, զի լիցի նա աթոռ կաթուղիկոսութեան Հայոց. և կինն ետ յօժարութեամբ, և յուղարկեալ սրբոյ հայրապետին զկինն յաշխարհն Կիլիկեցւոց առ մեծ իշխանաց իշխանն Հայոց Թորոս, և նա ետ նմա գեւղս և ագարակս և այլ կալուածս, և ուրախ արար զկինն յոյժ, և ապա առաքեաց զնա յաշխարհն իւր։

Այս Թորոս իշխան և եղբայր իւր Ստեփանէ որդիք էին իշխանին Լևոնի, որդւոյ Կոստանդեայ, որդւոյ Ռուբենայ, թոռունք յառաջագոյն ասացելոյ առնն, որ յազգականութենէ և 'ի զաւակացն Գագկայ Արծրունեաց. սոքա ընդարձակեցին զսահմանս իւրեանց քաջութեամբ, տիրելով բազում գաւառաց և քաղաքաց յաշխարհին Կիլիկեցւոց և Սուրացւոց և այլոց բազմաց. առին զանուանի քաղաքս աշխարհին զՏարսոն և զՍիս և զԱտանա և զՄսիլկիա, և որ շուրջ զնոքօք գաւառք և քաղաքք. զոր լուեալ կայսրն Յունաց, որ Ալէքս կոչիւր, առաքէ բազում զօրօք 'ի վերայ իշխանացն Հայոց՝ Ստեփանեայ և Թորոսին զԱնդրոնիկոս, և ըմբռնեաց զՍտեփանէ խաբէութեամբ՝ ետ սպանանել։ Իսկ Թորոսի առեալ զեղբօրորդիս իւր զՌուբէն և զԼևոն, եդ զնոսա 'ի բերդ մի ա-

մուր, և ապա էառ Թորոս զքէն վրիժուց արեան եղբօր իւրոյ 'ի Հոռոմոց անտի, որ բնակեալ էին յաշխարհին, զի զբռնացեալսն կոտորէր, և զայլսն փախստական առնէր յաշխարհէն և ինքն տիրէր ամենայն գաւառացն մեծաւ զօրութեամբ։

Իսկ յայս Թուականի ՇԿԲ, յորում վախճանեցաւ Բարսեղ կաթուղիկոսն, փոխեցաւ առ Քրիստոս՝ մեծ և հռչակաւոր վարդապետն Գէորգ, զոր ըստ քաղցրութեան բարուց իւրոց Մեղրիկ կոչէին։ Սա կարգաւորեաց զհռչակաւոր ուխտն՝ որ Դրազարկ կոչի, անդադար լինել 'ի պաշտօնն զցայգ և ցերեկ, և հանապազ պահօք կատարել, և առանձին՝ ումեք ինչ ոչ լինել, բայց 'ի հասարակաց տանէն։ Ի սոյն ամի և արին Հոռոմայեցւոց Թանդրի, իշխող քաղաքին Անտիոքայ, վախճանէր, դեղակուր լեալ 'ի պատրիարքէն իւրեանց. և առնու զկաթուղիկոսութիւնն Հայոց յետ տէր Բարսղի Գրիգորիս ամս յիսուն երեք։ Իսկ սքանչելի հայրապետն Գրիգորիս ձեռն 'ի գործ արկեալ շինեաց եկեղեցի հրաշազան զմբեթայարկ 'ի նոյն բերդի. և սկսաւ թարգմանութիւն առնել յաստուածային գրոց, և բազում գիրս ետ թարգմանել 'ի Հայ լեզու, զո՛րն ինքեամբք և զո՛րն 'ի ձեռս այլոց։

Յաւուրս սորա էին վարդապետք անուանիք և իմաստունք՝ Ներսէս սքանչելի, հարազատ նորուն կաթուղիկոսի, և միւս Ներսէս եպիսկոպոս

Լամբրոնեցի , եղբայր Հեթմոյ, որ թարգմանեաց զմեկնութիւն տեսլեանն Յոհաննու, և զպատմութիւնն Գրիգորի Պապոյն Հռոմայ, և զօրինադրութիւն Բենետիկտոսի. արար և մեկնութիւն յինքենէ սաղմոսացն Դաւթի, և առակացն Սողովմոնի, և սուրբ պատարագամատուցին, և աղօթիցն Յոհաննու աւետարանչին, որոյ սկիզբն է այս. Էր ընդ եղբարսն երա՛. շինեաց և եկեղեցի հրաշազան 'ի վանքն՝ որ կոչի Սկեւռայ, հուպ 'ի բերդն անառիկ Լամբրոն, և կարգեաց զպաշտօն վանիցն ըստ օրինակի այլոց ազգաց սարկաւագաւ և դպրաւ և անծածուկ գլխով. զոր յոլովք զարովեն 'ի Հայոց։ Եւ միւս ևս եպիսկոպոս, անուն Իգնատիոս, որում հրամայեաց կաթուղիկոսն մեկնութիւն առնել Ղուկասու աւետարանին, և նա ոչ առ յանձն, մինչև տեսանէր 'ի տեսլեան տուն մի լուսաւոր և զարդարեալ ամենայն վայելչութեամբ, և զամենայն վարդապետս եկեղեցւոյ անդ խրախացեալս, կամեցաւ և ինքն մտանել 'ի ներքս՝ և արգելուլին զնա և ասէին, եթէ վասն զի ոչ աշխատեցար 'ի մեկնել զաւետարանն, ոչ մտցես այսր. և զարթուցեալ սկսաւ 'ի մեկնել զաւետարանն Ղուկայ խորհրդական և մտաւոր բանիւ։ Եւ այլ ոմն վարդապետ, Սարգիս անուն, 'ի վանքն՝ որ կոչի Ասորերէն Քարաշթաւ, արար մեկնութիւն եօթանեցունց թղթոցն կաթուղիկեայց նախերգանօք և

յորդորակօք ընդարձակ և առատ ճառիւք։ Եւ միւս ևս եպիսկոպոս, Յովսէփ անուն, այր երևելի 'ի կողմանս Անտիոքու։ Իսկ յԱրևելս արք անուանիք և գիտնականք լուսաւորիչք եկեղեցւոյ՝ Անանիա վարդապետ 'ի Սանահինն, յաւուրս Դիոսկորոսի, այր մաքուր և հանճարեղ, գիտող տոմարական արհեստի, և աստուածային գրոց մեկնող։ Սորա ասեն հաւաքեալ 'ի մեկնութիւն առաքելոյ զբանս Եփրեմի և Յոհաննու Ոսկեբերանին և Կիւրղի և այլ սրբոց, արարեալ համառօտ վասն դիւրահասութեան ընթերցողաց, արար և խորհրդական և մաքուր տեսութիւն և համեմատութիւն աւետարանացն առ օրինակս. գրեաց և լուսաւոր իմացուածս վասն խորհրդական սրբասացութեանս, որ յեկեղեցիս ուղղափառաց խաչեցարի. ասեն, և զներբողեանն Շողակաթին։ Սոյնպէս և մեծիմաստն գիտութեամբ քան զյոլովս և հանճարեղն յամենայնի՝ մտահարուստն Յոհաննէս, Սարկաւագն կոչեցեալ, 'ի Հաղբատ. սա բազում ինչ աշխատասիրեաց 'ի գիրս, յիշատակ բարի թողեալ. սա զբազմաց փափաքելին, և ոչ ձեռնհաս, զհաստատ և զանշարժ տոմարն կարգեաց Հայոց փոխանակ շարժականին և անհաստատնոյն. արար և միաբանութիւն ամենայն ազգաց տոմարի ընդ Հայոց։ Վասն զի յոյժ իմաստուն էր այրն և աստուածային շնորհօք զարդարեալ. սորա բանքն ամենայն իմաս-

տասիրական ոճով, որպէս զԳրիգորի Աստուածաբանին, և ոչ գեղջուկ. սա գրեաց ճառս ներբողականս 'ի մեծազօր արքայն Տրդատ, և 'ի սուրբ հայրապետն Ներսէս, և 'ի սքանչելին Սահակ և Մեսրոպ. արար և շարական Ղևոնդեանցն քաղցր եղանակաւ և յարմար բանիւ, որոյ սկիզբն է այս. Պայծառացան այսօր սուրբ եկեղ". գրեաց և նոցա ճառս ներբողականս. գրեաց սա և գիրս աղօթից. գրեաց և օրինակ ստոյգ գրոց. կարի յոյժ սիրէր զսա թագաւորն Վրաց Դաւիթ, հայրն Դեմետրեայ, պապն Դաւթի և Գէորգեայ այնքան, զի մինչ լսէր զգալուստ նորա, յառնէր ընդ առաջ նորա, և խոնարհեցուցեալ զգլուխն՝ խնդրէր 'ի նմանէ օրհնութիւն. և նա եդեալ զձեռն 'ի վերայ նորա, և ասէր զսաղմոսս զայս. Գտի զԴաւիթ ծառայ իմ" Ձեռն իմ ընկալ". Մի մեղիցէ նմա թշ". և 'ի պատճառս սորա սիրէր թագաւորն զազգս Հայոց։ Դէպ եղև սմա յաւուր միում վասն անտառակ գնացից որոշել զամս 'ի խորհրդական պատարագէն, Ջոմզոմայ անուն, և նա փոխանակ զղջանալոյ և ապաշխարելոյ խորհէր սպանանել զսքանչելին. և պատահեալ նմա, մինչդեռ գայր յայրէ անտի, որ 'ի ներքոյ կայ վանիցն, հայելով 'ի վերայ գետոյն, ըմբռնեալ անամօթն, ընկէց յերկիր, և հարաւ 'ի վերայ նորա. իսկ սուրբն զի իմաստուն էր, ասէ ցնա՝ որդեակ Ստեփաննոս՝ մի

սպանանել զիս. և ասէ ցնա յանդուգն՝ մինչև ցայժմ Զամզամայ էի, իսկ այժմ փոխանակ միոյ նուի բազում յաւելուս Ստեփաննոս: Քանզի Զամզամայն մականուն էր նորա. դու ընդէ՞ր սպանել զիս, զի հաներ յեկեղեցւոյ: Ասէ ցնա իմաստասէրն և դարձեալ մուծից զքեզ յեկեղեցի. և եթող զնա. և նորա եկեալ 'ի վանսն՝ ասէ ցեղբարսն. զոր ինչ ասէին զեղբօրէս զայսմանէ, կարծեմ թէ սուտ է, 'ւասիկ մուծանեմ զսա յեկեղեցի. և հրամայեաց եկեղեցպանին առնել զնա առաջ երէց, և բազում քրթմնջիւն էր վասն այնորիկ, որպէս թէ անարժան էր և նա կաշառս էառ և եմոյծ զնա յեկեղեցին. և իբրև եհաս ժամ սուրբ պատարագին, ել թշուառականն 'ի բեմբն, զի մատուցէ պատարագ. եկն վարդապետն 'ի գաւիթ անդր 'ի մէջ ատենին՝ հանդէպ սրբոյ սեղանոյն, եբաց զգլուխ իւր, և սկսաւ աղօթել. և վաղվաղակի ոգի չար եմուտ յայրն աներկիւղ, և ընկէց զնա 'ի բեմէ անտի 'ի յատակս տաճարին, և սկսաւ լլկել զնա յոյժ, և հանեն զնա 'ի տաճարէ անտի, որպէս զՈզիայն, և երկիւղ մեծ անկաւ 'ի վերայ տեսողացն: Եւ այսպիսի բարուք քաղաքավարութեամբ կեցեալ յաշխարհի՝ փոխեցաւ 'ի Քրիստոս աշխատասէրն 'ի Հաղբատ. և թաղեցին զնա յարևելից կուսէ եկեղեցւոյն մեծի առ դուրս փոքրագոյն եկեղեցւոյն, զոր յետոյ քակեաց եպիսկոպոսն

Համազասպ և շինեաց հրաշալի շինուած, ուր զզանգակսն կախէին, յարմարեալ 'ի նմին և եկեղեցիս: Եւ եղև վախճան սրբոյն 'ի շնը թուականին. և զկնի ամի միոյ վախճանեցաւ սուրբ լուսաւորիչն Դաւիթ վարդապետն, Ալաւկայ որդի, որ գրեաց զկանոնական օրինադրութիւնս գեղեցկայարմարս և պիտանացուս 'ի խնդրոյ քահանայի միոջ, որում անուն էր Արքայութիւն, 'ի քաղաքէն Գանձակայ: Եւ միւս ևս սքանչելի վարդապետ, զոր Թոքակերի որդի կոչէին, Գրիգոր անուն. սոքա երեքեանս էին յաշխարհէն Գանձակայ, ուստի և ես: Դէպ եղև զի յաւուր միում նստէին երեքեան արքս սքանչելի, եկն անդ ոմն շինական այր մի և ասէ ցնոսա՝ երանի որ գիտէ ո՞ իմաստնագոյն իցէ. զայս իբրև ծաղրական ասաց. պատասխանի ետ Թոքակերի որդին և ասէ. ես ասեմ քեզ. մինչդեռ էաք 'ի մերում աշխարհին, ես կտրող էի և կարող. իսկ սարկաւագս՝ կարել միայն գիտէր. իսկ այժմ սա կտրէ և կարէ, և բազում նկարս յաւելու 'ի վերայ. զայս առակաբար վասն իմաստութեան նորա ասաց. զի այնպէս փոյթ էր այրն յուսումն, զի պատահեաց յաւուր միում զնալ նմա յայրն, ուր գրեանն էին, և այլք ընդ նմա. իբրև ելին՝ որ ընդ նմայն էին, և փակեցին զդուռն, նա թաքոյց զանձն 'ի ներքս, այսպէս գիտելով նոցա եթէ նախ ել նա: Իբրև

անցին աւուրք բազումք 'ի վերայ, դարձեալ գնացին յայրն 'ի պէտս ինչ, տեսին զնա և սքանչացան. հարցանէին զնա՝ թէ որպէս ապրեցար առանց կերակրոյ և ըմպելոյ. և նա եցոյց նոցա զգրեանն, զոր ընթերցեալ էր. և այս է, ասէ, իմ կերակուր և ըմպելի, զոր կերայ և արբի զաւուրս զայսոսիկ:

Ի ՇՃԸ թուականին եղև շարժ սաստիկ և կործանեցաւ քաղաքն Գանձակ, և տապալեցան շինուածք՝ որ 'ի նմա, 'ի վերայ բնակչաց իւրոց. և եկն թագաւորն Վրաց Դեմետրէ՝ հայրն Դաւթի և Գէորգեայ, և տարաւ զդրունս քաղաքին յաշխարհն իւր. փլաւ և լեառն Ալհարակ 'ի շարժմանէն և արգել զձորակն՝ որ անցանէր ընդ մէջ նորա. և եղև ծովակ, որ է մինչև ցայսօր. լենին 'ի նմա ձկունք ազնիւք:

Իսկ սքանչելի հայրապետն Գրիգորիս օր ըստ օրէ յաւելոյր 'ի բարեգործութիւն և 'ի պայծառութիւն եկեղեցւոյ. և էր սիրեցեալ նա յամենայն ազգաց. եղև նմա գնալ 'ի սուրբ քաղաքն Երուսաղէմ, զի երկրպագեսցէ նա սուրբ տեղեացն տնօրինականաց: Իբրև եհաս նա 'ի քաղաքն Անտիոք՝ ել ամենայն քաղաքն ընդ առաջ նորա ջահիւք և լապտերօք, և մեծաւ պատուով տարեալ զնա նստուցին յաթոռն Պետրոսի առաքելոյն. և իբրև եհաս նա յԵրուսաղէմ, ազգն Փռանգաց՝ որ իշխողք էին քաղաքին, և պատ-

ւիւք նոցա առաւել սէր հաստատեցին ընդ ազգիս մերում վասն նորա, զի էր նա բարի տեսլեամբ, և գիտութեամբ Սուրբ Գրոց զարդարեալ. զհին դաշինսն Տրդատայ և սրբոյն Գրիգորի և Կոստանդիանոսի կայսեր և Սեղբեստրոսի հայրապետին վերստին հաստատեցին և նորոգեցին առ սովաւ. և այսպէս բարիոք խոստովանութեամբ կեցեալ՝ փոխեցաւ առ Քրիստոս լի աւուրբք և կատարեալ առաքինութեամբ. և փոխանորդէ զաթոռն եղբայր նորին Ներսէս զեօթն ամ:

Այս Ներսէս առաւելեալ էր իմաստութեամբ քան զյոլովս 'ի ժամանակի անդ ոչ միայն քան զվարդապետս Հայոց, այլ և քան զՅունաց և զԱսորւոց. այնքան՝ զի համբաւ իմաստութեան նորա տարածեցաւ ընդ ամենայն ազգս, մինչ զի իմաստասէր ոմն Կոստանդնուպօլսեցի, անուն Թէորա, լուեալ զհամբաւ նորա, բարձեալ զգրեանս իւր 'ի վերայ գրաստուց, եկն փորձել զնա, և լսել զիմաստութիւն նորա. եկեալ՝ զաւուրս բազումս խօսեցաւ ընդ նմա, և եգիտ զնա փորձ ամենայնիւ, այլ և հոգւով սրբով առլցեալ. և իբրև գնաց նա 'ի քաղաքն Կոստանդնուպօլիս, հարցանէին զնա և ասէին՝ թէ որպէս էր համբաւն, նոյնպէս՝ եթէ ոչ. և նա ասէ՝ որպէս լուաք, սոյնպէս և տեսաք. զի նոր ոմն Գրիգորիոս Աստուածաբան յարուցեալ է. և զարմացուցանէր զամենեսեան վասն նորա: Եւ զի էր նա այր բա-

նուէր, բազում ինչ կարգեաց յեկեղեցի քաղցր եղանակաւ Խորովեան ոճով շարականս և մեղեդիս և տաղս ոտանաւորս, քանզի նորա է յարութեան օրհնութիւն երրորդ կողմն, և Աստուածածնին փոխման երկուց աւուրցն, և Պետրոսի և Պօղոսի օրհնութիւն և մանկունքն, և համբարձին, որոյ սկիզբն է այս. Ծնծա՛ այսօր եկեղե″. և որդւոցն որոտման օրհնութիւն՝ Որ էն յէութեան որդի″. և շարական մի Անտոնի, և երկու Թէոդոսի և մի քառասնիցն, և մի առաքելոցն, և աւագ շաբաթին երից աւուրց օրհնութիւն, երկուշաբաթին, երեքշաբաթին, չորեքշաբաթին, և երկու շարական յարութեան ճաշու, և Նինուէացւոցն, և հրեշտակապետացն, և սրբոց Վարդանանցն, և այլ բազում շարականս։ Արար նա զքարոզ սրբոյ պատարագին քաղցր եղանակաւ, և տունս շարականաց նմին խորհրդաբար, և երկու գանձ ըստ գրոց անուան իւրոյ՝ մի Վարդաւառին և մի փոխման Աստուածածնին, որպէս Նարեկացին Գրիգոր զհոգւոյն գալստեանն և զեկեղեցւոյ և զսուրբ խաչին. այն որ գրեաց զգիրս աղօթից յոգնազան բառիւք և իմաստասիրական ոճով, և զներբողեանն սրբոյն Յակոբայ Մծբնացւոյ, և զառաքելոցն։ Սոյնպէս և սա կարգեաց զհամառօտն աւետարանին լուսաւոր և տռատ մօք, մինչև յայն տեղի որ ասաց Տէրն թէ մի՛ համարիք եթէ եկի լու″. և անդ ոչ գիտեմ, եթէ վասն

ինչ պատճառի խափան եղև. գրեաց նա և ճառս հրեշտակապետացն ըստ ոճոյն Դիոնեսեայ Արիսպագացւոյն. Թարգմանեաց և բազում ճառս վրկայից Աստուծոյ, և այսպիսի բարիոք կարգաւորութեամբ փոխեցաւ առ Քրիստոս յոյժ ամենայնի ցանկալի և երանելի մահուամբ. զի այնպէս էին կամք սրբոյն, զի հնար իցէ ոչ ոք խօսեսցի ՚ի խօսս աշխարհականս, բայց ՚ի գրոց, ոչ ՚ի գինարբուս և ոչ յայլ ուրախութիւնս։ Վասն այնորիկ արար նա երգս և ուսոյց այնոցիկ, որ պահէին զերգն. զի փոխանակ վայրապար ձայնիցն, զայն ասասցեն, որոյ սկիզբն է սաղմոսն Դաւթի. Յիշեցի ՚ի գիշերի զա″. և այսպէս խորհրդաբար ըստ կարգի, Զարթի՛ք փառք իմ, որ այժմ ասի յեկեղեցի ՚ի ժամ գիշերային պաշտաման։ Կոչեցաւ երբեմն ՚ի մեծէն Ալէքսէ, որ էր փեսայ ինքնակալ Թագաւորին Հոռոմոց Մանուէլին և եկեալ էր ՚ի Մամուեստիա քաղաք Կիլիկեցւոց, և հարցեալ զնա բանս խորինս և դժուարիմացս ՚ի գրոց, յամենայնի կատարեալս եգիտ զնա, և մեծարեաց յոյժ. դարձեալ գրեաց առ նա՝ գրով տալ նմա զխոստովանութիւն հաւատոյ Հայոց, և զխորհուրդ տօնից, և զառաջաւոր պահոցն, և զխորհուրդ մի բնութեանն, զոր ասեմք մեք ՚ի Քրիստոս Յիսուս յետ միաւորութեանն, և զայլ կարգաց եկեղեցւոյ, որ ոչ է միաբան այլոց ազգաց։ Իսկ նա համառօտ և յայտնի բա-

նիւք ետ նմա զխնդրելին, զոր ունէ եկեղեցի Հայաստանեայց ուղղափառութեամբ այսպէս.

Գիր հաւատոյ խոստովանութեան Հայաստանեայց եկեղեցւոյ, գրեալ 'ի Ներսիսէ եպիսկոպոսէ՝ յեղբօրէ կաթողիկոսին Հայոց Գրիգորիսի, 'ի խնդրոյ զօրապատիւ փեսայի ինքնակալ թագաւորին Հոռոմոց մեծի պատուստատորին Ալէքսիոսի, յորժամ էր յԱրեւելս, եւ էր 'ի Մամեստիա մայրաքաղաքին Կիլիկեցւոց. անդանօր հետեւելով նմին՝ կոչմանն նորին 'ի Թուականին ոժզ։

Բանիւք զուգնաքեայ իմն խօսելով 'ի լսելիս խոհեմագունից, և աստուածասէր անձին, յաղագս մերոյ հաւատոյ և կարգաց եկեղեցւոյ, հարցման որ 'ի մէնջ, պատասխանի. և քանզի խօսեցեալն իմաստք շրթամբք, ոչ է բնաւորեալ յշտեմարանս յիշողականին մեր մնայ անծախապէս, զմոռացութիւն ունելով հակառակ։ Վասն որոյ խնդրէք գրով արձանացուցանել զնոյն, յաղագս անաղօտ մնալոյ առ ձեզ յիշատակ բանիցն որ 'ի մէնջ, զոր և տացուք տիրաբար սիրողիդ զիմաստութիւն ըստ ախմար զիտութեան մերոյ և տկարութեան, և ժամուս փութոյ՝ համառօտ և յայտնի բանիւ։ Սակայն զրովանդակն պարագրելով զհաւատոյ մերոյ ճշմարտութիւն, և զեկեղեցւոյ կարգաւորութիւն, 'ի հարցն սրբոց աւանդից ընկալեալ՝ որ է այսպէս. Խոստովանիմք զա-

մենասուրբ զԵրրորդութիւնն, զՀայր, և զՈրդի, և զսուրբ Հոգին, յերիս անձնաւորութիւնս բաժանեալ, և 'ի մի բնութիւն, և աստուածութիւն ժողովեալ։ Հայր անծին և անսկիզբն յառաջ քան զյաւիտեանս։ Որդի ծնեալ 'ի բնութենէ Հօր, անախտ և անմարմին, նախ քան զժամանակս։ Հոգին սուրբ՝ բղխումն 'ի Հօրէ, ոչ ըստ Որդւոյ ծննդեամբ, այլ յառաջ եկեալ աղբիւրաբար. ինքեան միայնոյ քննելի օրինակն, և յարարածոց անզիտելի, և ոչ էր երբեմն Հայր՝ յորժամ ոչ էր ընդ նմին Որդի և Հոգի։ Այլ որպէս Հայր՝ միշտ Հայր. և ոչ յետոյ ստացեալ զանուն Հայրութեան։ Նոյնպէս և Որդի՝ միշտ Որդի, ընդ Հօր իւրում մշտընջենաւոր։ Այսպէս և Հոգին սուրբ՝ միշտ Հոգի Աստուծոյ. անմեկնելի 'ի Հօրէ և յՈրդւոյ մի էութիւն, մի իշխանութիւն, մի կամք և մի արարչագործ զօրութիւն, յերիս անձնաւորութիւնս իմանի։ Ո՛չ մեծութիւն և ոչ փոքրութիւն, ոչ բարձրութիւն և ոչ խոնարհութիւն, ոչ առաւելութիւն և ոչ նուազութիւն. այլ մի կարգ, մի պաշտօն, մի երկրպագութիւն համագոյ սուրբ Երրորդութեանն զաւանի, որով գոյացան յոչէից եղեալքս ամենայն, երկինք երկնաւորօքն, և երկիրս երկրաւորօքս, երեւելի և աներեւոյթ արարածք. յառաջինն եղեալ արարչութեան։ Իսկ՝ յերկրորդումն՝ մի յԵրրորդութենէն բանն Հօր Որդին միածին, կամաւ Հօր

և Հոգւոյն, աւետեօք հրեշտակապետին Գաբրիէլի, էջ յորովայն կուսին Մարիամու, ոչ նուազելով 'ի ծոցոյ Հօր, ըստ աստուածային անպարագրելի բնութեանն, և ձգեալ յինքն յարենէ ամենամաքուր կուսին, որ 'ի զանգուածոյն Ադամայ, միացոյց ընդ Աստուածութեանն իւրում, անքննելի և անճառելի խառնմամբ, և եղև յերկուց կատարեալ բնութեանց, յԱստուածայնոյն և մարդկայնոյն, մի անձնաւորութիւն կատարեալ, անայլայլելի և անբաժանելի բնութեամբ, ոչ փոփոխելով մարդկային թանձր և յօդական բնութիւնս յանօդ և 'ի պարզական բնութիւնն Աստուծոյ, զիւրն կորուսանելով. և ոչ պարզ և անմարմնական բնութիւնն Աստուծոյ խառնելովն ընդ բնութեան մարմնոյ, վրիպեաց յիւրն յաւէտ պարզութենէ. թէպէտ և ասի յաղագս անքակ միութեանն, անմարմնոյն մարմնանալ, և բանին թանձրանալ: Այլ և խառնի ընդ մարմնոյ անմարմին բանն, և միացուցանէ ընդ ինքեան զմարդկային բնութիւնս, Աստուածացուցանելով զնա խառնմամբն, և միաւորութեամբն, ոչ փոփոխումն կամ այլայլութիւն ունելով 'ի միաւորութեանն, ըստ որում և ոչ Հոգի, և մարմին մարդկային. թէպէտ և գերագոյն քան զօրինակն իմանի ճշմարտութեանն որպէս ընդ արարիչ և ընդ արարած, գոյ համեմատութիւն, այլ միաւորեալ զմերս ընդ իւրումն՝ անհասանելի յեղա-

նակաւ, և մնաց անփոփոխ առօղն և առեալն: Ո՛չ ըմբռնողապէս, որպէս օդ՝ և ջուր յամանի, զի յարտաքս եղանելն դատարկանայ, այլ բնաւորապէս միացեալ 'ի վեր քան զբան, անբաժանելի և անշփոթ միութեամբ, և առնլով զբնութիւնն Ադամայ, ոչ զոր յանմեղութեանն և 'ի դրախտին, այլ զոր յետ մեղանացն և ապականութեանն, զի և կոյսն Մարիամ, յորմէ մարմին առ Քրիստոս, 'ի մեղանչականին Ադամայ բնութենէն էր: Սակայն միաւորելով ընդ բնութեանն Աստուծոյ, մեղանչականն եղև անմեղ, և ապականացուն արտաքոյ անգոսնելի ապականութեան կրից որպէս և հրահալելի նիւթք, յորժամ ընդ հրոյ միանան ժանկ ապականութեան ելեալ իցէ 'ի նոսա, ծախի: Իսկ բնութիւնն մաքրելով յապականութենէն, անծախելի մնայ. զի որոյ սկիզբն անապական՝ զի առանց սերման, յանապական կուսէ էր ծնունդն, և կատարումն անապական, զի մարմին նորա 'ի գերեզմանի ոչ ետես զապականութիւն, հարկ է, զի և միջոց ժամանակին, որ ընդ ծնունդն և ընդ մահն՝ լինել անապական: Ո՛չ 'ի հարկաւոր և 'ի կամաւոր կրից ասեմք գոլ անապական, որ. 'ի քաղցոյ և 'ի ծարաւոյ, 'ի ննջելոյ և 'ի վաստակելոյ, 'ի տրտմելոյ և յարտասուելոյ, որք ճշմարիտ՝ և ոչ առ աչօք տան մեզ իմանալ զմարդկութիւնն նորա, այլ յակամայ և յանգոսնելի կրից՝ խոստովանիմ

ունել զանապականութիւն. զի էր ինչ 'ի նմա նման մերումս, և էր որ 'ի վեր քան զմերս ըստ գրեցելումն, թէ մարդ է և 'ի վեր քան զմարդ, և թէ մարդ է՝ և ո՞ ծանիցէ զնա։ Արդ՝ ըստ մերում նմանելոյ այսպէս եղեալ միաւորութեան յեղանակ, յարգանդի կուսին բնակելով ինն ամսեայ ժամանակաւ, հինգ յաւելեալ աւուրբք, ըստ անդրանկածնութեանն, և այն որ կարող էր 'ի միում վայրկենի լինել կատարեալ, որ ըստ օրէ աճմամբ զարգանայր, որպէս զի խափանեսցի այսոքիւք առ աչօք կարծելն զմարդեղութիւնն։ Ծնանի որպէս մարդ Աստուած մարդացեալ, զկուսութիւն ծնողին անապական պահելով, զի և զծնունդն օրհնեսցէ յանիծիցն, և զկուսութիւն նախ պատուեսցէ։ Թլփատեցաւ ութօրեայ՝ զի զուխտն որ ընդ հարսն՝ կատարեսցէ, և մեզ ուսուսցէ զթլփատութիւնն սրտի հոգևորապէս։ Ե՛կն 'ի տաճարն քառասնօրեայ ըստ օրինացն ընծայումն, զի զմարդկային բնութիւնս ընծայեսցէ ինքեամբ հօր 'ի բարձունս։ Փախեաւ յԵգիպտոս, զի զմայրաքաղաք կռապաշտութեանն դարձուսցէ յաստուածպաշտութիւն, և զմեզ խրատեսցէ յօժարութեամբ փախչել ընդ նմա հալածանօք։ Շրջեցաւ յաշխարհի՝ ամս երեսուն, աղքատութեամբ և խոնարհութեամբ, ծածկելով զաստուածութիւնն, զի զմեզ ճոխացուցեալ բարձրացուսցէ,

յորժամ նորին ճանապարհի լինիմք հետևողք։ Ե՛կն 'ի Յորդանան, 'ի լրումն երեսնից ամաց, յայտնելով զփառս Աստուածութեան իւրոյ՝ վկայութեամբ Հօր, թէ դա է Որդի իմ սիրելի, և Հոգւոյն աղաւնակերպ իջմամբ։ Մկրտեցաւ 'ի Յովհաննէ, զի զջուրսն սրբեսցէ, և զհնութիւն մեղացն ընկղմեսցէ 'ի նմա, և զհոգևորականն տացէ մեզ մկրտութիւն, ըստ վկայութեանն Յոհաննու, թէ նա մկրտեսցէ զձեզ 'ի Հոգին սուրբ և 'ի հուր։ Պահեաց քառասուն օր երկրորդն Ադամ՝ վասն առաջնոյն Ադամայ զի ոչ պահեաց. և յաղթեաց երիւք փորձութեամբքն, յաղթողին մարդկան։ Եւ յետ այնորիկ ապա զծածուկ Աստուածութեան իւրոյ զօրութիւնն՝ յայտնի արար աշխարհի, զդևս հալածելով, զհիւանդս բժշկելով, զկոյրս լուսաւորելով, զկաղս գնացուցանելով, զմեռեալս յարուցանելով, 'ի վերայ ծովու՝ որպէս 'ի վերայ ցամաքի գնալով, 'ի սակաւ հացից զբազումս կերակրելով, զբնութիւն արարածոց որպէս կամէր փոփոխելով. զջուրն 'ի գինի, և զկաւն 'ի լոյս դարձուցանելով։ Եւ նախ քան զյարութիւնն զլոյս Աստուածութեանն իւրոյ՝ զծածկեալն իբրև վարագուրաւ ընդ մարմնոյն, յայտնեաց աշակերտաց իւրոց 'ի Թաբորական լերինն, ուր զինքն ծանուցեալ կենդանեաց և մեռելոց, իշխանաբար կոչմամբ Մովսէսի և Եղիայի։ Գայ այնուհետև կամաւորաբար 'ի չարչարանս,

զի զգիրս օրինաց և մարգարէիցն կատարեսցէ։
Նստի 'ի վերայ իշոյ և յաւանակի յօրինակ եկե-
ղեցւոյ հրէից և հեթանոսաց։ Կատարէ զզատիկն
ըստ օրինացն, զի զհինն 'ի նորս, և զստուերն
'ի լոյս ճշմարտութեան փոխեսցէ։ Լուանայ զոտս
աշակերտացն, զի զնախահօրն ոտից, որ 'ի ծառն
գիտութեան ընթացից, մաքրեսցէ զյանցանս։ Տայ
զմարմինն իւր կերակուր կենաց, և զարիւն իւր
'ի քաւութիւն մեղաց. զի որք առաջին պտղոյն
ճաշակմամբ մահացաք, զայսուիկ ճաշակելով կեն-
դանասցուք։ Աղօթէ իմով բնութեամբ առ Հայր
վասն իմ, զի յառաջինն դարձուսցէ 'ի փառս. և
զի տացէ օրինակ աղօթել և մեզ, 'ի փորձութեան
մերում։ Տրտմեցաւ և արտասուեաց, ուրախու-
թեան պատճառն երկնաւորաց և երկրաւորաց.
զի բարձցէ զամենայն արտօսր յամենայն երե-
սաց ըստ Եսայեայ։ Երկեաւ զի զերկիւղն լուծ-
ցէ զմահու։ Քրտնեցաւ՝ զի զքիրտն երեսացն
Ադամայ ջնջեսցէ. ապտակեցաւ՝ զի հարցէ ուժ-
գին զթշնամին։ Մերկացաւ, զի զամօթոյ ծած-
կոյթ նախահօրն դիմաց՝ պատառեսցէ։ Էարբ զլե-
ղին, զի զդառն մեղացն զճաշակս քաղցրացուսցէ։
Բևեռեցաւ 'ի խաչին, զի զմեզ արձակեսցէ 'ի
կապանաց, և շնորհեսցէ փայտ կենաց փոխա-
նակ փայտին մահու։ Մեռաւ մարդկային մահա-
ցու բնութեամբս իշխանաբար, և մնաց կենդանի
Աստուածային անմահական բնութեամբն։ Ոչ

ոմն մեռեալ. և ոմն կենդանի ըստ բաժանողացն,
այլ մի և նոյն անձնաւորութիւնն, և մի Քրիս-
տոսն չարչարիւր և մեռանէր մահկանացու մարմ-
նովն որ 'ի մէնջ, և կենդանի էր անմահ և կեն-
դանարար Աստուածութեամբն որ 'ի Հօրէ, որ-
պէս և սուրբն Աթանաս ասէ. Թէ մահկանացու
մարմինն, ոչ վնասեաց զանմահ Աստուածութիւնն.
քանզի անախտ էր այլ մնաց մանաւանդ և ինքն
անախտ. անմահին զօրութեամբն. և յետ սակա-
ւուց ասէ. Թէ մահ մարմնոյն եղև համագոյակ-
ցին մահկանացուացս։ Վասն որոյ և մեք խոս-
տովանիմք Աստուած և մարդ զՔրիստոս. ոչ բա-
ժանելոյ ազգաւ զայս ասեմք, մի լիցի. զի նա
ինքն է չարչարեալ և ոչ չարչարեալ՝ Աստուա-
ծային բնութեամբն, անփոփոխելի և անչարչա-
րելի։ Իսկ՝ մարմնովն չարչարեալ և զմահ ճաշա-
կեալ։ Յաղագս որոյ մոլորին, որք ասենն թէ այլ
ոմն է որ չարչարեցաւ, և այլ ոմն որ ոչ չար-
չարեցաւ։ Բայց ոչ այլ ոք է քան զԲանն, որ
չարչարեցաւ և զմահ ընկալաւ մարմնովն. զի նոյն
ինքն անչարչարելին և անմարմին բանն լինել
մարմին չարչարելի յանձն էառ, զի չարչարա-
նօքն իւրովք փրկեսցէ զմարդիկ. քանզի զոր ինչ
մարդկեղէնն չարչարիւր մարմին բանին, զայն՝
ընդ նմին գոլով բանն, յինքն վերաբերէր, և լինէր
յոյժ հրաշափառագոյն իւր. զի ինքն էր որ չար-
չարիւր, և ինքն էր որ ոչ չարչարիւր։ Զարչա-

բուր չարչարելեաւն, զի իւր ինքեան չարչարիւր
մարմին, և 'ի նմին 'ի չարչարելումն էր ինքն
առանց չարչարանաց, անբաժանելի 'ի չարչարե-
ցելոյ մարմնոյն, զի Աստուած գոլով բանն՝ ան-
չարչարելի էր բնութեամբ. սակայն ընդ չարչա-
րելի մարմնոյն անբաժանելի միացեալ անմար-
մինն, և մարմինն ունելով յինքեան զանչարչա-
րելի զբանն, չնչինչ տկարութեան իւրոյ։ Զայ-
սոսիկ Աթանասիոս։ Ընդ նմին և մեք անբաժա-
նելի դաւանիմք յետ միաւորելոյն՝ զԱստուածու-
թիւնն 'ի մարմնոյն և 'ի մարդկեղէն հոգւոյն. և
յորժամ 'ի խաչին էր և 'ի գերեզմանի մարմնովն,
Աստուածութեամբն էր ընդ աջմէ Հօր, և փա-
ռօք նորա լի էին երկինք և երկիր։ Էր և Հայր
ընդ նմա յերկրի, որպէս և ասաց. Հայր իմ ընդ
իս է, և ոչ եթող զիս միայն. զի ուր Հայր է՝
անդ է և Որդի, և Հոգի. և ուր Որդի, անդ է և
Հայր և Հոգին. և ուր Հոգին սուրբ, անդ և
Հայր և Որդի։ Արդ՝ իջեալ 'ի գերեզման մե-
ռեալ մարմնովն, և կենդանի Աստուածութեամբն
արար աւարումն դժոխոց. և յարուցեալ յերրորդ
աւուր, յարոյց ընդ ինքեան 'ի մեռելութենէ
մեղաց՝ զհոգիս մարդկան հաւատացելոց. և ետ
յոյս՝ և մարմնոյ յարութեան ըստ նմանութեան
իւրում, 'ի յերկրորդ գալստեանն, և յետ քառա-
սուն աւուրց՝ վերացաւ յերկինս առ Հայր նո-
վին մարմնովն յանդիման առաքելոցն, և նստաւ

ընդ աջմէ մեծութեանն Հօր 'ի բարձունս, ըստ
առաքելոյն. գալոց է մերով մարմնովս՝ որով
համբարձաւ՝ 'ի դատել զկենդանիս և զմեռեալս՝
արդարութեամբ, և հատուցանել իւրաքանչիւր
զգործս։ Արդ՝ որ յաղագս սրբոյ Երրորդութեան
և տնօրէնութեան Քրիստոսի, այս է մեր ճշմա-
րիտ խոստովանութիւն հաւատոյ, զոր համառօտ
բանիւք եդաք առաջի։ Իսկ որ ինչ միանգամ
վասն կարգաց եկեղեցւոյ և տօնից, և այլոց և՛ս
հարցմանց, զոր ումանք 'ի ձերոց՝ այլ ընդ այլոյ
կարծեալ զրով ծանուցին ձեզ զմէնջ, գրեցուք
և զայս ևս անսուտ բանիւք, զորս ունիմքն, և
յորոց հրաժարիմք։ Գրեալ էր առաջին. Թէ Յուն-
վարի 'ի հինգ տօնեն վաղիւն աւետեաց, և երի-
կունն ծննդեան, և միւս վաղիւն՝ որ է վեց Յուն-
վարի, մկրտութեան Քրիստոսի. և յայսցանէ է
ինչ ուղիղ, և է որ արտաքոյ ճշմարտութեան.
և է այսպէս։ Ի միում աւուր տօնել մեզ տօն
ծննդեան Քրիստոսի, և մկրտութեանն 'ի վեց
Յունվարի որպէս ընկալաք յառաջին հարցն ա-
ւանդից. յայսմ ուղիղ էին գրեալքս։ Իսկ այն
եթէ 'ի հինգն ամսոյն վաղիւն աւետեաց տօ-
նեմք, լի՛ է ամենայն ստութեամբ. քանզի աւե-
տեաց տօն ըստ մերումս 'ի վեց Ապրիլի է։
Իսկ ծննդեանն 'ի վեց Յունվարի, երկոտասան
աւուրբք յետոյ՝ քան զոր դուքն տօնէք։ Զի՞նչ
հարկ էր ապա զերիան 'ի միասին տօնել ան-

խորհրդաբար. քանզի ծննդեանն և մկրտութեանն 'ի միասին տօնելոյ՝ բազումս ունիմք վկայութիւն։

Նախ զի յառաջագոյն ամենայն եկեղեցիք սկսեալք յառաքելոցն՝ այնպէս տօնէին. և յետոյ բաժանեցին ոմանք վասն Բեդղէհէմի և Յորդանանու, քանզի ոչ կարէին 'ի միում աւուր զերկոսեան ուխտսն կատարել, հեռի գոլով 'ի միմեանց. և փոքր փոքր աճմամբ՝ ընկալան և այլ եկեղեցիք զնոյն։ Իսկ Հայաստանեայք, որպէս ուսան 'ի սրբոյն Գրիգորէ, անփոփոխ կացին 'ի նմին։

Դարձեալ զի աւետարանիչն Ղուկաս վկայէ այսոցիկ ճշմարիտ լինել. քանզի պատմէ 'ի տօնի քաւութեանն, որ էր 'ի Թշրինի 'ի տասն, և 'ի Սեպտեմբերի քսան երկու, մտանել քահանայապետին Զաքարիայ 'ի տաճարն, և արկանել խունկ, և տեսանել զտեսիլ հրեշտակապետին, և լսել զաւետիս յղութեան ամլոյն, և կրել պապանձումն լեզուին, յոչ հաւատալն. և ապա ասէ թէ իբրև լցան աւուրք պաշտաման նորա, գնաց 'ի տուն իւր, և տուն նորա ոչ յԵրուսաղէմ էր՝ այլ 'ի լեառնակողմն Հրէաստանի, ուր զողջոյնն ետ Մարիամ Եղիսաբէթի. և աւուրք պաշտաման նորա էին՝ հինգ օր քաւութեան տօնի, և եօթն օր տաղաւարահարացն, որ լինի երկոտասան օր։ Արդ զերկուս տօնս զայսոսիկ կոչէ աւետարանիչն աւուրք պաշտաման քահանայութեանն Զաքարիայ, զորս 'ի միասին տօնէին ըստ օրինացն։ Որ իբրև կատարեցան՝ գնաց 'ի տուն իւր, և 'ի Թշրին քսան երկու, և 'ի Հոկտեմբերի հինգ, եղև յղութիւն Եղիսաբէթի։ Արդ՝ որք 'ի քսան հինգ Մարտի կատարեն զտօն աւետեաց կուսին, զյղութիւնն Եղիսաբէթի յառաջնումն աւուր պապանձմանն Զաքարիայի, որ է 'ի Թշրինի տասն, ասեն, որոց ոչ վկայէ աւետարանիչն Ղուկաս։ Իսկ՝ որք 'ի վեց Ապրիլի տօնեն, յետ երկոտասան աւուրց պաշտամանն նորա, ասեն զյղութիւնն Եղիսաբեթի ըստ վերագրելոցդ, որ է 'ի Թշրինի քսան երկու, որում և վկայէ աւետարանիչն։

Է՛ և երրորդ վկայութիւն այսոցիկ ըստ նորուն աւետարանչի պատմութեանն. ա՛յն զի ասէ՝ Յիսուս էր ամաց երեսնից, սկսեալ 'ի ծննդենէ անտի, մինչև ցմկրտութիւնն. և հարկ լինի ըստ իմաստուն և ուղիղ մտաց 'ի նոյն թիւ ամսոյ յորում և ծնունդն՝ 'ի վեց Յունվարի հանդիպել և մկրտութեանն աւուր. յետ երեսուն ամաց, թէև պատկեր աւուրցն ոչ նմանապէս։ Էր և այլ իրս բազումս ասել վասն սորին, այլ՝ սակաւ շատ է իմաստնոյդ. բայց թէ այսպէս և թէ այնպէս, 'ի փառս Աստուծոյ կատարին։ Զերգս սրբոյ Աստուածածնին գրեալ էր 'ի թղթի ասա,

1. Ի տպ. եզ։ 2. Ի տպ. ժ։ 3. Ի տպ. է։ 4. Ի տպ. եզ։

թէ ո՛չ ասեմք յեկեղեցիս մեր. և այս ամբաստանութիւն՝ ամենևին անման է ՚ի ճշմարտութենէ, զի այնքան պատուի ՚ի մէնջ արժանաւորն պատուոյ յերկնաւորաց և յերկրաւորաց մայրն Աստուծոյ Մարիամ, մինչ զի զբանս Նորա՝ ո՛չ ՚ի լուկ աւուրսն ընդ երից մանկանցն, և ընդ մարգարէին Դաւթայ երգեմք բանից, այլ ՚ի կիրակէս միայն, և ՚ի տօնս տէրունականս, որպէս և որք ՚ի ձերոց տեղեակ են եկեղեցական կարգաց մերոց, հաստ առնեն զձեզ։ Դարձեալ ՚ի թղթի աստ գրեալ էր և այս ինչ վասն մեր, եթէ մի բնութիւն դաւանեն բանին և մարմնոյն, յորմէ Ապօղինար ասէն ՚ի մէնջ ամբաստանի. և այս յոքունց բանից կարօտանայր պատասխանւոյ։ Բայց վասն ժամուս փութոյ՝ սակաւուք բաւականասցուք։ Ասեմք մի բնութիւն ՚ի Քրիստոս, ո՛չ շփոթմամբ ըստ Եւտիքեայ, և ո՛չ նուազութեամբ ըստ Ապողինարի. այլ ըստ Կիւրղի Աղեքսանդրացւոյ, զոր ՚ի գիրս պարապմանց ասէ՝ ընդդէմ Նեստորի. եթէ մի է բնութիւն բանին մարմնացելոյ, որպէս և հարքն ասացին, և հարս կոչէ զԱթանասիոս՝ և որ յառաջ քան զնա, և մեք յաւանդութենէ սրբոցն ասեմք զայս, և ո՛չ ըստ չարափառացն կարծեաց, շփոթումն, կամ յեղեղումն, կամ այլայլութիւն արկանելով ՚ի մարմնաւորութիւնն Քրիստոսի, մի ասելով բնութիւն, այլ փոխանակ միանձնա-

ւորութեանն, զոր դուք ասէք ՚ի Քրիստոս, որ է ուղիղ և խոստովանեալ ՚ի մէնջ. է և մերս մի բնութիւն ասել, զոյգ և նման, և ո՛չ հերձուածողական կարծեաց աղագաւ. և յայտ յայնմանէ է, զի յորժամ բանիւ խօսիմք վասն նորին իրի, ո՛չ ՚ի մին միայն դադարեմք, այլ և զերկուսն յատկութիւն ցուցանեմք. որպէս և վասն չարչարանաց և մահուն՝ վերաստացեալքն յայտնեն, ՚ի սրբոյն Աթանասէ, այն զի ասէ թէ Աստուած գոլով բանն, անչարչարելի էր բնութեամբ. սակայն ընդ չարչարելի մարմնոյն, անբաժանելի միացեալ անմարմինն, և որ այսպիսիք են բազումք։ Քանզի մի բնութիւն ո՛չ վասն այլոյ իրիք ասի ՚ի մէնջ, այլ յաղագս անբաժանելի և անճառ միութեան բանին և մարմնոյն։ Նա և յերկու բնութիւն ասելոյն՝ յորժամ ո՛չ վասն բաժանման լինին ասացեալքն, ըստ Նեստորի, այլ վասն զանշփոթութիւնն ցուցանելոյ, ընդդէմ չարափառացն Եւտիքեայ և Ապօղինարի, ո՛չ փախչիմք. այլ զոր օրինակ՝ հոգի և մարմին մարդոյ այլ և այլ բնութիւնք են. վասն զի ոմն երկնային է և ոմն երկրային, ոմն երևելի և ոմն աներևոյթ, ոմն ժամանակեայ և ոմն անմահ. սակայն յետ միաւորութեանն մի բնութիւն ասի մարդն, և ոչ երկու, և ո՛չ մի բնութիւն ասելովն շփոթումն իմանի ՚ի մարդն, կամ հոգի միայն կարծել զնա, կամ մարմին միայն. այսպէս և Քրիստոս թէ-

պէտ և մի ասի բնութիւն, ոչ շփոթման աղագաւ են ասացեալքն. այլ վասն անճառելի միաւորութեան երկուց բնութեանցն ընդ միմեանս, զի թէ այսպէս ոչ էր՝ հարկ լինէր ապա ոչ միայն երկու բնութիւն, այլ և երիս բնութիւնս իմանալ Քրիստոսի. երկուս զմարդկայինս՝ հոգի և մարմին, և մի զԱստուածայինն։ Բայց յետ միաւորութեանն բարձան երկուութիւնք բաժանմանցն ըստ սրբոց վարդապետացն ասելոյ։ Արդ թէ մի բնութիւն վասն անքակտելի և անբաժանելի միաւորութեանն ասի, և ոչ վասն շփոթման, և երկու բնութիւն վասն անշփոթ և անայլայլելին լինելոյ, և ոչ վասն բաժանման. երկաքանչիւրքն 'ի սահմանի են ուղղափառութեան։

Դարձեալ գրեալ էր 'ի գիրս, թէ 'ի բուսաբեր ձիթոյ, զոր Շուշմա անուանեն, լինել մեռոնի մերոյ, և ոչ 'ի ծառոց ձիթենեաց. և այս յիրաւի. և պատճառն ոչ այլ ինչ, այլ զի 'ի Հայաստանեայց աշխարհն ոչ են ձիթենիք վասն ցրտութեան օդոյն, հարկ եղև՝ զայն ինչ ձէթ՝ որ դիւրագիւտ է յաշխարհն, 'ի նիւթ մեռոնի առնուլ. և ոչ ինչ վնաս հոգևոր տեսին յայսմիկ. զի թէ նիւթոյն էր զօրութիւն, զայն նիւթ միայն արժան էր խնդրել, յորում Աստուածային ինչ ազդումն գոյր 'ի նմա։ Ապա թէ քահանայական օրհնութիւնն և աղօթքն միացուցանեն ընդ նիւթ ձիթոյն զԱստուածային շնորհն, ոչ ինչ լինի ա-

ռաւելութիւն կամ պակասութիւն, եթէ 'ի պտղոյ ծառոց իցէ ձէթն, և եթէ 'ի բուսոց, որպէս և արեանն Քրիստոսի նիւթ գինին, յորոց և իցէ գունոց՝ ընդունելի է, եթէ սեաւ՝ եթէ կարմիր՝ և եթէ սպիտակ քանզի պատարագն սրբէ զնա, և լինի արիւն Քրիստոսի։

Էր 'ի գիրս ասացեալ և վասն սրբոց պատկերաց, եթէ ոչ ընդունին Հայք ամենևին, որ յայտնի է ճշմարտութիւն, յայտնի ցուցանեմք, 'ի հակառակութենէ անտի, որ 'ի մէջ երկուց ազգացս է. բազում չարիս սերմանեաց սատանայ, որպէս առ ոմանս 'ի տգէտ ժողովրդոց մերոց. զպատկերաց սրբոց զանընդունելութիւն, որ և 'ի մէջ բոլորովին այնպիսիքն. նաև նզովս ևս 'ի վերայ դնեմք, որ յանդգնին հայհոյել. քանզի և մեք՝ որ զառաջնորդականն ունիմք զաստիճան, ընդունիմք և երկրպագեմք պատկերի անօրէնութեան փրկչին մերոյ. այլ և զամենայն սրբոց պատկերս ըստ իւրաքանչիւր կարգի պատուեմք, զորս և յեկեղեցիս մեր նկարագրեմք, և 'ի պատարագամատուցի հանդերձս. և պատուհասել ըմբերանեմք զոչ ընդունօղսն 'ի մերոց, զտգէտսն և զախմարսն։

Գրեալ էր և զայս ինչ. թէ զամենայն խաչս բևեռեն, և այս ոչ յիրաւի. քանզի զորս 'ի միատարր նիւթոց են, որպէս զոսկեղէնս և զարծաթեղէնս, և զայլս որք ոչ են երկու, 'ի վերայ

միմեանց եղեալք՝ ոչ բևեռեմք։ Իսկ զփայտեղէնսն զի յերկուց են, հարկ է երկաթեղէն բեւեռօք պնդել. զի մի 'ի հողմոց՝ կամ յայլ ինչ պատճառէ, բաժանեալ 'ի միմեանց՝ անկցին, որպէս և նոյն իսկ առաջին խաչն, յորում և Քրիստոս բևեռեցաւ, իմանի յերկուց 'ի վերայ միմեանց բևեռեալ գոլ. զի բաւական լիցի բառնալ զմարմինն, և ոչ քակտիլ։ Արդ՝ եթէ այլ խորհուրդ ինչ է բևեռն, պարտ էր զամենայն խաչս որ յամենայն նիւթոց՝ բևեռել. և ոչ զփայտեայս միայն, ուր երկիւղ է քակտելոյ և անկանելոյ։ Դարձեալ թէ 'ի քարեղէն խաչս կամ յերկաթեղէն, տեսցէ ոք բևեռս, որ ոչ 'ի յերկուց լինի մասանց, այլ 'ի միոյ, ծանիցէ զի այն արարուածք ազգաց են և հակառակասիրաց և ոչ 'ի մէնջ հրամայեալ։

Դարձեալ՝ վասն երից սրբասացութեանցն գրեալ էր. զի խաչեցար ասեմք. և թէ մեք զսրբասացութիւնս զայս 'ի դէմս Երրորդութեանն երգէաք որպէս դուք՝ չար և խորին մոլորութիւն էր ասել թէ խաչեցար։ Այլ զի առ մի անձնաւորութիւն որդւոյ բարբառիմք զայսոսիկ. վասն այնորիկ զմեծազօրն զերախտիսն, որ 'ի նմանէ առ մեզ եղեալ, դնեմք առաջի նորա. թէ Աստուած հզօր և անմահ, որ մարմնով խաչեցար վասն մեր, ողորմեա՛ մեզ. առ ընթեր նմին և զմայր բանին Աստուծոյ բարեխօս և միջնորդ

ունիմք առ միածինն իւր. ասելով թէ մատո՛ զաղաչանս մեր՝ Որդւոյ քո և Աստուծոյ մերոյ։ Վասն որոյ թէ 'ի դէմս Երրորդութեանն ոք ասիցէ որպէս դուք, և թէ 'ի դէմս Որդւոյ միայնոյ որպէս մեք, երկոքեանն հաճոյք են Աստուծոյ. յորժամ առանց հակառակութեան լինին ասացեալքն. այլ թէ և յայժմ վայրի 'ի դէմս Որդւոյ ասեմք զսրբասացութիւնսն, բայց 'ի սուրբ պատարագն՝ առ երիս անձնաւորութիւնսն զսերովբէիցն երգեմք զերգս։

Նա և այս ամբաստանութիւն գրեալ էր զմէնջ. եթէ 'ի սուրբ քառասնորդսն, զկիթս անասնոց և զձու ճաշակեն 'ի շաբաթ և 'ի կիրակէ։ Արդ՝ ցուցցուք ձեզ և զայսորիկ ճշմարտութիւն. յառաջ ժամանակաւ յաշխարհն արևելից սովորութիւն ունէին իշխանքն Հայոց, յամենայն աւուրս քառասնորդացն ուտել ձուկն և ձէթ և ըմպել գինի, ըստ ձերոց ազգացդ և ըստ Փռանգաց։ Իսկ առաջնորդք ժամանակին քարոզէին 'ի բաց կալ յայնպիսի կերակրոց, յաւուրս պահոց, ասելով թէ ձուկն առաւել է քան զկթեղէն կերակուրս. զի ձուկն կատարեալ կենդանի է, և կիթն ոչ կենդանի, այլ 'ի կերակրոց կենդանեաց մզուածս։ Վասն որոյ եթէ կամիցիք սրբութեամբ պահել, ըստ կամացն Աստուծոյ, 'ի բա՛ց կացէք որպէս 'ի կթոյ, նոյնպէս և 'ի ձկանէ. ապա թէ զայդ ոչ կամիցիք առնել, պահեցէք զհինգ ա-

ւուրս շաբաթուն սրբութեամբ յամենայն կերակրոց և յըմպելեաց, և 'ի շաբաթու և 'ի կիրակէի բաց 'ի մսոյ, զայլ ինչ կերէք, յաղագս անժուժկալութեան ձեր, զձուկն և զկիթս. զի մի ոք զձուկն միայն ուտելով, և զկիթս ոչ, կարծիցէ պահել. իբրև պահոց կերակուր համարելով զձուկն. զի այս որովայնամոլից՝ և ոչ պահողաց է սահման։ Որ և ոչ յերկարեաց 'ի Հայաստանեայս, այլ յետ փոքր ժամանակի, բարձաւ վաղվաղակի 'ի միջոյ. և այժմ 'ի մերում ժամանակիս, բաց յիշխանաց և 'ի զինուորաց, յորոց ոմանք 'ի նոցանէ ինքնակամ կամօք, և ոչ կանոնական հրամանաւ, կամ 'ի մէնջ թոյլ տուեալ, մերձենան յաւուրս պահոց 'ի ձուկն՝ 'ի ձէթ և 'ի գինի. այլ եկեղեցական դասք ամենեքին, և բազումք 'ի ժողովրդոց, ոչ միայն 'ի կթեղէն կերակրոց՝ և 'ի ձկանց 'ի բաց կան, որ ամենևին անյիշելի է յաւուրս քառասնորդացն, այլ և յամենայն պարարտ կերակրոց և յըմպելեաց գինւոյ. և թէ ոք անժուժկալութեամբ սըխալ է, և զղջացեալ խոստովան լինի, ծանրագոյն բեռն ապաշխարութեան 'ի վերայ դնեմք:

Էր գրեալ 'ի գիրս վասն մեր և այս ինչ. եթէ գինեաւ միայն առանց ջրոյ խառնման մատուցանեն զպատարագն. և յաղագս այսորիկ, բազում էին մեզ բանք ասել. 'ի վկայութենէ գրոց, զոր վասն համառօտելոյ զբանս, աւելորդ հա-

մարեցաք դնել զամենայնն՝ բայց 'ի սակաւուց։ Առաջինն զի 'ի Լուսաւորչէն մերմէ՝ 'ի սրբոյն Գրիգորէ ունիմք զայս աւանդութիւն, որպէս ընկալաւ նա 'ի նախնեաց սրբոց հարցն որ յառաջ քան զնա։ Դարձեալ զի և Քրիստոս որ մատոյց զինքն խորհրդեամբ պատարագ 'ի վերնատունն, զինի միայն գրեալ է. զի առ 'ի ձեռս և ասաց. այս է իմ արիւն. և անուն ջրոյ ոչ ըրնաւ յիշատակի, որպէս և ասաց իսկ, յետ խորհրդոյս կատարման. թէ յայսմ հետէ՝ ոչ ես արբից 'ի բերոյ որթոյ, և որթն՝ զինի և ոչ ջուր ծնանի, որպէս ասէ Յոհան Ոսկեբերանն յաւետարանին մեկնութեանն։ Իսկ՝ եթէ վասն ջրոյն և արեան որ ել 'ի կողիցն՝ ասէք արկանել ջուր 'ի բաժակն, զայս դարձեալ նոյն ինքն Յոհան Ոսկեբերան 'ի սոյն բանի աւետարանին մեկնութեանն, որ ըստ Յոհաննու, զջուրն 'ի խորհուրդ մկրտութեան մերոյ ասէ, և զարիւնն 'ի սուրբ պատարագին։ Նա և այլ բազումք 'ի վարդապետաց եկեղեցւոյ զսոյն ասեն. և մեք նոցին բանից և աւանդութեանցն գոլով հետևողք. վասն այնորիկ ոչ արկանեմք ջուր, այլ անապակ գինեաւ՝ զանապական արեանն Քրիստոսի կատարեմք զխորհուրդ. բայց եթէ այնպէս՝ և եթէ այս, միայն մաքուր հոգւով պարտ է սպասաւորել Աստուածային խորհրդոյն. և ամենայնն 'ի հաճոյս Աստուծոյ կատարեսցին։ Իսկ անմաքուրն և պիղծն,

թէ անապակ բաժակաւ առնէ, և թէ ջուր արկանելով, բարկացուցանէ զընդունող պատարագին զԱստուած, փոխանակ հաշտեցուցանելոյ։

Դարձեալ էր 'ի գիրս և ծիծաղական իրս. թէ զխաչս իւրեանց, յամենայն ամի նորոգ մըկրտեն և օրհնեն. և այս ոչ 'ի գիտնոց եղեալ է յազգս մեր, և ոչ 'ի տգիտաց. զի մի անգամ է օրհնութիւն խաչին, և ոչ բազում անգամ, որպէս գրեալ էիք. և օրհնութիւն խաչի ոչ 'ի մէնջ եղեալ է, այլ՝ յառաջին հարցն ձերոց, զոր նախնիքն մեր թարգմանեալ ետուն մեզ, որպէս այժմ գտանեմք յարեւելս Յունարէն գրով 'ի հին գիրս. ոչ առաւել՝ և ոչ նուազ քան զմերս, զի գրեալ է լուանալ զնորոգ խաչն նախ ջրով, և ապա գինւով 'ի խորհուրդ երկուց վըտակացն, որ 'ի կողիցն Քրիստոսի ելին. և ասել սաղմոս ըստ խորհրդոյն, և ընթեռնուլ բանս մարգարէականս և առաքելականս, և աւետարանս խորհրդականս, և յետ այնորիկ աղօթս քահանայականս, խնդրել յԱստուծոյ տալ այնմ խաչի՝ զշնորհս և զզօրութիւն առաջնոյ խաչին, յորոյ վերայ ինքն բեւեռեցաւ, որպէս զի զդեւս հալածեսցէ, և զախտս 'ի մարդկանէ սրբեսցէ, և զցասումն՝ որ վասն մեղաց մերոց իջանեն 'ի վերուստ, դադարեցուսցէ, և թէ բնակեա 'ի սմա միշտ՝ որպէս յառաջին խաչն քո, և արա զսա լինել քեզ տաճար, և աթոռ, և զէն

զօրութեան, զի երկրպագութիւն մեր առաջի սորա, ոչ նիւթեղէն արարածոյ, այլ քեզ միայնոյ աներեւութիդ Աստուծոյ մատուսցի, և որ այլ ևս այսպիսի պաղատանաց բանք. և ապա առեալ զօրհնեալ խաչն զայն, կանգնեմք յարեւելս, և երկրպագեմք նմա, միանգամ միայն օրհնելով, ոչ բազում անգամ, որպէս և գրեալ էր։

Եցոյց մեզ գրեալքս և զայս ինչ. թէ լուաք յոմանց 'ի նոցանէ ասել. թէ Քրիստոս՝ մարմին համագոյակից մեզ, թանձր, մահկանացու, չարչարելի, երկրային ապականացու, և եղանելի, ոչ էառ 'ի կուսէն, այլ անապական, անօր անչարչարելի, և անեղանելի, և թէ երեւեցաւ մարդ որպէս կամեցաւ, եկեր՝ էարբ իբրև առ Աբրահամու, և այսոցիկ բանից պատասխանի ունին կատարելապէս. առաջին գրեալքդ առ 'ի մէնջ բանք, բայց ասասցուք փոքր ինչ և առ այժմ դարձեալ։ Ասեմք զՔրիստոս՝ Աստուած և մարդ, ըստ Աստուածութեանն համագոյակից Հօր՝ և ըստ մարդկութեան համագոյակից մեզ. և նոյն ինքն մի Աստուածութիւնն և անբաժանելին, ըստ Աստուածային բնութեանն երկնային՝ պարզ՝ անչարչարելի և անմահ։ Իսկ՝ ըստ մարդկային բնութեանն, երկրաւոր՝ թանձր՝ չարչարելի, և մահկանացու, բայց ոչ ոմն, և ոմն ըստ Նեստորի կարծեացն, որ տաճար ասաց բանին՝ զմարմինն, քանզի յետ միաւորութեանն բարձան երկուու-

թիւնքն, որպէս և բարձրագոյնքն, և Աստուածայինքն, երբեմն Աստուածութեանն, և է երբեմն զի մարմնոյն ասին 'ի գիրս՝ համագոյակցին մերոյ։ Ըստ որում և զանօրինական անուանսն Տեառն մերոյ՝ յատուկ Աստուածութեանն դնէ առաքեալն, ասելովն Յիսուս Քրիստոս. երէկ և այսօր, նոյն և յաւիտեան. երէկ՝ զմշտնջենաւոր Աստուածութիւնն որ ընդ Հօր էր ասէ, և այսօր զմարդեղութիւնն. և նոյն և յաւիտեանս զանփոփոխանութիւնն զի թէ բաժանումն գիտէր առաքեալ 'ի մարդկութիւնն և յԱստուածութիւնն՝ պարտ էր ասել. թէ բանն Աստուած երէկ, և Յիսուս Քրիստոսն այսօր. բայց ոչ երբէք ցուցին բաժանման եղանակ, յետ միաւորութեանն. ոչ առաքեալ, և ոչ վարդապետք եկեղեցւոյ, որպէս և Յոհաննէս աւետարանիչն՝ զմարմինն շօշափելով, զբանն ասաց շօշափել. ձեռք մեր ասէ շօշափեցին 'ի վերայ բանին կենաց։ Դարձեալ և զմարմնոյն յատուկքն, է զի Աստուածութեանն տան, որպէս Աստուած խաչեալ. և արիւն Աստուծոյ և չարչարանս և մահ, ըստ Աստուածաբանին Գրիգորի և այլոց սրբոցն, և այսոքիկ զի՞նչ այլ, եթէ ոչ զանճառ միութիւնն և զանբաժանելին մի գոլ նշանակեն, վասն որոյ և մեք խոստովանիմք զմարմինն՝ համագոյակից մեզ, զի 'ի զանգուածոյն էր Ադամայ, և թանձր, և ոչ առ աչս երևեալ ձև միայն մարմնոյ, որ-

պէս Աբրահամու երևեցաւ. և այս ոչ միայն յառաջ քան զյարութիւնն, այլ՝ յետ յարութեանն. որպէս և ինքն իսկ ասաց. շօշափեցէք զիս և տեսէք. զի ես նոյն եմ, զի ոգի՝ մարմին և ոսկերս ոչ ունի, որպէս զիս տեսանէք՝ զի ունիմ։ Թէպէտ և ըստ Աստուածային զօրութեանն, յորժամ կամէր՝ թեթևացուցանէր զմարմինն, որպէս գնալովն 'ի վերայ ծովուն, և ելանելովն 'ի կնքեալ գերեզմանէն, և դրօքն փակելօք մտանելովն առ աշակերտսն. զի ոչ թէ ինքն բնութեան օրինացն ծառայէր, որպէս մեք. այլ օրէնք բնութեան նմա ծառայէին, որպէս արարչի. ըստ որում և 'ի կուսական ծննդենէն, և յայլոց գերագունից սքանչելեացն, է իմանալ. եթէ ոչ էր թանձր մարմին, 'ի խաչին զո՞վ բևեռեցին. և կամ ո՞րպէս զմեռեալ 'ի գերեզմանի եդին. և Թովմաս զո՞վ յետ յարութեանն շօշափէր, և եթէ ոչ էր չարչարելի, զիա՞րդ չարչարեցաւ, եւ եթէ չէ՞ր մահկանացու մարմնով զիա՞րդ խոնարհեցուցեալ զգլուխն, աւանդէր զհոգին. սակայն կամաւ կրէր զամենայն, և իշխանութեամբ, և ոչ ակամայ և ակարութեամբ՝ ըստ իւր ինքեան ասելոյ. իշխանութիւն ունիմ դնել զանձն իմ, և իշխանութիւն ունիմ առնուլ զսա։ Իսկ ապականացու ասել զմարմինն, թէ յաղագս կամաւոր կրից ոք ասիցէ. քաղցին և ծարաւոյն, և արտասուելոյն, և արեան հոսելոյ 'ի վերայ խաչին՝

որով կենդանացաք, խոստովանիմք և մեք զայս։ Ապա 'թէ վասն ակամայ և անզգամնելի կրից, ապականացու ոք ասիցէ զնա, այսինքն կերակրոց և ըմպելեաց ախտաբար հոսմանց, այսմ ոչ հաղորդիմք. քանզի ապականութիւն մեղաց է ծնունդ. և որ մեղս ոչ արար, ոչ տիրեաց նմա և ապականութիւն։ Դարձեալ զի վկայի 'ի գիրս, թէ զկիրս ոչ ակամայ, այլ կամաւոր կրեաց. և այս կիրք ապականութեան ոչ կամաւոր, այլ ակամայ՝ և բռնութեամբ ներգործի 'ի բնութիւնս. և որ զայս ասէ, յայտ առնէ, թէ ոչ կիրքն նմա, այլ ինքն կրիցն ծառայէր. և թէ այսպիսում ապականելի կրից հնազանդէր ակամայ, յայտ է, թէ և մեղաց, որ հայրն է ապականութեան, ներքոյ անկեալ էր. զոր մի՛ լիցի իմանալ, կամ ասել ուղիղ հաւատացելոց։ Իսկ՝ եթէ առ 'ի հաստատութիւն մարդկութեանն ոք ասիցէ զայս լինել, բաւական են յայտնի կիրքն, և անանգոսնելիքն որ գրեալն են, հաւատարիմ առնել. թէ ճշմարիտ մարդ եղև, և անգրելոցն ոչ կարօտանայ, և վատթարագունից, այն որ ճշմարիտ Աստուած խոստովանի զնա։

Գրեալ էր վերստին զմէնջ, թէ վասն այնորիկ մի բնութիւն ասեն Քրիստոսի, որպէս թէ ամենևին ընկղմեցաւ մարդկութիւնն, յԱստուածութիւնն անդր ըստ օրինակի, զի կաթիլ մի քացախոյ, կամ մեղեր, 'ի ծով անկեալ

աներևութանայ և այժմ ևս՝ առաջինդ որ 'ի մէնջ բանք՝ ունին զպատասխանի, այն զոր գրեցաք՝ թէ 'ի միաւորութեանն՝ մարդակային թանձր և յօդական բնութիւնս ոչ փոխեցաւ յանյօդ, և պարզական բնութիւնն Աստուծոյ՝ և ըզիւրն կրոյս թանձրութիւն, և ոչ պարզ և անմարմնական բնութիւնն Աստուծոյ խառնեցաւ ընդ բնութեան մարմնոյ, փոխեցաւ, կամ այլայլեցաւ յիւրն յաւէտ պարզութենէ. քանզի քացախ կամ մեղր՝ այլայլին և ապականին անկեալք 'ի ծով, որպէս ջուր և գինի. ոչ այսպէս է միաւորութեան եղանակ Աստուածութեանն և մարդկութեանն. զի այսօրիկ մարմինք զօրով, յիրաւի ապականին, խառնեալք 'ի միմեանս։ Իսկ՝ մարմին և անմարմին, խառնին և միանան անճառաբար, և ոչ շփոթին 'ի միմեանց, կամ այլայլին, որպէս և մարդկայինս հոգի և մարմին, և թէ արարած բնութիւնս այսքան, քանի՞ ևս է իմանալ առաւել հրաշափառագոյն զարարչական բնութեանն միաւորութիւն ընդ արարածոյս։

Ասացուք և փոքր ինչ և վասն առաջաւորացն՝ 'ի մէնջ անուանեալ պահոց, զոր հայհոյէք ազխտաբար, Սարգսի ուրումն ասելով, կախարդի էշ և սկունդ ունողի։ Ի յապատամբելոցն 'ի հաւատոյս մերոյ, առասպելաբանելով զանազան իրս՝ վասն նորին, և պատմելով առայօդ

բանիւ առաջի ձեր։ Բայց առ մեզ յիշատակ այսպիսում Սարգսի անգոյ է, առաւել քան զեղջերուաքաղան ասացեալ. զի նա թէև գոյութիւն ոչ ունի, անուան պատահեցաւ։ Իսկ Սարգիսս այս՝ ոչ գոյութիւն ունի յազգս մեր, և ոչ անուն. զոր եթէ է ոք ուրեք, թէպէտ և մեզ անյայտ է, նզովէ զնա կաթուղիկէ եկեղեցի, և զէշ նորա և զպկունդ և զգիտողս նորա, և զընդունողս, զի զանուն նորա չէ ոք լուեալ յազգս մեր. բայց ՚ի Հոռոմոց՝ որ ասեն զրպարտելով զմեզ։ Այլ՝ մեք վկայութեամբն Աստուծոյ, յայտնապէս գրեսցուք զճշմարտութիւնն վասն սորին իրաց, զի մի ոք տգիտութեամբ հայհոյեսցէ, և վնաս գործեսցէ հոգւոյ իւրոյ։ Արդ՝ առաջաւորք ասի սա, վասն զի առաջին պահք է Հայաստանեայց. և պատճառն է այս ինչ։ Սուրբն Գրիգոր Լուսաւորիչն մեր, յորժամ ել ՚ի վիրապէն, և ժողովեցան առաջի նորա թագաւորն Հայոց՝ Տրդատիոս՝ պատուհասեալ յԱստուծոյ, ՚ի կերպարանս վարազի եղեալ, և իշխանքն ամենայն և զօրքն՝ այսահարեալք. ետ ամենեցուն առհասարակ պահս հնգօրեայ անսուաղութեամբ. զի մի ինչ ճաշակեսցեն որպէս Նինուէացիքն, որով եղև բժշկութիւն նոցա՝ ՚ի ձեռն նորա. և զայս պահս որ վասն այսր պատճառի յառաջագոյն եդաւ ՚ի սրբոյն Գրիգորէ, նոյն ինքն Լուսաւորիչն աւանդեաց յեկեղեցիս Հայոց, զնոյն պահել վերստին,

յամենայն ամի շրջագայութեան, որպէս զի մի մոռասցին երախտիքն Աստուծոյ, եղեալ առ նոսա. և պատշաճ համարեցան խառնել զպահս զայս, որով Հայք ընկալան զփրկութիւն, ընդ պահոցն Նինուէացւոց՝ որով նոքա ազատեցան ՚ի սպառնալեաց մահուանէն. զոր և պահեն մինչև ցայժմ ազգ Ասորւոց և Եգիպտացւոց։ Իսկ՝ զի ասի սա, և յանուն սրբոյն Սարգսի, մի վասն հոմանութեանն գայթակղեսցի ոք. քանզի այս Սարգիս՝ որոյ տօնս է, իշխան էր բարեպաշտօն ՚ի Կապպադովկիայ, յաւուրս մեծին Կոստանդիանոսի և որդւոց նորա։ Իսկ յորժամ թագաւորեաց ամբարիշտն Յուլիանոս՝ հալածեալ ՚ի նմանէ գնաց ՚ի Պարսս՝ առ Շապուհ արքայ։ Եւ անդ զբազումս ՚ի զօրացն Պարսից դարձուցեալ ՚ի քրիստոնէութիւն, ընկալաւ զվճիռ մարտիրոսութեան հանդերձ որդւով իւրով, ՚ի նոյն իսկ արքայէն Պարսից Շապհոյ. և քանզի օր վախճանին պատահեցաւ լինել յերեսունն Յունվարի ամսոյ, վասն այնորիկ հաստատեցին տօնել զյիշատակ նորա՝ յաւուր շաբաթու, որ յետ պահոց առաջաւորացն։ Որպէս և զսրբոյն Թէոդորի՝ զկնի առաջին շաբաթու պահոց քառասնորդացն, տօնեն ամենայն եկեղեցիք։ Եւ Աստուծով ասացեալ՝ այս է պատճառ պահելոյ մեր զայս պահս՝ անուանեալ առաջաւորք։ Արդ՝ ըստ խնդրոյ աստուածասիրութեան խոհեմագունից անձին, ով

պատուական գլուխ, և 'ի մանկական հասակի ունող զիմաստութիւն ծերոց, որպէս զՍողոմոն և զԴանիէլ, եդաք առաջի պատուականութեան ձերոյ՝ համառօտ բանիւ, զեկեղեցւոյ Հայաստանեայց ճշմարիտ դաւանութիւն. և եթէ վասն մարդկան հաճոյից, կամ երկիւղի և պատկառանաց աղագաւ, ծածկեցաք 'ի մերոց դաւանութեանց, և ոչ գրեցաք։ Կամ թէ աւելի ինչ գրեցաք զոր ոչ ունիմք, որպէս զի ընդունելի լինել առ 'ի ձէնջ, ընդ անհաւատիցն և հերձուածողացն ընկալցուք զդատաստան առաջի ատենին Քրիստոսի. քանզի հաւատ ծածկեալ, կամ կեղծաւորեալ, ոչ է հեռի յանհաւատութենէ. որ ոք յետ զայսոսիկ լսելոյ 'ի մէնջ զայթակղեսցի դարձեալ 'ի մեզ՝ ոչ հաւատալով ասացելոցս, ինքն տացէ պատասխանի Քրիստոսի, յաւուր դատաստանին նորա, իբրև զպառակտող անդամոց նորին։ Իսկ այն՝ որ զոր միանգամ լսէ և հաւատայ, և ոչ դատի, որպէս ասաց քննօղն սրտից, ընդ ճշմարիտ հաւատացելոց ընկալցի վարձս բարեաց 'ի Քրիստոսէ Աստուծոյ մերմէ, որում փառք և զօրութիւն յաւիտեանս ամէն։

Զայս իբրև ընթերցան, զովեցին զհաւատս Հայոց ամենայն իմաստունքն Յունաց։ Եւ զի յամենայնի համաճարեղ էր Ներսէս, արար և առակս խորհրդաբար 'ի գրոց, զի փոխանակ

առասպելեաց՝ զայն ասասցեն 'ի գինարբուս և 'ի հարսանիս. և էր ինքն հեզ ամենայնիւ և պարկեշտ, արժանաւոր այրն Աստուծոյ։

Եւ յետ նորա յաջորդէ զաթոռն Գրիգոր ամս քսան. սա շինեաց զգեղապաճոյճ եկեղեցին 'ի Կլայն և զարդարեաց զնա մեծապէս. և ապա Գրիգորիս մի ամ, Տղայն կոչեցեալ, քուերորդի նոցունց. և էր նա հասակաւն գեղեցիկ և բարիոք տեսանելով. քանզի մախողք բազում էին նորա, արկին բարուրս 'ի վերայ նորա եպիսկոպոսք նախանձոտք և մատնեցին զնա ստութեամբ Լեւոնի թագաւորին. և նա հրամայեաց արգելուլ զնա 'ի բերդ մի, մինչ քննութիւն լիցի ճշմարտութեամբ վասն նորա, և ինքն գրեաց թուղթ յԱրեւելս յաշխարհն Հայոց առ վարդապետս և եպիսկոպոսս, եթէ զինչ կամք իցեն վասն այնր, և մինչև պատասխան ընկալեալ, վախճանեցաւ կաթուղիկոսն այսպիսի մահուամբ. յաւուր միում տեսին զնա անկեալ ընդ պարիսպ բերդին, ունելով կտաւ մի զմիջաւ իւրով, այնպէս մեռեալ։ Եւ զայս ոմանք ասէին, եթէ մախողքն նորա ընկեցին եպիսկոպոսքն, որ ակն ունէին ժառանգել զաթոռն, յորոց մի ասէին զԹովհաննէս, որ յետ նորա կալաւ զաթոռն, և զԱնանիա, որ եղև հակառակաթոռ 'ի Սեւաստ յիշխանութեան Սուլտանին Հոռոմոց, և այլք յեպիսկոպոսաց անտի, արք վեց։ Եւ կէսք ասէին

թէ 'ի գիշերի կամեցաւ փախչել 'ի բերդէ անտի, հնարեցաւ իջանել ընդ պարիսպն կառաւոն, և կորեալ կուռոյն, անկաւ և մեռաւ. զճշմարիտն մեք ոչ գիտեմք. այս արդարադատին Աստուծոյ է գիտելի, որոյ ծածուկքն մարդկան յայտնի են նմա: Եւ ապա տէր Գրիգոր Ապիրատն ամս եօթն: Եւ այնուհետև սկսան մախողքն Գրիգորիսի զմիմեամբք եղանել. թէ ո՛ նստիցի յաթոռն հայրապետական. և Յոհաննէսն՝ զի ընտանի էր թագաւորին Լևոնի, բռնացաւ և կալաւ. իբրև ետես զայն միւս եպիսկոպոս Անանիա, չոգաւ նա առ Սուլտանն Հոռոմոց, և ետ նմա կաշառս՝ և նստաւ կաթուղիկոս 'ի Սեբաստ. զի առէր զինքն յազգէ կաթուղիկոսին Պետրոսի, որ կայ թաղեալ անդէն. և այսպէս բաժանեցաւ աթոռ սրբոյն Գրիգորի երիս, մի բռնն՝ զոր էառ Յոհաննէս, որ 'ի Հռոմկլայն, և միւսն 'ի Սեբաստ՝ զոր ապստամբեցաւ Անանիայ, և միւս ևս 'ի կղզւոջն՝ որ կոչի Աղթամար, Դաւիթ անուն:

Իսկ յետ Ալէքսի կայսեր թագաւորէ Կալոժանն. և յետ նորա Մանուէլն: Արդ՝ 'ի շծը թուականի հայոց, ազգն Հոռոմայեցւոց զօրաժողով լեալ բիւրք բիւրուց, դիմեցին յայս կոյս Ովկիանոսի ընդ նոյնն ընդ Թիրակ ըստ առաջին անցիցն, զոր նշանակեցաք 'ի շխզ թուականին, և մոռացան զանհնարին նեղութիւնն, զոր եցոյց

որդին բելիարայ Ալէքսն, ոչ իմացան զխարդախ խաբէութեան նորա, համարելով զնա հաւատակից և պաշտօնեայ Քրիստոսի: Վասն այնորիկ և սոքա աստանօր, զի չյիշեցին զանցս աղետիցն, ինքեանք առաւել խաբեալք և պատրեալք 'ի նորին թոռնէն, որոյ անուն ըստ նեռինն զերաքրիստոս կոչի, սոյնպէս և սորայս՝ տարորոշ և նոր ամենայնիւ 'ի գործս և 'ի կրօնս Էմանուէլի, Մանիլ անուն, որ դժրեաց զհռոմայեցւոն մահարար կերակրօք և ըմպելեօք: Բայց յաւուրս հաւուն նորա Ալէքսի Կոմս ոմն եկն յԵրուսաղէմէ յԱնտիոք. և իբրև եմուտ 'ի տաճար սրբոյն Պետրոսի առաքելոյ, և հաղորդ եղև պաշտամանն, երևեցաւ նմա սուրբ առաքեալն Պետրոս և ասէ՝ 'ի պատուհան եկեղեցւոյդ թաղեալ կայ գեղարդն, որով խոցեցին զՓրկիչն մեր, առեալ տարցես յաշխարհն քո: Եւ նորա առեալ խնդութեամբ, եկն 'ի Կոստանդնուպօլիս. և յուեալ Ալէքսի կայսեր, մեծարանս արար նմա յոյժ, և ետ նմա զանձս բազումս. և խնդրեաց 'ի նմանէ զգեղարդն, և եթող առ նմա Կոմսն, և գնաց զճանապարհս իւր:

Իսկ ոլզ թուականին յարեաւ բռնակալ ոմն՝ Թուրք ազգաւ, Սալահատին անուն, 'ի Մասեաց տանէ, ծառայ լեալ Սուլտանին Մերտինայ և Հալպայ: Սա զօր կազմեալ բազում յոյժ, չոգաւ 'ի վերայ քաղաքին Երուսաղէմի:

Եւ եւ Թագաւորն Երուսաղէմի, Փռանգ ազգաւ, ընդդէմ նորա զօրու ծանու, և նենգ գործեցին նմա զօրքն իւր ծովեզերեայ. զի տէրն Տրապօլեայ, բարեկամ լեալ ընդ Թշնամիսն, մատնէ զԹագաւորն ի ձեռս նոցա այսպիսի եղանակաւ. էր տօԹ յոյժ ժամանակն, և տեղին յանջրդի. և խորհրդակից լեալ Կոմսին ընդ Թագաւորին առնուլ իւրեանց կայանս զապառաժն յանջրդի. Իսկ Թշնամիքն կալան զեզրն Յորդանանու. Իբրև խմբեցաւ պատերազմն 'ի միջօրէին, երիվարք զօրուն քրիստոնէից, քանզի պաքեալ էին 'ի ծարաւոյ, իբրև տեսին զջուրն, քարշեալ զհեծեալսն՝ ընկեցին 'ի մէջ Թշնամեացն, և նոցա սուր 'ի գործ արկեալ, յանխնայ կոտորեցին. Իսկ Թագաւորն Երուսաղէմի այր քաջ էր, զբազումս կոտորեաց ի Թշնամեացն անձամբն իւրով. և տեսեալ զի անհնար է նմա զերծանել, զի սպանաւ երիվար նորա, կամաւ ետ զինքն 'ի ձեռս նոցա. և նոքա երդուեալ պահանջեալ ինմանէ, զի մի այլ հանցէ նոցա սուր՝ Թողին զնա. և գնաց յաշխարհն Հռոմայեցւոց, և ինքեանք չոգան 'ի վերայ Երուսաղէմի, և առին զնա, և որ շուրջ զնովաւ քաղաքք, և կոտորեցին զամենեսեան. և խաւարեցաւ արեգակն զյոլով ժամս. Եւ տիրեցին Սալահատեանք Պաղեստինի և Եգիպտոսի և Միջագետաց, և մեծ մասին Հայոց աշխարհիս, ինքեանք Թոռունք իւրեանց, որ կոչին

Եոլեանք. յորոց էին Մելիք Քեմլ, և Մելիք Աշրափն, և այլ սուլտանք՝ որ տիրեցին բազում աշխարհաց։

Իսկ Կիւրիկէ Բագրատունի, որ 'ի Լօռէ քաղաքի, զամենայն ժամանակս իւր կացեալ ընդդէմ Վրաց, 'ի հաստատութեան պահէր զհայրենիս իւր. և յետ մահուան նորա որդիք իւր՝ դաւեալք 'ի Վրաց, ելեալք 'ի տանէ հայրենեաց, գնացին 'ի Պարսիկս, Դաւիթ և Աբաս անուն, առնուն 'ի նոցանէ 'ի ժառանգութիւն զՏաւուշ և զՄածնաբերդ և զայլ տեղիս։ Ապա յետ աւուրց՝ առնուն դարձեալ Պարսիկք 'ի նոցանէ զՏաւուշ. և նոքա բնակին 'ի Մածնաբերդ, և Դաւիթ և Աբաս՝ մահուամբ փոխին յաշխարհէս։ Եւ յաջորդէ զտեղի հօր իւրոյ Դաւթի որդի նորա Կիւրիկէ, այր բարեբարոյ և կատարեալ 'ի գործս առաքինութեան, քան զհայրս իւր. և բարւոք փոխեալ յաշխարհէս, Թողու ժառանգակալ զորդի իւր զմանուկն Աբաս երկոտասանամեայ։ Սա առնու իւր կին զդուստր Սարգսի բարեպաշտ իշխանի, որդւոյ Զաքարիայ, որդւոյ Վահրամայ, զքոյր մեծամեծ իշխանացն Զաքարէ և Իւանէ, Ինանայ անուն. սոցա գործք յոլով են, յիւրում տեղւոջն նշանակեսցուք. և կացեալ Աբաս ամս երկու ընդ ամուսնոյն իւրոյ, վախճանի ամաց իննից և տասանց. սորա զաւակ ոչ գոյր 'ի կնոջէն իւրմէ։ Իբրև ետես քոյր նորա, Բուրինայ

անուն, եթէ ընաջինջ եղաք յազգէ՝ անհնարին սգով վարանէր։ Ապա ասացին նմա, եթէ է կին մի, որ ունի մանուկ մի ստնդիայ յեղբօրէն քումմէ, ապա զուարթացեալ կնոջն, առնու զմանուկն և սնուցանէ, և անուանեաց զանուն նորա Աղսարթան, որ եղև ժառանգակալ Մածնաբերդոյ. այր աստուածապաշտ և քահանայասէր։ Սա որ եհաս յաւուրս մեր, սորա 'ի ծերութեանն ցաւեցին ոտք. ընդ սա խաբէութեամբ վարեցաւ Դաւիթ իշխան Նոր բերդին, զի էր և նա յազգէ Բագրատունեաց, հայրն Վասակայ իշխանի, որ շինեաց զեկեղեցին հրաշազան 'ի վանքն՝ որ Անապատն կոչի, հուպ 'ի Նոր բերդն առաջնորդութեամբ և ձեռնադրութեամբ արքեպիսկոպոսին Յոհաննիսի Տուեցոյ քաղաքին Շամքորոյ, և Գարդմանայ, և Երգեվանիցն, և Տէրունականին, և Տաւշոյ, և այլ կողմանց իշխանութեան Վահրամայ իշխանի։ Եւ եղև աւարտումն եկեղեցւոյն, որ օծաւ և կնքեցաւ յանուն սրբոյ Աստուածածնին 'ի ՌՃԹ թուականին Հայոց։ Այր սուրբ և առաքինի և բարեգործ էր եպիսկոպոսն Յովհաննէս, որ յոլով քառասունս անսուաղ պահէր։ Իսկ Դաւիթ իշխան Նոր բերդին խաբեաց զմանուկն Աղսարթան և փեսայացոյց զնա 'ի դուստր իւր. և ինքն տիրեաց Մածնաբերդոյ, և ապա եհան զդուստր իւր 'ի նմանէ։ Իսկ Աղսարթանայ իւր արարեալ զընակիչս իւր բերդին,

յանկարծակի յեղակարծ ժամու ըմբռնեալ զԴաւիթ հանդերձ ամենայն ընտանեօքն հանին արտաքս 'ի բերդէն. և ետուն զբերդն յԱղսարթան։ Եւ նա յետ ժամանակաց կենդանութեամբ իւրով ետ զիշխանութիւնն իւր յորդին իւր Կիւրիկէ, և ինքն կրօնաւորացաւ 'ի վանքն, որ կոչի Գետակիցք։ Եւ Կիւրիկէին եղեն որդիք. անուանք նոցա՝ միոյն Բահլաւան, և միւսոյն Թաղիադին, և երրորդին Աղսարթան։

Վասն Թագաւորութեանն Լևոնի, որ 'ի կողմանս յԱրևմտից։

Որ ինչ մինչև ցայս վայր էր պատմութիւնս՝ երկօք աշխատութեամբ հաւաքեալ 'ի նախագրելոց։ Իսկ որ առաջի կայս մեզ ասպարէզ պատմութեանս՝ է որ ականջալուր, և է որ ականատես. քանզի իբրև մեծ իշխանն Թէոդորոս մեռաւ, որդին Լևոնի, որդւոյ Կոստանդեայ՝ որդւոյ Թագաւորազնին Ռուբենայ յաշխարհին Կիլիկեցւոց, էառ զիշխանութիւնն եղբօր որդի նորին, Ռուբէն անուն, որդի Ստեփաննեայ, զոր սպան Անդրոնիկոս նենգիւ զօրավարն Հոռոմոց. և յետ սակաւ ժամանակաց, վախճանեցաւ նա, և էառ զիշխանութիւնն Լևոն, այր քաջ և պատերազմող։ Սա ընդ տիրելն իսկ ընդարձակեաց զսահմանս տէրութեանն իւրոյ, զի ետ նա պա-

տերազմ ընդ շուրջանակի յազգսն և յաղթեաց քաջութեամբ ըստ անուանն, առիւծաբար, զի Լևոնն՝ առիւծ կոչի։ Իբրև տեսին զյաջողութիւն նորա բռնակալքն Թուրքաց և Տաճկաց, որ Սուլտանք անուանին, ժողովեցան 'ի վերայ նորա Սուլտանն, որ իշխէր Հալպայ և Դամասկոսի, անթիւ զօրու և զինու։ Եւ լուեալ Լևոնի իշխանաց իշխանի զգիմումն 'ի վերայ իւր այլազգւոյն, աճապարեալ հաւաքեաց զզօրս իւր և յանկարծակի եհաս 'ի վերայ նոցա, որպէս զարծուիս սլացմամբ՝ յերամս հաւուց, և եհար զնոսա 'ի հարուածս մեծամեծս. և Սուլտանն փախստական լեալ, մազապուրծ զերծաւ 'ի նմանէ. այն որ խրոխտանօք գայր 'ի վերա նորա, ծառայեցուցանէր զնա։ Եւ զայն գործ քաջութեան նորա տեսեալ շրջակայ ազգացն Տաճկաց, դողային 'ի նմանէ, և հարկէին նմա. և այսպէս բռնացաւ 'ի վերայ ամենեցուն։ Եւ իբրև ետես յաջողեցաւ նմա տէրութիւնն առաւել քան զնախնիս իւր, խորհեցաւ այնուհետև ընդ իշխանսն իւր և ընդ մեծամեծսն՝ թագաւորել։ Եւ առաքեաց 'ի տիեզերահռչակ քաղաքն Հռոմայեցւոց առ Ինքնակալ կայսրն և առ Պապն, զի տացեն նմա հրաման և թագ թագաւորական, զի ոչ կամեցաւ նա, թէ այլ ումեք ազգի երևեսցի նա հնազանդ վասն թագի, բայց թէ ազգին Ֆռանգաց. միանգամայն և պարծանս իւր վարկաւ

զսուրբ առաքեալսն զՊետրոս և զՊօղոս, որ կան 'ի Հռոմայեցւոց քաղաքին, որպէս թէ 'ի նոցունց առեալ զօրհնութեան պսակն։ Եւ առաքեն նմա կայսրն և Պապն Հռոմայեցւոց թագ ազնիւ՝ զառաջին թագաւորացն, և Արծուէս մի պատուաւոր՝ այսինքն արքեպիսկոպոս, դնել զթագն 'ի գլուխ նորա, երկս իրս պահանջել 'ի նմանէ. տօնել զտօն Տեառն՝ և ամենայն սրբոց, յորում աւուր հանդիպի, և միշտ յեկեղեցւոջն կատարել զաղօթսն տուընջեան և գիշերւոյ, զոր 'ի վաղուց հետէ ոչ առնէին Հայք 'ի հինահարութեանցն Իսմայէլի, բայց միայն 'ի ժամ սուրբ պատարագին. և ոչ լուծանել զճրագալոյցսն ծննդեան և յարութեանն, բայց միայն ձկամբք և ձիթով. և յորժամ առնիցէք զայդ ոչ ինչ փոյթ մի առնիցէք զտրոց և զընծայից կայսերն և Պապին վասն թագիդ. ապա թէ ոչ առնիցէք՝ հրաման ունիմ, ասէ, անչափ գանձս առնուլ 'ի ձէնջ ոսկւոյ և արծաթոյ և ականց պատուականաց։ Իսկ Լևոնի կոչեալ զկաթուղիկոսն և զեպիսկոպոսունսն հարցանէր. թէ զինչ պատասխանի տացէ պատգամին Հռոմայեցւոց, և նոքա ոչ հաւանեցան առնուլ զխնդիրն. և ասէ ցնոսա Լևոն՝ դուք մի ինչ հոգայք վասն այդորիկ, ես հաճեցից զմիտս նոցա առ անգամ մի կեղծաւորութեամբ։ Եւ պատասխանի արարեալ Լևոնի, ասէ ցեպիսկոպոսն Հռոմայեցի. զոր ինչ հրա-

մայէ ինքնակալ կայսրն և մեծ Պապն անյապաղ առնեմք զամենայն։ Եւ նորա երդուեալ պահանջեալ 'ի նոցանէ երկոտասան եպիսկոպոսաց, և հաւանեցոյց Լևոն զեպիսկոպոսունսն յանձն առնուլ զերդումն։ Եւ արարին եպիսկոպոսքն զբան երդմանն, յորոց մի էր Ներսէս եպիսկոպոս Տարսոնի Լամբրոնեցի, զոր վերագոյն յիշեցաք. և Յովսէփ կողմանցն Անտիոքու առաջնորդ վանացն, որ կոչի Յեսուանց. և Յոհաննէս՝ որ եղև կաթուղիկոս, և Անանիա՝ որ եղև հակառակաթոռ 'ի Սեբաստ, և այլք ընդ սոսա։ Ապա եղև ժողով բազմութեան յոյժ զօրապետաց և զօրաց ազգաց ազգաց պատրիարգն Յունաց՝ որ նստէր 'ի Տարսոնի, և կաթուղիկոսն Ասորւոց՝ որ նստէր 'ի վանս սրբոյն Պարսումայի և 'ի սահմանս Մելտենւոյ, և կաթուղիկոսն Հայոց ամենայն եպիսկոպոսօք, և թագաւորեցուցին զԼևոն, և եղեն ընծայաբերք նորոգ թագաւորին կացելոյ շրջակայ ազգքն։

Եւ լուեալ կայսերն Յունաց, եթէ ետուն Փռանգք թագ Լևոնի, առաքեաց և նա ընծայս և թագ գեղեցիկ, ոսկեով և ակամբք պատուականօք ընդելուզեալ, և ասէ՝ զթագն Հռոմայեցւոց մի դիցես 'ի գլուխ քո, այլ զմերդ՝ զի առ մեզ հուպ ես քան զՀռոմ։ Իսկ թագաւորն Լևոն, այր իմաստուն էր, ոչ խոտեաց և ոչ զմի ոք յերկոցունց թագաւորացն զՀռոմայն կամ զԿոստանդ-

նուպօլսեայն, այլ ըստ կամաց նորա արար պատասխանի, և սիրով ընկալաւ զեկեալսն. եւ տուրս մեծամեծս բերողաց թագին, և եղև պըսակեալ յերկոցունցն. և էր նա բնութեամբ բարի, ողորմած, աղքատասէր, սիրող եկեղեցեաց և պաշտօնէից Աստուծոյ. կարգէր վանորայս ընդ ամենայն կողմանս տէրութեան իւրոյ և բազմացուցանէր զպիտոյս նոցա, զի մի իւիք կարօտիցեն ըստ մարմնոյ բաւականին. այլ զի միայն պաշտաման և աղօթից պարապեսցեն, յորոց մի է 'ի վանորայիցն, Ակներն կոչեցեալ վանք. զոր կարգեաց նա հռչականուն, որ մինչև ցարդ ևս վարին նովին կարգադրութեամբ, զոր նայն կարգեաց, զամենայն աւուրս շաբաթուն պահօք կատարել, և միայն լուծանել զշաբաթ և զկիւրակի ձկամբք կամ կթեղինօք։

Եւ այսպէս բարեկարգութեամբ հաստատէր զիւր թագաւորութիւնն բարեպաշտն Լևոն, և էր նա ամենայն իրօք բարերագոյն, բաց միայն միով մասամբ. զի էր նա իգասէր, և եթող նա զկինն իւր զառաջինն՝ զոր ունէր յիշխանութեանն, և էառ զդուստր արքային Կիպրոսի, Փռանգ ազգաւ, զի լիցի նմա թիկունք և օգնական։

Դէպ եղև զի չոգաւ նա 'ի Կիպրոս կղզի 'ի տեսութիւն աներացն իւրոց։ Եւ լուեալ զայն թըշնամեաց նորա, որք 'ի ցամաքի, ոչ ինչ կարէին ազդել նմա, պատրաստեցին նաւս բազումս, զի

'ի ծովու նենգեսցեն զնա։ Եւ լուեալ զայն արքային Լևոնի, դարձաւ անդրէն յետս 'ի Կիպրոս, զի էր 'ի ճանապարհի 'ի վերայ ծովուն. և առ իւր նաւս պատերազմականս, և եկեալ 'ի զարանն, որ գործեալ էր նմա նաւաց բազմաց. և զի այր իմաստուն էր, ծանեաւ թէ, յորում նաւուցն իցէ գլխաւորն, եհար զնա արագաթև նաւովն և ջրասոյզ արար զամենեսեան, և մնացեալ նաւքն փախեան, և անկաւ ահ նորա 'ի վերայ ամենեցուն հեռաւորաց և մերձաւորաց։

Եղև երբեմն, զի Սուլտանն որ տիրէր կողմանցն Հալպայ, զօրաժողով եղև 'ի վերայ նորա յաւուրս զատկացն, և յղեաց առ Լևոն արքայ պատգամս այսպէս. եթէ ոչ հնազանդեալ հարկեսցիս ինձ ծառայութեամբ, բազմութեամբ զօրաց իմոց 'ի սուր սուսերի մաշեցից զամենայն բնակիչս երկրի քո, մայր առ մանկամն, և զտօնդ ձեր՝ յորում ուրախանայք քրիստոնեայքդ պատուելով զդա, որպէս թէ յարութիւն Քրիստոսին ձերոյ իցէ, դարձուցից զդա 'ի սուգ ձեր, և արարից զի զպատրաստեալ կերակուրդ ձեր վասն տօնիդ, ուտիցէք զայդ 'ի վերայ ձիոյ։ Եւ իբրև առաքեաց զայս՝ յինքն առեալ զբազմութիւն զօրաց իւրոց, բանակեցաւ առ սահմանօք նոցա, մնայր գալստեան պատգամին։ Իբրև գիտաց արքայն Լևոն զգալ պատգամին և զզօրաժողով լինել այլազգեացն, հրամայեաց

զդեսպանսն յայլ կողմ շրջեցուցանել աշխարհին պատճառանօք, որպէս թէ արքայ անդ իցէ. և ինքն աճապարեալ ժողովեալ զզօրս իւր, և ընդ այլ կողմ եղ 'ի վերայ նոցա. և յեղակարծ ժամու անկաւ 'ի վերայ նոցա, և եհար զնոսա հարուածս մեծամեծս, և մազապուրծ փախեաւ Սուլտանն։ Եւ Լևոնի արքայի առեալ զաւար բանակին այլազգեաց, հանդերձ վրանօք նոցա, և զգերիսն ամենայն, եկն բանակեցաւ յաշխարհին իւրում առ ափն գետոյն, և հրամայեաց զօրաց իւրոց կանգնել զխորանս այլազգեացն, և զիւրաքանչիւր դրօշս կանգնել 'ի գլուխ խորանի իւրոյ. և ապա հրամայեաց կոչել զդեսպանսն. և իբրև եկին՝ տեսին զվրանս և զխորանս զօրացն իւրեանց և զնշանակ դրօշից իւրաքանչիւր զնդից, և զարմացան հիացմամբ մեծաւ, զի ոչ գիտէին զեղեալսն։ Ապա իբրև իմացան, դիմեցին յոտս թագաւորին, և զապրուստ անձանց խնդրէին։ Իսկ արքայ մարդասիրեալ առ նոսա, շնորհեաց նոցա կեանս, և առաքեաց զնոսա առ տէրն իւրեանց, զնոյն հարկ զոր պահանջէր Սուլտանն յարքայէն, զնոյն և ևս յաւելեալ եդ 'ի վերայ նորա. և ծառայեցոյց զայլազգիսն. և եղև թագաւորելն նորա ոխզ թուականին Հայոց։

Վասն իշխանացն որ յԱրեւելս Հայաստանեայց Զաքարէին եւ Իւանէի եղբօր նորին։

Յաւուրս ժամանակաց թագաւորութեանն Լեւոնի Հայոց արքայի էին յԱրեւելս երկու եղբարք, որդիք Սարգսի բարեպաշտ իշխանի, որդւոյ Վահրամայ, որդւոյ Զաքարիայ, որ հատուածեալ 'ի Քրթաց 'ի Բաբիրական խելէն, անուն առաջնոյն Զաքարէ, և երկրորդին Իւանէ, արք քաջք և ճոխք իշխանութեամբ, պատուեալք 'ի թագուհւոյն Վրաց, որ Թամարն կոչէր, դուստր Գէորգեայ քաջի, որդւոյ Դեմետրէի։ Եւ Զաքարէ էր զօրավար Վրաց և Հայոց՝ որ ընդ ձեռամբ թագաւորին Վրաց։ Իսկ Իւանէ՝ Աթաբակութեան պատուով. սոքա բազում մարտս քաջութեան ցուցին. քանզի զբազում աշխարհս Հայոց՝ զոր ունէին Պարսիկք և Տաճիկք, առին 'ի նոցանէ յինքեանս, զգաւառն՝ որ շուրջ զծովակն Գեղարքունւոյ, զԱրատաշիր, և զԱյրարատ, և զԴուին, և զԱնբերդ, և զԱնի քաղաք, և զԿարս, և զՎայոց ձոր, և զաշխարհն Սիւնեաց, և որ շուրջ զնոքաւ են բերդք, և գաւառք. հարկատուք արարին և զՍուլտանն Կարնոյ քաղաքին. աւերեցին և ըզբազում գաւառս Պարսից, և զԱտրպատական. ընդարձակեցին զսահմանս իւրեանց յամենայն կողմանց։ Այսպէս և միւս իշխանն, Զաքարէ անուն, և եղբայր իւր Սարգիս, հայրն Շալուէի

և Իւանէի, ազգականք մեծ իշխանացն, ձեռնտուութեամբ նոցին, առին և նոքա բազում գաւառս 'ի Պարսից, և զբերդս ամուրս զԳարդման, զՔարհերձ, և զՆրգեվանք, զՏաւուշ, զԿածարեթ, և զՏէրունականն, զԳագ, և զՇամքոր քաղաք 'ի նեղ էարկ, զոր յետոյ էառ որդի նորա Վահրամ, հայր Սաղպուղին, պապն Վահրամայ, և Զաքարէի և Իւանէի։

Եւ այսպէս յաջողեցաւ նոցա 'ի վերուստ յաղթութիւն նոցա, զի համբաւ քաջութեան նոցա էր ընդ բազում գաւառս, և բազում ազգք հարկէին նոցա, որ սիրոյ աղագաւ, և որ յերկիւղի, շինեցան բազում վանորայք, որ 'ի վաղուց ժամանակէ անտի աւերեալ էին 'ի հինից Իսմայէլի, վերստին նորոգեցան եկեղեցիք, և պայծառացան դաշտք պաշտօնէից, շինեցան և նոր վանորայք և եկեղեցիք, որ 'ի հնոցն չեւ էին լեալ վանք, ընդ որս և հռչակաւոր վանքն՝ որ Գետիկն կոչի, 'ի գաւառին Կայենոյ, զոր շինեաց սուրբ վարդապետն Մխիթար, զոր Գոշն կոչէին, շինեալ հրաշագան եկեղեցի զմբեթայարկ երկնանման, և կնքեալ զեկեղեցին, և օծեալ յանուն սուրբ Աստուածածնին, տաճար փառաց Տեառն՝ բնակարան բանաւոր հօտին Քրիստոսի։

Եւ իբրև այսպէս յաջողեցաւ նոցա իշխանութիւնն, զի հարին զՍուլտանն, որ շահի Ար-

մէն կոչիւր։ Ապա կամեցան առնուլ և զհոյակապ քաղաքն Բզնունեաց՝ զԽլաթն, և զօր գումարեալ պաշարեցին զնա՝ և մերձ էին յառնուլ։ Ապա ելեալ իշխանն Իւանէ, եղբայր զօրավարին, զբօսանաց իմն աղագաւ 'ի զնին պարսպին և յանխնամ շրջիլն՝ գթեաց ոտք երիվարին 'ի խորխորատն՝ որ թագուցեալ էր, և ընկեց զնա յերկիր. և տեսեալ արանց քաղաքին, յարեան 'ի վերայ նորա, և ձերբակալ արարեալ, տարան զնա ի քաղաքն. և եղև ի քաղաքին մեծ ուրախութիւն. և խսկոյն ազդեցուցին Սուլտանին զըմբռնումն նորա. ընդ որ կարի յոյժ ուրախացեալ, հրամայեաց առ ինքն ածել։ Եւ լուեալ զօրավար Զաքարիայի, յղեաց առ քաղաքացիս բանս սպառնալեաց և ասէ. եթէ հանէք զեղբայրդ իմ 'ի քաղաքէդ յայդմանէ, և կամ կորուսանէք՝ զհող երկրիդ՝ 'ի կողմանս Վրաց տամ տանել, և անմարդ արարից զձեզ։ Եւ երկուցեալ նոցա՝ ոչ ետուն տանել առ Սուլտանն, որք էին 'ի կողմանս Դամասկոսի և յեգիպտոսի. որոց անուանքն էին Կուզ և Մելիք Քամլ և Աշրափ, յազգէ Սալահատնին, որ առ զԵրուսաղէմ։ Ապա արարեալ սէր ընդ միմեանս, խնդրեցին զդուստր Իւանէի 'ի կնութիւն. եղև որպէս խնդրեցին. առին պատանդս և արձակեցին զԻւանէ։ Եւ նորա երթեալ 'ի տուն իւր, առաքեաց զդուստր իւր, որ եղև կին Կզոյն, և յետ նորա Աշրափին։ Բազում օ-

գուտ եղև գալ կնոջն 'ի տուն Սուլտանացն, զի դիւրեցին քրիստոնէիցն, որ ընդ իշխանութեամբ իւրեանց էին, ևս առաւել երկրին Տարօնոյ. զի վանորայքն՝ որ անդ էին, ընդ հարկիւ էին, թեթևացուցին զսակ հարկին, և կիսոյ զամէնն իսկ թողին. և հրամայեցին այնոցիկ, որ ընդ իշխանութեամբ իւրեանց են, ոչ զրկել կամ նեղել զճանապարհորդս, որք աղօթից աղագաւ երթային յԵրուսաղէմ, ևս առաւել ընդարձակեցին ազգին Վրաց. զի Իւանէ խոստովանեցաւ յաղանդն Քաղկեդոնի, յոր կործանեալ էին Վիրք. զի սիրեաց նա զփառս մարդկանց առաւել քան զփառս Աստուծոյ, հրապուրեալ նա 'ի թագուհւոյն՝ որ Թամարն կոչէր, 'ի դստերէն Գէորգեայ։ Իսկ Զաքարէ յուղղափառութեանն եկաց, զոր դաւանեն Հայք. վասն այսորիկ առաւել մեծարէին զՎիրս. զի անհարկ էին նոքա յամենայն քաղաքս նոցա և յԵրուսաղէմ ևս. և էր անուն կնոջն Թամթայ։ Եւ այսպէս եղև սէր և միաբանութիւն ընդ թագաւորութիւնն Վրաց և ընդ իշխանութիւն Սուլտանացն։

Վասն ժողովոյն զոր արար Զաքարիայ վասն խնդրոյ ինչ իրաց։

Յետ այսորիկ իբրև խաղաղացուցին զաշխարհս իշխանութեան իւրեանց յամենայն հե-

նից, և բազմացան վանորայք, և պայծառացան պաշտամունք եկեղեցւոյ, այլ ինչ էած զմտաւ իշխանն Զաքարէ. զի տեսանէր զզօրս Վրաց, որ ընդ Թագաւորին իւրում, զիւրաքանչիւր ոք 'ի նոցանէ ունէր ընդ իւր քահանայս, և յամենայն տեղիս մատուցանէին պատարագ. և ինքն ոչ ունէր եկեղեցի 'ի ճանապարհի, զի չէր սովորութիւն Հայոց 'ի բազում ժամանակաց հետէ, յորմէ բարձան իշխանքն հայոց մեծամեծք 'ի Պարսից և յԻսմայէլացւոց բռնութենէն։ Եւ նախատէին Վիրք զՀայք, ոչ ունել եկեղեցի 'ի ճանապարհի, և անհաղորդ մնալ նոցա, և ոչ տօնել զտօնս վկայիցն Աստուծոյ յիւրաքանչիւր աւուր կատարման. վասն այսորիկ կարի յոյժ ցաւ էր նմա։ Ապա հարցանէր զմեծ վարդապետն Մխիթար, որ Գօշն կոչէին, զլինող վանիցն Գետկայ, որ էր հայր խոստովանութեան նմա, և ասէր թէ ոչ երբէք եղեալ է թագաւորացն մերոց, կամ իշխանացն 'ի պէտս ճանապարհաց եկեղեցի, տեղի պաշտաման և պատարագի, հարցանէր և զայլ վարդապետաց, և նոքա ասացին նմա զայն, որ առ մեծազօր արքային Տրդատաւ վրանն և սեղանն, զոր շրջեցուցանէին յարքունական բանակին, և որ առ սրբովք Վարդանամբք, որք ըդմկրտութիւնն և զհաղորդութիւնն կատարէին 'ի մէջ բանակին, և զայն զոր գրեցին սուրբ վկայքն Հիպերիքոս և Փիլոթէոս առ Յակոբոս երէց, եթէ

առեալ ընդ քեզ զպաս պատարագիդ և զեղջիւր իւղոյդ, եկեսցես առ մեզ. և այլ բազումք, որ նման են սոցին։ Ապա առէ ցնոսա մեծ զօրավարն. տուք և ինձ հրաման. զի և ես շրջեցուցից զկնի իմ քահանայս և վրան պատարագի։ Ասէ ցնա մեծ վարդապետն. մեք ոչ կարեմք առնել զայդ առանց հրամանի կաթուղիկոսին Հայոց, և Թագաւորին Լեւոնի։ Ապա գրէ թուղթ և առաքէ դեսպանս առ կաթուղիկոսն Հայոց, Յոհաննէս անուն, որ ընդ այն ժամանակս ապստամբ էր 'ի Թագաւորէն Լեւոնէ ի Հռոմկլայն վասն իրիք պատճառանաց։ Նմանապէս գրէ և առ Լեւոն Թագաւորն, և ծանուցանէ նմա զխնդիրն։ Եւ նա նստուցեալ էր զտէր Դաւիթ կաթողիկոս փոխանակ Յոհաննիսի, որ ապստամբն էր յաշխարհէն Կիլիկեցւոց 'ի վանքն, որ կոչի Արքակաղին։ Ապա ժողովեալ արքային Լեւոնի զվարդապետս և զեպիսկոպոսս իւրոյ իշխանութեանն, հարցանէր վասն խնդրոյն Զաքարէի. Եւ նոքա յանձն առին, զի մի՛ ելցէ նա արտաքոյ ուղղափառ հաւատոյն, որպէս զեղբայր իւր. գրեն թուղթ յԱրեւելս այսպէս. Մեծ սպարապետ և շահնշահ արեւելեան կողմանցն Զաքարիայ, 'ի խնդիր եղեալ եղծեալ և աղաւաղեալ կարգաց քրիստոնէից, որ 'ի սակաւութենէ այլասեռից՝ ժողով արարեալ վարդապետաց և եպիսկոպոսաց, և հարց, և երիցանց, որ քննեալ գտին զխնդիրս նորա համաձայն Աստուածային գրոց։

Ապա առաքեաց առ Քրիստոսապսակ արքայն Հայոց Լևոն, որ 'ի կողմանս Արևմտից, յաշխարհին Կիւլիկեցւոց։ Եւ նորա ժողով արարեալ 'ի մայրաքաղաքն Սիս զկաթուղիկոսն Դաւիթ հանդերձ վարդապետօք և եպիսկոպոսօք և ճգնաւոր միանձամբք, գտին զխնդիրս նորա համաձայն առաքելական կանոնաց, և ոչ արտաքոյ։ Վասն որոյ գլուխս կանոնաց դրոշմեալ առաքեցին թուով ութ, որ են այսոքիկ. Առաջին մատուցանել ըզպատարագն սուրբ դպրաւ և սարկաւագաւ, որպէս օրէնն է։ Երկրորդ տօնել զտօն աւետեաց սրբոյ Աստուածածնին 'ի վեց Ապրիլ ամսոյ, յորում աւուր և հանդիպի. և զտօն փոխման նորին տասն և հինգն Օգոստոսի ամսոյ, յորում աւուր և հանդիպի. և զտօն սրբոյ խաչին տասն և չորս Սեպտեմբերի ամսոյ, յորում աւուր և հանդիպի։ Նոյնպէս և զայլ տօնս վկայից, յորում աւուր և հանդիպի ըստ իւրաքանչիւր յիշատակի։ Երրորդ պահել զծրագալոյց սուրբ յայտնութեանն և զյարութեանն մինչև ցերեկոյն պահօք, և ոչ այլ ինչ լուծանել, բայց միայն ձկամբք և ձիթով։ Չորրորդ ընդունել զնկարագրութիւն պատկերի Փրկչին, և ամենայն սրբոց. և մի՛ խոտել զնոսա իբրև զպատկեր հեթանոսաց։ Հինգերորդ պատարագ մատուցանել և կենդանեաց։ Վեցերորդ կրօնաւորաց՝ միս ոչ ուտել։ Եւթներորդ ձեռնադրել դըպիր, և ապա յետ բազում աւուրց սարկաւագ,

և 'ի կատարել հասակի ապա քահանայ։ Ութերորդ միւռոն կալ 'ի վանս, և առանձին իբրև ոչ ստանալ։ Զայսոսիկ, և որ նման սմին գրեցին ժողովք յԱրևմտից, և առաքեցին յԱրևելս առ Զաքարիայ։ Իսկ կաթուղիկոսն Յովհաննէս՝ որ 'ի Կլայն Հռոմայական, վասն ընդ միտ մտանելոյ իշխանացն Արևելից, առաքեաց վրան մի գմբեթայարկ եկեղեցաձև, կազմօղս և յօրինողս նմին, և սեղան մարմարեայ, և այլ սպաս պատարագաց, և եպիսկոպոս մի, Մինաս անուն, և սարկաւագ և դպիրս, և քահանայս գեղեցկաձայնս, ասացօղս պատարագին. որք եկեալ յանդիման եղեն Ամիր սպասալարին 'ի քաղաքն Լօռէ, և առաջի կացուցին նմա զհրամանս կաթուղիկոսին և զթուղթս նորին և զընծայսն։ Նմանապէս և յարքայէն Լևոնէ, և 'ի կաթուղիկոսէն Դաւթէ եկին դեսպանք և հրամանաբերք։ Ընդ որ յոյժ ուրախացեալ Զաքարիայ, ժողով հրամայեաց առնել 'ի Լօռէ քաղաք զեպիսկոպոսն Հաղբատայ՝ զԳրիգորէս, զիւրեանց ազգական, և զեպիսկոպոսն Անւոյ, և զեպիսկոպոսն Բջնոյ, և զԴիզայ, և զԿարուց, և զայլս որք դիպեցան։ Նոյնպէս և զվարդապետս և զառաջնորդս վանօրէից հանդերձ քահանայիւք և այլ աշխարհական ամբոխիւ, կամէր կանգնել զվրանն և պատարագ մատուցանել։

Եւ էին 'ի ժամանակին յայնմիկ վարդա-

պետք երեւելիք, որ Գոշն կոչիւր, շինող վանացն Գետկայ, այր իմաստուն և հեզ, և վարդապետն ուսմամբ հռչակեալ Իգնատիոսն, և Վարդան, և Դաւիթ Քոբայրեցին 'ի Հաղբատայ, Յովհաննէս հայր Սանահնին, որ զկնի մահուան Գրիգորոյ, զոր Տուտայ որդին կոչէին, սնուցող նոցուն իշխանացն, Գրիգոր՝ զոր Մոնոնիկն կոչէին, 'ի Կեչառուաց, Տուրքիկն 'ի Թեղինեաց, որ բարւոք կարգաւորեաց զվանքն, զամենայն ինչ հասարակաց լինել, և առանձին ինչ ոչ ստանալ։ Եղիայ 'ի Հաւուց Թառոյ, այն՝ որ գեղեցիկ կարգաւորեաց զպաշտօն վանից իւրոց, որպէս թէ ամենեցուն ընդ մի բերան հնչել. եթէ բարձր և թէ ցած. և ոչ հարստահարել ընկեր զընկեր. Գրիգոր Դփացին. Սարգիս միակեացն 'ի Սևանայ. այսոքիկ արք երեւելիք և այլք բազումք. Գրիգորէս եպիսկոպոս Հաղբատայ, Վրթանէս Բջնոյ և Դփայ, Սարգիս աթոռակալ Անւոյ, Յովհաննէս Կարուց, և այլք յոլովք աստի և անտի, համդերձ երեւելի քահանայիւք վանաց և քաղաքաց և գիւղից։

Իսկ իբրև գիտացին և լուան զհրամանս կաթուղիկոսին և Գրիգորին, ոմանք հաւանեցան, և կէսք ոչ. և այսպէս անմիաբանք լեալ, քակտեցան 'ի միմեանց. ոմանք գիշերի գաղտագողի գնացին միմեանց մեղադրելով։ Իսկ իշխանն Զաքարէ առաքեաց 'ի վանորայսն որ ընդ իւրեանց

իշխանութեամբ, և տայր բռնութեամբ առնել զտօն փոխման Աստուածածնին, և վերացման սուրբ խաչին, ոչ 'ի կիրակէի՝ որպէս սովորն էին, այլ զպատկերն զինչ օր և էր. բազում անմիաբանութիւնք և կռիւք էին. յեկեղեցիս, և լինէր փոխանակ ուրախութեան՝ տրտմութիւն. և փոխանակ սիրոյ՝ որ ընդ միմեանս, ատելութիւն. մինչև 'ի սուր ևս մատբերել միմեանց։ Ապա առաքեաց Զաքարիայ զեպիսկոպոսն Մինաս, որ եկեալ էր 'ի կաթուղիկոսէն 'ի Հաղբատ իւր պաշտօնէիւքն. զի և անդ զնոյն արասցեն. և մինչ գայր նա հուպ 'ի վանքն, առաքեաց Գրիգորէս եպիսկոպոս Հաղբատայ արս՝ որք սաստիկ հարին զնա բրօք, և զպաշտօնեայս նորա սաստիկ. և վէրս 'ի վերայ եդեալ թողին կիսամահ, և զջորիսն՝ որք էին ընդ նմա բեռնակիրք, զահավէժ արարեալ՝ սատակեցին, և բարձեալ զեպիսկոպոսն մահճօք տարան առ Զաքարէ։ Եւ նորա տեսեալ բարկացաւ յոյժ 'ի վերայ Գրիգորիսի, և հրամայեաց ըմբռնել զնա՝ մահու չափ սպառնացեալ 'ի վերայ նորա։ Եւ նա փախստական գնացեալ յաշխարհն Կարնոյ 'ի վանքն Գետիկ առ մեծ վարդապետն Մխիթար, ապաւինելով 'ի նմա, զի գիտէր թէ մեծ համարձակութիւն ունի նա առ Զաքարէ, և ճողոպրեցաւ այն անգամ 'ի ձեռաց նորա. և յետոյ ըմբռնեալ զնա 'ի Կեչառիս, և եդ զնա 'ի բան-

տի, և զՅովհաննէս կացոյց փոխանակ նորա եպիսկոպոս Հաղբատայ. այն՝ որ յառաջ եթող զաթոռն, և գնաց 'ի Խաչէն։ Եւ այր առաքինի էր Յովհաննէս, և բազում գործս արժանի յիշատակի գործեաց նա 'ի Հաղբատ, ընդ որս և զհռչակաւոր զաւիթն եկեղեցւոյն շինեաց, որ հիացուցանէ զտեսողսն. և այսպէս շփոթումն ունէր զեկեղեցիս Արևելից. քանզի 'ի բազում ժամանակաց հետէ չէին սովոր առնել, զոր խնդրէր նա. ոչ զտօնս իւրաքանչիւր աւուր, զի մի պատճառաւ տօնին լուծցին պահքն, և զպատարագն սուրբ ոչ մատուցանէին սարկաւագաւ. այլ միմեանց քահանայքն սպասաւորէին, կարծեմ թէ զայս սովորութիւն էին կալեալ 'ի բռնութենէն Տաճկաց, որ ոչ տային համարձակ պաշտել զպաշտօնս իւրեանց քրիստոնէից. այլ և ոչ զդրունս եկեղեցեաց իշխէին թողուլ 'ի բաց 'ի ժամ սոսկալի խորհրդոյն, զի մի ոճիռ ինչս գործեսցեն այլազգիքն. և ոչ զայլսն զոր նա ախորժէր։

Դարձեալ ժողով հրամայէր առնել 'ի մայրաքաղաքն յԱնի, որ 'ի Շիրակ գաւառի, և ժողովեցան վերոյգրեալ եպիսկոպոսքն և վարդապետքն և ես յոլովք։ Գրեաց Զաքարիայ առ վարդապետն Մխիթար, զի և նա գայցէ 'ի ժողովն։ Իսկ նա պատճառեաց զհիւանդութիւնն և զանկարութիւնն, և գրեաց պատասխանի այս-

պէս. եթէ զոր ինչ առնեն զօքա և կամին, համաձայն եմ և ես այնմ, և աղաչեմ զքեզ՝ մի ինչ աւելի աշխատ առներ զիս, զի չեմ կարող։ Իսկ Զաքարէ կոչեաց զժողովն, և խնդրէր 'ի նոցանէ ձեռագիր՝ զի արասցեն՝ զոր խնդրէր նա. և նոքա ասեն. անհնար է մեզ՝ առանց մեծ վարդապետին առնել զայդ. զի այսպէս կոչէին զնա սակս պատուոյ. և նա ցուցեալ զթուղթն, ասէ՝ աւասիկ նա. այս ձեռագիր նորա է և նա սա, և զթուղթն ոչ ետ ցնոսա, եթէ զինչ գրեալ էր նամակս։ Իսկ ժողովն խնդրեաց 'ի նմանէ ներումն, մինչ ինքեանք առաքեսցեն առ նա, զալ նմա 'ի ժողովն. և առաքեցին առ վարդապետն Մխիթար, և աղաչէին զնա գալ 'ի ժողովն. զի միայն պատասխանի արասցեն զօրավարին. և գրեցին թէ զանկարութիւն մարմնոյ մի ինչ պատճառեր, եթէ 'ի ճանապարհի հասանէ քեզ վախճան ընդ առաջին սուրբ վարդապետացն եկեղեցւոյ կարգեսցուք զյիշատակս քո։ Եւ իբրև ընթերցաւ զթուղթ ժողովոյն, վաղվաղակի յարեաւ և գնաց զկնի կոչնականացն. և էր աւուրքն ձմեռնայինն, և տօն ծննդեան և յայտնութեան Յիսուսի Քրիստոսի մերձեալ։ Իբրև գիտաց զօրավարն, եթէ գայ նա, առաքեաց իշխան մի 'ի քաղաքին դուրս. զի յորժամ գայցէ՝ մի թողացուսցեն զնա երթալ 'ի ժողովն, այլ առ ինքն տարցեն։ Եւ նախ քան զգալն նորա, կէսք

հաւանեալ էին առնել զխնդիրն, այնոքիկ, որ եպիսկոպոս էին յիշխանութեանն. զի մի անկցին յաթոռոյն. և կէսք ոչ: Իբրև եկն վարդապետն, առեալ իշխանն զերաստանակս երիվարի նորա, տարաւ զնա առ զօրավարն: Իբրև գիտացին ժողովն, եթէ ոչ թողին զնա առ ինքեանս, առաքեցին զվարդապետն Ներսէս՝ այր առաքինի և ողջախոհ, որ յետոյ առաջնորդ եկաց Կեչառուաց զկնի մահուան վարդապետին Գրիգորի, որ Մոնոնիկն կոչիւր, զի երթեալ ասասցէ նմա. նախ 'ի ժողովն գալ, զի խորհեսցին 'ի միասին, թէ զի՞նչ պարտ իցէ առնել, զի հանդերձեալ էր զօրավարն աքսորել զնոսա: Եւ նա երթեալ հանդիպի նմա յայնմ տեղւոջ, զի մօտ էր նմա մտանել յապարանս զօրավարին. և արտաքուստ ձայնեաց առ նա և ասաց զպատգամս ժողովոյն: Իսկ իշխանն սաստկելով տարեալ եմոյծ զնա 'ի ներքս. և զօրավարն եկեալ ընդ առաջ նորա, ողջոյն ետ նմա և ասէ, որովհետև եկիր դու, ինձ ոչ ինչ փոյթ է զնոցանէ: Եւ լուեալ զբանս զայս ժողովն, նախանձաբեկ եղեն. և յաչաղելով ասէին՝ զայս ամենայն, զոր գործէ զօրավարս ընդ մեզ, խրատու նորա գործէ. մեք իբրև զանասուն համարեալ եմք յաչս նորա. և այլ բազում բանիւք բամբասէին զնա: Իսկ նա իբրև իմացաւ զկիրսն, որ եղեալ էին առ ժողովն, մեղադիր եղև առ զօրա-

վարն. թէ իշխանաբար ոչ էր պարտ առնել զայդպիսի իրդ. և առաքեաց առ ժողովն և ասէ. դուք հոգայք վասն ազգիս, զի մի՞ այդպիսի սովորութեամբ խառնեսցին ընդ Վիրս, և ես հոգամ վասն զօրավարիդ, զի մի՞ լիցի սա Վրացի, իբրև զեղբայր իւր, որում ոպասեն Վիրք: Արդ՝ թէ այսպէս է, ապա զի՞ մեղադրէք ինձ, զի հրաման ունի 'ի կաթուղիկոսէն և 'ի թագաւորէն Լևոնէ առնել զայս. և մեք թէ կամիմք և թէ ոչ, սա ոչ դադարէ յառնելոյ զայդ: Արդ դարձջիք յիւրաքանչիւր բնակութիւնս և մեք աղաչեսցուք զսա ոչ հանել զձեզ յեկեղեցեաց ձերոց և 'ի տեղեաց. և մեք զպաշտօնն՝ զոր մինչև ցայսօր պաշտեալ եմք՝ զնոյն պաշտեսցուք: Իսկ Ամիր սպասլարն Զաքարէ հրաման ետ զաղտնի առանց գիտելոյ վարդապետին մերժել զնոսա յօտարութիւն, զոր իմացեալ վարդապետին՝ զբազումս 'ի նոցանէ թափեաց դառնալ 'ի տեղիս իւրեանց, և զայլսն յետ սակաւ ինչ աւուրց Իւանէ եղբայր զօրավարին հրաման ետ դառնալ 'ի տեղիս իւրեանց: Իսկ Զաքարիայ զամենայն ժամանակս կենաց իւրոց որչափ եկաց՝ նոյնպէս վարեցաւ, որպէս կամէր, բայց եկեղեցիքն ամենայն առաջին պաշտամամբքն վարեցան: Զբովանդակ իրս՝ զբան և զգործ այսմ ժողովոյս գրեաց մեծիմաստ և առատամիտ վարդապետն Վանական յիւրում պատմութեանն, զի ակնա-

տես էր նա իրացն եղելոց, և ականջալուր, յաշակերտի կարգի գոլով յայնժամ առ մեծ վարդապետին։ Այս և այլ յոլով իրք գտանին 'ի գիրս նորա, որք կամին մտադիւրութեամբ ուսանել.

Վասն կաթուղիկոսին Աղուանից գալոյ առ մեծ իշխանն.

Ի բազում վշտաց և 'ի նեղութեանց, զոր կրեաց առ հասարակ ամենայն աշխարհ, յազգացն հարաւայնոց, յորդւոցն Իսմայէլի, և'ս առաւել աշխարհս Հայոց և Աղուանից, զի բնաջինջ եղաք 'ի թագաւորաց և յիշխանաց. կաթուղիկոսքն Աղուանից այսր անդր յածելով, վասն ոչ ունելոյ հաստատուն տեղի աթոռոյ։ Դէպ եղև նոցա գալ 'ի քարայր մի 'ի սահմանս բերդին՝ որ կոչի Ջարեք, և անդ դադարիլ, և անդուստ հովուել զհօտ իւր, մի ոմն 'ի նոցունց կաթուղիկոսացն, Բեժգէն անուն, եթող զկարգ իւր, և առ կին, և ստացաւ որդիս, և մերժեն զնա յաթոռոյն, և ձեռնադրեն փոխանակ նորա զտէր Ստեփաննոս։

Սորա էր քոր եպիսկոպոս մի՝ Սարկաւագ անուն. դէպ եղև նմա երթալ 'ի քաղաքն Գանձակ, ժողովել զմուտս ընդ մտանելն յերիցանց և 'ի քրիստոնէից որ անդ։ Զնա տեսեալ Ամի-

րայի քաղաքին՝ որում անուն էր Կուրճի Բաարաւթին, եհարց զնա՝ թէ ո՞յր ես. և իբրև ասաց՝ թէ կաթուղիկոսին. ասէ ցնա՝ լուեալ է իմ, թէ քրիստոնեայք մեծապէս խնդութիւն առնեն, յորժամ օրհնեն զջուրն. արդ՝ աւասիկ տօն ձեր մերձեալ է, կոչեա զկաթուղիկոսն ձեր իւրովք պաշտօնէիւք, որպէս սովորութիւն է ձեր, և օրհնեցէք ջուր 'ի քաղաքիս, զի և մեք բերկրեսցուք ընդ ձեզ։ Իսկ քոր եպիսկոպոսն երթեալ պատմեաց կաթուղիկոսին զհրամանս Ամիրային. և նորա ուրախացեալ յոյժ, զի ոչ երբէք իշխէր կաթուղիկոս կամ երևելի ոք յայտնապէս մտանել 'ի քաղաքն, կամ շրջիլ անդր, զի Պարսիկք ունէին զքաղաքն՝ որք ծարաւիք՝ արեան քրիստոնէից. քանզի բազում վիշտս կրեալ էին 'ի բնակչացն Խաչենւոյ, որք աւազակաբար կրելով զբազումս սպանանէին 'ի Պարսիցն, և կողոպտէին զքրիստոնեայսն՝ որք ընդ ձեռամբ նոցա. նմանապէս և թագաւորն Վրաց և զօրք նորա, և վասն այսր պատճառի թշնամիք էին ամենայն քրիստոնէից։ Իսկ կաթուղիկոսն ժողովեալ զեպիսկոպոս և զվարդապետս իւրոյ վիճակին՝ գնաց նոքօք 'ի կոչ Ամիրային։ Եւ տեսեալ յոյժ ուրախացաւ Ամիրայն, և հրամայեաց մեծաւ ճոխութեամբ և հանդիսիւ երթալ խաչվառօք և ժամահարօք և մեծաձայն պաշտամամբք օրհնել զջուրն, և ինքն հեծեալ յերիվարն՝ զօրօք բազմօք

գնաց 'ի տես՝ զբօսանաց աղագաւ, դղրդեցաւ և քաղաքն ամենայն բնակչօքն հեթանոսօք, գնացին և նոքա 'ի տես։ Եւ իբրև արկին զիւղն սուրբ 'ի ջուրն, ասեն Պարսիկք. «Աւասիկ զամենեսեան քրիստոնեայ արար Ամիրայս, զի զի՞նչ աւելի առնեն քրիստոնեայքն, բայց թէ մկրտեն և օծանեն, և մեք ամենեքեան ըմպեմք 'ի ջրոյս յայսմանէ, և լուանամք 'ի սմանէ, ամենեքեան մեք անհաւատք եմք յայսմ հետէ և դենակորոյս. արդ՝ եկայք հնարեսցուք ինչ»։ Յայնժամ ամբոխ յոյժ արարեալ՝ կալան զկաթուղիկոսն և եդին 'ի բանտի, և դրդեցան զկնի Ամիրային, և արկին զնա 'ի բերդն, և ինքեանք գրեցին առ Աթապակն՝ որ նստէր յԱսպահան, եթէ «այս Ամիրայս զմեզ զամենեսին եհան 'ի հաւատոց մերոց. զի զիւղն խողի արկանել ետ 'ի ջուրս մեր՝ զխաւարին քրիստոնէից. արդ՝ 'ի բանտի կան երկոքեանն. զինչ կամք քո հրամայեսցեն՝ այն եղիցի»։ Եւ հրաման ետ՝ զԱմիրայն լուծանել յիշխանութենէն և առ ինքն ածել։ Իսկ 'ի կաթուղիկոսէն բազում գանձս առեալ ոսկւոյ և արծաթոյ՝ թողցեն զնա, ուր և կամեսցի։ Եւ նա զերծեալ 'ի վտանգէն՝ չոգաւ 'ի կողմանս Խաչենւոյ, և այլ ոչ իշխէր մտանել 'ի սահմանս Գանձակայ։ Իսկ վանորայքն՝ որ ի՛ կողմանս քաղաքին, և երիցունք գաւառացն, իբրև տեսին՝ թէ ոչ իշխէ գալ տէր Ստեփաննոս յայն կողմն,

և ոչ նոքա իշխէին երթալ առ նա, առեալ զԲեժկենն զայն կարգընկէց, տան 'ի նա զձև և զկարգ քահանայութեան. զոր լուեալ տէր Ստեփաննոս, ընդ բանիւ կապանաց արկ զնոսա և զնա. և ինքն այսր անդր կացեալ մինչև մեռաւ 'ի Հերգ գաւառի։

Իբրև տեսին վարդապետք և եպիսկոպոսք կողմանցն Աղուանից, եթէ բարձաւ թագաւորութիւնն 'ի նոցանէ, և ոչ կայ յազգէն յայնմանէ եպիսկոպոս կամ քահանայ, բայց միայն մանուկ մի սարկաւագ, առեալ զնա տարան 'ի Բջնի առ եպիսկոպոսն Վրթանէս, և տան ձեռնադրել զնա քահանայ, և առեալ բերեն զնա 'ի քաղաքն Գանձակ առ իշխող քաղաքին, որում անունն էր Ամիր Օմար, և աղաչէին զնա՝ զի հրաման տացէ ձեռնադրել զնա կաթուղիկոս։ Եւ նա ասէ՝ կարի մանուկ է տիօք. դուք՝ որ կատարեալքդ էք հասակաւ՝ ընդէ՞ր ոչ լինիք կաթուղիկոս։ Եւ նոքա ասեն՝ վասն զի սա է յազգէ կաթուղիկոսացն, և սմա անկ է աթոռն։ Եւ հրաման տայ ձեռնադրել զնա. և էին անդ եպիսկոպոսք սակաւ, որ ձեռնադրեցին զնա։ Եւ իբրև ձեռնադրեցաւ՝ հեծոյց զնա Ամիրայն յազնիւ երիվար, և արկ 'ի վերայ ազնիւ կտաւ 'ի պատիւ նմա, և փողահարս առաջի և զկնի. և հրամայեաց շրջեցուցանել զնա ընդ փողոցս քաղաքին։

Եւ այսպէս կալաւ զաթոռն Աղուանից տէր Յովհաննէս զամս բազումս։ Սա հաստատեաց զա-

թոռ իւր 'ի սահմանս Զաքարէին 'ի քարի անդ՝ զոր ասացաք վերագոյն։ Սա նեղեալ յայլազգեացն՝ դիմեաց գալ յաշխարհս Հայոց առ մեծամեծ իշխանսն առ Զաքարէ և Իւանէ եղբայր նորա։ Եւ նոքա մեծաւ պատուով ընկալան զնա. և բնակեցոյց զնա Իւանէ 'ի գաւառն Միափոր 'ի վանքն՝ որ կոչի Խամշի։ Սա սկսաւ շինել անդ եկեղեցի մեծ և հրաշալի. և մինչև աւարտեալ էր՝ խափանումն եղև, զի եկն Սուլտանն Խորասանայ՝ Ջալալատինն կոչեցեալ, և եհար զթագաւորութիւնն Վրաց, և խստացաւ մի զկնի միոյ գալ զօրաց այլազգեաց, և աւերել զաշխարհս Հայոց՝ Աղուանից և Վրաց։

Վասն վարդապետացն երևելեաց՝ որք էին 'ի կողմանս Վասպուրականի։

Ընդ այնոսիկ աւուրս ժամանակաց էին վարդապետք առաքինիք և լուսաւորք, որք փայլէին յաշխարհի իբրև զլուսաւորս. Ստեփաննոս՝ որդի Յուսկանն, այր սքանչելագործ և սուրբ, որ և գերեզման նորա յետ մահուան բժիշկ էր ամենայն ախտացելոց. և Գէորգն Կարնեցի, այր իմաստուն և գիտնաւոր. և միւս ևս այլ՝ Տիրացու անուն նորա, որ և զաստիճան եպիսկոպոսութեան ընկալաւ. և Աստուածատուր՝ զոր Աղբըրկայ որդի կոչէին, յԱրճէշ քաղաքէ։ Զամանէ

բազում ինչ առաքինութիւն պատմէին՝ որք տեսողք լեալ էին։ Էր սա որդի մեծատան, յոյժ ողորմած և աղքատասէր. իբրև ասացին նմա՝ թէ մեռաւ մայր քո ըստ մարմնոյ, գոհացաւ զԱստուծոյ. և գնացեալ 'ի թաղումն նորա, առեալ ոսկի և արծաթ՝ արկանէր 'ի ձեռս մօր իւրոյ, և կոչէր զաղքատս՝ առնուլ 'ի ձեռաց մօրն, որպէս թէ ինքն իսկ իւրովք ձեռօքն իցէ տուեալ։ Եւ իբրև հայրն վախճանեցաւ, առեալ զինչսն՝ բաշխեաց կարօտելոց։ Եւ կուրպակք էին նորա բազումք. զայն ևս 'ի վարձու, և յամենայն ամի առեալ զգինսն՝ գնէր նորոգ մորթս ոչխարաց և կտաւս, և ձեռօք իւրովք կարէր հանդերձս, և տայր աղքատաց։ Եւ տեսեալ զբարեգործութիւն նորա բազումք 'ի Տաճկաց՝ գային առ նա, և մկրտեալ 'ի նմանէ՝ լինէին քրիստոնեայք։ Եւ տեսեալ անհաւատիցն, եթէ նա է պատճառք այնմ ամենայնի՝ կամէին սպանանել զնա, և յայտնի ոչ իշխէին վասն բազմութեան ժողովրդոցն։ Խորհեցան դնել նմա գաղտնի որոգայթ, և կալեալ զմի 'ի ծառայից իւրեանց՝ խեղդեցին, և բերեալ գիշերի ընկեցին առ դուրս վանիցն, և վաղվաղակի ընդ առաւօտն եկեալ պաշարեցին զվանքն՝ զի սպանցեն զամենեսեան, որպէս թէ նոքա գործեցին զայն։ Եւ լուեալ քրիստոնէիցն՝ ժողովեցան անթիւ բազմութիւնք մեռանիլ ամենեցուն, և ապա տալ զնա 'ի ձեռս։ Իսկ սուրբ այրն

Աստուծոյ տեսեալ զգաղտնի որոգայթս թշնամւոյն՝ թէ 'ի պատճառս նորա զբաղումս կամին սպանանել, զի Պարսիկք ունէին զիշխանութիւն քաղաքին, ասէ ցնոսա. «Ներեցէք ինձ զմի գիշեր, և 'ի վաղիւն, որպէս կամք է ձեր՝ ա՛յնպէս արարէք, տո՛ւք 'ի մեզ զմեռեալդ»: Եւ հրամայեաց զիշերապաշտօն առնել և խնդրել յԱստուծոյ զի գերծցին 'ի զրպարտութենէն. և ինքն առանձնացուցեալ զինքն՝ մեծաւ հառաչանօք խնդրէր յԱստուծոյ զայցելութիւն. և 'ի վաղիւն բացեալ զդրունս վանիցն՝ կոչեաց զամենեսեան 'ի ներս զհաւատացեալս և զանհաւատս, և ինքն առեալ զնշանն Տէրունական՝ ասէ բարձր ձայնիւ 'ի լուր ամենեցուն. «Քե՛զ ասեմ, ա՛յր դու, արի՛ կաց յանուն Յիսուսի Քրիստոսի, որ հաստատեաց զարարածս յոչընչէ, և ասա՛ առաջի ամենեցուն՝ թէ ո՛վ սպան զքեզ»: Եւ նա յարեաւ վաղվաղակի, և նայեցաւ յամբոխն, ետես զսպանողն իւր, և ասէ. «այրն այն սպան զիս»: Յայնժամ ասէ ցնա սուրբն Աստուծոյ. «դարձեալ դի՛ր զգլուխդ և ննջեա՛ մինչև 'ի հասարակաց յարութիւնն», և իսկոյն մեռաւ: Եւ այսպէս զերծեալք 'ի մահուանէ, փառաւորեցաւ անունն Քրիստոսի Աստուծոյն մերոյ:

Վասն մահուան Զաքարէի Զօրավարի

Յետ բազում քաջութեանց և յաղթութեանց՝ զոր արարին մեծամեծ իշխանքն Զաքարէ և Իւանէ, չոգաւ զօրօք բազմօք 'ի քաղաքն Մարանդ, և առին զնա և աւերեցին զգաւառսն՝ որ շուրջ զնովաւ. և ապա գնացին յԱրտաւիլ քաղաք. նմանապէս առին զնա, և աւերեցին զգաւառսն՝ որ շուրջ զնովաւ. և բազումք 'ի նոցանէ հանդերձ աղօթկոչօքն իւրեանց՝ զոր Մուրշի անուանեն, ապաստանեալք էին յաղօթարանն իւրեանց. հրամայեաց Զաքարիայ բերել խոտ և ցօղուն, և արկեալ զնովաւ ձէթ և նաւթ, և բորբոքեալ հրով, այնպէս այրեաց զնոսա, և ասէ. «Իշխանքն և աշխարհականքն՝ փոխանակ իշխանացն Հայոց, զոր այրեցին 'ի Նախջաւանի Տաճիկք, և Կուռայքն՝ փոխանակ Հայոցն քահանայից Բաղուանայ՝ զոր մորթեցին, և զարիւնն արկին զպարսպով եկեղեցւոյն, որ մինչև ցայսօր սևացեալ երևի տեղին»: Եւ ինքն դարձաւ յաշխարհն իւր, և 'ի ճանապարհին հիւանդացաւ. զի եկին վէրք անբժշկելիք յանդամս նորա, զի յողջանալ միոյն՝ բուսանէր միւս ևս. և այսպէս վտանգեալ զնա, յետ սակաւ աւուրց վախճանեցաւ, և եղև սուգ ամենայն քրիստոնէից: Եւ տարեալ թաղեցին զնա 'ի Սանահինն 'ի մեծ եկեղեցւոյն առաջի դրաց խորանին յահեակ կողմանէ: Եւ սուգ մեծ զգե-

ցաւ թագաւորն Վրաց Գիորգի, մականուն Լաշայ՝ որդի Սօսլանայ և Թամարին, թոռն Գիորգեայ մեծի թագաւորին. և եղբայրն իւր Իւանէ ամենայն զօրօքն Վրաց։ Եւ մնաց որդի մի Զաքարէի՝ մանուկ տիօք, Շահնշահ անուն նորա, զոր սնոյց Իւանէ ընդ որդւոյ իւրում Սարգսի, զոր Աւագն կոչէին, մինչև յարբունս հասակի. և ապա տիրեաց հայրենի իշխանութեանն։

Վասն Լևոնի արքային և վախճանի նորին։

Իսկ բարեպաշտ և յաղթազգեաց արքայն Հայոց Լևոն 'ի վերայ բազում քաջութեանցն՝ զոր արար, հնազանդեցոյց զշրջակայ ազգսն, եկն և ապաստամբ կաթուղիկոսն Հայոց Յովհաննէս, որ 'ի Կլայն Հռոմայական, և հաշտեցան ընդ միմեանս, իբրև վախճանեալ էր տէր Դաւիթ, որ Արքակաղնին։

Ապա հիւանդացաւ և արքայն Լևոն, որ և մեռաւ։ Եւ կոչեալ առ ինքն զկաթուղիկոսն Յովհաննէս, և զամենայն զօրագլուխս զօրօք իւրեանց, և զի որդի ոչ ունէր, բայց միայն դուստր մի, զոր յանձնեաց 'ի կաթուղիկոսն և յիշխանսն ամենայն թագաւորեցուցանել զնա փոխանակ իւր, և կալ նմա հնազանդ, և ամուսնացուցանել զնա զուգապատիւ առն, և ետ զնա 'ի ձեռս կաթուղիկոսին և երկու մեծամեծ իշխանացն՝

Կոստանդնի ազգականին իւրոյ, և Սիրատանայ՝ որ էր Հռոմ դաւանութեամբ, և ինքն հանգեաւ խաղաղական մահուամբ 'ի ռլը թուականին Հայոց, կալեալ զթագաւորութիւնն ամս քսան և չորս յաղթութեամբ և բարի անուամբ։ Եւ յոյժ ողացին զվախճան քաջին ամենայն աշխարհն իւր և ամենայն զօրքն առ հասարակ, զի յոյժ սիրելի էր ամենեցուն Քրիստոսասէր արքայն։ Եւ յետ օրինաւոր սգոյն կազմեցին զմարմինն առ 'ի թաղել, և եղև հակառակութիւն. զի կէսքն ասէին թաղել զնա յարքայական քաղաքին 'ի Սիս, և այլքն 'ի վանքն՝ որ կոչի Ակներ, զի յոյժ սիրէր զնա վասն բարւոք կարգաւորութեան նոցա և հաճոյական աղօթիցն։ Իսկ ոմանք ոչ համարեցան պատշաճ, զի եզր էր տեղին այն, և թշնամիք բազում էին նորա յայլազգեացն. զուցէ ասեն եկեալ հանիցեն և այրեսցեն զդա հրով վասն բազում քինոյն՝ զոր ունէին ընդ դմա։ Ապա միաբանեալ ամենեցուն, տարեալ զմարմին նորա թաղեցին 'ի Սիս քաղաքի, և զսիրտն և ըզփորոտին տարան 'ի վանքն՝ որ կոչի Ակներ։ Այսպէս հանգեաւ 'ի բարեպաշտութեան քաջն և յաղթողն ամենայնի Լևոն արքայ։

Եւ կաթուղիկոսն և իշխանքն բերին զորդի Անտիոքայ՝ զոր Բրինձն կոչէին, և ետուն ըզդուստր Լևոնի արքայի 'ի կնութիւն նորա, և թագաւորեցուցին զնա, և էր անուն պատանւոյն

Փիլիպպոս, և անուն թագուհւոյն Զապել։ Իսկ նա իբրև եկաց յարքայութեանն զամս չորս, խարեաց զնա հայրն իւր, և առ 'ի նմանէ զթագն Լևոնի արքայի, և զպատուական արքունական, զոր յերևելի յաւուր կանգնէին, և այլ գանձս ոսկւոյ և արծաթոյ։ Իբրև տեսին իշխանքն՝ եթէ ոչ է միամիտ այրն յարքայութեան անդ, ըմբռնեալ զնա՝ արարին յարգելս, մինչև բերցէ զթագն և զգանձն՝ զոր տարաւ։ Իսկ հայրն նորա ոչ եա և ոչ զմի, այլ և ոչ օգնել ինչ կարաց որդւոյ իւրում. և թողին զնա անդ, մինչև 'ի նմին մեռաւ։

Եւ իշխանն մեծ Կոստանդին հաւանեցոյց զկաթուղիկոսն, և զայլս ամենս 'ի մեծամեծացն, թագաւորեցուցանել զորդի իւր զՀեթում, մանուկ տիօք առոյգ մարմնով, և գեղեցիկ տեսանելով։ Իսկ թագուհին ոչ հաւանէր լինել կին մանկանն, չոգաւ ապաստանեցաւ 'ի Սելևկիա առ Փռանգսն՝ որ անդ. զի մայր նորա Փռանգ էր ազգաւ 'ի Կիպրոս կղզւոյ։ Եւ առեալ Կոստանդնի զզօրս ամենայն՝ պաշարեաց զքաղաքն, մինչև յոչ կամաց ետուն զթագուհին 'ի ձեռս նորա. և տարեալ ամուսնացոյց զնա որդւոյ իւրում. և եղեն 'ի նմանէ որդիք։ Եւ յոյժ բարեպաշտ էր կինն այն և ողջախոհ, սիրող ամենայն երկիւղածաց Աստուծոյ և աղքատասէր, պահօք և աղօթիւք հանապազ ձգնէր։

Իսկ մեծ իշխանն Կոստանդին իբրև առ զիշխանութիւնն թագաւորութեանն որդւոյ իւրում Հեթմոյ, զամենայն հոգս արքայութեան յանձն առեալ՝ իմաստաբար կարգաւորէր. զկէսսն հնազանդէր սիրով, և զոչ հնազանդեալսն բառնայր 'ի միջոյ՝ զոմանս փախստական առնելով, և զայլս մահուամբ։ Արար սէր և միաբանութիւն ընդ Սուլտանն Հոռոմոց՝ որում անուն էր Ալադին, որ ունէր զբազում աշխարհս ընդ ձեռամբ իւրով։ Այսպէս առնէր ընդ շրջակայ ազգսն, և յամենայն կողմանց խաղաղացոյց զաշխարհն։ Կարգեաց և զանդրանիկ որդին զՍմբատ՝ զօրավար. և զմիւսն՝ իշխան թագաւորութեանն. և զամենայն վանորայս երկրին անհոգս առնէր յամենայն կողմանց, զի խնքն տայր զամենայն պէտս նոցա, զի նոքա աղօթից և պաշտաման պարապեսցին։ Լցաւ և երկիրն ամենայն բազմութեամբ մարդկան անթուելեաց և արուեստաւորաց, որք ժողովեցան յամենայն կողմանց փախուցեալք յաւերմանէ Թաթարին. որ եկեալ յԱրևելից հիւսիսոյ տապալեցին զաշխարհս ամենայն։

Յետ այսորիկ մեռաւ և կաթուղիկոսն Յոհաննէս՝ կալեալ զամս ութ և տասն։ Եւ նստուցանէ մեծ իշխանն հանդերձ թագաւորաւն զտէր Կոստանդին յաթոռ սրբոյն Գրիգորի, այր առաքինի և հեզ, սուրբ վարուք կեցեալ. և անձին

իւրում բարուք առաջնորդեալ, որպէս յարդարեաց զկարգ եկեղեցւոյ ուղղափառութեամբ։ Զսա պատուէին ամենայն ազգք՝ ոչ միայն քրիստոնեայք, այլ և ազգն Տաճկաց։ Դէպ եղև երից Սուլտանացն գալ 'ի սահմանս Հռոմկլայն կոչեցեալ քաղաքի, ուր էր աթոռ կաթուղիկոսութեանն 'ի վերայ Եփրատ գետոյն. գնաց կաթուղիկոսն 'ի տես Սուլտանացն, իբրև գիտացին զգալուստ նորա՝ ինքեանք իսկ ընթացան ընդ առաջ նորա. և բերեալ զնա 'ի բանակն մեծաւ պատուով՝ կանգնեցին նմա խորան ազնիւ 'ի մէջ խորանաց իւրեանց. 'ի մի կողմանէ խորան Մելիք Քեմլին, որ իշխէր կողմանցն Եգիպտոսի, և 'ի միւս կողմանէն՝ խորան Մելիք Աշրաֆին, որ իշխէր մեծ մասին Հայոց աշխարհիս և Միջագետաց. նմանապէս և խորան եղբօր որդւոյ նոցա, որ իշխէր կողմանցն Դամասկոսի։ Եւ այսպէս մեծապատիւ արարեալ զնա զյոլով աւուրս՝ արձակեցին զնա մեծաւ պարգևօք, գեղօք և դաստակերտօք. զի Աստուած զփառաբանիչս իւր փառաւորէ աստ և 'ի հանդերձեալն։ Եւ եղև սկիզբն թագաւորութեանն Հեթմոյ՝ 'ի ոհգ թուականին Հայոց. և Քրիստոսի փառք յաւիտեանս ամէն։

Համառօտ հիւսուածք պատմութեանց կողմանցն Աղուանից, ընդ նորոյս զրուցատրական

Սկիզբն առաջնոյ պատմութեանն եղաք զսուրբ Լուսաւորիչն Հայոց, զառաքեալ և զմարտիրոս, և զաթոռակալ երից սուրբ առաքելոցն՝ Թադէոսի և Բարդուղիմէոսի և Յուդայի Յակոբեան, զսուրբն Գրիգորիոս, և աղօթիւք նորա հասաք մինչև ցայս վայր։ Իսկ երկրորդ հատուածիս դիցուք գլուխ զլուսաւորիչս կողմանցն Աղուանից, որպէս զազգայնոց և զհաւատակցաց մերոց։ Մանաւանդ զի և առաջնորդ նոցա հայալեզուք հայերէնախօսք յոլովք էին, թագաւորքն՝ հնազանդք թագաւորացն Հայոց՝ ընդ ձեռամբ նոցա լեալք, և եպիսկոպոսքն՝ ձեռնադրեալք 'ի սրբոյն Գրիգորէ և յաթոռակալաց նորա, և ազգն՝ ուղղափառութեամբ ընդ մեզ կացեալ 'ի կրօնս, վասն այնորիկ արժան է 'ի միասին լինել յիշատակ երկուց ազգացս։ Եւ մեք համառօտիւք սկսցուք ասել զառաջնորդս նոցա մինչև ցայս վայր՝ որ թողաւ։

Արդ առաջին պատճառ լուսաւորութեան կողմանցն Արևելից ասեն զսուրբն Եղիշէ զաշակերտ մեծին Թադէոսի առաքելոյն, որ յետ մահուան սրբոյ առաքելոյն գնացեալ յԵրուսաղէմ առ Յակոբոս եղբայրն Տեառն, և 'ի նմանէ ձեռնադրեալ եպիսկոպոս, գայ ընդ աշխարհն Պար-

սից, և հասանէ յաշխարհն Աղուանից. գայ նա 'ի տեղի մի անուանեալ Գիս, և անդ շինէ եկեղեցի, և ինքն կատարի անդէն նահատակութեամբ անյայտ՝ թէ յումմէ, և եդև ընկեցեալ 'ի ջրհոր մի ընդ այլ բազում դիականս. և անդ եկաց մինչև յաւուրս բարեպաշտ արքային Վաչագանայ վերջինս։

Եւ այս են թագաւորք Աղուանից 'ի զարմից Հայկայ յազգականութենէն Առանայ, զոր կարգեաց Վաղարշակ Պարթև վերակացու և իշխան կողմանցն այնոցիկ։ Առաջին Վաչագան, Վաչէ, Ուռնայր։ Սա եկեալ առ մեծ արքայն Հայոց Տրդատ, և առ սուրբն Գրիգորիոս, մկրտի 'ի նմանէ։ Եւ ձեռնադրէ սուրբ Գրիգոր զայր մի 'ի սպասաւորաց իւրոց եպիսկոպոս, որ եկեալ էր ընդ նմա 'ի Հոռոմոց, և տայ զնա Ուռնայրի արքայի. Յաւղագան, Միրհաւան, Սատրապատէս, Վագէն։ Յաւուրս սորա արար գիր Մեսրոպ երանելի Հայոց, Վրաց և Աղուանից։ Վաչէ, զաբռնութեամբ մոգ արար Ազկերտ արքայ, որ կոտորեաց զսուրբ Վարդանանսն. և յետոյ թողեալ զմոգութիւնն, ընդ նմին և զթագաւորութիւնն, կրօնաւորեալ եկաց խստակրօն վարուք, և հաշտեցոյց զԱստուած, որում մեղաւն։ Եւ ապա Վաչագան բարեպաշտն՝ զոր յիշեցաք 'ի վերոյ։ Սա լուաւ՝ թէ զսուրբն Եղիշէ ընկեցին 'ի գուբն, հրամայեաց հանել զամենայն ոսկերսն՝ որ 'ի գբի

անդ, և հանեալ կուտեցին զնա շեղջս շեղջս։ Յաղօթս եկաց բարեպաշտ արքայն առ Աստուած՝ զի յայտնեսցէ զոսկերս սրբոյն Եղիշէի. և էլ հողմ սաստիկ, և ցանեալ ցրուեաց զամենայն ոսկերսն ընդ երեսս դաշտին, բաց յոսկերաց սրբոյն Եղիշէի։ Եւ բարձեալ արքայի մեծաւ պատուով, գոհանալով զԱստուծոյ բաշխեաց ամենայն երկրին իւրոյ։ Ապա սուրբն Շուփհաղիշոյ եկաց եպիսկոպոս։ Բայց վասն առնս այսորիկ յառաջ կարգելով երկմտութիւն գոյ մեզ. զի որ գրեաց զպատմութիւն Աղուանից, զայս անունս կարգէ յաւուրս Վաչագանայ բարեպաշտի լեալ. և այժմ վկայ օրէնքն՝ զոր եդ Վաչագան արքայ ամենայն եպիսկոպոսօքն Աղուանից, և գրէ այսպէս. «Ես Վաչագան արքայ Աղուանից, և Շուփհաղիշոյ արք եպիսկոպոս՝ Պարտաւայ»։ և յետ այսորիկ այս անունն ոչ գտանի 'ի կարգ համարոյ եպիսկոպոսացն, այլ մեք որպէս և գտաք՝ եդաք։ Եւ ապա տէր Մատթէ, տէր Սահակ, տէր Մովսէս, տէր Պանտ, տէր Ղազար։ Եւ ապա սուրբն մանուկն Գրիգորիս, որդին մեծին Վրթանայ, եղբայր Յուսկանն, թոռն սրբոյն Գրիգորի, զոր առաքեաց մեծ արքայն Հայոց Տրդատ, և սպանեալ եղև 'ի դաշտին Վատնեայ վասն վկայութեան Աստուծոյ, և բերեալ թաղեցաւ յԱմարաս։ Յետոյ նշխարքն գտեալ եղև յաւուրս Վաչագանայ, ընդ որս և նշխարք սրբոցն՝ Զաքարիայի

հօրն Յովհաննու մկրտչի, և Պանդալէիմոնի մեծ վկային Քրիստոսի, որ վկայեաց 'ի Նիկոմիդեա քաղաքի յաւուրս Մաքսիմիանոսի, զոր տարեալ էր սուրբն Գրիգորիս ընդ իւր։ Եւ ապա տէր Զաքարիայ. տասն՝ տէր Դաւիթ. մետասան՝ տէր Յովհան՝ որ և Յոնացն եղև եպիսկոպոս. երկոտասան՝ տէր Երեմիայ։ Յաւուրս սորա արար Մեսրոպ գիրս Աղուանից մեծաւ ձայնիւ.*) երեքտասան՝ տէր Աբաս։ Առ սա գրեցին 'ի ժողովոյն Դվնայ՝ ասել զսուրբն Աստուած՝ անմահ և խաչեցար, և ասել՝ մի բնութիւն Աստուածութեան և մարդկութեանն. չորեքտասան՝ տէր Վիրոյ ամս երեսուն երեք։ Սա զբազում ամս 'ի գլպահոջ լեալ 'ի դրան Խոսրովու Պարսից արքայի, և յետ մահուան նորա ազատեալ, եկն յերկիր իւր։ Սա թափեաց զգերեալսն Հայոց՝ Վրաց և Աղուանից 'ի Շաթախայրէ, յորդւոյն Ջեբուխաքանայ՝ որ գերեաց զաշխարհս։ Սա շինեաց քաղաքս հինգ յանուն Շաթայ՝ զՇաթառ, զՇամքառ, զՇաքի, զՇրուան, զՇամախի, զՇապորան։ Տէր Զաքարիայ ամս հնգետասան։ Սա աղօթիւք իւրովք ապրեցոյց զմեծ քաղաքն Պարտաւ 'ի գերութենէ։ Տէր Յոհան՝ ամս բաան հինգ. տէր Ուխտանէս՝ ամս երկոտասան։ Սա անէծ զնախարարս Աղուանից վասն ազգաշաղախ խառնութեան, և սատակեցան ամենեքեան։ Տէր Ե-

*) Ծան. ա. Հր.—Գուցէ՝ ջանիւ։

լիազար՝ ամս վեց. տէր Ներսէս ամս՝ եօթն և տասն։ Սա մինչև եպիսկոպոս էր Գարդմանայ՝ հաւանեցոյց զկին ոմն, Սպրամ անուն, կին իշխանին Աղուանից՝ զի զամենայն ինչ ըստ կամաց նորա գործեսցէ. և էր կինն խմորեալ յաղանդն Քաղկեդոնի, և աղաչեալ կնոջն զեպիսկոպոսն, ետ ձեռնադրել զՆերսէս Բակուր 'ի կաթուղիկոսութիւն Աղուանից։ Իբրև անցին ժամանակք ինչ, երևեցոյց զաղանդն՝ զոր յղացեալ ունէր. իբրև յանդիմանեցաւ յեպիսկոպոսացն և յերիցանցն, հալածական արար զբազումս. և ժողովեալ առաջնորդացն Աղուանից՝ նզովեցին զնա, և գրեցին առ կաթուղիկոսն Հայոց Եղիայ օգնել նոցա։ Եւ գրեաց Եղիայ առ գլխաւորն Տաճկաց Աբդլմելիք, թէ առաջնորդն Աղուանից, և կին մի, կամին ապստամբեցուցանել 'ի քէն զաշխարհն, զի զՅունօք թեակոխեն։ Եւ հրամայէ Եղիայի գնալ յաշխարհն Աղուանից և ընկենուլ զնա յաթոռոյն, զնա և զկինն 'ի միասին կապել զոտս նոցա և արկանել զուղտով որպէս զբեռն, և տանել 'ի դուռն արքունի, զի նշաւակ լիցի ամենայն զօրուն։ Եւ գնացեալ Եղիայի և ներքինւոյն արքայի 'ի քաղաքն Պարտաւ՝ արարին զհրամանն արքունի. և մինչ այնպէս անարգանօք ձաղէին զնա, 'ի նեղասրտութիւն անկեալ Ներսէսն՝ յետ ութ աւուր վախճանեցաւ դառնապէս։ Եւ մուրհակ ետուն ամենայն նախարարքն Աղուա-

նից և ամենայն եպիսկոպոսունքն առաջի Ներքինւոյն՝ հրամանաւ և մատանեաւ արքունի, զի առանց հրամանի կաթուղիկոսին Հայոց ոչ ձեռնադրեսցեն կաթուղիկոս Աղուանից։ Եւ ձեռնադրէ Եղիա յաթոռն Աղուանից զտէր Սիմէոն, որ զպղտորումն Ներսէհի երարձ, կացեալ ամ մի և կէս, և եդ կանոնս եօթն տուն։ Տէր Միքայէլ ամս երեսուն և հինգ. սա կոչեաց զՄաքենոցւոց հայրն Սողոմոն, և անէծ զանարժան Աղուանից, որ զերից ազգաց զծնունդսն ամուսնացուցեալ էին, որք բարձան 'ի միջոյ առ հասարակ. նզովեցին և զԹալիլէ Վրաց առաջնորդն. զի նա հրաման տայր անօրէն ամուսնութեանն։ Տէր Անանիա ամս չորս։ Տէր Յովսէփ ամս տասն և եօթն։ Ի սորա հինգերորդ ամին լցաւ երկերիւր ամ թուոյ Հայոց։ Տէր Դաւիթ ամս չորս. սա թափեաց զհող և զպաս սրբութեանն, և դեղակուր եղեալ մեռաւ։ Տէր Դաւիթ ամս ինն. սա վաճառեաց անօրինաց զԴաստակերան և զՍահմանախաչ։ Տէր Մատթէոս ամ մի և կէս. և սա ևս դեղ մահու արբեալ վախճանեցաւ։ Տէր Մովսէս ամ մի և կէս։ Տէր Ահարոն ամս երկուս։ Տէր Սողոմոն, տէր Թէոդորոս ամս չորս։ Տէր Սաղոմոն ամս մետասան և կէս։ Տէր Յովհաննէս ամս քսան և հինգ. սա փոխեաց զկաթուղիկոսարանն 'ի Բերդակ՝ որ էր իւրեանց հովացատեղի, յորժամ հանաւ 'ի Պարտաւայ։ Տէր Մով-

սէս կէս ամ։ Տէր Դաւիթ ամս քսան և ութ. սա սահմանեաց զանօրէն ամուսնութիւնն Շաքոյ տեառն և նորին իշխանին. եղբայրն աշխարհական հարցեալ ասէ ցնա. «ուստի՞ զաս տէր». և նա ասէ. «'ի տանէ եղբօր քո». և ասէ իշխանն. «լեզուդ որ օրհնեաց մի՛ խօսեսցի, և աջդ չորասցի». և առժամայն եղև. և ոչ բժշկեցաւ, մինչև 'ի մահ։ Տէր Յովսէփ ամս քսան և հինգ. 'ի սորա երրորդ ամին լցաւ թիւս Հայոց յ։ Տէր Սամուէլ ամս հնգետասան. անձամբ առեալ սորա զպատիւն, և յետոյ լուծեալ 'ի Գէորգայ կաթողիկոսէ Հայոց, 'ի հարկէ առնու զերկրորդ ձեռնադրութիւնն 'ի Դուին։ Տէր Յունան ամս ութ և կէս. սա էր դրան եպիսկոպոս Հայոց. և մինչդեռ 'ի գերութեան էր Գէորգ, սա գայ յԱղուանս, և անդէն ձեռնադրի առանց կամաց տեառն Գէորգայ. և իբրև գնեցին զտէր Գէորգ իշխանքն Աղուանից, լուծանէ զՅունան 'ի պատուոյն. բայց աղաչեալ զնա իշխանացն Աղուանից վասն երախտեացն՝ որ առ նա, կրկին ձեռնադրէ զնա ևս։ Տէր Սիմէոն ամս քսան և մի։ Տէր Դաւիթ ամս հինգ։ Տէր Սահակ ամս ութուտասն։ Տէր Գագիկ ամս երեքտասան. 'ի սորա չորրորդ ամին լցաւ թուականն Հայոց Ն։ Տէր Դաւիթ ամս վեց. սա առ զձեռնադրութիւնն յԱնանիայէ Հայոց կաթուղիկոսէ։ Տէր Պետրոս ամս վեշտասան։ Տէր Մովսէս ամս վեց, յառաջնորդութենէն Փառիսոսոյ

վանացն։ Ապա տ՚ր Մարկոս այրն Աստուծոյ. և յետ նորա Յովսէփ. և ապա միւս տէր Մարկոս և զկնի նորա տէր Ստեփաննոս. ապա տէր Յովանէս ամս յիսուն, և տէր Ստեփաննոս ամ մի և կէս, 'ի տիս պատանեկութեան վախճանեալ 'ի չծը ամի թուականին Հայոց։

Յաւուրս տեառն Գրիգորիսի մեծի Հայոց կաթուղիկոսի առաջնորդ ոչ գոյր տանն Աղուանից ամս քան և հինգ։ Ապա մանուկ մի էր յազգէ կաթուղիկոսացն Գագիկ անուն, որդի Գէորգեայ, զոր սնուցին և ուսուցին, և իբրև 'ի չափ հասաւ մանուկն, ապա գրեն թուղթ մաղթանաց Գրիգոր վարդապետ տն՝ որդին Թոքակերի, և Դաւիթ՝ որդի Ալօկայ, և այլ աշխարհն Աղուանից, առ մեծ հայրապետն Հայոց Գրիգորիս, որ ընդ այն ժամանակս էր 'ի կողմանս Արևմտից, և այր մի ընդ թղթոյն առաքելով, զի ձեռնադրեսցէ զնա եպիսկոպոս, առաքեսցէ և ինքն եպիսկոպոս մի յիւրոցն, և տացէ հրաման ձեռնադրել զմանուկն Գագիկ յաթոռն Աղուանից. զի մի անառաջնորդ կորիցէ աշխարհն։ Իսկ հայրապետն ձեռնադրեաց զառաքեալն, հրաման ետ և եպիսկոպոսին Կարնոյ՝ գնալ յաշխարհն Աղուանից, և ձեռնադրել կաթուղիկոս Աղուանից։ Ապա եկեալ եպիսկոպոսին Կարնոյ Սահակայ և միւս եպիսկոպոսն, ձեռնադրեն այլ ևս եպիսկոպոս երկոտասան՝ ըստ հրամանի գրոյ, և ապա

ձեռնադրեցին զԳագիկն կաթուղիկոս, և անուանեցին Գրիգորէս ըստ անուան կաթուղիկոսին Հայոց։

Ընդ աւուրս ընդ այնոսիկ եղև յանկարծակի մէգ և մասախուղ, և լցաւ առ հասարակ լեառն և դաշտ, և եղև շարժ ահագին, և կործանեցաւ մայրաքաղաքն Գանձակ. և շնորհօքն Աստուծոյ ապրեալ եղև նորընծայ կաթուղիկոսն, բայց մեռաւ 'ի շարժմանէն մեծ վարդապետն Գրիգոր՝ հանդերձ այլ բազմութեամբ արանց և կանանց և մանկտոյ, որոց ոչ գոյ թիւ, զոր սպանին շինուածքն անկեալ 'ի վերայ։ Եւ եկն թագաւորն Վրաց Դեմետրէ, և աւար էառ զամենայն ինչսն, տարաւ և զդրունս քաղաքին յիւր աշխարհն. փլաւ և լեառն Ալհարակ, և կապեաց զձորակն որ անցանէր ընդ մէջ նորա, և եղև ծով, և է մինչև ցայսօր ժամանակի։ Եւ յետ ութ ամի երևեցաւ աստղ մի գիսաւոր լի լուսով, որ նշանակ եղև սովոյ և՛ սրոյ և՛ գերութեան, որ կալաւ զաշխարհս։

Եւ յորժամ եղև այր կատարեալ կաթուղիկոսն Գագիկ լի իմաստիւք Աստուածայնովք, փոխեցաւ յաշխարհէս. և դարձեալ խաւար եղև այնոցիկ կողմանցն։ Եւ ապա տէր Բեժգեն որ եթող զկարգն և առ կին. և յետ նորա տէր Ստեփաննոս ամս քառասուն, և զկնի նորա տէր Յովհաննէս ամս քառասուն, որ շինեաց եկեղեցի մի հրաշալի 'ի գաւառն Միափոր 'ի վանքն՝ որ կոչի

Խամշի. սա եհաս յաւուրս մեր. և ապա տէր Ներսէս եղբայր նորին, այր հեզ և բարի բնութեամբ, որ ձեռնադրեալ եղև 'ի ոճղ Թուականին Հայոց։

Վասն ելանելոյ Թաթար զօրուն եւ փախստական առնելոյ զԹագաւորն Վրաց

Ի ոկթ Թուականին, մինչդեռ հպարտացեալ էին Վիրք յաղթութեամբն՝ զոր յաղթեցին Տաճկաց, յինքեանս կորզելով զբազում գաւառս Հայոց՝ 'ի նոցանէ, յանկարծակի յեղակարծ ժամու յոլով գունդս զօրու ծանու ամենայն կազմութեամբ ելեալ ընդ դուռն Դարբանդայ ուժգին դիմեցմամբ, և եկեալ յաշխարհն Աղուանից, գալ անցանել յաշխարհս Հայոց և Վրաց, և զոր ինչ գտանէր 'ի ճանապարհին՝ զամենեսեան սրոյ ճարակ տայր՝ զմարդ և զանասուն, մինչև 'ի շունս անգամ, և մեծագին հանդերձից և այլ ընչից փոյթ ինչ ոչ առնէին, բայց 'ի ձիոյ. և փոյթ ընդ փոյթ չոգան մինչև 'ի քաղաքն Տփխիս, և դարձեալ եկին իջին յաշխարհն Աղուանից, 'ի սահմանս Շաքոր քաղաքին. և համբաւ սաստկեան գայր զնոցանէ թէ մոգք են և քրիստոնեայ հաւատովք, և նշանագործք. և եկեալ են 'ի վրէժխնդրութիւն քրիստոնէից որ 'ի բռնութենէն Տաճկաց. և ասէին՝ թէ ունին եկեղեցի վրանեայ և խաչ սքանչելագործ. և բերեալ կապիճ մի գարի՝ արկանեն

առաջի խաչին, և ամենայն զօրքն տանեն 'ի նըմանէ երիվարաց իւրեանց, և ոչ պակասի. այլ իբրև սպառին ամենեքեան 'ի առնելոյ, նոյնչափ կապճին անդէն մնայ։ Նոյնպէս և կերակուրս մարդկան. և այսպէս համբաւով սաստկեան լցաւ աշխարհս. վասն այսորիկ ոչ ամրացան բնակիչք աշխարհին, մինչև երէց մի աշխարհական, առեալ զժողովուրդ իւր, և խաչիւք վարելովք ընթացաւ ընդ առաջ նոցա. և նոցա սուր 'ի վերայ եդեալ՝ կոտորեցին առ հասարակ. և այսպէս անհոգս գըտեալ զբազումս՝ կոտորեցին, և աւերեցին զյոլով տեղիս. և ինքեանք ամրացուցին զաղխս իւրեանց 'ի մօր և 'ի ապառաժ տեղիս, որ կայ 'ի մէջ երկուց քաղաքացն, Բարտաւայ և Բեղուկունայ, յամրագոյն տեղիս, զոր Բեղամէջն կոչեն. և ինքեանք յանդուգն արձակմամբ աւերէին զբազում գաւառս։

Ապա զօրաժողով լեալ Թագաւորն Վրաց՝ Լաշայն, և մեծ հազարապետն Իւանէ, կալ ընդդէմ նոցա մարտիւ պատերազմի, և իջեալ 'ի դաշտավայր տեղիս, զոր Խունանն անուանեն, քանզի անդ պատահէր գունդ Թշնամեացն. և մարտուցեալք ընդ միմեանս, զառաջինն 'ի փախուստ դարձուցին զԹշնամիսն. բայց քանզի դարան գործեալ էր, յարեան յետուստ կողմանէ և սկսան կոտորել զզօրսն Վրաց. դարձան ընդդէմ և փախուցեալքն, և աստի և անտի 'ի մէջ առեալ՝ մեծ

տագնապ հասուցին 'ի վերայ զօրուն քրիստոնէից. և փախեաւ Թագաւորն և իշխանքն ամենայն. և ժողովեալ Թշնամեացն զաւար զօրուն՝ տարան 'ի բանակս իւրեանց։ Դարձեալ միւս անգամ զօր ժողովեալ Թագաւորն Վրաց ևս բազում քան զառաջինն, կամեցեալ տալ մարտ պատերազմի ընդ Թշնամիսն։ Իսկ նոցա առեալ զկին և զորդիս և զամենայն աղխն, կամեցան ելանել ընդ դուռն Դարբանդայ յաշխարհն իւրեանց։ Իսկ զօրն Տաճկաց որ 'ի Դարբանդ՝ ոչ ետուն նոցա մուտ անցից. և նոցա՝ հատեալ զլեառն Կաւկաս՝ ընդ անանց տեղիս 'ի վիհսն լնլով զփայտ և զքար և զախս իւրեանց և զերիվարս և զկազմած պատերազմական, անցին գնացին յաշխարհն իւրեանց։ Էր անուն գլխաւորին Սաբադա Պահատուր։

Վասն որ 'ի սահմանս Գանձակայ անկումն եղեւ զօրացն

Չկնի այսորիկ իբրև ժամանակ ինչ անցին ի վերայ, այլ զօր ել 'ի Հոնաց, զոր Խուչախն անուանեն. և եկեալ ընդ աշխարհն Վրաց առ Թագաւորն Լաշայ, և առ հազարապետն Իւանէ, զի տացեն նոցա տեղի բնակութեան. և նոքա ծառայեսցեն նոցա միամտութեամբ։ Իսկ նոքա ոչ առին յանձն լինել նոցա ասպնջական։ Եւ

ողբք 'ի վերայ բնութեանս՝ 'ի դիմաց Ադամայ առ որդիս նորա, և ի դիմաց Եւայի առ դստերս նորա. և գիրք մի յայտարարութիւն ուղղափառութեան հաւատոյ ընդդէմ ամենայն հերձուածողաց, 'ի խնդրոյ մեծ զօրավարին Զաքարէի և եղբօր իւրոյ, և այլ թուղթս խրատականս. և եղև վախճան նորա 'ի ռկը թուականին։

Վասն որք յետ նորա կալան առաջնորդութիւն։

Փառաւորեցաւ վանքն և հռչակեցաւ սուրբ վարդապետին՝ իմաստութեամբ Մարտիրոսի առաջնորդի. քանզի այր շինարար էր. շինեաց և այլ ժամատուն անտաշ վիմօք մածուցեալ կրով, հաստահեղոյս որմօք, փայտակերտ վերնայարկօք, որ յետ ժամանակաց փլաւ վերնայարկն։ Շինեաց և գրատուն մի գեղեցկաշէն յարկօք, արուեստաւոր ունելով զհիւսն Մխիթար, որ 'ի բազում իրս աշխատ եղև եկեղեցեացն և վանիցն։ Եւ բազում եղբարք ժողովեցան վասն հռչականուն տեղւոյն, և բազմաց եղև տեղի ննջեան և ուսման. որ և մեք իսկ սնեալ և ուսեալ եղաք 'ի նոյն վանս։ Սկսան շինել և այլ եկեղեցի մի հինգ խորանօք, կոփածոյ և տաշած վիմօք, զըմբեթաւոր և գեղեցիկ շինուածով. և իբրև ընդմիջեցաւ եկեղեցին՝ խափանումն եղև յոլով ժամանակս. քանզի եկն Սուլտանն Խորասանայ, Ջալալատինն կոչեցեալ, և եհար զզօրս Հայոց և

Վրաց. և աւերեաց զբազում գաւառս. վասն այսոր պատճառի և այլ յոլովից մնաց անաւարտ: Յետոյ այր ոմն, Գրիգոր անուն, Կապալեցի, որ յառաջն արդիւնաւորեալ էր 'ի շինուածս եկեղեցւոյն, վերստին 'ի ձեռն առեալ՝ աւարտեաց զնա 'ի ռղ թուականին:

Վախճանեցաւ և Իւանէ, եղբայր Զաքարէի, և թաղեցաւ 'ի Պղնձահանքն 'ի դուռն եկեղեցւոյն՝ զոր շինեաց ինքն, առեալ 'ի Հայոց՝ Վրացի վանըս արար. և մինչ մեռանէր նա, յանձնեաց զորդի իւր և զտուն յիշխան ոմն իւր սնուցած՝ Գրիգոր անուն, զոր Տղայն կոչէին: Սա խնդրեաց յԱւագէն, յորդւոյն Իւանէի, զվանքն Գետիկ, իւր տեղի գերեզմանի. և վասն յոյժ սիրելոյ զնա՝ ետ նմա. գնեաց գիւղ մի 'ի նմանէ, Վաշխէ անուն, մերձ յԱղստև, ետ զայն 'ի վանքն, և այլ բազում արդիւնս, գրեանս և խաչս և անօթս: Շինեաց և հրաշազան եկեղեցի մի՝ երեքխորանի, մերձ 'ի գաւիթս եկեղեցւոյն, շինուած զարմանակերտ, և անուանեցաւ եկեղեցին յանուն սրբոյն Գրիգորի: Նա և այլ շինուածք յոլով եղեն 'ի նմա, և բազմացան քահանայք և պաշտօնեայք և մանկունք ուսումնականք. և կալեալ Մարտիրոս զառաջնորդութիւնն ամս քառասուն՝ եթող կամաւորաբար: Կալաւ յետ նորա Մխիթար ոմն. և այլ սա, և այլ նա, Յովսափն, և այլ սակաւօրեայ, և Աբրահամ վարդապետն: Եւ ապա տէր

Յովհաննէս Արմանեցին, որ և Հաղարծնին էր առաջնորդ, և ձեռնադրեցաւ եպիսկոպոս 'ի յութհարիւր հինգ թուականին: Սա շինեաց 'ի Հաղարծինն զսեղանատունն երևելի՝ որբատաշ վիմօք. և ապա գնաց 'ի մեծ աթոռն Հաղբատ. և յութհարիւր երեք թուին Խաչատուր վարդապետն, և եղբայր իւր Բարսեղն, շինեաց եկեղեցի մի երեքխորանի, հանդէպ վանիցն, գմբէթաւոր, յանուն սրբոյն Գէորգեայ:

Վասն Սուլտանին Ջալալադնին և կոտորելոյն զզօրսն Վրաց 'ի ոհ թուականին

Յառաջ ասացեալ ազգն հիւսիսոյ արևելից, որ թաթար անուանէր, 'ի նեղ էարկ զՍուլտանն Խորասանայ՝ զՋալալատին, և եհար զզօրս նորա, և տապալեաց զաշխարհս նորա. և հանին զնա փախստական ընդ աշխարհն Աղուանից. և եկն նա 'ի քաղաքն Գանձակ, և առ զնա. և կուտեաց իւր զօրս անթիւս 'ի Պարսից և 'ի Տաճկաց և 'ի Թուրքաց. և եկն յաշխարհս Հայոց: Զայն տեսեալ Իւանէի, ազգ առնէ թագաւորին Վրաց, և ժողովէ զօրս բազումս կալ ընդդէմ Սուլտանին. և հպարտութեամբ մեծամեծս փքանային, և զաշինս եդեալ էին, թէ յաղթեսցեն նմա, զամենայն Հայ մարդ՝ 'ի կրօնս Վրաց դարձուսցեն, որք ընդ իշխանութեամբ նոցա. և զընդդիմացեալսն՝

սրով բարձցեն։ Զայս խորհուրդ խորհեցան ոչ Աստուծով, և դաշինս կռեցին, և ոչ նորա հոգւով զայս խորհեցան, և զՏէր ոչ հարցին, որ տուիչն է յաղթութեան ուժ և կամի։

Եկն ապա Սուլտանն 'ի գաւառն Կուտայից. գնաց և Իւանէ զօրօքն Վրաց, և կայր հանդէպ նոցա 'ի վերոյ. և տեսեալ զնոսա զանգիտեաց, զետեղեալ 'ի տեղւոջն։ Իսկ Սուլտանն՝ յառաջ վարեալ զզօրս իւր՝ գայր հանդէպ նոցա։ Եւ իբրև զայն ետես իշխան մի յաւագացն Վրաց, Շալուէ անուն նորա, և եղբայր իւր Իւանէ, արք քաջք և անուանիք, և յաղթողք 'ի պատերազմի, ասեն ցայլ զօրսն. «դուք կացէք՝ մնացէք վայր մի, և մեք երթեալ խառնեսցուք 'ի նոսա. եթէ դարձուսցուք 'ի նոցանէ զոմանս յետս, մեր է յաղթութիւն, եկա՛յք և դուք. ապա թէ նոքա մեզ յաղթիցեն, փախերո՛ւք դուք, և ապրեցուցէք զանձինս ձեր»։ Եւ իբրև խառնեցան նոքա, սկսան կոտորելով զօրս Սուլթանին։ Իսկ զօրն Վրաց ա՛յնմ ուշ ոչ եդին, այլ փախեան 'ի տեղւոջէ անտի, մինչև այր զընկեր 'ի փախուստ ոչ գիտէր. և երթեալք առանց ուրուք հալածելոյ ամենեքեան 'ի վախից 'ի վայր մղեալք, 'ի ձոր անդր լնուին 'ի գլուխս քաղաքագեղն Գառնոյ։ Եւ իբրև տեսին զայն զօրքն Սուլտանին, զհետ մտեալ զբազումս կոտորեցին, և զայլս զահավէժ առնէին։ Եւ եկեալ Սուլտանին 'ի գլուխ

ձորոյն՝ ետես զայն ողորմ տեսիլն. զի իբրև զբերդուկս բարանց կուտեալ կային անդ բազմութիւն մարդկան և երիվարաց, շարժեաց զգլուխ իւր և ասէ. «այս գործ ոչ մարդոյ է, այլ աստուծոյ միայն, որ կարողն է ամենայնի». և դարձաւ զիակապուտ առնել զանկեալսն, և աւերել զբազում տեղիս. գնաց 'ի քաղաքն Տփխիս, և ձեռնտու եղեն Պարսիկքն որ 'ի նմա, և զե՛ս առ զքաղաքն և զբազումս կոտորեաց, և զբազումս բռնադատէր թողուլ զքրիստոնէութիւն, և հաւանել խաբեբայ և մոլար ուսմանն Տաճկաց։ Բազումք այնուհետև յերկիւղէ մահուանն զանգիտեալ՝ փոխանակէին զճշմարտութիւնն ընդ ստութեանն և այլք յանձն առին զմահ քաջութեամբ քան զկեանս խղճիւ, զվկայական անուն ժառանգեալ՝ ելին յաշխարհէս բարի անուամբ։ Եւ ապա հրաման ետ, որք հաւանին և որք ոչ, ոչ հարցաքննութիւն առնել, այլ բռնութեամբ զամենեսեան թլփատել։ Եւ այսպէս բռնաբար երկուց ոմանց կալեալ զձեռանէ մարդկան 'ի հրապարակի անդ, և միւսն առեալ սուր, հատանէր զմաշկ առնացի անդամոյն, և ընդ կանայսն խառնակէին զազրալից պղծութեամբ. և ընդ ամենայն տեղիս ուր և գտանէին խաչ կամ եկեղեցի՝ կործանէին և քակէին. զայս ոչ միայն 'ի Տփխիս, այլ և 'ի Գանձակ, և 'ի Նախջաւան, և յայլ տեղիս գործէին։

Մի ոմն յաւագացն, որ և մայր Սուլտանին կին էր նորա, Օրդան անուն, սա բազում չարչարանօք նեղէր զբնակիչս քաղաքին Գանձակայ՝ ոչ միայն զքրիստոնեայսն, այլ և զՊարսիկս հարկապահանջութեամբ բազմաւ. և սպանաւ ինքն 'ի նմին քաղաքի 'ի Մուլհիտացն, որք սրով նենգութեամբ սպանանեն զմարդիկ. մատեան առ նա ոմանք՝ մինչդեռ դայր ընդ փողոց քաղաքին, իբր թէ զրկանս կրեալ իցէ նոցա յումեքէ, և առ նա մատեան տալ իրաւունս. ցուցին նմա թուղթ 'ի ձեռին ունելով՝ աղաղակեցին և ասեն. «դա՛տ՝ դա՛տ». և իբրև զտեղի առ նա՝ և կամէր հարցանել՝ թէ զ՞ի իցէ նեղեալ զնոսա, նոքա աստի և անտի յարեան 'ի վերայ, և սրով՝ զոր ունէին 'ի ծածուկ, խոցեալ սպանին զնա: Եւ այսպէս բարձաւ չարն 'ի միջոյ. և զսպանողսն նորա հազիւ կարացին սպանանել նետիւք. զի զբազումս խոցեալ փախեան 'ի մէջ քաղաքին. զի այսպէս սովոր են առնել ազգն այն, որ բռնացեալ են յամուր տեղիս՝ զոր Թուն և Թանջահ կոչեն. այլ և 'ի մայրիսն Լիբանանու առնուն զգլուխ արեան իւրեանց յիշխանէն իւրեանց՝ զոր պաշտեն փոխանակ Աստուծոյ, և տան որդիս և կինս իւրեանց. և նոքա երթեալ ուր և առաքէ իշխան նոցա, բազում ժամանակս դեգերին 'ի կերպս կերպս եղեալ, մինչև պատեհ ժամանակս գտցեն սպանման. և ապա սպանանեն զոր և կամին. վասն

այնորիկ երկնչին 'ի նոցանէ. ամենայն իշխանք և թագաւորք տան հարկս նոցա, և սաստիկ կատարողք են հրամանաց իշխանին իւրեանց, զոր ինչ և ասէ՝ մինչ 'ի մահ անձանց իւրեանց ոչ խնայել. և այսպէս զբազում մեծամեծս սպանանեն նոքա, որք ոչ հարկին նոցա, որպէս և զայս ամբարիշտ:

Վասն կորստեան Սուլտանին Ջալալադնի եւ բառնալոյ...

Յետ գործելոյ նորա զայս չարիս, գնաց նա 'ի քաղաքն Խլաթոյ աշխարհին Բզնունեաց. և էր նա ընդ իշխանութեամբ Աշրաֆ Սուլտանին. և ետ պատերազմ ընդ նմա, և առ զնա: Էր անդ և կին Սուլտանին, դուստր Իւանէի, Թամթա անուն, զոր վերագոյն յիշեցաք. առ զնա իւր 'ի կնութիւն, չոգաւ և աւերեաց զբազում գաւառս յիշխանութենէն Սուլտանին Հոռոմոց, զոր Ալադինն կոչէին: Ապա միաբանեալք Սուլտան Աշրաֆն և Քէմլ եղբայր իւր, որ իշխէր 'ի կողմանս Եգիպտոսի, և Ալադին, կոչեցին և իւրեանց օգնական 'ի զօրացն Հայոց, որ յաշխարհին Կիւլիկեցւոց, և 'ի Փռանգացն ծովեզերեայց, և եկին տալ պատերազմ ընդ Խորազմեցւոյն Ջալալադնի. և իբրև եկին մօտ առ միմեանս, զանգիտեցին երկոքին կողմանքն. և ոչ իշխէին խառնել ընդ իրեարս: Ապա քրիստոնեայքն՝ որ 'ի Հայոց և 'ի Փռանգաց, խրախուսեալք յԱս-

տուած, դիմեցին 'ի վերայ նոցա. և էին թուով
սակաւք, պակաս քան զհազար մի. և զօրու-
թեամբն Քրիստոսի հարին զզօրսն, և 'ի փա-
խուստ դարձուցին։ Եւ զայն տեսեալ զօրացն
Տաճկաց՝ յարձակեցան և նոքա. և հարին կոտո-
րեցին զբազումս. զի 'ի մուտս արևուն էր։ Ապա
հրամայեցին Սուլտանքն ոչ պնդիլ հետ փախու-
ցելոցն. իբր այն թէ հաւատակիցք նոցա իցեն.
և դադարեցին 'ի պնդելոյ զհետ նոցա։ Իսկ Սուլ-
տանքն, զի արք բարեպաշտք էին, ոչ ապերախտ
լինէին առ զօրն քրիստոնէից. զի գիտացին թէ
'ի ձեռն նոցա ետ Տէր զյաղթութիւնն։ Ապա
դարձան մեծաւ ուրախութեամբ յաշխարհն իւ-
րեանց, և ընդ որ անցանէին ընդ քաղաքս և
ընդ գաւառս, ելանէին ընդ առաջ նոցա պարուք
և ծնծղայիւք, և գովասացութեամբ ընդունէին։
Իսկ Ալադինն իբրև եկն 'ի Կեսարիա Կապադով-
կացւոց, ամենայն բազմութիւն քաղաքին՝ հան-
դերձ քրիստոնէիւքն և քահանայիւք իւրեանց,
խաչիւք և ժամահարօք, իբրև յաւուր միոյ ճա-
նապարհ ելին ընդ առաջ նոցա։ Իբրև մօտ եղև
Սուլտանն, բազմութիւն Տաճկաց ոչ տային թոյլ
քրիստոնէիցն խառն ինքեանց հպիլ յերկրպագու-
թիւն Սուլտանին. այլ յետս կոյս մղեցին ըզ
նոսա։ Եւ նոքա ելին 'ի բլուր մի հանդէպ բա-
նակին. իբրև եհարց Սուլտանն՝ թէ ո՞յք են նոքա,
և գիտաց՝ թէ քրիստոնեայք են, ինքն իսկ մեկ-

նեցաւ 'ի զօրէն միայն, և գնաց ի մէջ նոցա.
և հրամայեաց հարկանել զժամահարսն, և պաշտել
բարձրաձայն. և այնպէս եմուտ 'ի քաղաքն, և
ետ նոցա պարգևս, և առաքեաց յիւրաքանչիւր
տեղիս։

Իսկ Ջալալադին Սուլտանն դարձաւ մեծաւ
ամօթով յաշխարհն Աղուանից 'ի բերրի և յար-
գաւանդ դաշտն, որ կոչի Մուղան. և անդ գեռե-
ղեալ՝ կամէր զօր ժողովել. ապա Թաթարն՝ որ
եհան զնա յերկրէն իւրմէ փախստական, զհետ
մտեալ նորա՝ տարեալ վարեաց զնա մինչև յԱմիթ.
և անդ եհար զզօրս նորա սաստկապէս. կորեաւ
և անօրէն իշխանն, թէ 'ի նմին պատերազմի, և
թէ՝ որպէս ոմանք ասեն՝ երթայր հետիոտս փախ-
տական, դիմեալ նմա առն միոյ, և գիտացեալ՝
թէ նա է, սպան զնա փոխանակ արեան մեր-
ձաւորի իւրոյ, զոր սպանեալ էր նա յայլում
աւուր. և այսպէս բարձաւ չարն չարեաւ։

Թէ որպէս եւ Թաթարն ապականել աշխարհն ամենայն։

Ամենայն բանք մերոյ պատմութեանս, և
նախաշաւիղ՝ որ մինչև ցայս վայր էր, վասն
ազգիս այսորիկ էր, զոր շնորհօքն Աստուծոյ
հանդերձեալ եմք ճառել. կարծեմ թէ և յոլովք
են զնոյնս պատմեսցեն, և ամենեքեան նուազեալ

զաւանին յարժանաւորութենէն. զի յաճախ են քան զպատմութիւնս չարիքս՝ որ եկին կալան զաշխարհս ամենայն. զի ժամանակս 'ի վերջ հասեալ է, և կարապետք Նեռինն գուշակին զգալուստ որդւոյն կորստեան. երկեցուցանեն և զմեզ յայտնութիւնք սրբոց արանց և աստուածազգեստից, զոր Հոգին սուրբ եցոյց նոցա 'ի զգուշութիւն ապագայիցն, և մանաւանդ անսուտ հրաման փրկչին մերոյ և Աստուծոյ, որ ասէ «յարիցէ ազգ յազգի վերայ, և թագաւորութիւն 'ի թագաւորութեան»: Այլ և սրբոյն Ներսէսի հայրապետին մերոյ, զոր մարգարէաբար ազդեաց վասն կործանման աշխարհիս Հայոց յազգէն Նետողաց, զոր աչօք մերովք տեսաք զաւեր և զատառապանս, զոր անցուցին ընդ աշխարհս ամենայն. և եղև պատճառ յելից նոցա այսպէս: Քանզի յաշխարհէն հեռաւոր հիւսիսոյ յարևելից՝ զոր կոչեն 'ի խժական լեզուն Ղարաղրում, 'ի սահմանս Ղատխայ, բարբարոս ազգացն բազմութիւն որ անդէն անգիտելիք և անթուելիք բազմաց: Գլուխ թագաւորաց ունելով ազգն՝ որ կոչի Թաթար, որում անուն էր Չանկզ Ղան, դէպ եղև մեռանիլ նմա. և յառաջ քան զվախճանն՝ կոչեաց զզօրսն ամենայն և զերիս որդիս իւր, զոր ունէր, և ասէ ցզօրսն. «ես աւասիկ մեռանիմ. զմի յորդւոց աստի իմոց՝ զոր կամիք, ընտրեցէք ձեզ թագաւոր, փոխանակ իմ». և նոքա

նոււն պատասխանի. «զոր միանգամ կամք քո ընտրեսցեն, նա լիցի մեր թագաւոր, և նմա ծառայեսցուք միամտութեամբ»: Յայնժամ ասէ ցնոսա. «ես ասեմ ձեզ զբարս և զգործս որդւոց իմոց երեցունց: Այս անդրանիկ որդիս իմ Չաղատայ. սա այր պատերազմող է և զօրաւոր, բայց հպարտ է բնութեամբ. և մեծ քան զպատահեալ բախտն: Իսկ երկրորդ որդին իմ, նմանապէս յաղթող 'ի պատերազմունս, բայց ուժգ է բնութեամբ: Իսկ կրսեր որդիս իմ, շնորհաւոր է 'ի մանկութենէ իւրմէ, և առատ բարոյիւք. և մեծատուր 'ի ձիրս, և յորմէ հետէ ծնաւ սա ինձ, օր ըստ օրէ յաւելաւ փառք իմ և մեծութիւնս. արդ սմա ասացի ձեզ զամենայն ստուգութեամբ, ում և կամիք պագէք երկիր յերեցունց աստի»: Եւ նոքա մատուցեալ երկրպագեցին կրսերոյն՝ որում անուն էր Հոքթա Խաղան, և հայրն եդ զթագն 'ի գլուխ նորա, և մեռաւ: Իսկ նա իբրև առ զիշխանութիւն թագաւորութեան, զօր գումարեաց անթիւ բազմութեամբ, իբրև զաւազ ծովու անհամար 'ի բազմութենէն. զի սեպհական ազգն, զոր Մուղալ Թաթարն անուանեն, և զԽազրաց, և զՀոնաց, և զՂատխացիս, և զԱնկիտանս և զայլ բազում ազգս բարբարոսաց, ախիւք և բանակօք, կանամբք և որդւովք իւրեանց և խորանօք, և բաժանեաց զնոսա յերիս յառաջս. զմինն ընդ կողմն

Հորասանայ առաքեաց, գլխաւոր վերակացու կարգեաց յիւրոց հաւատարմաց և 'ի սիրելեաց. և զմիւսն ընդ Արևմուտս, և զորդի իւր ընդ նոսա, և 'ի կողմանս հիւսիսոյ. և զերրորդն ընդ Արևելս և 'ի հիւսիսի, և վերակացու կարգեալ յաւագացն զայր մի՝ որում անուն էր Չարմաղան, այր խորագէտ և իմաստուն, և յաջողած 'ի գործ պատերազմի, պատուէր տուեալ նոցա, աւերել քանդել զամենայն աշխարհս և զթագաւորութիւնս տիեզերաց, և ոչ ևս դառնալ առ նա՝ մինչև բովանդակեսցեն զամենայն աշխարհս. և նուաճել ընդ տէրութեամբ նոցա. և ինքն անդէն զետեղեալ յաշխարհին, ուտելով և ըմպելով, զբօսանաց և շինութեան պարապեալ, անհոգ յամենայն կողմանց։ Իսկ զօրացն նորա երթեալք ընդ կողմանս կողմանս աշխարհին՝ աւերէին զաշխարհս և զգաւառս, բառնային զիշխանութիւնս ազգաց, առնուին զինչս և զստացուածս, զկանայս նորահասակս, և զմանկունս գերի առեալ 'ի ծառայութիւն ստրկութեան, էր՝ զոր առաքէին անդէն 'ի հեռաւոր յօտարութիւն յաշխարհն իւրեանց առ Խաղանն թագաւոր իւրեանց, և էր՝ զոր առ իւրեանս կալեալ, 'ի պէտս ծառայութեան ախից իւրեանց։ Իսկ այս զօր՝ որ էր ընդ յարևելս, որոյ գլխաւոր էր Չարմաղան Նուին, չոգաւ սա 'ի վերայ Ջալալադնին՝ որ իշխէր Խորասանայ և գաւառացն որ շուրջ զնովաւ,

եհար վանեաց զնա և զզօրս նորա. և արար զնա փախստական, որպէս ցուցաք վերագոյն. և ինքեանք կարգ առեալ՝ աւերեցին զամենայն աշխարհս Պարսից և զԱտրպատական և զԴիլմաց. կարգաւ սրբեցին զամենայն, որպէս զի մի՛ ինչ մնասցէ, և ոչ ընդ ումն գայթակղութիւն նոցա, առին և զմեծամեծ քաղաքսն և զհոյակապ՝ ամենայնիւ լցեալ, զՌէ և զԱսպահան, և յիւրեանց անուն վերստին շինեցին. այսպէս առնէին ամենայն երկրի ընդ որ անցանէին։ Եւ ապա եկին հասին յաշխարհն Աղուանից ամենայն ախիւք բազմութեամբ իւրեանց, և 'ի բերրի և յարգաւանդ դաշտին՝ որ կոչի Մուղան, լի՛ ամենայն բարութեամբ, ջրով և փայտիւ և մրգով և որսով, անդ զետեղեալ՝ հարին զխորանս իւրեանց։ Այսպէս առնէին զամենայն աւուրս ձմերայնոյն, և 'ի ժամանակս գարնայինս սփռէին ընդ կողմանս ասպատակաւ և աւերմամբ. և դարձեալ դառնային անդրէն բանակէին։

Վասն աւերման քաղաքին Գանձակայ։

Այս քաղաք, բազում ամբոխ լցեալ Պարսկօք, այլ սակաւ և քրիստոնէիւք, յոյժ թշնամի էր և սա Քրիստոսի և երկրպագուաց նորա, անարգիչ և հայհոյիչ խաչի և եկեղեցւոյ, այպանիչ և նախատիչ քահանայից և պաշտօնէից։

Վասն որոյ իբրև լցաւ չափ մեղաց նոցա, ել աղաղակ չարութեան նոցա առ Տէր. երևեցան յառաջագոյն նշանք աւերման նոցա երևել՝ որպէս 'ի վերայ Երուսաղէմի, յառաջ քան զաւեր նորա. նոյնպէս և այսմ քաղաքի. քանզի յանկարծ պատառեալ երկրի, և արտաքս ելեալ ջուր սեաւ, և ծառ մի Սօսի, զոր Անդարին կոչէին, մեծ յոյժ՝ հուպ առ քաղաքն. տեսին զնա յանկարծակի շրջեալ իւրովին. և 'ի տեսիլ նորա զղրդեցաւ ամենայն քաղաքն. և դարձեալ տեսին զնա կանգնեալ՝ որպէս յառաջն: Այս եղեալ երկիցս և երիցս, և ապա անկաւ, և ոչ կանգնեցաւ: Եւ սկսան իմաստունքն նոցա քննել վասն նշանիցն՝ թէ զինչ իցէ, և իմացեալ՝ թէ պատճառ աւերման է քաղաքին, սկսան այնուհետև զխաչսն՝ որ բևեռեալ էին 'ի վերայ ներքին սեմոց դրանց քաղաքին, հանել յանարգանացն. քանզի վասն այպանելոյ կացուցեալ էին. զի կոխեսցեն ամենայն անցաւորքն. և յանկարծակի հասին զօրք Թաթարին, և պատեցին զքաղաքն յամենայն կողմանց, և մարտ եդեալ մարտնչէին ընդ նմա բազում մեքենայիւք, և հարին զայգեստանն՝ որ շուրջ զքաղաքաւն էին: Ապա փլուցին և զպարիսպ քաղաքին Փիլիկուանօք յամենայն կողմանց. և ոչ եմուտ 'ի քաղաքն 'ի թշնամեացն, այլ վառեալք զինու պահեցին զքաղաքն շաբաթ մի. իսկ բնակիչք

քաղաքին իբրև տեսին՝ թէ առաւ քաղաքն 'ի թշնամեացն, մտեալ իւրաքանչիւր ոք 'ի տուն իւր՝ այրեաց 'ի վերայ իւր զշինուածն. զի մի անկցի 'ի ձեռս թշնամեացն, և այլք այրեցին զամենայն որ ինչ ծախիւր 'ի հրոյ. և ինքեանք միայն մնացին. և զայն տեսեալ թշնամեացն՝ առաւել ևս 'ի ցասումն բարկութեան բրդեցան, և սուր 'ի գործ արկեալ՝ զամենեսեան ճարակ սրոյ եդուն, զարս և զկանայսն և զմանկտի. և ոչ ոք զերծաւ 'ի նոցանէ, բայց սակաւ գունդ մի զօրու վառեալք զինու և ամենայն պատրաստութեամբ, պատառեցին զկողմն մի զիշերի, և գնացին փախստական. և այլ սակաւ ինչ սինլքորք, զորս պահեցին և խոշտանգեցին՝ ցուցանել զգանձսն ուր պահեալ իցեն. ապա զոմանս սպանին, և զկէսն գերի վարեցին. և ինքեանք բրեցին զայրեալ տունսն, և հանին զորս գտին թաքուցեալ. և զայս արարեալ 'ի բազում աւուրս, գնացին 'ի բաց: Ապա յամենայն գաւառաց շրջեցան 'ի վերայ նորա առ 'ի բրել և յորանել զինչսն և զանօթսն, և գտանէին բազում ինչս 'ի նմա ոսկւոյ և արծաթոյ, պղնձոյ և երկաթոյ, և այլ պէս պէս հանդերձից, որ թագուցեալ էին 'ի դարանս և 'ի գետնափորս: Եւ այսպէս ամայի եկաց քաղաքն զչորս ամս, և ապա հրաման եղուն շինութեան քաղաքին,

և եկին ժողովեցան առ սակաւ սակաւ, և սկսան շինել զնա բաց 'ի պարսպէն:

Վասն աւերածոյ Հայոց աշխարհիս եւ Վրաց 'ի նոյն:

Զկնի անցանելոյ խնչ աւերման քաղաքին Գանձակայ, այս զօր մոլեկան և խառամանգ, իբրև վիճակաւ բաժանեալ զամենայն աշխարհս Հայոց, Վրաց և Աղուանից՝ իւրաքանչիւր գլխաւորի, ըստ մեծութեան և փոքրկութեան զքաղաքս և զգաւառս, զաշխարհս և զբերդս, առնուլ, քանդել, աւերել. և չոգան իւրաքանչիւր մասն բաժնի կանամբք և որդւովք և ամենայն աղխիւ բանակին իւրեանց. և նստեալ յանհոգութեան՝ ապականել, ուտել զամենայն բոյսս դալարոյ ուղտօք և անասնօք իւրեանց: Ընդ այն ժամանակս թագաւորութիւնն Վրաց նուաղեալ էր, զի էր ընդ ձեռամբ կնոջ՝ որում անուն էր Ռուզուդան՝ դուստր Թամարին, քոյր Լաշային, թոռն Գիորգայ, վաւաշ և կաթոտ, որպէս զբոզբորիկն Շամիրամ, որ անհաւան եղեալ արանց՝ զոր ածէին նմա, ընդ բազմօք անկեալ, և այրի մնացեալ, վարէր զիշխանութիւն թագաւորութեանն 'ի ձեռն զօրագլխացն Իւանէի, և որդւոյ իւրոյ Աւագին, և Շահնշահի որդւոյ Զաքարէի, և Վահրամայ, և այլոցն: Եւ զի յառաջ քան զսակաւ

ժամանակս մեռեալ էր Իւանէ, տարան թաղեցին զնա 'ի Պղնձահանքն՝ զոր ինք շինեալ էր վասն Վրաց, առեալ 'ի Հայոց. և զիշխանութիւն նորա վարէր որդի նորա, և ոչ էին կարող զդէմ ունել անհնարին բքոյն եկելոյ. վասն այսորիկ անձնապահ եղեն ամենեքեան, զաղթեալք յամրոցս, ուր և կարացին. և նոքա սփռեալք առ հասարակ ընդ երեսս դաշտաց, լերանց և ձորոց, իբրև զմարախ բազմերամ, կամ իբրև զանձրև յորդութեամբ տեղեալ 'ի վերայ երկրի: Եւ անդ էր տեսանել այնուհետև աղէտս արտմագինս, և աշխար արժանի ողբոց, զի ոչ երկիր թագուցանէր զմեռեալսն, և ոչ վէմք և անտառք պահէին զապաստանեալսն, և ոչ ամրագոյն շինուածք բերդից և խորխորք ձորոց, այլ ամենեքեան արտաքս վարէին զզօղեալս, լքանէր անձն՝ արի արանց, և լուծանէր ձեռք՝ կորովի աղեղնաւորաց, թաքուցանէին զսուրն, որք ունէին զնոսա. զի մի թշնամեացն տեսեալ, անողորմ սատակեսցեն. ձայնք թշնամեացն հալէին զնոսա, և տոփիւնք կապարճաց նոցա ահարեկ առնէին զնոսա, մինչ իւրաքանչիւր զօրհասն իւր տեսանէր եկեալ, և սիրտք իւրեանց մեռանէին 'ի ներքուստ, մանկունք փուսափէին առ ծնողս յահէ սրոյն, և ծնողքն հանդերձ նոքօք անկանէին 'ի փախից, նախ քան զընկենուլ թշնամեացն: Անդ էր տեսանել զսուրս յանխնայ կոտորել զարս և զկա-

նայս, զերիտասարդս և զմանկունս, զծերս և
զպառաւունս, զեպիսկոպոսս և զերիցունս, զսար-
կաւագունս և զդպիրս. մանկունք սանդիայք
զքարի հարեալք, և խայտառակեալք կուսանք
զեղեցիկք, և զերեալք: Անագին էր տեսիլ կեր-
պարանաց նոցա, և անգութ աղիք յորովայնի
նոցա. մի և միոյ մօր արտասուաց՝ ոչ ողոր-
մէին, և յալիս երբէք ոչ գթային, 'ի սպանու-
թիւնս խրախութեամբ ընթանային, իբր 'ի հար-
սանիս, կամ 'ի գինարբուս: Լցաւ երկիրն ամե-
նայն դիակամբք մեռելոց, և ոչ ոք էր՝ որ թա-
ղէր զնոսա. հատեալ էր արտօսր յաչաց սիրե-
լեաց, և ոչ ոք էր՝ որ իշխէր լալ զանկեալսն յահէ
անօրինացն: Սուգ զգեցաւ եկեղեցի, և բարձաւ
պայծառութիւն զեղեցկութեան նորա, խափա-
նեցան պաշտամունք նորա, և բարձան պատա-
րագք 'ի սեղանոյ նորա, և ոչ ևս լինէր ձայն
երգոց. իբրև խաւարեալ մածեալ էր ամենայն
աշխարհ, և սիրէին մարդիկ զգիշեր առաւել քան
զտիւ. երկիր թափուր մնաց 'ի բնակչաց իւրոց,
և շրջէին 'ի նմա որդիք օտարաց. յափշտակեցան
ինչք և ստացուածք, և ժլատութիւն բարուց նո-
ցա ոչ երբէք յագեցաւ. խուզեցան տունք և սե-
նեակք ամենայն, և ոչ ինչ մնաց, զոր ոչ առին.
շրջէին այսր անդր արագութեամբ, իբրև զայծե-
մունս, և կեղեքէին՝ պատառէին իբրև զգայլս.
երիվարք նոցա ոչ վաստակէին յընթացս, և ոչ

նոքա ձանձրանային 'ի ժողովել զաւարս: Եւ այս-
պէս առ հասարակ դառնութիւն հասուցանէին
բազում ազգաց և լեզուաց, զի բաժակ բարկու-
թեան Տեառն էր հեղեալ 'ի վերայ երկրի 'ի
վրէժխնդրութիւն գործոց մեղաց չարաց՝ զոր
մեղաք առաջի նորա, և զարդար ցասումն նորա
շարժեցաք. վասն այնորիկ եղև դիւրաւ մուտ
նոցա յաշխարհս ամենայն, և իբրև առին, ժողո-
վեցին զանասունս ամենայն, որ 'ի գաղթի և որ
ոչ, և զինչս և զստացուածս և զգերիս բազմու-
թեամբ՝ որ յարձակ վայրս: Սկսան այնուհետև
մարտնչել ընդ ամրոցս ամենայն և ընդ քաղաքս
բազումս, կանգնեալ մեքենայս բազումս և ազ-
գիս ազգիս, զի յոյժ խորամանգ և հնարաւորք
էին, և առին՝ քանդեցին զբազում ամրոցս և
զբերդս. զի աւուրքն ամառնային էին և խորշակ
յոյժ, և ամբարք ոչ հաւաքեալք, զի յեղակար-
ծում ժամու եկին 'ի վերայ. վասն այնորիկ պա-
քեալ 'ի ծարաւոյ մարդ և անասուն, կամաւ և
ակամայ ականէին 'ի ձեռս թշնամեացն առ վը-
տանգի նեղութեանն, և նոքա էր՝ զոր սպանա-
նէին, և էր՝ զորս պահէին 'ի պէտս իւրեանց
ստրկութեամբ ծառայութեան: Զնոյն անցս ան-
ցուցանէին և ընդ քաղաքս բազմամարդս, շուրջ
նստեալ պատեալ պաշարէին:

Վասն առման քաղաքին Շամքորայ

Մի ոմն յաւագացն, որում անուն էր Մոլար Նուին, որոյ հասեալ էր բաժին կողմանքն այնորիկ, մինչդեռ շարժէին 'ի տեղւոջէ իւրեանց, ուր բնակեալ էին 'ի դաշտին՝ որ կոչի Մուղան, առաքեաց սակաւ զօր, իբրեւ արս հարիւրս, որք եկեալ նստան առ դրունս քաղաքին Շամքորայ. եւ արգելին զելողս եւ զմտողս 'ի նա: Իսկ քաղաքն յայնժամ էր ընդ իշխանութեամբ Վահրամայ եւ որդւոյ իւրոյ Աղբուղային, զոր առեալ էին յառաջագոյն 'ի Պարսկաց եւ առաքեցին բնակիչք քաղաքին Շամքորայ առ Վահրամ եւ որդի նորա, զի օգնեսցեն նոցա. եւ ասացին թէ սակաւք են: Իսկ նա ոչ օգնեաց, այլ եւ զորդին՝ որ կամեցաւ երթալ, խափանեաց, բանս 'ի բերանս դնելով, թէ բազումք են. այլ եւ ոչ քաղաքացեացն հրամայեաց մարտնչիլ ընդ նոսա: Իսկ զօրք այլազգեացն օր ըստ օրէ աւելուին 'ի թիւն, մինչեւ եկն գլխաւորն իւրեանց՝ զոր Մոլարն կոչէին, եւ եդ պատերազմ ընդ քաղաքին, եւ զփոսն՝ որ շուրջ զպարսպով քաղաքին էր, ելից փայտիւ եւ ցօղնով, զի զիւրաւ եկցեն 'ի պարիսպն. եւ նոքա 'ի ներքուստ ընկեցեալ հուր 'ի գիշերի այրեցին զնա: Իսկ 'ի վաղիւն իբրեւ ետես զայն Մօլար Նուինն, հրամայեաց զօրացն բառնալ բեռն մի հող իւրաքանչիւր ումեք եւ արկանել 'ի փոսն. եւ

իբրեւ արկին՝ լցաւ հաւասար պարսպին, եւ զիմեաց զօրն իւրաքանչիւր հանդէպ երեսաց իւրոց 'ի քաղաքն, եւ առին զնա եւ կոտորեցին զամենեսին բերանով սրոյ, եւ այրեցին զշինուածն որ 'ի նմա. եւ առին զոր ինչ գտան 'ի նմա. եւ ապա յարձակեցան 'ի վերայ այլ բերդիցն՝ որ ընդ իշխանութեամբն Վահրամայ, 'ի Տիրունականն եւ 'ի յԵրգեւանքն եւ 'ի Մածնաբերդ, զոր ունէր Կիւրիկէ Բագրատունի, որդի Աղսարթանայ, եւ 'ի Գարդման, եւ յայլ կողմանս. 'ի Զարեքն եւ 'ի Գետաբակս այլ ոմն գլխաւոր չոգաւ՝ որում անուն էր Ղատաղան Նուին: Իսկ Վահրամ՝ որ էր յայնժամ 'ի Գարդման, զաղտագնաց եղեալ 'ի գիշերի փախեաւ ուր եւ կարաց զերծանիլ. իսկ զօրքն այլազգեաց մարտ եդեալ ընդ բերդիցն, որք 'ի ներքս էին, յակամայ ետուն զձի եւ զանասուն եւ այլ զինչ եւ խնդրեցին. եւ հարկ եդեալ 'ի վերայ նոցա՝ զնոսա թողին իւրեանց անուն: Բայց այնոքիկ որ առին զՇամքոր, եկին ամենայն ախիւն իւրեանց 'ի Տաւուշ եւ 'ի Կածարեթ եւ 'ի Նոր բերդն եւ 'ի Գագ, եւ որ շուրջ զնոքօք. եւ 'ի նեղ արկեալ պաշարեցին զնոսա:

Վասն գերութեան վարդապետին Վանականայ եւ որոց ընդ նմա։

Ընդ ժամանակս ընդ այնոսիկ մեծ վարդապետն, որ կոչէր Վանական, խուովք աշխատութեամբ փորեալ էր իւր քարայրս 'ի կատարս բարձրագոյն քարի միոջ, որ կայ հանդէպ գեղջն՝ որ Ոլորուան կոչի, 'ի հարաւոյ կողմանէ Տաւուշ բերդի. և շինեալ էր յայրի անդ եկեղեցի մի փոքրիկ, և անդ դադարէր գաղթութեամբ. իբրև աւերեցաւ առաջին վանք նորա, որ կայ հանդէպ բերդին Երգեվանից, 'ի Ջալալադին Սուլտանէն. և անդ կայր գնեղեալ՝ ժողովեալ բազում գրեանս, զի յոյժ ուսումնասէր էր այրն, մանաւանդ թէ աստուածասէր. և բազումք գային առ նա, և ուսանէին զբանս վարդապետականս 'ի նմանէ։ Եւ իբրև շատացան մարդիկն, հարկ եղև նմա իջանել յայրէ անտի, և առ ստորոտս քարին շինեաց եկեղեցի և սենեակս, և անդ դադարեալ էր։ Իբրև եղև այս կործանումն աշխարհի 'ի Թաթարէն, և եկն Մօլար Նուինն յայն սահմանս, բնակիչք գեղջիցն այնոցիկ յայր անդ դիմեցին, և լցաւ արամբք և կանամբք և մանկտովք. և եկեալ Թաթարն պաշարեաց զնոսա յայրի անդր. և նոքա համբարս ոչ ունէին և ոչ ջուր. և էր եղանակն ամառնային, և էր տօթ յոյժ. և սկսան տապիլ յարգելանի անդ՝ իբր 'ի

բանտի. և մանկունքն պապակէին 'ի ծարաւոյ, և մերձ էին 'ի մեռանել. և թշնամիքն ձայնէին արտաքուստ, թէ ընդէր մեռանիք, ելէք առ մեզ, և տացուք ձեզ վերակացուս, և թողցուք զձեզ 'ի տեղւոջս ձերում. և կրկնէին և երեքկնէին երդմամբ։ Ապա որք էին յայրի անդ, անկանէին առ ոտս վարդապետին, աղաչէին զնա և ասէին. «զնեա զարիւն մեր ամենեցուն, և էջ առ նոսա, և արա սէր ընդ նոսա»։ Իսկ նա ասէ ցնոսա. «ես զանձն իմ ոչ խնայեցից վասն ձեր, թէ գոյ հնար փրկութեան. զի և Քրիստոս զանձն իւր 'ի մահ ետ վասն մեր, և փրկեաց զմեզ 'ի բռնութենէն սատանայի. ապա պարտիմք 'ի վերայ եղբարց մերոց զնոյն սէր ցուցանել»։

Ապա առեալ վարդապետին երկու քահանայս 'ի մէնջ, անուն միոյն Մարկոս, և երկրորդին Սոսթենէս, որք ապա յետ այնորիկ առին զպատիւ վարդապետական 'ի նմանէ, զի անդ էաք մեք 'ի վարժս կրթութեան Գրոց սրբոց ընդ աւուրս ընդ այնոսիկ, և էջ առ նոսա։ Եւ գլխաւորն կայր հանդէպ այրին 'ի վերայ բլրակի միոջ, և հովանի ունէին 'ի վերայ գլխոյ նորա վասն տօթոյն, զի 'ի տօնի Վարդավառին արգելին զմեզ։ Իբրև մօտ եղեն 'ի զօրագլուխն, որք տանէին զնոսա՝ երիցս անգամ հրամայեցին երկիր պագանել նոցա 'ի վերայ ծնգաց իւրեանց,

իբրև ուղտ 'ի ժամ ճգնելոյն. զի այնպէս էր սովորութիւն նոցա: Եւ իբրև եկին առաջի նորա, հրամայեաց յարևելս կոյս երկիր պագանել Թագաւորին՝ արքային իւրեանց. և ապա մեղադիր եղև, թէ «իմ լուեալ է զքէն, թէ այր իմաստուն և երևելի ես, և կերպարանք քո յայտ իսկ առնեն զքեզ». զի այր բարի էր տեսլեամբ, հանդարտ օրինակաւ, փառաւոր մօրուօք, ծաղկեալ ալեօք. «դու իբրև լուար զհամբաւ գալոյ մերոյ 'ի սահմանս ձեր, ընդ էր ոչ եկիր ընդ առաջ մեր սիրով խաղաղութեամբ, և ես հրամայէի պահել զամենայն, որ ինչ քոյ էր, անվնաս՝ 'ի մեծէ մինչև 'ի փոքր»: Պատասխանի ետ վարդապետն և ասէ. «մեք զբարեմտութիւն ձեր ոչ գիտէաք, այլ երկիւղիւ և դողմամբ պաշարեալ էաք յահէ ձերմէ, և լեզուիդ անտեղեակ, և 'ի ձէնջ ոչ ոք եկն առ մեզ կոչել զմեզ առ ձեզ, վասն այս էր զանդաղումն մեր. արդ իբրև կոչեցիք, եկաք առաջի ձեր. մեք ոչ զինուոր եմք և ոչ ընչից տեարք, այլ արք պանդուխտք և օտարականք, ժողովեալք յայլ և այլ աշխարհաց վասն ուսման ինչ մերոյ պաշտամանս. արդ ահաւասիկ առաջի ձեր եմք, զոր ինչ կամ է ձեր՝ արարէք ընդ մեզ, թէ կենօք և թէ մահուամբ»: Յայնժամ ասէ ցնա իշխանն. «մի երկնչիր». և հրամայեաց նոցա նստիլ առաջի իւր, և բազում հարցեալ զնա վասն բերդիցն և իշխանին Վահ-

րամայ, թէ ուր իցէ, զի կարծէր զնա, թէ մարմնական ինչ իշխան իցէ 'ի վերայ երկրին: Եւ իբրև ասաց՝ զոր ինչ գիտէրն, և զայն եւս՝ թէ գործակալ ոչ ինչ իցէ նա մարմնական, ապա հրամայեաց նմա, զի իջուսցէ զմարդիկն յամրոցէ անտի աներկիւղս, և խոստացաւ իւրաքանչիւր յիւրում տեղւոջ կեալ իւրովք վերակացուօք, և յանուն նորա շինել զգեօղն և զագարակսն:

Ապա ձայնեցին առ մեզ երիցունքն, որք էին զհետ վարդապետին, թէ իջէք վաղվաղակի, և զոր ինչ ձեր է՝ բերէք ընդ ձեզ: Եւ մեր իջեալ դողութեամբ առ նոսա, որպէս գառինս 'ի մէջ գայլոց, երկուցեալք և զարհուրեալք, ակն ունէաք մահու, առեալ զհաւատոյ խոստովանութիւնն, որ 'ի սուրբ Երրորդութիւնն. յառաջ քան զիջանելն մեր յայրէ անտի հաղորդեալ էաք պատուական մարմնոյ և արեան Տեառն. և տարան զմեզ ի փոքրագոյն աղբիւր մի, որ կայր 'ի մէջ վանիցն, և ետուն մեզ ջուր, զի յոյժ ծարաւի էաք զաւուրս երիս. և ապա տարան արկին զմեզ 'ի տեղի ինչ յարգելանի և զաշխարհականս 'ի զաւիթս եկեղեցւոյն. և ինքեանք շուրջ զմեօք պահէին զմեզ զգիշերն, զի ընդ երեկս էր օրն, և 'ի վաղիւ անդր հանին զմեզ 'ի գլուխ վանիցն 'ի բարձրաւանդակ տեղի ինչ, և խուզեալ առին որ ինչ կայր առ ումեք,

որ պիտոյ էր նոցա. և որ ինչ յայրի անդ էր, և որ ինչ սպասք էր եկեղեցւոյն կամ շուրջառ, կամ այլ անօթ ինչ, կամ խաչ արծաթի, և երկու աւետարանս ընդելուզեալ արծաթով, զայն ետուն ցվարդապետն, զոր յետոյ առին 'ի մէնջ: Եւ ընտրեալ 'ի մէնջ արս, որք կարող էին շրջիլ ընդ նոսա, և զայլսն հրաման ետուն տանել 'ի վանսն և 'ի գիւղ անդր, և վերակացու թողին ինքեանց, զի այլք մի խուզեսցեն զնոսա: Հրամայեաց և վարդապետին կեալ 'ի վանս անդր, և եղբօր որդի մի էր նորա քահանայ, Պօղոս անուն, նմա հրամայեաց գալ ընդ մեզ զկնի նորա: Իսկ վարդապետն սաստիկ խնայեաց յեղբօր որդին իւր, զի մանուկ տիօք էր, ինքն եկն զկնի նորա, յուսացեալ թէ հնարիցէ և զմեզ զերծուցանել: Եւ շրջեցուցեալ զմեզ զկնի իւր աւուրս բազումս նեղութեամբ և տառապանօք, հեալք և բոկ եւ, և որք կարգեալ էին պահել զմեզ, որք Պարսիկք էին՝ ծարաւի արեան քրիստոնէից, նոքա առաւել կեղեքէին զկեանս մեր ամենայն տառապանօք յուղեգնացութեան, այնքան սովամահ առնէին զմեզ՝ որպէս զերիվարս յասպատակի: Եւ թէ դէպ լինէր ումեք վասն տկարութեան մարմնոյ, կամ խեղութեան սակաւ մի կասել 'ի գնացիցն, անխնայ ջարդէին զկառափունսն, և ծեծէին զմարմինսն գանալից, մինչև զի զփուշս անգամ ոչ կարէին հանել ոտիցն՝

թէ եկանէր ընդ նոսա, և ոչ ջուր ըմպել ոք կարէր վասն ստիպողացն: Եւ իբրև իջանէին, տանէին՝ լնուին զմեզ 'ի տունս նեղս, և ինքեանք շուրջ նստեալ պահէին, և ոչ տային թոյլ ումեք ելանել յարտաքս 'ի պէտս կարեաց մարմնոյ, այլ 'ի նոյն տունս անցուցանէին զպէտսն, և 'ի նմին ագանէին զյոլով աւուրս: Վասն որոյ ոչ կարեմ ընդ գրով արկանել զամենայն նեղութիւնսն, որ անցին ընդ մեզ, և զվարդապետն ոչ թողին առ մեզ, այլ ուրոյն հեռի 'ի մէնջ յայլս ոմանս յանձնեցին զգուշութեամբ պահել: Ապա առին և զիս յընկերաց իմոց զկնի իւրեանց 'ի պէտս դպրութեան գրել թուղթ և ընթեռնուլ. զօրն զկնի իւրեանց շրջեցուցանէին, և երեկոյին հասելոյ բերէին՝ տային զմեզ 'ի վարդապետն երաշխաւորութեամբ. և դարձեալ գային առնուին հետի կամ մերկ 'ի վերայ արմուղ գրաստոյ. և այսպէս առնէին զօրս բազումս:

Իսկ իբրև անցին աւուրքն ամարանի, և եկն եղանակն աշնանային, և հանդերձեալ էին հեռանալ նոքա 'ի ծանօթ յաշխարհէն մերմէ 'ի հեռաւոր օտարութիւն. ապա զանձինս 'ի մահ եդին ամենեքեան, և սկսան առ սակաւ սակաւ փախչել 'ի գիշերի՝ ուր և կարասցեն զերծանիլ: Այսպէս եդև շնորհօքն Քրիստոսի ամենեցուն զերծանիլ՝ բաց յերկուց երիցանց, որք 'ի տուընջեան կամեցան գաղտ երթալ, և ոչ կարացին

զերծանիլ. զոր ըմբռնեալ ածին 'ի բանակն և սպանին առաջի մեր յերկիւղ և 'ի զարհուրումն մեզ. զի այսպէս սպանէին ամենայն փախուցելոց։ Ապա յաւուր միում ասէ ցիս վարդապետն սքանչելի. Կիրակոս. և ասեմ՝ զի՞նչ հրամայես վարդապետ։ Ասէ ցիս. որդեակ, գրեալ է թէ յորժամ 'ի նեղութիւնս անկանիցիք, համբերեցէք. արդ պարտ է մեզ զբանս զրոյն յանձինս մեր ցուցանել. զի ոչ լաւ եմք մեք քան զսուրբսն առաջինս զԴանիէլ և զԱնանիանն և զեզեկիէլ, որք 'ի գերութեանն իւրեանց զբարեպաշտութենէ բուռն հարին, մինչև Աստուած այց արարեալ, փառաւորեաց զնոսա 'ի գերութեանն. արդ և մեք կացցուք խնամոցն Աստուծոյ, մինչև ինքն այց արասցէ մեզ, որպէս և կամի։ Եւ ասեմ. որպէս հրամայես, հայր սուրբ, այնպէս արասցուք։

Դէպ եղև ապա յաւուր միում գալ իշխանին այնմիկ, որ գերեաց զմեզ 'ի տեղին՝ ուր էաք մեք 'ի պահեստի. և տեսեալ զմեզ՝ խոտորեցաւ առ մեզ. և մեր ընթացեալ ընդ առաջ նորա, ասէ ցմեզ. զի՞նչ պիտոյ է ձեզ. մի թէ քաղցեա՞լ էք. տաց ձեզ միս ձիոյ 'ի պէտս կերակրոյ. զի ինքեանք անխտիր ուտեն զամենայն սուրբ և անսուրբ անասունս, այլ և զմուկն և զամենայն սողունս։ Ասէ ցնա վարդապետն. մեք ձիոյ միս ոչ ուտեմք, և ոչ զայլ կերակուրս ձեր.

թէ կամիս շնորհ առնել մեզ, արձակեա զմեզ 'ի տեղի մեր, որպէս խոստացար. զի այր ծեր եմ ես և հիւանդոտ, և ոչ եմ քեզ 'ի պէտս ինչ գործոյ զինուորութեան, կամ հովուութեան, կամ այլ ինչ 'ի պէտս ձեր։ Ասէ ցնա զօրագլուխն. յորժամ եկեսցէ Զուչուղայն, հոգացից վասն այդորիկ. և էր Զուչուղայն այն վերակացու տանն նորա. և էր երթեալ ընդ զօրս նորա յաւար. այսպէս կացաք առաջի նորա երկիցս և երիցս, և նա զնոյն պատասխանէր։ Ապա եկն այրն 'ի ճանապարհէն, և կոչեցին զմեզ 'ի դուռն իշխանին. և յղեաց նոյն այր առ մեզ հանդերձ թարգմանաւ, ո՞չ ապաքէն ասէք դուք, թէ ինչս տալ մեռելոցն օգուտ է հոգւոյ նորա. արդ մեռելոցն օգնէ, զկենդանիս ընդէ՞ր ոչ փրկէ. տո՛ւր զոր ինչ ունիս, և գնեա զոգի քո, և երթ՝ նիստ 'ի տան քո։ Պատասխանի ետ վարդապետն և ասէ. մեր ինչքն այն էին, զոր առէք դուք. խաչքն և աւետարանքն. բայց յայնմանէ մեր այլ ոչ ինչ գոյ։ Ասէ ցնա այրն. եթէ ոչ ունիս ինչս, և ոչ է հնար քեզ երթալ աստի։ Պատասխանի ետ վարդապետն. ճշմարտութեամբ ասեմ քեզ, մեր ոչ ինչ կայ, և ոչ գին աւուր միոյ կերակրոյ. բայց թէ կամք են ձեզ՝ առաքեցէք զմեզ 'ի մի 'ի բերդիցս յայսցանէ, որ շուրջ կան զմեօք, և քրիստոնեայքն որք կան 'ի նոսա, գնեն զմեզ։ Իսկ նոցա հաւանեալ գինս ծանունս

'ի վերայ նորա, և դարձեալ թեթևացուցին յայնմանէ, և առաքեցին զնա 'ի բերդն, որ կոչի Գագ։ Իսկ նա խնդրեաց զմեզ գնոյ, գի ընդ իւրն և զմերն տացէ, և ոչ ետուն. ասեն՝ սա 'ի պէտք է մեզ թուղթ գրելոյ և ընթերցման, թէպէտ բազում գինս տայք, ոչ տամք զսա։ Եւ բազում արտասուօք բաժանեցաք 'ի միմեանց. և ասէ ցիս. որդեակ, ես երթամ անկանիմ առ ոտս Սրբոյ Նշանին, որ յանուն սրբոյն Սարգսի, խնդրել նուաւ 'ի Տեառնէ վասն քո, և այլ եղբարցդ՝ որ կան 'ի ձեռս անօրինացդ. զի թերևս զերծուցէ և զձեզ Աստուած գթութեամբն իւրով։ Զի էր 'ի Գագ խաչ մի սքանչելագործ առ ամենայն նեղեալս, և մանաւանդ առ գերիս. զի որք ապաւինէին բոլորով սրտիւ, ինքն իսկ սուրբ վկայն Սարգիս բանայր զդուռն բանտից և արգելանաց, և լուծանէր զերկաթն, և առաջնորդէր մարմնաւոր տեսլեամբ 'ի տեղիս իւրեանց. և համբաւ սքանչելեացն տարածեալ էր ընդ ամենայն ազգս, զոր կանգնեալ ասէին սրբոյն Մեսրոպայ վարդապետին մերոյ։

Եւ եղև, որպէս ասաց վարդապետն. գնեցին զնա ութսուն դահեկանի. և իբրև տարան զնա, 'ի նմին աւուր ասէ ցմեզ Մօլարն. մի տրտմիր ընդ գնալ մեծ երիցուն. զքեզ վասն այնորիկ ոչ թողաք ընդ նմա, զի պիտանի ես մեզ. մեծացուցից զքեզ իբրև զմի 'ի մեծաց իմոց.

և թէ կայ քո կին, բերից զնա առ քեզ. և թէ ոչ՝ 'ի մէնջ տաց քեզ։ Եւ առժամայն ետ մեզ վրան մի, և երկուս պատանիս սպասաւորս մեզ, և ասէ. 'ի վաղիւն տաց քեզ ձի, և ուրախ արարից զքեզ, միամիտ կացջիր. և գնաց 'ի մէնջ։ Եւ խնամօքն Աստուծոյ պատահեաց մեզ ի նմին գիշերի գաղտագնաց լինել 'ի նոցանէ և զերծանիլ. և եկաք 'ի տեղի սննդեան մերոյ 'ի վանքըն՝ որ կոչի Գետիկ. և նա աւերեալ էր ի նոցանէ, և այրեալ շինուածքն որ 'ի նմա, և անդ դադարեցաք։

Վասն աւերման քաղաքին Լոռէոյ։

Զօրավարն զնդին հեթանոսաց, որում անուն էր Ղադաղայ, լուաւ վասն ամրութեան քաղաքին Լոռէոյ և յոլովութեան գանձուցն, որ 'ի նմա էր առ իշխանին Շահնշահի և գանձք նորա, առեալ ընդ իւր զընտիր սպառազէնս յոլով մեքենայիւք և ամենայն պատրաստութեամբ չոգաւ անդ. և նստեալ շուրջ զնովաւ պաշարեաց զնա։ Իսկ իշխանն Շահնշահ առեալ զկին իւր և զմանկունս, ել գաղտագողի 'ի ձոր անդր, և ամրացաւ յայրիս ուրեք. և զվերակացութիւն քաղաքին տայ 'ի ձեռս աներաց իւրոց։ Իսկ նոքա՝ քանզի արք կանացիք էին, ուտելոյ և ըմպելոյ և արբեցութեան պարապեալ, յուսալով

յարմութիւն պարապացն, և ոչ յԱստուածո եկեալ թշնամեացն, փորեցին ներքոյ պարըսպին և փլուցին զնա. և ինքեանք շուրջ նըստեալ պահէին, զի մի ոք փախիցէ: Իսկ բնակիչք քաղաքին իբրև տեսին թէ առաւ քաղաքն, սկսան մղիլ 'ի փախից, և 'ի ձոր անդր խուժէին: Եւ զայն տեսեալ թշնամեացն սկսան և նոքա մտանել 'ի քաղաքն, և կոտորել յանխնայ զարս և զկանայս և զմանկունս. և աւար առեալ զինչս և զստացուածս նոցա, գտին և զգանձս իշխանին Շահնշահի, որ զրկեալ և կողոպտեալ էր զիւր հնազանդեալսն, և անդ կազմեալ տուն գանձուց ամրագոյն, զոր ոչ էր հնար ումեք տեսանել, զի նեղ արարեալ էր զբերան գբին, որ միայն արկելոյն էր բաւական, իսկ հանելոյ ոչ ևս: Սպանին և զաներսն Շահնշահին. և ինքեանք խոյզ արկեալ ամենայն ամրոցաց գաւառին, զոր պատրանօք՝ և զոր բռնութեամբ առին զբազումս. զի Տէր մատնէր 'ի ձեռս նոցա: Այսպէս արարեալ և ընդ այլ քաղաքսն, ընդ Դումանիս և ընդ Շամշուլտէ և ընդ մայրաքաղաքն Տփխիս, առեալ զամենայն աւար և կոտորեաց, զապատակ իւր սփռեալ ընդ ամենայն կողմանս յանխնայ արձակմամբ և յափշտակութեամբ և կոտորմամբ, զի ոչ ոք էր, որ ընդդէմ կայր նոցա, կամ պատերազմէր ընդ նոսա: Վասն այսորիկ աներկիւղ էին յամենայն կողմանց, զի փախստեամբ փա-

խեաւ թագուհին Վրաց, որ Ռուսուդանն կոչէր, ուր և կարաց զերծանիլ. այսպէս և ամենայն իշխանքն առանձնապահ եղեն 'ի նոցանէ:

Վասն անկանելոյ 'ի ձեռս նոցա իշխանին Աւագին

Իսկ իշխանն մեծ՝ որդին Իւանէի, զոր Աւագն կոչէին, իբրև ետես զամենայն բազմութիւն թշնամեացն, որք լցին զաշխարհս ամենայն, ամրացաւ և նա 'ի բերդն ամուր, որ կոչի Կայան. եկին և ամենայն բնակիչք գաւառին, ամրացան և նոքա շուրջ զբերդաւն: Իբրև գիտացին զորքն այլազգեաց, թէ անդ ամրացաւ իշխանն, մի ոմն 'ի նոցունց գլխաւորացն, որում անուն էր Իտուղատայ, առեալ զօրս բազումս, եկն պաշարեաց շուրջ զբերդաւն. և առհասարակ լցաւ աշխարհն 'ի զօրաց այլազգեաց. զի 'ի նմա գաղթեալ էր յամենայն կողմանց վասն ամրութեան վայրացն: Ածին շուրջ զատորոտով որմս յամենայն կողմանց, յղէին պատգամս առ Աւագըն գալ 'ի հնազանդութիւն ծառայութեան նոցա և մի երկնչիլ. և բազում անգամ յղէին, և զնոյն ասէին: Իսկ նորա կամեցեալ շահել զմիտս նոցա, տայ զդուստր իւր նոցա և ինչս բազումս. զի թերևս թուլասցին 'ի պաշարմանէն: Իսկ նոցա առեալ զայն՝ և՛ս պնդութեամբ խնդրէին զնոսա: Իսկ շուրջ զբերդաւն և որք 'ի ներքս, սկսան

նեղիլ 'ի ծարաւոյ: Ապա տարան զձի և զամենայն անասունս իւրեանց 'ի ձեռս Թաթարին, զի թողացուսցեն 'ի նոցանէ երթալ բերել ջուր արբի իւրեանց. և նոցա յանձն առեալ. դիմեցին բազմութիւն մարդկան 'ի ջուր անդր. և նոցա արգելեալ զերթեալսն, և ոչ սպանին զոք, այլ առէին նոցա իջուցանել զընտանիս իւրեանց. և եկեալ 'ի մէջ նոցա, և նոցա առ վշտին ակամայ իջուցեալ զնոսա, և նոցա արբուցեալ ջուր, արգելին 'ի մէջ իւրեանց և առին զկանայս՝ որոց ցանկացան, և սպանին զարս նոցա. և զկէսս թողին առ արս իւրեանց:

Իսկ Աւագն իբրև ետես թէ ոչ թուլանան նոքա 'ի պաշարմանէ և 'ի կոտորելոյ, կամեցաւ զանձն իւր տալ 'ի ձեռս նոցա, զի թերևս սակաւիկ մի դիւրութիւն լիցի մարդկան. և առաքեաց զԳրիգորն, զոր Տղայն կոչէին, զգուանոք յազատացն Խաչենոյ զվերակացու տանն իւրոյ, յառաջ քան զինքն երթալ հանդիպել գլխաւորի նոցա, զոր Չարմա Ղանն կոչէին, որ հարեալ էր զխորանն իւր առ ափն ծովուն Գեղարքունոյ. զոր իբրև լուաւ մեծ Նուինն, ուրախ եղև յոյժ, և առաքեաց վաղվաղակի առ Իտուղատայն, որ պաշարեալ էր զնա, փութով առ ինքն հասուցանել, և այլ մի նեղել զբնակիչս բերդին և զաւառացն: Եւ նոքա առեալ զԱւագն վաղվաղակի հասուցին առ նա. և իբրև ետես զնա, ասէ ցնա.

դո՞ւ ես Աւագն. նա պատասխանի ետ՝ թէ ես եմ: Ասէ ցնա մեծ զօրապետն. և ընդէր ոչ եկիր վաղվաղակի առ իս, իբրև եկի ես 'ի սահմանս երկրի քո: Պատասխանի ետ իշխանն և ասէ. մինչդեռ հեռուն էիր, և կենդանի էր հայր իմ, նա ծառայեաց քեզ պատարագօք. և իբրև մեռաւ հայր իմ, ես ծառայեցից քեզ ըստ իմում կարողութեան. և այժմ իբրև մօտեր յաշխարհս իմ, աւասիկ եկի առաջի քո, որպէս հաճոյ է քեզ՝ արա ընդ իս: Ասէ ցնա զօրապետն. առեն 'ի խօսս առակաց. թէ յերդն եկի՝ չեկիր, 'ի դուռն եկի՝ ապա եկիր. և հրամայեաց նմա նստել քան զամենայն մեծամեծացն ներքոյ, որ նստէին առաջի նորա: և հրամայեաց ճաշ մեծ առնել 'ի պատիւ նմա, և բերին յոլովութիւն մսոց 'ի սրբոց և յանսրբոց, անդամ անդամ յօշեալ և եփեալ, և խմուզս 'ի կաթանէ ձիոյ ըստ սովորութեան իւրեանց բազմապատիկս, և արկին առաջի, և սկսան ուտել և ըմպել: Իսկ Աւագն և որք ընդ նմա, ոչ ուտէին և ոչ ըմպէին: Ասէ ցնա զօրապետն. վասն ե՞րոյ ոչ ուտէք, և ոչ ըմպէք: Ասէ ցնա Աւագն. քրիստոնէից ոչ է սովորութիւն ուտել զայս կերակուր, և ըմպել զայս ըմպելիս. այլ միս 'ի սուրբ կենդանեացն մեր զենեալ, և գինի առ 'ի յըմպել. և հրամայեաց զայն տալ նոցա, զոր և խնդրեաց: Եւ 'ի վաղիւն նստոյց զնա 'ի վերոյ յոլովից մեծամեծացն.

և օր ըստ օրէ յաւել 'ի պատիւ նմա, մինչև 'ի բուն մեծամեծացն կարգի նստուցանել զնա։ Եւ հրամայեաց ամենայն զօրուն ոչ մարտնչել ընդ բերդսն և ընդ քաղաքսն, որ ընդ իշխանութեամբ նորա էին. և բազում դիւրութիւն եղև յաշխարհի նորա, և բազում գերիս ազատս արձակեցին վասն նորա. և զամենայն աշխարհ նորա ետ նմա, և այլ ևս աւելի, և անքակ սէր հաստատեաց ընդ նմա. և առեալ զնա և զամենայն զօրն՝ չոգաւ 'ի վերայ քաղաքին Անւոյ։

Վասն քաղաքին Անւոյ, թէ որպէս մատնեաց Տէր 'ի ձեռս նոցա։

Քաղաքս այս Անի լցեալ էր բազմութեամբ մարդկան և անասնոց, և պարսպեալ ամրագոյն պարսպօք. և եկեղեցի բազում կայր 'ի նմա, մինչ 'ի կարգ խօսից երդման այսպէս երդնուին. Անւոյ հազար և մի եկեղեցին. և յոյժ փարթամ էր քաղաքն ամենայն իրօք։ Վասն որոյ յղփութիւնն՝ յամբարտաւանութիւն ած զնոսա, և ամբարտաւանութիւնն՝ 'ի կործանս, որպէս սովոր է առնել յիսկզբանց և այսր։ Առաքեաց Չարմա Ղանն դեսպանս առ նոսա գալ նմա 'ի հնազանդութիւն, և որք գլխաւորքն էին 'ի քաղաքին՝ ոչ իշխեցին պատասխանի առնել պատգամին առանց հարցանելոյ զիշխանն Շահնշահ.

քանզի ընդ իշխանութեամբ նորա էր քաղաքն։ Իսկ ամբոխ քաղաքին և ռամիկքն սպանին զպատգամաւորսն. և զայն տեսեալ զօրքն այլազգեաց, 'ի բարկութիւն դրդեցան. և պաշարեալ զքաղաքն յամենայն կողմանց, կանգնեցին փիլիկուանս բազում արուեստագիտութեամբ, և մարտուցեալ ընդ քաղաքին զօրեղապէս՝ առին զնա։ Այլ և ոմանք յիշխանաց քաղաքին ձեռնատու եղեն առ թշնամիսն, զապրուստ անձանց շահելով. և նոցա կոչեալ արտաքս 'ի քաղաքէն բազմութիւն, խոստացան ոչինչ առնել նոցա չար. և իբրև ելին արտաքս առ նոցա ամենայն բազմութիւնն, բաժանեցին զնոսա յինքեանս, և սուր 'ի վերայ եդեալ կոտորեցին առհասարակ անողորմաբար, սակաւ կանայս և մանկունս թողեալ, և արս արուեստաւորս, զոր վարեցին 'ի գերութիւն։ Եւ ապա մտեալ 'ի քաղաքն, առին զինչսն և զստացուածս նոցա, և կողոպտեցին զամենայն եկեղեցիս, և աւերեալ քանդեցին զամենայն քաղաքն, եղծին և ապականեցին զփառս վայելչութեան նորա։

Անդ էր տեսանել տեսիլ ողորմագին. առ հասարակ կոտորեալք ծնողքն՝ և ծնունդք ընդ նոսին դիզեալք 'ի վերայ միմեանց՝ իբրև զբերդուկս քարանց կուտեալք. քահանայք և պաշտօնեայք ցիր և ցան անկեալք ընդ երեսս դաշտացն. արբեալ երկիրն յարենէ և 'ի ճարպոյ

վիրաւորելոցն. փափուկ մարմինք՝ ածառովք լուացեալք, սեւացեալք և այտուցեալք. և այնոքիկ՝ որ ոչ ելեալ յարտաքս քան զդուռն քաղաքին, բոկ և հետի ընթացեալք 'ի գերութիւն. և որք հաղորդէին 'ի պատուական մարմնոյ և յարենէ որդւոյն Աստուծոյ, ուտէին զմիս անսուրբ և հեղձուցիկ, և ըմպէին 'ի կաթանէ ձիոց պղծոց. կանայք պարկեշտք և ողջախոհք մատնեալք 'ի խայտառականս ճակաճան և վաւաշ մարդկան. կուսանք սուրբք, որք ուխտեալ էին Աստուծոյ սրբութեամբ պահել զմարմինս և անախտ զհոգիս, պղծեալք պէսպէս պոռնկութեամբք և ապականեալք անկարգութեամբ. և այսպէս եղև ղրաւ գործոյն։

Վասն աւերածին Կարուց։

Այս քաղաք՝ իբրև ետես, զոր ինչ գործեաց Թաթարն ընդ բնակիչսն Անւոյ, փութացաւ և ածապարեալ տարաւ զբանալի քաղաքին ընդ առաջ նոցա. զի թերևս խնայեսցեն 'ի նոսա։ Իսկ նոքա՝ քանզի խանձեալ էին աւարաւ, և ոչ յումեքէ ունէին երկիւղ, զնոյն անցս և ընդ նոսա անցուցին, որպէս ընտանի յափշտակութեամբ ընչից և ստացուածոց, և կոտորմամբ բնակչացն, և աւերմամբ քաղաքին, անզարդացուցեալ զվայելչութիւն նորա, և գերի վարեալ զբնակիչս

նորա։ Եւ սակաւ սինլքորս թողեալ՝ գնացին 'ի բաց, զոր յետոյ եկեալ զօրք Սուլտանին Հոռոմոց զզերծեալսն 'ի Թաթարէն վաճառեցին 'ի գերութիւն և 'ի սուր անողորմաբար. ընդ զրեցելումն՝ թէ ան, զուր և որոգայթք 'ի վերայ ձեր. բնակիչ երկրի՝ որ փախիցէ յահէն, անկցի 'ի զուբն. և որ ելանիցէ 'ի զբէն՝ ըմբռնեսցի յորոգայթն, և որ փախիցէ յայնմանէ՝ հարցէ զնա օձ. այսպէս եղև բնակչաց տառապելոց Կարուց։ Նոյնպէս և զօրքն առին զքաղաքն սուրբ Մարի, զոր սակաւ ամօք յառաջ առեալ էր զնա 'ի Տաճկաց Շահնշահի և Աւագին. և դեռ ևս կարկատեալ էին, յանկարծակի եհաս 'ի վերայ նոցա մի ոմն յաւագաց զօրօք բազմօք, որում անուն էր Ղարապահատուր, և վաղվաղակի առ զնա. և զոր ինչ եգիտ 'ի նմա՝ յափշտակեաց։ Եւ իբրև այս այսպէս գործեցաւ ընդ աշխարհս ամենայն, ապա հրաման եւտուն մնացորդացն՝ որ ապրեալ էին 'ի սրոյ անտի և 'ի գերութենէ, գնալ յիւրաքանչիւր տեղիս, 'ի գիւղս և 'ի քաղաքս, և շինել յիւրեանց անուն, և ծառայել նոցա. և սկսաւ երկիրն առ սակաւ սակաւ շինութիւն առնուլ։

Բայց Աստուած որպէս սովոր է 'ի ժամանակի բարկութեան զողորմութիւն յիշել, զոր և աստ արար, զի ոչ ըստ մեղաց մերոց արար մեզ, և ոչ ըստ անօրէն". զի ժամանակս ամառ-

նայլս էր, յորում սպառակեցին նոքա 'ի մեզ, վասնզի չև ևս էր հնձեալ, կամ ժողովեալ 'ի շտեմարանս. և նոքա եկեալ ուղտօք, կերան և կոխեցին զամենեսեան։ Իսկ մերձ յեղանակն ձմերայինն՝ իբրև գնացին նոքա 'ի դաշտն, որ կոչի Մուղան, յաշխարհն Աղուանից, քանզի անդ կային զձմերային ժամանակն, և ապա գարունն սփռէին ընդ կողմանս կողմանս. մարդիկն՝ որ մնացին 'ի սրոյ անտի, մերկք էին և առանց կերակրոյ 'ի հասկից անտի անկելոց և կոխելոց լինէին զպէտս իւրեանց. և ձմեռն ոչ ցուրտ եղև սաստիկ, որպէս յայլ ժամանակս, այլ կակուղ. և զի ոչ ունէին եզինք՝ որ գործէին զերկիր, և ոչ սերմանիք՝ զոր ցանէին, 'ի գալ գարնան 'ի հրամանէն Աստուծոյ երկիրն բուսոյց ինքն եկս, որ բաւական էր լինել զպէտս մարդկան. այլ և ընդ ամենայն կողմանս լիութիւն եղև հացի, որով ապրէին փախուցեալքն 'ի տեղիս. այլ և անողորմ ազգն Վրաց բազում գութս և խնամս ցուցանէին երթելոցն առ նոսա պանդխտանալ. և այսպէս ողորմածն Աստուած մխիթարեաց զվշտանգեալսն։

Վասն յուղարկելոյ զԻշխանն Աւագ առ Խաղանն յԱրեւելս։

Իբրև սակաւ ինչ ժամանակք անցին 'ի վերայ, առաքեցին զԱւագն առ արքայն իւրեանց,

զոր Ղանն կոչէին, ընդ հեռաւոր ճանապարհս յարևելս հիւսիսոյ. քանզի այսպէս առնէին զամենայն մեծամեծս, զոր կամէին պատուել, առ նա առաքէին, և հրամանաւ նորա առնէին՝ զոր ինչ և գործէին. քանզի սաստիկ հրամանակատարք էին արքային իւրեանց. այլ և ինքն իշխանն յօժարեաց գնալ, զի թերևս ինչ դիւր լիցի իւրն և երկրին. և ամենայն ոք աղօթս մատուցանէր նմա առ Աստուած խաղաղութեամբ դարձուցանել զնա այարէն. զի ինքն բարի էր բնութեամբ և առաւել ևս զի յուսային, թէ զալստեամբն նորա շահեսցին ինչ։ Իսկ նորա երթեալ՝ յանդիման լինէր մեծի արքային. և ցուցանէր նմա զգիրս զօրագլխաց իւրոց, և յիշեցուցանէր զպատճառս գալոյն առ նա. թէ 'ի ծառայութիւն եկեալ է նմա։ Իբրև լսէր զայն մեծ արքայն, սիրով ընդունէր զնա. տայր նմա և կին 'ի Թաթար ազգէն, և ուղարկէր զնա յիւր աշխարհն, գրէր և առ զօրավարն իւր տալ 'ի ձեռն նորա զիւր աշխարհն, և նովաւ նուաճել զամենայն ապստամբսն, որ եղև իսկ. զի իբրև եկն նա յաշխարհն իւր, և արարին զօրագլուխքն զհրամանս արքային իւրեանց, եկին 'ի հնազանդութիւն ծառայութեան նոցա Շահնշահ՝ որդի Զաքարէի, և Վահրամ իշխանն, և որդին իւր Աղբուղայն, և Հասան, որ Ջալալն կոչէին, իշխան կողմանցն Խաչենոյ, և այլք բազումք. և զիւրաքանչիւր երկիր տային

նոցա, և առ ժամանակ մի ներէին. և ապա սկսան հարկապահանջութեամբ և երթևեկութեամբ և գինուորութեամբ նեղել զնոսա. սակայն թէպէտ այսու ամենայնիւ, և որ առաւել քան զայս էր, նեղէին զնոսա, բայց ոչ սպանանէին։ Եւ իբրև անցին ամք ինչ, նեղացաւ 'ի նոցանէ իշխանն Աւագ, զի կարի ժլատք էին, և ոչ կարէր զամենեսին ընդ միտս նոցա հաճել, զի ոչ միայն բաւականային ուտելով և ըմպելով, այլ և պահանջէին երիվարս և հանդերձս մեծագինս, զի կարի յոյժ ձիասէրք էին։ Վասն այսորիկ և քաղեցին զձի յամենայն երկրէն, և ոչ ոք իշխէր համարձակ պահել ձիս՝ կամ ջորիս, բայց եթէ 'ի ծածուկ ուրեք վասն հարկի զինուորութեան. զի ուր և գտանէին յափշտակէին և աւելի ևս, յորում գտանէին զնշանն իւրեանց. զի զամենայն անասուն իւրեանց, և զոր առնուին, իւրաքանչիւր զօրագլուխ իւրով նշանով կնքէր. խարելով 'ի մի անդամն, և թէպէտ գնէին 'ի նոցունց, և այլ ոք հանդիպէր յայլմէ գնդէ, առնուին 'ի նոցանէ, և պատժէին զնոսա, իբրև. գզողս։ Եւ զայս ոչ միայն մեծամեծքն առնէին, այլ և փոքունքն ևս, և մանաւանդ աւելի ևս առնէին զայս, յորժամ մեռաւ զօրավարն զօրուն, որում անուն էր Չաղատայ. քանզի սպանին զնա գիշերի, որ Մուլհիտք անուանէին. և վասն այսորիկ կոտորած սաստիկ եղև գերոյն, որ էր 'ի զօրուն, և

այրս այս բարեկամ էր Աւագին։ Իբրև մեռաւ նա, բազում թշնամիք յարեան 'ի վերայ նորա. յաւուր միում 'ի տան Աւագին ումն 'ի նոցունց ոչ 'ի կարի աւագացն եկն 'ի խորանն, ուր նըստէր Աւագն. և իբրև ոչ վաղվաղակի յարեաւ ընդ առաջ նորա, վարոցօք երիվարին՝ որ էր 'ի ձեռին նորա, ծեծեաց զգլուխ նորա։ Զայն տեսեալ սպասաւորաց իշխանին, բարկացեալ ընդ անարգանս իշխանին տեառն իւրեանց, յարեան հարկանել զայրն. և իշխանն արգել զնոսա, թէպէտ զայրացեալ էր։ Եւ գնացեալ այրն, որում անուն էր Ջօջպուղա, առեալ ընդ իւր և այլ ընկերս, կամեցաւ 'ի գիշերին սպանանել զիշխանն. և նորա գիտացեալ՝ փախեաւ մազապուրծ առ թագուհին Վրաց, զի դեռ ևս ապստամբ էր նա, գաղթեալ յամրագոյն տեղիս աշխարհին Վրաց։ Եւ առաւել ևս զայրալից անկարգութիւնս վասն այն գործէին, զի մեծ զօրավարն, որ գլուխն էր ամենեցուն, զոր Չարմա Ղանն կոչէին, համրացեալ էր 'ի դիւէ և 'ի ցաւոց. բայց զիշխանութիւնն ոչ էին բարձեալ 'ի տանէ նորա, զի կին նորա և որդիք՝ հանդերձ գործակալօք տանն նորա, վարէին զիշխանութիւնն. զի Խաղանն այսպէս հրամայեաց, թէ և մեռանի, զոսկերս ևս շրջեցուցանել ընդ զօրսն. զի կարի յոյժ աջողած է այրդ և շնորհաւոր։

Եւ իբրև փախեաւ Աւագն, տրտմեցան մե-

ծամեծքն, և մեղադիր եղեն առն այնմիկ, և յղեցին դեսպանս զկնի նորա մի ապստամբել 'ի նոցանէ, և երդնուին նմա ոչինչ առնել նմա չար, և ետուն զաշխարհս նորա 'ի ձեռն Շահնշահի, իբր թէ եղբայր նոցա իցէ. և զայս առնէին վասն առաւել հաւատարմութեան։ Իսկ Աւագն գրեաց թուղթ առ Խաղանն, թէ 'ի ծառայութենէ քումմէ ոչ եմ ելեալ, այլ 'ի սպանմանէ փախուցեալ եմ, և անսամ քո հրամանիդ. և մինչ նա յամէր զգալն, և ճայր պատասխանւոյ մեծ թագաւորին, սոքա զգանձն նորա՝ որ թագուցեալ կայր 'ի բերդորայսն, զամենեսեան հանին՝ խոյզ արկեալ. և դարձեալ պատգամս յղէին մի զկնի միոյ առ Աւագն գալ առ նոսա, զի երկնչէին յարքայէն իւրեանց։ Եւ իբրև եկն Աւագն 'ի զօրն, իսկոյն եհաս հրաման 'ի Խաղանէն առ զօրսն իւր, զի մի ոք իշխեսցէ չար ինչ առնել Աւագին, և թուղթ առ Աւագն, և պարգևս նմա, գալ համարձակ և մի երկնչիլ։ Ապա մեծարանս արարեալ նմա, հանին արտաքս 'ի զօրէն զարսն՝ որք կամէին սպանանել զնա, և զոմն մի գլխաւոր՝ Տօնղուս Աղա անուն՝ ընդ նմա, որ եկեալ էր հարկս պահանջել յամենեցունց հրամանաւ Ղանին առ թագուհին Վրաց Ռուզուդան գալ 'ի հնազանդութիւն մեծի արքային, որոց երթեալ առ նա՝ յորդորեցին զնա կալ 'ի հնազանդութեան մեծ արքային և մի

երկնչիլ։ Եւ առեալ 'ի նմանէ զօրս՝ եկին առ առաքիչսն պայմանաւոր սիրով խաղաղութեամբ թագուհւոյն կեալ 'ի հնազանդութեան հանդերձ որդւովն Դաւթաւ, զոր նորընծայ թագաւորեցուցեալ էր մանուկ տիօք, և նոցա ոչ ստել ուխտին։

Վասն կոտորածին որ 'ի կողմանս Խաչենոյ, եւ վասն բարեպաշտի իշխանին Ջալալին։

Ցուցաք սակաւիկ մի համառօտիւք, որ ինչ գրեցաւ ընդ աշխարհս 'ի մոլեկան զօրացն՝ որ Թաթարն կոչի։ Ասասցուք արդ և վասն կողմանցն Խաչենոյ, և որ ինչ անդ գործեցաւ. քանզի ընդ ամենայն կողմանս սփռեալ էին զասպատակս իւրեանց, այլ և վիճակաւ ևս բաժանեալ, հասին անդ 'ի գլխաւորացն զօրու ծանու և զինու և ամենայն ախիւ բանակին, գերեցին և սպանին զբազումն՝ որ յարձակ վայրսն։ Ապա մարտիւք մարտեան և ընդ գաղթականսն, և որ յամուր վայրսն, զոմանս խաբէութեամբ և զկէսս բռնութեամբ իջուցին, էր՝ զոր սպանին, և էր՝ զոր գերեցին. բայց յոլովքն այն էին, որ ամրացեալ կային յանկասկած վայրս, զոր վասն դժուարութեան տեղւոյն Հաւախաղաց կոչէին, որք ապաստանեալ յամուրսն, անկասկած կային։

Բայց քանզի 'ի Տեառնէ էր բեկումն, յեղակարծում ժամու գաղտագողի եղեալ՝ մտին յա-

մուրսն, և սրոյ ճարակ եառն զբազմութիւնն, և զկէսն գահավէժ արարին. և 'ի բազմութենէ անկելոցն ծածկէր երկիրն, և արիւնն առու եղեալ՝ իբրև զջուր երթայր, և յոչ ոք խնայեցին. և ոսկերքն յետ բազում ժամակաց իբրև զբերդուկս քարանց կուտեալ երևէին։ Զոգան և 'ի վերայ բարեպաշտի իշխանին Հասանայ, զոր Ջալալն կոչէին. սա քուեր որդի էր մեծամեծ իշխանացն Զաքարէի և Իւանէի, այր բարեպաշտ և աստուածասէր, հեզ և հանդարտ, ողորմած և աղքատասէր, ճգնող յաղօթս և 'ի խնդրուածս իբրև զայնս՝ որ յանապատն կային. զպաշտօն տուընջեան և գիշերոյ անխափան կատարէր, ուր և լինէր՝ իբրև զվանորայսն, և զյիշատակ յարութեան Փրկչին յաւուր միաշաբաթւոջ յոտնաւոր աքնութեամբ անցուցանէր անքուն. և էր յոյժ քահանայասէր և ուսումնասէր և ընթերցող աստուածային կտակարանացն։ Այլ և բարեպաշտ տիրուհի մայր նորա, յետ մահուան առն իւրոյ Վախթանկայ, զոր Տանկիկն կոչէին, կարգաւորեաց զերեսին որդիսն իւր զՋալալն և ըզ Զաքարէ և զԻւանէ, չոգաւ նա 'ի սուրբ քաղաքն Երուսաղէմ, և զամս բազումս անդ կացեալ մեծաւ ճգնութեամբ, զարմացուցանէր զամենայն տեսողսն և զլսողսն. քանզի ծախեալ զամենայն զոյս իւր՝ զոր ունէր՝ յաղքատսն և 'ի կարօտեալսն՝ նման Հեղինեայ կնոջն Աբգարու,

և ինքն ձեռագործիւ իւրով կերակրէր. և անդէն մեռաւ, զոր Աստուած փառաւորեաց զփառաւորիչն իւր, լոյս կամարաձև կացեալ 'ի վերայ գերեզմանին առ 'ի յորդորել զայլս 'ի նոյն բարեգործութիւն։

Այս իմաստուն իբրև ետես զյարձակումն անօրինացն, ամրացոյց զբնակիչս իւրոյ աշխարհին 'ի բերդն, որ կոչի Խօխանաբերդ՝ ընդ բարբառոյն Պարսից։ Եւ իբրև եկին պաշարել զնա, կոտեսին զի ոչ էր հնար առնուլ զամուրսն, կոչեն զնա սիրով խաղաղութեան առ իւրեանս. և նա իմաստաբար հաճեաց զմիտս նոցա. յետոյ չոգաւ և ինքն առ նոսա բազում ընծայիւք, և մեծարանս արարեալ նմա, տան զաշխարհն իւր 'ի ձեռս նորա այլ ևս յաւելուածով. և հրամայեն նմա ամի ամի երթալ զկնի նոցա 'ի գործ պատերազմի, և միամտութեամբ կեալ 'ի հնազանդութիւն նոցա։ Իսկ նա խոհեմաբար կարգաւորեաց զաշխարհս իւր, որ ինչ մարթ էր առնուլ 'ի պէտս երթևեկաց՝ որ գային առ նոսա, թէ կարգաւոր և թէ այլ ինչ, ինքն առնոյր և պահէր, և յիւրմէն յաւելուածով տայր նոցա, յորժամ գային առ նա՝ և ոչ նեղէին զաշխարհն, բայց թէ առ նա գային։ Իսկ յայլ աշխարհս զայս ոչ առնէին, այլ ուր և հասանէին ամենայն ուրեք նեղէին զնոսա։

Վասն եկեղեցւոյն զոր շինեաց։

Շինեաց եկեղեցի մի գեղեցկազարդ յօրինուածով գմբեթայարդ երկնանման տաճար փառացն Աստուծոյ, ուր հանապազ պատարագի Քրիստոս գառն Աստուծոյ, որ բառնայ զմեղս աշխարհի, 'ի վանքն՝ որ կոչի Գանձասար, հանդէպ Խօխանայ բերդոյ 'ի տեղի շիրմի իւրեանց. և յոլով ամս աշխատ եղեն 'ի նմա։ Եւ իբրև առ գաւարտումն, արար նաւակատիս մեծահանդէս առ 'ի յօրհնել զեկեղեցին. անդ էր և կաթուղիկոսն Աղուանից տէր Ներսէս բազում եպիսկոպոսօք. այլ և մեծ վարդապետն Վանական, յոլով բաբունիք. անդ էին և սուրբ վարդապետքն Խաչենոյ Գրիգորիս և տէր Եղիայ հարազատք միմեանց. զոր զարդարեալ էր Աստուած երկուց մարդով, և փոխեցան յաստեացս առ Քրիստոս, և կան 'ի պահեստի յաստուածափառ տանն Խադայի առաջնոյն, 'ի Թուին ՈՃԷ, և բազում քահանայիւք որ ասէին զԹիւ երիցանցն եօԹն հարիւր. Եւ իբրև կնքեցաւ օծմամբ, ճաշ մեծ յօրինեալ. ինքնին իսկ ձեռօք իւրովք պաշտէր զբազմեալսն, և տուրս տուեալ բատ իւրաքանչիւր պատուոյ առատութեամբ, արձակէր զամբոխն. և եղև այս 'ի ՈՃԸ Թուին Հայոց, յաւուր մեծի տօնի Վարդավառին։ Շինեաց և կին նորա Մամքան զգաւիթն հրաշալի 'ի դուռն եկեղեց-

ւոյն, և ինքն զանձն ամենայն առաքինութեան տուեալ, ճգնէր հանապազ պահօք և աղօթիւք և ընթերցասիրութեամբ, և կայր 'ի պատուիրանս Տեառն 'ի տուէ և 'ի գիշերի բատ գրեցելումն։

Վասն ցուցման կերպարանաց Թաթարին բացայայտութիւն սակաւուք։

Վասն զի յօժարեցաք մեք յիշատակ թողուլ յազգս՝ որ գալոց են, քանզի ակն ունիմք մեք յուսով փրկութեան 'ի նեղութենէ աստի՝ որ պաշարեալս է զմեզ, սակաւիկ մի ցուցցուք քննասիրաց զկերպարանս և զխօսս նոցա։ Էին տեսալեամբ կերպարանաց զժոխատես և ահագնալուր, մօրուս ոչ ունելով, բայց սակաւ ոմանց Թուելով մազս ունելով 'ի շուրթն կամ 'ի կլափն. ակն նեղ և արագատես, ձայն նուրբ և սուր, բազմակեացք և տեւողք։ Յորժամ անկանէր յաճախ ուտէին և ըմպէին անյագ, յորժամ ոչ անկանէր, ժուժկալք էին. ուտէին զամենայն կենդանիս՝ զսուրբս և զանսուրբս, և զմիս ձիոյ առաւել մեծարէին, անդամ անդամ յօշեալ և եփեալ, կամ խորովեալ առանց աղի, և ապա մանր կորեալ և Թացեալ յաղաջուր, այնպէս ուտէին. ոմանք 'ի զուճս բատ նմանութեան ուղտուց, և կէսք նըստելով ուտէին, և յուտելն հասարակ բաշխէին տէրանց և ծառայից, և յըմպելն զըմուզ կամ

զգինի, առեալ մի ոմն մեծ ամանով 'ի ձեռս իւր, և փոքր բաժակաւ առեալ 'ի նմանէ, ցանէին յերկինս, և ապա յարևմուտս, 'ի հիւսիս և 'ի հարաւ. և ապա իւր իսկ ցրուողին զայն սակաւ մի ըմպեալ 'ի նմանէ, մատուցանէր աւագագունին։ Եւ թէ ոք բերէր նոցա կերակուրս ինչ կամ ըմպելիս, նախ բերողին տային ուտել և ըմպել, և ապա ինքեանք ուտէին և ըմպէին. զի մի՛ մահացու դեղոց ինչ գժրիցին։ Որչափ և կամէին՝ կանայս առնէին. բայց զպոռնիկս ամենևին ոչ ապրեցուցանէին, որ ընդ իւրեանց կանայս. բայց ինքեանք ուր և հանդիպէին այլազգեաց, անխտիր խառնակէին, և գողութեան ատելիք էին. մինչ զի չարաչար մահուամբ սպանանէին։ Եւ պաշտօն ինչ ոչ գոյր առ նոսա, կամ երկրպագութիւն, բայց ստէպ զանուն Աստուծոյ յիշէին յամենայն իրս. զայս՝ թէ զէէն Աստուծոյ գոհանային, և կամ թէ զայլ ոմն Աստուած կոչէին՝ մեք ոչ գիտեմք. և ոչ ինքեանք ևս։ Բայց սովորաբար զայս ասէին. զի զարքայն իւրեանց ազգակից Աստուծոյ. զերկինս առեալ Աստուած իւր բաժին, և զերկիրս տուեալ Խաղանին. զի ասէին զՋանկզ Ղանն, զհայր Խաղանին, ոչ ծնեալ 'ի սերմանէ առն, այլ լոյս իմն եկեալ յաներևութից, և մտեալ ընդ յերդ տանն, և ասացեալ մօրն, թէ յղասջիր և ծնցիս որդի ինքնակալ երկրի. և յայնմանէ ասէին ծնեալ զնա։

Զայս պատմեաց մեզ Գրիգոր իշխանն որդի մարզպանին՝ եղբայր Ասլան պէկին Սարգսի և Ամիրային, յազգէ Մամիկոնէից, զոր իւր իսկ լուեալ էր 'ի մեծ յառնէ միոջէ 'ի կարի աւագացն, որում անուն էր Ղութու Նուին, յաւուր միում յուսուցանել նոցա զմանկագոյնսն։ Եւ յորժամ ոք մեռանէր 'ի նոցանէ, կամ սպանանէին, էր զոր բազում աւուրս շրջեցուցանէին ընդ իւրեանս, քանզի մտեալ դեւի՝ խօսէր անզուստ բազում բաբբաջմունս, և էր զոր այրէին. և զկէս թաղէին յերկրի խոր փոսիւք, և ընդ նմին դնէին զզէնն և զհանդերձ, և զոսկի և զարծաթ, որ ինչ բաժին իւր էր։ Եւ թէ 'ի մեծաց ոք լինէր, 'ի ծառայից և յաղախնեաց ևս դնէին ընդ նմա 'ի գերեզմանի, զի սպաս կալցի ասէին նմա. այլ և ձիս, զի ասէին անդ պատերազմ սաստիկ լինել. և զոր յիշատակ կամէին առնել մեռելոց, ճեղքէին զփոր ձիոյն, և քարշէին ընդ այն զամենայն միսն առանց ոսկեր. և ապա զփորոտին և զոսկերսն այրէին հրով. և կարէին զմորթ ձիոյն, իբրև թէ զամենայն մարմինն ունիցի։ Սրեալ փայտ մի մեծ, հարեալ ընդ որովայնն և հանեալ ընդ բերանն, այնպէս վերացուցանէին 'ի ծառ, կամ 'ի բարձրաւանդակ տեղւոջ։

Այլ և կանայք նոցա կախարդք էին, և զամենայն ինչ հմայէին. և առանց հրամանի կախարդացն և դիւթիցն ոչ երթային 'ի ճանա-

պարհ ուրեք, բայց թէ նոքա հրամայէին։ Այլ և խօսք նոցա խժական և անծանօթք 'ի մէնջ. քանզի կոչէին զանուն Աստուծոյ՝ Թանգրի, և զմարդն՝ հառեռան, և զկին՝ աճջի, և զանուն հօր՝ էչկա, և զմայր՝ աքա, և զեղբայր՝ աղա՝ և զքոյր՝ աքաճի, և զգլուխ՝ թիւրօն, և զաչս՝ նիտոն, և զականջսն՝ չիքին, և զմօրուս՝ սախալ, և զերես՝ յիօզ, և զբերան՝ աման, և զատամն՝ սխուր, և զհաց՝ օթմակ և զեզն՝ աքար, և զկով՝ ունէն, և զոչխար՝ ղոյնա, և զգառն՝ ղուրղան, և զայծ՝ իման, և զձի՝ մօրի, և զջորի՝ լօսա, և զուղտ՝ թաման, և զշուն՝ նօխա, և զգայլ՝ չինա, և զարջ՝ այտքու, և զաղուէս՝ հօքան, և զնապաստակ՝ թապղայ, և զհաւ՝ թախեա, և զաղաւնի՝ կօկաչա, և զարծուի՝ ղուշ, և զջուր՝ ուսուն, և զգինի՝ տարասու, և զծով՝ տանկըզ, և զգետ՝ ուլանսու, և զթուր՝ խօլտու և զաղեղն՝ նմու, և զնետ՝ սումու, և զթագաւոր՝ մելիք, և զմեծ պարոն՝ նուին, և զերկիր՝ էլ, և զերկինք՝ զօզայ, և զարեգակն՝ նառան, և զլուսին՝ սարա, և զաստեղս՝ սարղա, և զլոյս՝ օտուր, և զգիշեր՝ սոյնի, և զգրագիր՝ բիթիքչի, և զսատանայ՝ բառահուռէ, և զայլ այսպիսի խժական անուանս, զոր 'ի բազմաց մեզ անծանօթ. իսկ այժմ ակամայ ծանուցեալք։ Եւ գլխաւորք երեւելիք՝ որք յառաջադէմք էին, այսոքիկ են. Առաջինն և մեծ և գլուխ՝ որ հրամանատուն էր զօրուն, Չարմա Ղան Նուինն,

այր իրաւարար և դատաւոր. և որք աթոռակիցք նորա՝ Իսրար Նուինն, Ղութուն Նուինն, Տութուն Նուինն, և Չաղատայն, որ զօրավարն էր զօրուն, զոր սպանին Մլհիտքն. և այլ բազում գլխաւորք էին, և անթիւ զօրք։

Վասն Ռաբանին Ասորւոյ։

Նախախնամօղն Աստուած, որ զամենեցուն կեանս կամի, նա մարդասիրութեամբն իւրով երևեցոյց 'ի մէջ նոցա այր մի երկիւղած և աստուածապաշտ, Ասորի ազգաւ, որ հայր անուանեալ էր արքային նոցա, զոր Խաղանն կոչէին, անուն նորա Սիմէօն, զոր Ռաբան Աթա կոչէին։ Իբրև լուաւ զանխնայ կոտորումն քրիստոնէից՝ որ 'ի զօրաց Թաթարին, մատուցեալ առ Խաղանն՝ խնդրեաց 'ի նմանէ թուղթ առ զօրսն իւր, զի մի այնպէս առ հասարակ կոտորեսցեն զանմեղ մարդիկ, որք ոչ պատերազմին ընդ նոսա, այլ թողուլ զնոսա, զի ծառայեսցեն նմա։ Իսկ նա զնոյն ինքն առաքեաց մեծ և երևելի շքով, գրեալ հրովարտակ առ զօրագլուխս իւր, զի ամենեքեան անսասցեն հրամանի նորա։ Եւ նա եկեալ, բազում ինչ նպաստ եղև քրիստոնէից, թափելով 'ի մահուանէ և 'ի գերութենէ. շինեաց և եկեղեցիս 'ի քաղաքս Տաճկաց, ուր ոչ իշխէին անուանել զՔրիստոս, և՛ս առաւել 'ի

Թարմեծ և 'ի Նախճավան քաղաքի, ուր առաւել
թշնամիք էին քրիստոնէից, զի ոչ իշխէին
յայտնի երևել կամ շրջիլ քրիստոնեայք. թող թէ
եկեղեցի կամ խաչ կանգնել: Իսկ նորա կան-
գնեալ խաչ և եկեղեցի, և ժամահար հնչեցու-
ցանել 'ի տուէ և 'ի գիշերի, և յայտնապէս տա-
նել զմեռեալս 'ի թաղումն խաչիւ և աւետարա-
նաւ և պաշտամամբ, որպէս օրէն է քրիստոնէ-
ից, և զընդդիմացեալսն մահու վախճանէր. և ոչ
ոք իշխէր հակառակել հրամանի նորա, այլ և
ամենայն զօրք Թաթարին զնա որպէս զարքայն
իւրեանց ունէին, և առանց նորա ոչինչ խոր-
հէին կամ առնէին. և մարդիկ նորա վաճառա-
կանք, որք ունէին զտամղա նորա, այսինքն
զնշան և զգիր, համարձակութեամբ շրջէին ընդ
ամենայն աշխարհս, և ոչ ոք իշխէր մերձենալ
առ այնոսիկ, որք ասէին զանուն Ռաբանին:
Այլ և ամենայն զօրագլուխք Թաթարին ընծայ
մատուցանէին նմա յաւարէ իւրեանց. և ինքն
էր այր պարկեշտ վարուք, նոյնպէս 'ի կերա-
կուրս և յըմպելիս, յաւուրն միանգամ ճաշակէր
ընդ երեկս սակաւ ինչ կերակուր: Այսպէս այց
արար Աստուած ժողովրդեան իւրում 'ի նեղու-
թեան անտի 'ի ձեռն առնս այսորիկ. և զբազումս
մկրտեաց նա 'ի Թաթարէ անտի, և ամենայն ոք
վասն սքանչելի վարուց նորա և մեծաշուք պա-
տուոյն զարհուրէր և դողայր 'ի նմանէ: Եւ յոր-

ժամ եղև այս գծագրութիւնն, որ յայսմ վայրի,
'ի ող թուականին, 'ի Հայոց թագաւորութեանն՝
որ 'ի կողմանս Կիլիկեցւոց, Հեթմոյ բարեպաշ-
տի, և 'ի զօրավարութեանն եղբօր իւրոյ Սմբա-
տի, և իշխանաց իշխանի Կոստանդնի
բատայ քաջի, և 'ի կաթուղիկոսութեան սուրբ աթո-
ռոյ նորա, և 'ի կաթուղիկոսութեան սուրբ աթո-
ռոյն Գրիգորի Կոստանդնեայ ծերունւոյ և առա-
քինւոյ, որ նստէր 'ի Կլայն Հռոմէական, և
յարքեպիսկոպոսութեան տեառն Բարսղի, եղ-
բօր թագաւորին Հեթմոյ, զոր պահէին փո-
խանորդ սուրբ աթոռոյն կաթուղիկոսութեան,
և յԱղուանից կաթուղիկոսութեան տեառն Ներ-
սէսի հեզոյ և մարգասիրի, որ յաւուրս նըս-
տէր 'ի վանքն՝ որ կոչի Խամշի, 'ի գաւառն
Միափորի. և յարքեպիսկոպոսութեան եղբօր
որդւոյ նորա Յովհաննիսի՝ նոր ձեռնադրելոյ, և 'ի
որդւոյ նորա Յովհաննիսի՝ նոր ձեռնադրելոյ, և 'ի ժա-
բռնակալութեան հանուրցս Թաթարին, և 'ի ժա-
մանակլի կենաց մերոց ամս քառասուն պակաս
կամ աւելի:

Վասն աւերման Թէոդուպօլսայ:

Արդ 'ի սկսանել ոճ թուականին Հայոց,
գայր հասանէր հրովարտակ 'ի Խաղանէն առ զօրս
և զօրագլուխս, որ յարևելս, զօրավար և առաջ-
նորդ կացուցանել փոխանակ Չարմաղունին՝ որ
համրացեալ էր, զոմն մի 'ի զօրացն Բաչուղուր-

չէ անուն նմա. անկեալ վիճակն առաջնորդութեան. քանզի հմայիւք վարէին. Արդ իբրև առ նա զիշխանութիւնն, իսկոյն զօր գումարեաց յամենայն ազգաց՝ որ ընդ ձեռամբ նորա, և գնաց յաշխարհն Հայոց, որ ընդ իշխանութեամբ Սուլտանին Հոռոմոց. և հասեալ 'ի Կարին գաւառ, պաշարեաց զԹէոդուպօլիս, որ այժմ կոչի Կարնոյ քաղաք, և նստեալ շուրջ զնովաւ, առաքեաց առ նոսա դեսպանս գալ նոցա 'ի հնազանդութիւն. և նոքա ոչ կամեցան գալ, այլ անարգանօք դարձուցին զպատգամաւորսն, և ինքեանք ելեալք 'ի պարիսպն, նախատէին զնոսա։ Իսկ նոքա իբրև տեսին եթէ ոչ ողջունեցին զխաղաղութիւն, յամենայն կողմանց բաժանեալ զպարիսպ քաղաքին գլխաւորացն, զի փլուցեն առ հասարակ. և նոցա փոյթ յանձինս կալեալ, կանգնեցին Փիլիկուանս բազումս, և կործանեցին զպարիսպն, և մտեալ 'ի ներքս, սրոյ ճարակ զամենեսին տուեալ անողորմաբար, և յափշտակեալ զինչսն և զստացուածսն, հրով այրեցին զքաղաքն։ Եւ զի յոյժ բազումամբոխ էր 'ի ժամանակին յայնմիկ, քաղաքն, լցեալ քրիստոնէիւք և Տաճկօք, այլ և ամենայն գաւառն անդր հաւաքեալ էր, անթիւ գոյին անդ կտակարանք աստուածային գրոց՝ մեծամեծաց և փոքունց. զայն առեալ այլազգեացն, ծախէին քրիստոնէիցն՝ որ 'ի զօրուն էին. զյաճախագիրն ընդ գոյզն գնոց. և նոցա խնդութեամբ առեալ, տանէ-

ին յիւրաքանչիւր գաւառ, բաշխելով յեկեղեցիս և 'ի վանորայս։ Այլ և 'ի գերելոց անտի զբազումս գնեցին զարս և զկանայս և զմանկտի, զեպիսկոպոսս և զքահանայս և զարկաւագունս՝ որքան հնար էր գնեցին իշխանքն քրիստոնեայք՝ Աւագն և Շահնշահն և Աղուպղան որդին Վահրամայ, և Գրիգոր Խաչենեցի Դոփին որդի, որ էր այր երկիւղած. և զօրք նոցին, որոց վարձահատոյց Քրիստոս եղիցի, և զամենեսեան ազատ արձակեցին, թողլով 'ի կամս անձանց ուր և կայցեն։ Եւ ոչ միայն թէ զքաղաքն Կարնոյ աւերեցին, այլ և բազում գաւառս յիշխանութենէ Սուլտանին Հոռոմոց. և Սուլտանն ոչինչ կարաց օգնել. քանզի դողեալ թագուցեալ էր յերկիւղէ նոցա. այլ և վախճանեալ ևս ասէին զնա։ Իսկ զօրքն Թաթարին, իբրև գործեաց նա զայս իր, դարձաւ բազում աւարով և խնդութեամբ յաշխարհն Աղուանից 'ի կայս ձմերոցի իւրոյ, յարգաւանդ և 'ի բերրի դաշտն. որ կոչի Մուղան, և անդ ձմերեաց։

Վասն պատերազմին՝ որ եղեւ ընդ Սուլտանն եւ ընդ Թաթարն

Մինչդեռ զետեղեալ յապահովս նստեալ կայր զօրն Թաթար ընդ դաշտս ամենայն Հայոց և Աղուանից, գայր դեսպանս 'ի Ղիադադին Սուլ-

տանէն խրոխտ և սպառնական բանիւք, որպէս
սովորութիւն է Տաճկաց. եթէ այսպէս համարե-
ցիք դուք աներամտ քաղաքի իմոյ, եթէ յաղ-
թեցաք նմա և զօրութեան նորա. քաղաքք իմ
անթիւք են 'ի բազմութենէ, և զօրաց իմոց չիք
համար. արդ կաց՝ թէ դու, ուր ես, և ես ինք-
նին եկեալ տեսից զձեզ մարտիւք պատերազմաց.
և այլ բազում բանիւք՝ որ նման է սոցին, մե-
ծամեծս փքայր. և զայս ևս ասէր պատգամա-
ւորն եթէ հանդերձեալ է Սուլտանն զձմեռն, որ
գալոց է զկնի ամարանս, 'ի դաշտի աստ ձմերել
կանամբք և զօրօք: Իսկ նոցա լուեալ, ոչ ինչ
ըմբոստացան, կամ խրոխտս ինչ խօսեցան ընդ-
դէմ նոցա, այլ միայն զայս պատասխանի ետ
գլխաւորն նոցա Բաչու Նուինն. եթէ մեծամեծս
բարբառեցայք. սակայն եթէ ում Աստուած տա-
ցէ նորա լիցի յաղթութիւն. և այսպէս մի զկնի միոյ
գային դեսպանքն փութացուցանել զնոսա 'ի մարտ:
Իսկ նոցա ոչինչ շտապեալ, այլ մեղմով գումա-
րեալ զզօրս իւրեանց, և որք ընդ ձեռամբ նոցա,
եկեալ յաշխարհս Հայոց 'ի խոտաւէտ վայրս ա-
մենայն ախւ, զիրացուցեալ զերիվարս, և ապա
մեղմով մօտ հասեալ, ուր էր բանակ Սուլտանին.
քանզի և նա 'ի վեր էր եկեալ 'ի տեղւոջէ իւր-
մէ յաշխարհն Հայոց, որ ընդ իւրով իշխանու-
թեամբ, հուպ 'ի քաղաքագեղ մի՝ զոր, ասի,
Ձմանն կատուկ անուանեն, անթիւ բազմութեամբ

կանամբք և հարճիւք, ոսկւով և արծաթով, և
որ ինչ սպասք էին նորա մեծութեանն, զամե-
նեսեան ընդ իւր բարձեալ բերէր. այլ և զբօ-
սանաց աղագաւ սնուցեալ էրէս վայրի և յայլոց
տողնոց բազումս, մինչև 'ի մկունս և 'ի կա-
տուս, զի այնպէս աներկիւղ կամէր զինքն ցու-
ցանել զօրացն: Իսկ զօրավարն Բաչու՝ ըստ
խորագէտ իմաստութեանն իւրեանց, բաժանեալ
զզօրս իւր բազում յառաջս 'ի ձեռս գլխաւորաց
քաջաց, և զեկամուտ զօրսն՝ որ յազգաց ազգաց, 'ի
նոսա ցրուեալ, զի մի նենգ ինչ գործեսցեն, և
ընտրեալ յամենեցունց զարիսն և զքաջսն, յա-
ռաջապահս կարգեալ ինքեանց, որք երթեալք
հանդիպեցան զօրաց Սուլտանին, և մարտու-
ցեալք 'ի փախուստ դարձուցին զնոսա: Փախեաւ
և Սուլտանն մազապուրծ, թողեալ զկին և զկա-
րասի անդէն 'ի տեղւոջն. և սոցա զհետ մտեալ, կո-
տորեցին անխնայ զզօրսն, սրոյ ճարակ տուեալ. և
ապա դարձան 'ի կապուտ անկելոցն: Իբրև եկն
'ի բուն բանակն, տեսին զի փախուցեալ էր
Սուլտանն, և հարեալ զօրք նորա. ապա սկսան
ասպատակ սփռել ընդ կողմանս, յաւարի առնուլ
'ի քանդել զբազում գաւառս, և ժողովել ոսկի և
արծաթ, և հանդերձս մեծագինս, և ուղտս և ձիս,
և ջորիս, և անթիւ անասունս: Եկին պատեցին
զքաղաքն Կեսարիա Կապադովկացւոց, և պա-
տեալ պաշարեցին զնա. զի ոչ եղեն ձեռնատու

բնակիչքն, առեալ բռնութեամբ. 'ի սուր սուսերի մաշեցին զբնակիչսն, և յափշտակեալ որ 'ի նմա, և թողեալ ամայի զքաղաքն եկին 'ի Սեբաստիա. զի յառաջագոյն ձեռնտու էին լեալք բնակիչք քաղաքին առ նոսա, և ընդ առաջ երթեալ ընծայիւք և պատարագօք, մարդոյ ինչ ոչ մեղան, այլ յափշտակեալ յաւարէ քաղաքին ինչ, յիւրեանց անուն գրաւեալ զքաղաքն, վերակացուս դարձուցեալ զքաղաքն դարձան: Եւ եկին պաշարեցին զԵզընկայն, և բազում մարտիւք մարտեան ընդ նմա. և բնակիչք քաղաքին բազում հարուածս հասուցեալ 'ի վերայ զօրացն Թաթարին: Ապա սկսան խաբէութեամբ արտաքս կոչել սիրոյ աղագաւ, և նոցա հաւանեալ եկին. քանզի ոչ ունէին ուստեք օգնական. որոց սուր 'ի վերայ եդեալ, կոտորեցին առ հասարակ զարս և զկանայս, և սակաւ մանկունս և աղջկունս ապրեցուցեալ՝ վարեցին 'ի գերութիւն. և այսպէս բազում գաւառս և զաշխարհս աւերեալ և գերեալ, եկին 'ի քաղաքն՝ որ կոչի Տիւրիկէ: Իբրև գիտացին բնակիչքն, եթէ անհնար է զդէմ ունել նոցա պատերազմաւ, կամաւ ձեռնտու եղեն նոցա. յորոց առեալ ինչս բազումս, թողին զքաղաքն առանց վնասու, և դարձան բազում աւարաւ և մեծաւ խնդութեամբ 'ի կայս ձմերոց իւրեանց, որ 'ի Հայս և որ յԱղուանս, ողջանդամ և առանց վնասու. զի 'ի Տեառնէ էր խորատ-

կումն ամենայն ազգաց, և կործանումն նոցա: Բայց քրիստոնեայքն՝ որք էին ընդ նոսա զինուորեալք, զբազումս ազատեցին 'ի գերելոցն՝ ո՛ր յայտնի, և ո՛ր 'ի ծածուկ, զքահանայս և զկրօնաւորս, մանաւանդ մեծամեծ իշխանքն՝ Աւագն և Շահնշահն, Վահրամ և որդի իւր Աղբուղէն, և Խաչենեցիքն, Ջալալն Հասան, և զօրք իւր, և ազգականքն, և Գրիգոր Դոփին որդի, մօրաքուեր որդի Ջալալին, և այլ իշխանքն և զօրք նոցին ըստ կարի իւրեանց. և այս եղև 'ի ողբ թուականիս Հայոց:

Վասն թագաւորին Հայոց Հեթմոյ եւ զոր ինչ գործեցաւ:

Իբրև այս գործեցաւ Հեթում արքայ՝ որ աշխարհին Կիլիկեցւոց և այնոցիկ նահանգաց իշխէր, յորժամ ետես՝ եթէ պարտեցաւ Սուլտանն առաջի նոցա, առաքեաց առ նոսա դեսպանս և պատարագս արժանաւորս դնել նոցա ընդ նմա ուխտ խաղաղութեան, և նմա կալ նոցա 'ի հնազանդութեան. որք եկեալ 'ի մեծ գունդն, յանդիման եղեն Բաչու Նուինին, և Ելթինա Խաթունին կնոջ Չարմաղունին, և այլ մեծամեծ աւագանւոյն միջնորդութեամբ իշխանին Ջալալին: Եւ իբրև լուան զպատգամս արքային, տեսին և զընծայսն, խնդրեցին 'ի նմանէ տալ 'ի ձեռս նոցա զմայր Սուլթանին զկին և զդուստր, որք զաղթականութեան աղագաւ անդ

փախուցեալ էին։ Եւ իբրև լուաւ արքայ Հեթում, յոյժ տրտմեցաւ և ասէ. «լաւ էր ինձ եթէ զորդի իմ զԼևոն խնդրեալ էին յինէն, քան թէ զնոսա»։ Այլ քանզի երկնչէր 'ի նոցանէ, զի մի մեծ չարեաց պատճառ լիցի այն, յակամայ կամաց ետ 'ի ձեռս նոցա. այլ և ընծայս բազումս այնոցիկ՝ որ եկեալ էին տանել զնոսա, որք եկեալ ցուցին Բաչուին և այլոց գլխաւորացն։ Որք իբրև տեսին՝ ուրախ եղեն, և մեծարանօք յարգեցին զդեսպանն արքայի, և կարգեցին նոցա ռոճիկս և երիվարաց նոցա զժամանակս ձմերանն, զի 'ի լինել գարնան ընդ նոսին երթիցեն յաշխարհն իւրեանց։ Հաստատեցին և սէր ընդ արքայի, տուն և գիր ընդ դենին իւրեանց՝ զոր Ելտամղայն կոչէին. և այսպէս սպասէին, մնալով եղանակին գարնան, որ միւսանգամ երթիցեն 'ի վերայ Սուլտանին և աշխարհի նորա։

Վասն Կոստանդեայ իշխանի Լամբրոնին, եւ զոր ինչ գործեաց նա ընդ աշխարհն Կիլիկեցւոց։

Արքայն Լևոն մինչ կենդանի էր, բերդ մի 'ի նորա աշխարհին յոյժ անառիկ, որում անուն էր Լամբրոն, և իշխանն՝ որ տիրէր բերդոյն, ապստամբեաց 'ի նմանէ, որում անուն էր Հեթում, և նա բազում անգամ ջանացեալ, ոչ կարէր նուաճել զապստամբն. ապա յետոյ խորա-

մանկութեամբ խաբեալ զնա խնամութեան ազգաւ, որպէս թէ տացէ զդուստր եղբօր իւրոյ՝ որդւոյ նորա Օշնի 'ի կնութիւն, ըմբռնեալ զնա և զորդիս նորա չարչարեալ, առին 'ի նա զամրոցն. և նորա առեալ ետ զնա ցմայր իւր տիկնաց տիկնին, և գրեաց նզովս ոչ ևս այլ տալ զնա ումեք իշխանի, բայց միայն արքունի լիցի. զի հանապազ ասէ տեարքն նորա ապստամբ են լեալ վասն ամրութեանն։ Իբրև վախճանեցաւ Լևոն, և թագաւորութեանն իշխէր դուստրն նորա Զապէլ, Կոստանդին իշխանաց իշխանն ընդ իւր միաբանեալ զկաթողիկոսն Յոհաննէս և զայլ իշխանսն, թագաւորեցոյց զորդին իւր զՀեթում մանուկ տիօք, ածեալ զնա այր դստերն Լևոնի փոխանակ որդւոյ Բրնձին, զոր ըմբռնեալ եդին 'ի բանտի։ Կամեցաւ թիկունս օգնութեան իւր առնել զորդին Հեթմոյ՝ զԿոստանդին համանուն իւր, զորդին Հեթմոյ զաներ իւր, և տայ 'ի նա զԼամբրոն զսեպհական իւրեանց, և եդ զնա թագադիր որդւոյ իւրոյ։ Իսկ նա յետ աւուրց ըստ հայրենի սովորութեանն իւրեանց ապստամբեաց 'ի քուեր որդւոյ իւրոյ յարքայէն Հեթմոյ. և թէպէտ շատ ջանաց Կոստանդին հայրն արքայի, և ինքն իսկ արքայ, ոչ կարաց ածել զնա 'ի հաւանութիւն հնազանդութեան. զի ձեռն ետ նա 'ի Սուլտանն Հոռոմոց. և այսպէս կայր ապստամբ։ Իբրև փախեաւ Սուլտանն Հոռոմոց 'ի Թաթա-

ըէն, արքայն զամենայն զիւղս և զանդաստանս Լամբրոնի արար 'ի ներքոյ հրամանաց իւրոց, և միայն մնաց նա 'ի բերդն, յոր ապստամբեալ էր։ Ապա յղեաց Կոստանդին դեսպանս առ արքայ խնդրել զհաշտութիւն, և տալ զորդիս իւր 'ի ծառայութիւն, և ինքն մնալ 'ի բերդին. և արքայ ոչ կամեցաւ. երկիցս և երիցս յղեաց, և արքայ և հայր իւր նմանապէս ոչ կամեցան։ Ապա գնացեալ Կոստանդին 'ի Կոնն, առեալ զօրս Սուլտանին Հոռոմոց, որք յայնժամ թշնամիք էին արքային, զի ետ զմայր Սուլտանին Հոռոմոց 'ի Թաթարն, գայ յեղակարծ ժամու, մինչ ցրուեալ էին զօրքն արքունի յիւրաքանչիւր տեղիս, և մտեալ յաշխարհն՝ աւարեաց զբազում աւանս և զագարակս այրմամբ և սպանմամբ և գերութեամբ, բազում քրիստոնեայս կոտորեալ և կողոպտեալ. և այսպէս բազում չարիս անցուցեալ ընդ աշխարհն քինահանութեամբ։ Իսկ արքայ իբրև ետես զայն չարիս, ժողովեալ զզօրս իւր, արիութեամբ հասեալ 'ի վերայ բազմութեանն, որոյ ճարակ ետ զամենեսին. և փախեաւ միայն ապստամբ իշխանն, և սակաւք ընդ նմա։ Այսպէս եօթն անգամ հարաւ 'ի նմանէ. ապա եմուտ յամրոց իւր, և ոչ իշխէր համարձակել յաջ կամ յահեակ։

Վասն Թագաւորութեանն Դաւթի

Բազմահնար և խորամանգ ազգն Նետողաց յոլով անգամ յղեցին առ Թագուհին Վրաց Ռուզուդան գալ առ ինքեանս, կամ տալ զորդի իւր զԴաւիթ մանուկ զօրօք առ նոսա։ Իսկ նա զայս ոչ արարեալ՝ տայ սակաւ զօրս, և 'ի ձեռն աւագ որդւոյն Իւանէի՝ որ էր ընդ Թաթար զօրուն, յղէ առ նոսա ասելով. «մինչ չև է եկեալ դեսպանն իմ՝ զոր յղեցի առ Խաղան արքայն ձեր, ոչ կարեմ գալ առ ձեզ»։ Իսկ նոքա իբրև հարին զՍուլտանն Հոռոմոց՝ զփեսայ նորին, և առին զյոլովս 'ի քաղաքաց նորա, առաքեցին առ նա պատգամաւորս զիշխանն Վահրամ գալ նոցա 'ի հնազանդութիւն։ Եւ նա 'ի գալն եբեր ընդ իւր զորդի Գիորգեայ Լաշայի թագաւորին Վրաց, զեղբօր որդի Ռուզուդանայ թագուհւոյ, զոր յղեալ էր զհետ դստերն իւրոյ առ Սուլտանն Հոռոմոց դաւով, զի կորուսցէ զնա. զի մի՛ նենգ ինչ գործեսցէ թագաւորութեանն. և էր առ Սուլտանին յարգելս. և բերեալ Վահրամայ, ծանոյց Թաթար զօրուն, թէ որդի արքայի մերոյ է, և տարապարտ զրկեալ է 'ի տէրութենէ իւրմէ։ Իսկ նոքա հակառակ հօրաքեռ իւրոյ թագաւորեցուցեալ զնա՝ հրամայեցին ըստ օրինի քրիստոնէից օծանել զնա, և կալ ամենայն իշխանաց հօր նորա նմա 'ի հնազանդութեան. և նստեալ 'ի Տփխիս

քաղաքի։ Եւ առեալ զնա մեծամեծ իշխանացն, որք էին հնազանդ Թաթարին, Աւագին՝ որ զօրավարն էր, և Շահնշահի՝ որդւոյ Զաքարիայի, և Վահրամայ և որդւոյ իւրոյ Աղբուղին, տարեալ 'ի Մեծխիթա, կոչեցին և զկաթուղիկոսն Վրաց, և օծին զնա թագաւոր. և էր անուն նորա Դաւիթ։ Իսկ հօրաքոյր նորա Ռուզուդան՝ իբրև լուաւ զայն, փախեաւ յԱփխազէթ և 'ի Սոնէթ որդւովն իւրով միւս Դաւթաւ. և յղեաց դեսպանս առ միւս զօրագլուխ Թաթարին, որում անուն էր Բաթու, ազգական Ղանին, որ իշխէր 'ի վերայ այնց զօրաց, որք էին 'ի Ռուզք, և յՕսեթք, և 'ի Դարբանդ, քանզի նա էր յետ Ղանին, կալ նմա հնազանդ։ Եւ նա հրամայեաց նմա նստել 'ի Տփխիս. և սոքա ոչ ընդդիմացան; քանզի ընդ աւուրս ընդ այս մեռեալ էր Ղանն։

Վասն կոչելոյն 'ի մեծ դուռն զԿաթուղիկոսն Աղուանից զտէր Ներսէս

Մինչդեռ զետեղեալ նստեալ կայր զօրն Թաթար 'ի ձմերոցս 'ի դաշտս Հայոց և Աղուանից, Ռաբանն Ասորի, զոր վերագոյն յիշեցաք, լուաւ վասն կաթուղիկոսին Աղուանից, և ծանոյց Ելթինա Խաթունին՝ կնոջ Չարմաղունին, որ վարէր զիշխանութիւնն նորա յետ համրանալոյն, եթէ զխաւար քրիստոնէից կողմանցս այսոցիկ զաղ-

թութեամբ նստեալ կայ, և ոչ տեսանէ զմեզ. յղեցին առ նա, եթէ ընդէ՞ր դու միայն ոչ տեսանես զմեզ, եկ վաղվաղակի առ մեզ. եթէ կամաւ ոչ առնես, յակամայ ածցուք զքեզ նախատանօք։ Իսկ նա, քանզի նստէր 'ի գաւառին 'ի Միափորի վանքն՝ որ կոչի Խամշի, և էր ընդ իշխանութեամբ Աւագին, առանց զնա հարցանելոյ ոչ իշխեաց երթալ, զի մի՛ ծանր թուեսցի երթն նորա։ Թաքեաւ 'ի նոցանէ, և ասաց պաշտօնէիցն պատճառել թէ ոչ է 'ի տան, այլ երթեալ է առ Աւագն. և նոքա երկիցս և երիցս յղեցին սպառնալեօք գալ առ նոսա։ Ապա հրաման առեալ յԱւագէն, չոգաւ առ նոսա 'ի դաշտն Մուղան ընծայիւք ըստ կարին, բայց ոչ հանդիպեցաւ անդ Ռաբանն։ զի գնացեալ էր նա 'ի Թաւրէժ. այլ գնացեալ 'ի մեծ դուռն, յանդիման լինի Ելթինա Խաթունի. և նորա սիրով ընկալեալ զնա, մեծաւ մեծարանօք պատուեաց, 'ի վերոյ նստուցեալ ամենայն մեծամեծացն, որք հաւաքեալ էին առ նա յաղագս հարսանեաց որդւոյ նորա Բաւրա Նուինի. քանզի առեալ էր նորա զդուստր ուրումն մեծի, Ղութան Նուին կոչեցելոյ, կին որդւոյ իւրոյ. և զդուստր իւր տուեալ էր միւս աւագագունի, Ուսուռ Նուին կոչեցելոյ. և տօն մեծ էին առ նոսա աւուրքն այնոքիկ ուրախութեամբ հարսանեացն։ Վասն որոյ ասէ ցկաթուղիկոսն. «'ի շնորհաւոր աւուր եկիր». և նա իմաս-

տաբար պատասխանեաց. «Թէ և ես իսկ ընտրեցի զաւուրս զայսոսիկ ուրախութեան ձեր, և ապա եկի»։ Իսկ նա յանձնեաց զնա և զպաշտօնեայս իւր յեղբարս իւր 'ի Սադեղ Աղայն և 'ի Գորգոզն, որք էին քրիստոնեայք հաւատով, նորոգ եկեալ յաշխարհէն իւրեանց. մինչ ինքն հոգայցէ զհոգս հարսանեացն զաւուրս ուրախութեան. որք առեալ մեծաւ պատուով պատուէին զնա։ Եւ իբրև սակաւ մի պարապեցաւ 'ի հոգոցն, ետուննմա պարգևս և էլտամղայս, զի մի ոք նեղեսցէ զնոսա. ետուննմա Մողալ Թաթար առաջնորդ, որ տարեալ շրջեցոյց զնա յաշխարհն Աղուանից 'ի վիճակ իւր. զի յոլով ժամանակք էին, որ ոչ նա, և ոչ որք յառաջ քան զնա, ոչ իշխէին շրջել ընդ վիճակեալս իւրեանց յաղագս արիւնարբու և կատաղի ազգին Տաճկաց։ Իսկ նորա շրջեալ ընդ վիճակեալսն, դարձաւ անդրէն խաղաղութեամբ 'ի տեղի իւր 'ի վանս Խամշի։

Վասն ասպատակելոյ նորա ընդ կողմանս Վասպուրականի 'ի վերայ բազում գաւառաց

Դարձեալ 'ի մտանել ամին երկրորդի փախուցանելոյ զՂիաթադինն Սուլտան, խաղացին գնացին ընդ կողմանս Բզնունեաց 'ի քաղաքն Խլաթ, և առեալ զնա՝ տան 'ի ձեռս Թամթեայ քուեր Աւագին, որ էր յառաջ տէր լեալ քաղա-

քին, մինչ կին էր նա Աշրափ Մելիքին, և գերեցաւ 'ի Խորազմեցի Սուլտանէն Ջալալադինէն. և 'ի նոցունց դարձեալ առաւ գերի և առաքեցաւ առ Ղանն. և եկաց անդ յոլով ամս։ Եւ իբրև առաքեաց Թագուհին Վրաց Ռուզուդան զիշխանն Համադոլայ դեսպան առ Ղանն, և 'ի դարձին իւրում Համադոլայն խնդրեաց 'ի Ղանէն զԹամթի, և եբեր ընդ իւր հրովարտակօք ի Ղանէն. զի զոր ինչ լեալ իցէ նորա, մինչ կին էր Մելիք Աշրափին, տայցեն 'ի նա. և նոքա տարեալ զհրամանս արքային իւրեանց, տան 'ի ձեռս նորա զԽլաթ և զգաւառսն՝ որ շուրջ զնովաւ. և ինքեանք ասպատակ սփռեալ ընդ կողմանս կողմանս 'ի Միջագետս Ասորոց, յԱմիթ և յՈւռհայ և 'ի Մծբին և 'ի Շամբին երկիրն, և յայլ բազում գաւառս, դարձան յունայն. զի թէպէտ ոչ ոք կալ ընդ նմա պատերազմաւ, սակայն վասն տօթոյն ամարայնւոյ բազումք 'ի նոցանէ խորշակահար լեալ մեռան՝ մարդ և երիվար. և եկեալ 'ի տեղի իջաւանի իւրեանց, զազարեցին զաւուրս ձմերայնոյն. և տան հրաման վասն շինութեան քաղաքին Կարնոյ, Թէոդուպօլեայ։ Եւ ժողովեցան ցրուեալքն և զօղեալքն և զերծեալքն 'ի գերութենէ, կոչեցին զեպիսկոպոս քաղաքին զտէր Սարգիս, զոր եբեր իշխանն Շահնշահ՝ որդին Զաքարէի, և չոգաւ. և սկսան վերստին շինել զաւերեալ և զկործանեալ քաղաքն։

Վասն կանոնական հրամանաց կաթուղիկոսին Հայոց Կոստանդնի

Իսկ առաջինի կաթուղիկոսն Հայոց Կոստանդին իբրև ետես զաւեր աշխարհիս Հայոց և զպատապանսն, զոր կրէին 'ի հարկահանացն և 'ի զօրաց Թաթարին, և մտախոհ եղեալ իմացաւ՝ եթէ մեղքն են այսմ ամենայնի պատճառ, զի ամենայն մարդ խնամով 'ի չարիս խոկայր գործել զհաճոյս կամաց իւրոց։ Զի կարգ ամուսնութեան սուրբ օրինացն բարձաւ, և հեթանոսօրէն արիւն ընդ արիւն խառնէին, զազգականսն առնելով. և զոր կամէին թողուին, և զոր կամէին առնուին. և պարկեշտութեան պահոց փոյթ ինչ ոչ առնէին. ընդ հեթանոսս խառնակէին անխտիր. նա և որ մեծն է քան զամենայն չարիս, զի եպիսկոպոսք արծաթով առնէին ձեռնադրութիւն, զպարգևսն Աստուծոյ անարժանից ծախելով. և զմանկունսն և զագէտսն՝ որ ոչ մարթէին ուղղակի խօսել առաջի մարդկան, միջնորդ ընդ Աստուած և ընդ մարդիկ կացուցանէին. և անարժան քահանայք և պոռնկեալք և յայտնի բոզս նստուցեալ, առնէին քահանայագործութիւն և այլ բազում չարիս, զոր գործէին 'ի մեծամեծաց մինչև ցփոքունս. բայց այսմ թէ քահանայքն և ժողովուրդքն 'ի միասին յիմարեցան, կշտամբիչ ոչ ոք։ Վասն այսր պատճառանաց փութացաւ գրել թուղթս

շրջաբերականս և կանոնս համաշխարհականս։ Առաքեաց ընդ թղթոյն և զիմաստուն և զհանճարեղ վարդապետն զՎարդան, որ աղօթականութեան աղագաւ երթեալ էր յԵրուսաղէմ երկրպագել սուրբ տեղեացն. և եկեալ յաշխարհն Կիւլիկեցւոց առ քրիստոսապսակ արքայն Հեթում, և առ նորին եղբարս, չոգաւ և առ կաթուղիկոսն, զոր տեսեալ ուրախացաւ յոյժ, և առ իւր պահեալ յոլով ժամանակս, սիրով կապեալ ընդ նմա, և զոր ոչ կամէր երբէք մեկնել 'ի նմանէ։ Վասն այսր պիտոյից արձակեաց զնա, և յիւրոց սպասաւորացն ընդ նմա, գրեալ յամենայն քաղաքս և յաւանս և 'ի վանորայս երևելի և յիշխանս փառաւորս, զի մի անփոյթ առնիցեն զսահմանացն եղելոց, որ վասն հոգւոյ նոցա փրկութեան. և զի ծերացեալ էր նա, զվարդապետն փոխանակ ընդ իւր ընդունեցին. և գրեալքն 'ի նմանէ էին այսոքիկ։

Թուղթ տեառն Կոստանդնեայ շրջաբերական

Ազդմամբ խնամոց ամենակալ Հոգւոյն Աստուծոյ այս գիր ձեռին իմոյ Կոստանդեայ ծառայի Քրիստոսի և շնորհօք նորին կաթուղիկոսի ամենայն Հայոց, զոր գրեցի յուսով հոգւոյ իմոյ առ Հայաստանեայսդ ընդհանուր լրման կողմանցդ արևելից։ Նախ առ սրբազան եպիսկոպոսունսդ,

և ապա առ երկնագումար վանորայսդ, և առ մենաստանսդ ճգնաւորացն քրիստոսազգեցիցդ՝ առ Բանին սպասաւորսդ, և զգուշակենցաղ առաջնորդսդ, և միայար եղբայրութիւնսդ այլ և քրիստոսասէր իշխանսդ, և ազնուական ազատսդ, և որ ընդ ձեռամբ ձեր են պատուական քահանայսդ, և քրիստոսազարդ ժողովրդականսդ, արս և կանայս, ծերս և տղայս, և առ ամենեսեան համարակ հօտդ Աստուծոյ, որ էք ընդ իշխանութեամբ գաւազանի սրբոց առաքելոցն Թադէոսի և Բարդողիմէոսի, և մեծափառ նահատակին Լուսաւորչին մերոյ Գրիգորի, զորս ետ ինձ ողորմութիւն Աստուծոյ յորդեգրութիւն հոգևոր և պարգևական զաւակս, զորս և ողջունեմ երկնաւոր պարգևօք, եռափափաք կարօտիւ և ծնողական սիրով 'ի հովանիս խնամոց ամրապահ սրբոյ Երրորդութեանն, և զօրութեամբ աստուածընկալ սրբութեանցս և շնորհաց հայրապետական աթոռոյս, այլ ընդ իս առաւել զամենայն ուրբս 'ի բարեխօսութիւն աղօթեմ առ Աստուած արտաքոյ լինել ձեզ ամենայն անախորժելի պատահարաց կրկին տեսակօք։ Գիտութիւն լիցի ձեզ, զի պարտական զթովք հոգամբք զձեզ զտիւ և զգիշեր, և հաղորդիմք կրից ձերոց խնդակիանացս ըստ հայրենի օրինաց և հրամանաց սրբոց պատուիրանաց, որ և ըստ յաճախելոյ յանցանաց մերոց 'ի վաղ ժամանակաց, յաճախեաց արտմա-

կանն մասն 'ի հարուածս գաւազանի ցասմանն Աստուծոյ, և արբոյց մեզ Տէր մրուր ուշաբարձ. և արտասուս չափով 'ի վիշտն, զոր կրեաց աշխարհս այս կատարումն, կողոպուտ եկեղեցեաց հոգևոր գանձուց, մարմնական տանց և գուէց, մանաւանդ 'ի գերութիւն գառանցն Քրիստոսի, մերոց ազգաց և անդամոց, յորոց վերայ կարօտացաք գետաբուղխ արտասուաց և խուարատան սենեկաց, թափել զզառն կսկիծ վիրին մեր 'ի խորոջ ժողովեալ։ Եւ քանզի տեսանէր պատուհասն, որոյ բազում են գթութիւնք նորա, ոչ ըստ մեղաց մերոց արար մեզ Տէր, և ոչ ըստ"., այլ պահեաց զմեզ գթութիւն նորա՝ զմնացորդ աշխարհ՞ յիշատակի և սերմն զաւակի ածման Հայկական զարմից, և ձիռ օրհնութեան ողկուզաց հայրատունկ որթոյն՝ քրիստոսաբեր ուռոցն. որոց համբաւ ածման և զարգացման ողեկաց մեր մնացելոց, և կարկատման և վերստին շինուածոյ աւերեալ տեղեացդ առ սակաւ սակաւ թափէ զտրտմութիւն մեր, և փարատէ զմութ ոգւոյն ձեր 'ի դիմաց մերոց. և կազդուրեալ մխիթարիմք, և կանգնեալ զոհանամք զԱստուծոյ, հարկանողի և բժըշկողի ձեռին նորա տալով օրհնութիւն յաւիտեանս։

Բայց և երկիւղ կասկածանաց առաջիկայ ժամանակին ոչ թողու զիս. քանզի նոյն նիւթ բարկութեանն Աստուծոյ մեղքն մեր 'ի մեզ հաստատեալ է յեկամուտ չարեաց որոմանցն ցանո-

գի, գտանելով առ մեզ, յեկեղեցի, և յիշխանս, և յիշխեցեալսն. և գտանիմք արտաքոյ կանոնաց՝ սահմանաց հարցն մեր առաքելոց և հայրապետաց, և վասն այս հարկի մեծագունի ցանկացեալս խնդրել ճանապարհ, և անձամբ գալ, և զգուշութիւն առնել հօտիդ իմոյ, Քրիստոսի Աստուծոյ յիս վստահացեալ ժողովրդեանդ աղաչանօք և բանադրութեամբ և սպառնալեօք և ամենայն հնարիւք հանել 'ի ձէնջ զտեսակ առելի դիմաց չարին, որ են մեղք. երկնեալ զձեզ վերստին ցաւօք, մինչև նկարեսցի Քրիստոս 'ի ձեզ։ Ունէի և այլ պատճառս հարկաւոր գալստեան իմոյ, զի այր ծեր եմ ես, և հասեալ 'ի դուռն գերեզմանի, և կարօտիմ 'ի կատարածի կենաց իմոց տեսանել զորդեակսդ իմ 'ի Տէր, տալ ձեզ զյետին օրհնութիւն, և պահանջել 'ի ձէնջ աղօթս և պատարագս թոշակ ճանապարհի իմոյ առ Քրիստոս, և լինել ձեզ ինձ յիշատակ բարի, անուանի վարուք և անսխալ կրօնիւք առաջի Աստուծոյ. և քանզի ժամանակս այս կասկածոտ և սխալական, ոյամ ինչ ոչ ներեաց անձամբ գալ և կատարել զբաղձանս իմ։ Ապա այլով հնարիւք հաստատեաց Աստուած զսիրտ իմ զարհուրիլ, և առաքեցի զարդիւնական վարդապետդ զՎարդան փոխանակ անձին իմոյ, զոր ետ ինձ նախախնամութիւնն Աստուծոյ, ձգելով առ իս 'ի կողմանց ձերոց 'ի հինգ ամաց հետէ. զոր իբրև տեսի և ճանաչեցի ըստ կարի,

կապեցի զդա միջնորդութեամբն Աստուծոյ ընդ անձին իմոյ կենօք և մահու, մեծաւ հարկիւ և սիրով բևեռեալ ընդ իս յաւիտեան։ Իսկ վասն մեծ և հարկաւոր կարեաց երկոցունց՝ զոր գրեցի վերագոյնն, առաքեցի զդա առ ձեզ յուսով Աստուծոյ լնուլ զտեղի իմ ոչ 'ի դորա կամաց և խնդրոյ, այլ յիմմէ սրտէ և 'ի կամաց յօժարեցուցեալ և 'ի հրամանէ հարկեալ. և որպէս անգամ 'ի մարմնոյ կենդանւոյն հատեալ ցաւօք, որ ունի զիմ սիրտ և զբան յամենայն իրս 'ի պատեհ պատուիրանացն Աստուծոյ, և գայ՝ բերէ առ ձեզ սահման չափաւոր և դիւրագործ, քաղեալ 'ի կանոնաց և 'ի հրամանաց հարցն սրբոց 'ի պէտս եկեղեցականաց և աշխարհականաց, զոր աղաչեմ բարեխօսութեամբ սրբոց, և փոխանակ ասեմ զանձն իմ, զի ընդունիցիք զդա սիրով, զհրամայեալսն գրոց սրբոց, և կատարեցէք 'ի փրկութիւն ձեզ և յանդատապարտութիւն ատենին Աստուծոյ։ Իսկ եթէ ստուգանիցէ ոք և ոչ ընկալցի, և կատարեսցէ մեղս, է աններելի. և արիւն իւր և կործանումն աշխարհի պահանջեսցի 'ի նմանէ առաջի ատենին ահաւորին և մեծի։

Բայց մեծ յուսով եմ յԱստուած չընդդիմանալ ումեք իւրում կենաց և փրկութեան, և 'ի հաւանելոյդ պահանջեմ աղաչանօք փոխել իւրաքանչիւր ումեք զթուղթդ կանոնական, և պահել

զգուշութեամբ յաւիտեան, և ամենայն ումեք գիտելի առնել. և զիմ առաքեալ թուղթդ ձեռնագրել ամենայն եպիսկոպոսացդ և առ իս առաքել ձեռօք իմոց վարդապետիդ։ Այլ և ամենայն պաշտելի և երկրպագելի սրբութիւնդ իմովս երեսօք ընկալցին զերկրպագութիւն և աղօթս զիմոյ Վարդան վարդապետիդ իմ, և ձերովդ։ Նոյնպէս ընկալարուք և դուք՝ որպէս յիմէ սրտէ և 'ի հաւատոյ, բերանով զորս գնայցուածս աղօթից և պատարագաց, զոր մաղթեմ յուսալով 'ի մեծէ և 'ի փոքուէ 'ի քաւութիւն պարտեաց յանցանաց իմոց. քանզի որպէս հարք պարտին որդւոց զութ և օրհնութիւն, նոյնպէս և որդիք օրէնս ունին զպարտս հօրն վճարել. և ես յի հաւատով, տարածմամբ ձեռաց իմոց խնդրեմ յԱստուծոյ միջնորդութեամբ կենսակիր սրբոցն և աղօթիւք երանուհւոյ Աստուածածնին և ամենայն սրբոց, զի ամենայն աստուածաշարժ պարգևք և օրհնութիւնք և շնորհք, զոր ետ հայրն երկնաւոր Որդւով և սուրբ Հոգւովն աշխարհի և եկեղեցւոյ, և եկն ի հարց յորդիս, և այն ամենայն եկեսցէ և հանգիցէ յորդիս ձեր,, և յեկեղեցիս ձեր և յաշխարհդ և յիշխանութիւնդ, և 'ի հոգիս ննջեցելոց ձերոց 'ի հանգիստ նոցա, և կենդանեաց 'ի փրկութիւն հոգւոյ և մարմնոյ, յաճումն և 'ի բազմանալ նորոյս Իսրայէլի քրիստոսական հօտիդ առաւել քան զբազմութիւն և զպայծառութիւն աստեղաց

օրհնեսցին երկիր շնորհօք ամենայն գոյք ձեր կայուն և գնայուն, և պարարտասցին և պտղաբերեսցին անդաստանք ձեր, և այգեստանք ձեր և ամենայն պտղաբերք երկնաւոր ցօղովն և շնորհօք Աստուծոյ լցեալք, յորոյ վերայ ասասցեն ամենայն մերձաւորք Աստուծոյ երկնաւորք և երկրաւորք՝ եղիցի. ողջ լերուք, և անյարմար գրոյս անմեղադիր. զի փափաքեցի իմով ձեռամբ գրել առ ձեզ։ Գրեաց և միւս թուղթ կանոնական եկեղեցականաց, և առաքեաց ընդ շրջաբերականին 'ի ձեռս նոցունց՝ այսպէս։

Սահմանք կանոնականք Տեառն Կոստանդնեայ Հայոց կաթողիկոսի

Կոստանդին ծառայ Քրիստոսի, և շնորհօք նորին կաթուղիկոս ամենայն Հայոց, օրհնութեամբ և ողջունիւ և սիրով Աստուծոյ ծանուցանեմ լրման եկեղեցւոյդ Հայաստանեայց, վիճակելոց ընդ իշխանութեամբ գաւազանի սրբոց առաքելոցն Թադէոսի և Բարդուղիմէոսի, և մեծավաստակ նահատակին Գրիգորի, և մերում կրսերութեանս։ Հրաման է այս առաքելադիր, որ 'ի տարւոջն երիցս անգամ առաջնորդք եկեղեցւոյ ժողովով տեսանեն զկարգս եկեղեցւոյ, թէ որպէս ունիցին զսահմանս եկեղեցւոյ յաւիտենականս՝ զոր Հոգին սուրբ հաստատեաց, զպակա-

սեալն լնուլ, և զեկամուտ որոմն խլել. և այս պատուիրան 'ի բազում ժամանակաց խափանեալ եղև յաղագս ազգիս ցիր և ցան լինելոյն, և հեռաւորութեան, և մուխատրայ ճանապարհաց: Այլ զի իրաւունք արդար դատաստանին Աստուծոյ յիշատակ արար անկարգութեան և անիրաւութեան աշխարհի, յետ բազում երկայնմտութեան և ներողութեան արբոյց զբաժակ բարկութեան իւրոյ յոլովից ազգաց և ժողովրդոց, ընդ որս և մեք գտաք դատապարտք, և տուաք տոկոսիս ազգակցօքն մերովք և հոգևոր ուստերօք և դասերովք: Քանզի աշխարհս, որ լի էր մեղօք և անիրաւութեամբ և արտասուօք և դիակոյտ ոսկերօք կոտորուածոց՝ գազանակուր եղելոց, և մնացեալքն 'ի սրոյ անընդել ճանապարհաւ վաճառակուր եղեն յաղագս հեռաւորս, և փախուցքն մեր և ազատք որդիք Սիոնի, և գառինքն Քրիստոսի, զուգակշիռքն ոսկւոյ և արծաթոյ և ականց պատուականաց, իբրև զաղբ անպիտան և ընկեցիկք և արհամարհք և անծանօթք եղեն: Այլ և երկրպագելի նշանք և սպասք անարգացն և անարժանից ձեռօք յանարժան պէտս վարելով՝ հանդերձ տապալմամբք քաղաքաց և ամայութեամբ գաւառաց, զորս ոչ ոք կարէ զբովանդակն պատմել, և արժանապէս ողբալ: Բայց քանզի ողորմութիւնն Աստուծոյ եթող մեզ տակաւին սերմն կենաց, և զաւակ յուսոյ յաշխար-

հիդ Արևելից 'ի յիշատակ առ մեզ երախտեացն Աստուծոյ, որ վասն աղօթից նախնեացն մերոց սրբոց 'ի մխիթարութիւն մեզ վասն բազում գթութեան իւրոյ, և էք դուք ժողովրդապետք այսօր և ժողովուրդք, վանորայք և քաղաքք և գաւառք, յետ բազմադիմի վշտացն՝ զոր կրեցէք, և գայ 'ի ձեզ օրհնութիւն և յոյս աճման և վերացման 'ի փառսն առաջինսն. և էք Քրիստոսի և մեր սեպհական ժառանգութիւն և պարծանաց զաւակք, և յանձնեալք մեզ 'ի պէտս հոգևորս: Վասն որոյ 'ի վերայ բազում արտասուացն՝ զոր հեղաք վասն ձեր 'ի բեկման աւուրն և՛ յաւերման և՛ կոտորման մեղաբեր որոյն, և այսօր մխիթարիմք ձեօք մնացելովք, և գոհանամք զԱստուծոյ, այլ և միշտ զարհուրիմք և դողամք յերկիւղ կասկածանաց նոյն անցիցն զոր կրեցաք. քանզի և նոյն պատճառք բարկութեան Աստուծոյ գտանին այսօր առ բազումս, որ է կեանք, և վարք արտաքոյ կամացն Աստուծոյ, և կանոնաց հրամանաց: Վասն որոյ յառաջ քան զերիս ամս գնացաք մեր դրան սպասաւորացս լրմամբ հանդերձ ամենայն մերձակայ գաւառաց եպիսկոպոսօք յաշխարհն Կիլիկեցւոց առ քրիստոսապսակ թագաւորն մեր Հեթում, և մերով հրամանաւ և նորին ձեռնտուութեամբ ժողովեցաք զեպիսկոպոսունս և զվարդապետս և զմիանձունս և վանաց առաջնորդս, և զիշխանս և

գիշխեցողս, մրս երևելիս, և արարաք հանդէս
մեծ, քննեցաք զպատուէր և զհրամանն Աստու-
ծոյ, և Աստուծոյ մերձակայից առաքելոց և հայ-
րապետաց, և գտաք զմեզ բազում մասամբք մո-
լորեալք և դատապարտ և անպատասխանիք. և
որքան կարացաք՝ ուղղեցաք զմեզ և ողբացաք։
Զկնի յոլով քննութեանն՝ ամենեցուն կամակցու-
թեամբ և ձեռնագրով, գրեցաք սահման և կա-
նոն չափաւոր և դիւրընթաց և կարելի գործե-
լոյ 'ի զօրութենէ գրոց հաւաքեալ. և ուխտե-
ցաք առաջի Աստուծոյ և՛ հրեշտակաց և՛ մարդ-
կան յանձն առնուլ ամենայն կարողութեամբ
զեդեալ սահմանս. և եդաք զյոյս մեր յօգնու-
թիւնն Աստուծոյ, և մնացաք ժամանակի, թէ
հնար գոյ գալ անձամբ, և այդր լինել զփա-
փաք կարօտութեան իմոյ առ ձեզ, և պահանջել
'ի ձէնջ ձեռնագիր սահմանիդ եդելոյ, որպէս և
մեք։ Եւ զի չեղև հնար, առաքեցաք զնոյն սահ-
մանեալ կանոնս չափաւոր քարտիսիւ, և պա-
հանջեմ 'ի ձէնջ վկայութեամբն Աստուծոյ, և
շնորհիւ և զօրութեամբ առաքելական աթոռոյս,
և աստուածընկալ սրբութեանցս, և առաջի ա-
ռաքելոցն սրբոց, և սրբոյ Լուսաւորչին մերոյ,
զոր առնիցէք անթերի. և եդեալ սահմանն այս
է. ա. Ամենայն ձեռնադրութիւն յեկեղեցի՝ որ է
պարգևք Հոգւոյն սրբոյ, զոր առյ արժանաւո-
րացն, առանց արծաթոյ լիցի՝ ըստ կանոնաց. զի

այն ախտ Յուդայի և Սիմոնի կախարդի է, որ խո-
տեցան, և ոչ միաբանեցաւ ընդ նոսա շնորհն,
որ 'ի տեղիս տեղիս վասն աղքատութեան լու-
ծեալ է և ազխատութեան։ Այսուհետև արժանա-
ւորքն միայն և գիտունքն առցեն զաստիճան եպիս-
կոպոսութեան մեծաւ քննութեամբ և՛ վկայու-
թեամբ և՛ թեմին կամակցութեամբ առանց կաշա-
ռաց, հասակաւ մի պակաս քան զերեսուն ամի։ բ.
Իսկ առաջին գործ եպիսկոպոսին, որ զուսուցիչսն
և զուսումնականսն ուսման եկեղեցւոյ ինքն սահ-
մանեսցէ մեծաւ զգուշութեամբ և հոգաբարձու-
թեամբ. անզայթագղ և գիտունք ուսուցիչք ե-
ղիցին ազայոց։ գ. Ապա եկեալսն 'ի չափ հասա-
կաւ և՛ ուսմամբ և՛ սրբութեամբ ածցէ յաստի-
ճան վկայութեամբ անձանց իւրեանց և սնու-
ցողացն առանց արծաթոյ, տիօք մի պակաս
քան զքսան եօթն ամի երէցն և սարկաւագն։
դ. Իսկ քահանայքն զպսակն և զկնունքն նո-
թութեամբ արասցեն յեկեղեցիս և հաղորդես-
ցեն. բայց թէ մահու երկիւղ իցէ երախային,
յորժամ և իցէ՝ արասցէ առանց դրամի։ ե. Ա-
մենայն քահանայագործութիւն՝ կնունք և պսակ
և թաղումն երկիւղիւ եղիցի՝ առանց զրուցի և
ծառու, մեծաւ յուսով և աղօթիւք մերձակայից։
զ. Աւազանն հաստատուն լիցի և անշարժ, և
վարագուրաւ ծածկած. զի մեծ է խորհուրդն։ է.
Զպսակն ընտրութեամբ արասցեն՝ վեց ծննդովք

հեռացեալ յազգակցութենէ արեան. փեսայն մի պակաս քան զչորեքտասան ամն, և հարսն քան զերկոտասան։ Ը. Օտար յաշխարհէ եպիսկոպոս կամ վարդապետն կամ երէց, կամ դերոյ տէր առանց թեմին եպիսկոպոսին մի՛ շըրջեսցին, կամ շինեսցեն. այլ նորա հրամանաւ ըստ պատշաճի։ Թ. Գրոց դասատայքն բազմաց վկայութեամբ լիցի, որ գիտուն լինի, և ամենայն գրոց վարժ և տեղեակ, և փորձ ամենայնիւ. Նմանապէս և գրոց աշակերտ ընտրութեամբ նորին և առաւել փորձիւ և վկայութեամբ կատարելոց։ Ժ. Եւ հրամայէ եպիսկոպոսն զսուրբ գիրս եկեղեցւոյ գրել արուեստաւորաց և ուղղափառաց և գիտնոց։ ԺԱ. Երկիցս անգամ շրջեսցի եպիսկոպոսն 'ի տարւոջն յիւր թեմն, և հանդէս արասցէ իւր հօտին, և սուրբ գիտուն քորեպիսկոպոս դիցէ, որ զեկեղեցւոյ դատաստանն ըստ կանոնաց առնել մարթասցէ, երկիւղած և անագահ։ ԺԲ. Ծեր և գիտուն խոստովանահայրս կարգեսցեն, որ յամենայն կիրակէի առանց դրամի 'ի խոստովանութիւն կոչեսցէ շաբաթուն յանցանաց. և քահանայքն խոստովանահարցն հրամանաւ զիւրեանց ժողովուրդըն զարժանաւորսն հաղորդեսցեն առանց դրամի։ ԺԳ. Զհարսն առանց բուրվառի և մոմեղէնի մի՛ տարցին առ հիւանդն, այլ մեծաւ երկիւղիւ. իսկ ժողովուրդքն չեն յիւրեանց հրա-

մանքն, ում կամին ծուխ լինել. այլ որպէս եպիսկոպոսն հրամայեսցէ։ ԺԴ. Առաւել ջան տարցեն եպիսկոպոսք և քորեպիսկոպոսք զպոռնիկըն և զշնացողն, զհմայս և զամենայն յանցաւորսն զեհեննին երկիւղիւ 'ի դարձ ածել։ Իսկ զանդարձն մարմնաւոր պատուհասիւ և հոգևորաւ խրատել և տուգանել. մանաւանդ զայնպիսիսն, որ այր և կնոջ մէջ մտցեն, կամ բոզ ունիցին կին, կամ զկին թողուն զօրինաւոր և առ բոզս երթան, կամ ատելութեան պատճառաւ թողուն զկանայսն առանց բանի պոռնկութեան. զայսպիսիս անողորմ տուգանօք խրատեսցեն. և թէ պատուաւոր մարդ է, և ընդդէմ առէ եկեղեցւոյ օրինաց, թագաւորն խրատեսցէ յառնի զմեղքն. և իշխանք մեղադրանօք, եթէ ոչ առնեն զայս, և նզովք. և թէ կին լքի և մարդ խաբէ կանամբի կամ ազապ, խրատ առցէ յերեմն։ ԺԵ. Ամենայն պահք ըստ կանոնաց առանց ձկան և ձիթոյ և գինւոյ, բայց 'ի հարկէ հիւանդութեան, առաւել աղուհացիցն, և ուրբաթին և չորեքշաբթին, որ Քրիստոսի չարչարանաց աւուրքն են, որ զայս լուծանէ, տուգանեսցեն և յաղքատս տայցեն, և պահօք վճարեսցին յԱստուծոյ։ Նախ քան զայս և յառաջ քան զամէնն զայս եմք հոգացեալ առաջի արքային Հեթմոյ և հօր իւրոյ Կոստանդեայ և ամենայն իշխանացն, և բանադրանօք բանադրեալ յամենայն վերայ, որոյ օգնական լինին

եկեղեցւոյ, և յամենայն տեղիս 'ի մեծ և 'ի
փոքր յիշոց, աւագ զնեն 'ի դարպաս, 'ի քաղաք,
'ի գիւղս և յագարակս, և զանօրէն յիշոցա-
սացսն, զբարկութիւն Աստուծոյ շարժողսն, և
զաններելի անօրէնսն, որ անարգեն զհաւատն,
զստեղծող, զկնունք, զհրեշտակ, զքահանայ, զխո-
րան, զերես, զգերեզման, և զայլ այսպիսիս զնոր
բուսեալ չարիսդ, զայնպիսեացն զլեզուսն հատ-
ցեն, և կամ ծակեսցեն, և լար 'ի ներս ածցեն,
և նախատանօք 'ի շուրջ ածցեն օր մի, և ըստ
գոյին տուգանս առցեն, և յաղքատս տայցեն։ ժզ.
Թէ քահանայ գտանի 'ի վերոգրեալ մեղսդ, կրկին
պատիժ ընկալցի և անջեսցի կարգաւն հան-
դերձ։ ժէ. Քահանայ որ զնա յեկեղեցւոյ զոր-
ծոյ, այլ գործս առնէ՝ նօտարութիւն կամ որ-
սորդութիւն, զժողովուրդսն 'ի բաց առցեն 'ի
նմանէ. նմանապէս զաննուսումն երիցանց, մինչ
լաւ ուսցին, և զանարժանիցն եւս առցեն։ ժը. Քա-
հանայն 'ի տարւոջն յեկեղեցին ժողովեսցէ զարսն
առանձինն, և զկանայսն առանձինն, և որիշ զկու-
սան աղջկունսն, և որիշ զտղայսն, զմանրերսն
և ըստ իւրաքանչիւր պատշաճի խրատեսցէ աղա-
չանօք և սաստիւ. և իմասցի իւրաքանչիւրոցն
զվարքն, և դիտեսցէ հանապազ. և թէ ինքն չէ
բաւական, 'ի ձեռն այլ կատարելոյ արասցէ, որ-
պէս ասէ սուրբն Աթանաս յիւր կանոնքն։ ժթ.
Ժողովրդականքն յօժարութեամբ և աղաչանօք

տացեն զհասս քահանայիցն յամենայն արմատոց
պտուղս, և զկարգեալ բաժին մատաղին, և պսա-
կին ընծայիւք, և թաղմանն հանդերձ, և ժամու
դրամ՝ ոչ զին պատարագին, այլ երիցուն հան-
դերձի և կերակուրի. որ աղօթից և պատարագի
պարապի յեկեղեցին։ ի. Երիցունք ըստ ժողո-
վրդեանն ծառայեսցեն եպիսկոպոսին, սահմա-
նեալ հասիւն, և ընծայիւք ըստ պատշաճին։ իա.
Եպիսկոպոսունք ծառայեսցեն զհայրապետական
աթոռն կարգեալ հասիւն և ընծայիւք արժանա-
ւորիւ ըստ կանոնաց. զի սուրբ Լուսաւորիչն
գրեալ է թէ քահանայքն զժողովուրդն տասանոր-
դեսցեն, և եպիսկոպոսք զքահանայս, և հայրա-
պետք զեպիսկոպոսունս. արդ եթէ զայն չառ-
նէք, ապա զչափաւորսն և զպակասն՝ զոր գրե-
ցաք, խնդութեամբ տուք, իբրև զօրհնութիւն և
մի իբրև զագահութիւն. այլ աթոռքն հաստատ
և անկարելիք մնայ, և եկեղեցիքն պայծառ, և Աս-
տուծոյ օրհնութիւնն խառնի յարդիւնս արդա-
րութեան ձերոյ. զի զայն Աստուծոյ կուտայք,
և ոչ մարդոյ։ իբ. Զայն երկու աղօթքն, յորոյ
վերայ սուրբ Աստուած ասեմք՝ զփառք 'ի Հայր
և յՈրդի և 'ի սուրբ Հոգին, մի աւարտէք.
զի մի յԵրրորդութեան վերայ թուեսցի խաչն.
զկատարած յուր ձայնիցն ասել պիտի, զոր
միշտ 'ի բարձունս առաքեսցուք ամենազօր
տէրութեանդ՝ Քրիստոս Աստուած. այժմ և՛՛։

Զգօնամաքին վերջքն՝ լիցուք տաճար և բնակարան աստուածային շնորհացդ, և գոհութեամբ փառաւորեսցուք զքեզ Քրիստոս. այժմ՛։ իգ. Ի Փռանգաց գրեալ են առ մեզ, թէ զտեառն եղբօր հրամանն ընդէր ոչ առնէք. զհիւանդն 'ի ժամուն մահու օրհնել, ձիթով օծանել, որ թէ մեռանի՝ օծումն լինի թաղմանն, և թէ ապրի՝ լինի 'ի քաւութիւն մեղացն և պատճառ առողջութեանն. և գիտէք, որ Օձեցին Յոհան՝ որ զատեալ է զմեզ յազգացդ, գրեալ է՝ որ առնէք. և պարտ է առնելն, և արարէք ստուգիւ. միայն զգուշասցի քահանայն, և զձէթն սակաւ օրհնեսցէ, որ աւելի չգայ, և նզովք առցէ յԱստուծոյ և 'ի մէնջ. և լինի պատճառ զայթակղութեան. զայս պատեհ տեսաք, և գրեցաք յետոյ, և հարկաւոր. ողջ լինիք տէրամբ։—Որ զայս չափաւոր բանքս գրէ և պահէ և հասկացնէ և գործովք կատարէ, պահեսցէ նմա Աստուած զգութ և զողորմութիւն իւր. և որ անգոսնեսցէ և արհամարհէ, յանցաւոր լիցի առ մեզ և առ արքայ, և Աստուծոյ ատենին պատասխանի տացէ ամենայնիւ։ Եւ եկեալ վարդապետն Վարդան, և որք ընդ նմա առաքեալքն 'ի կաթուղիկոսէն յՍրբելս, և շրջեալ ընդ գաւառս Հայոց, յեպիսկոպոսս և 'ի վանորայս և յիշխանս, և տուեալ ամենեցուն զհրամանս կանոնականս, և պահանջեալ յամենեցունց ձեռագիր հաւանութեան սահմանին եդելոյ։ Եւ զի

ամենայն ոք խոտորեալ էր 'ի ճշմարտութենէն, ըմբռնեալք ախտիւ ագահութեան և արծաթսիրութեան, ծանր թուեցաւ հրամանն. բայց սակայն ոչ իշխեցին արհամարհել, այլ 'ի վերին երեսս մեծարեցին, և ետուն ձեռագիր երդմամբ և նզովիւք առնել զհրամանն—Եպիսկոպոսն Կարնոյ քաղաքի Սարգիս, և եպիսկոպոսն Կարուց Յակոբ, և եպիսկոպոսքն Բջնոյ՝ Վանականն և Գրիգոր, և եպիսկոպոսն Անբերդոյ Մկրտիչն, և եպիսկոպոսն Հաղբատայ Համազասպ, և այլ եպիսկոպոսունքն, որ 'ի կողմանս կողմանս, և գլխաւոր վանորայքն՝ Սանահինն, և Գետիկ, և Հաւարծինն, և Կեչառուս, և Հաւուց թառ, և Այրի վանք, և Յոհաննու վանք, և Հոռոմոսի վանք, և որ շուրջ զնոքօք։ Նա և կաթուղիկոսն Աղուանից տէր Ներսէս, և եպիսկոպոսն Յոհաննէս, զոր Տուեցին կոչէին, և մեծ հռչակաւոր վարդապետն Վանական, և իշխանաց իշխանն Աւագն, և այլ իշխանքն։ Եւ առեալ զայս գիր հաւանութեան իմաստնոյ վարդապետին Վարդանայ, առաքէ առ կաթուղիկոսն Կոստանդին 'ի Կլայն Հռոմէական, և ինքն եկեալ 'ի կայանոյ 'ի միայնարանն իւր, զոր սուրբ Անդրէ կոչէին, հանդէպ անառիկ բերդին Կայանոյ, և անդ դադարեալ յուսուցանել զբազումս, որք աշակերտէին նմա, վարդապետական բանիւն։ Եւ 'ի գալ ամին երկրորդի, յորժամ ՈՂԳ էր թուականս Հայոց, առաքինի կաթուղիկոսն Կոս-

տանդին առաքէ եկեղեցեացն արեւելից ընծայս՝ մեռաքս առէջս 'ի կերպասուց պէսպէս գունով մեծագինս, նափորտս 'ի սպաս պատարագին սրբոյ 'ի ձեռն Թէոդոսի սպասաւորին իւրոյ 'ի պատուաւոր վանորայս, և շրջաբերական նամակ շիրմի առաքելոյն Թադէոսի տալ նմա զքաղաքս և զվիճակն, շրջակայ գաւառօք և յոլովս 'ի շինութիւն գաւթին, զոր շինէր վարդապետն Յովսէփ, յետ աւերածոյն՝ որ 'ի Թուրքաց, և 'ի հէնից Վրաց. քանզի յոլով ժամանակս անբնակ էր 'ի մարդոյ և ամայի։ Եւ Յովսեփայ երթեալ առ զօրագլուխ մի Թաթարին, որոյ անուն էր Անագուրակ Նուին, որոյ իջաւանքն իւր յաւուրս ամարայնոյ հուպ էր 'ի գերեզմանն սուրբ առաքելոյն Թադէոսի, և նորա հրամանաւ սրբեալ զեկեղեցին և նաւակատիս կատարեալ, շինեաց զվանսն, և ժողովեաց 'ի նա կրօնաւորս բազումս։ Եւ այրն Թաթարն ընդարձակեաց զճանապարհն յամենայն կողմանց անարգել գալ ուխտականացն ընդ մէջ զօրաց նորա, պատուէր հրամանի տուեալ սաստկութեամբ՝ մի զոք զզուել և նեղել, որ կամիցին գալ, և ինքն սիրով խոնարհէր առ նոսա. և բազումք 'ի նոցունց գային և մկրտէին զուստերս և զդստերս իւրեանց. և բազում այսահարք և հիւանդք բժշկէին. և փառաւոր լինէր անուն տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։ Այլ և ամենայն զօրքն Թաթար ոչ էին թշնամի խաչի և եկեղեցւոյ,

այլ և յոյժ պատուէին, և ընծայս մատուցանէին. քանզի նախանձ հակառակութեան առ նոսա ոչ գտանիւր։

Վասն հարկահանացն՝ որք եկին 'ի Ղանէն

Իբրև առ զմեծ թագաւորութիւնն Թաթար զօրուն՝ որ յաշխարհն իւրեանց Ղանն Գիւուկ, խա-կոյն առաքեաց արս հարկապահանջս 'ի զօրս իւր, որ 'ի կողմանս և յաշխարհն՝ զոր հնազանդեցին նոցա, առնուլ տասանորդս յամենայն ստացուածոց զօրուն, և հարկս 'ի գաւառաց և 'ի թագաւորացն՝ որք նուաճեալ էին նոցա, 'ի Պարսից և 'ի Տաճկաց և 'ի Թուրքաց, 'ի Հայոց և 'ի Վրաց և յԱղուանից և յամենայն ազգացն՝ որ ընդ նոքօք, որոց գլխաւորք էին հարկահանացն արք խիստք և յափշտակողք, անուն միոյն Արղուն, որ ամենեցուն իշխէր, և երկրորդին Բուղա, որ չարագոյն ևս էր քան զայն Բուղայն, որ յաւուրս Ջափրի Իսմայէլականին եկ 'ի Հայս և աւերեաց բազում աշխարհս։ Նմանապէս և այս Բուղա եկեալ 'ի զօրսն Թաթար, մատնէր 'ի տուգան աւագանւոյն, և զոր ինչ ախորժ թուէր իւրն՝ առնոյր անխնայ. և ոչ ոք իշխէր ասել ինչ նմա. զի ժողովեալ էր իւր արս սրիկայս 'ի Պարսից և 'ի Տաճկաց, որք անխնայ գործէին զգործ խակութեան, և թըշնամիք էին առաւել քրիստոնէից։ Վասն որոյ

չարացուցին զնա 'ի վերայ բարեպաշտ իշխանին Հասանայ, զոր Ջալալն ասէին, որ ըմբռնեաց զնա 'ի մեծ դրանն առաջի ամենայն աւագանւոյն, և ընդ բազում պատժօք զնա արկեալ, քակեաց զանմատչելի բերդս նորա, զոր Խոյականայ բերդ կոչէին, ըստ Պարսկական բարբառոյն, և զԳեղն և զԾիրանաքարն, և զայլ ամրոցս նորին. և այնպէս յատակեաց զնոսա, մինչև հետք անգամ ոչ երևէին, թէ բնաւ շէն լեալ իցէ. և բազում ոսկի և արծաթ առեալ 'ի նմանէ, հազիւ զերծաւ 'ի նմանէ. և մեծամեծ աւագանին ոչինչ կարաց օգնել նմա. այսպէս ահարկու ամենայն տեսողացն: Կամեցաւ և զիշխանաց իշխանն Աւագն նոյնպէս ըմբռնել 'ի տանջանս և 'ի ձաղանս, և ազդեցուցին նմա մեծամեծ աւագանին, թէ մի՛ երկնչիր, այլ զամենայն զօրս քո ժողովեա՛ և այնպէս երթ 'ի տեսութիւն նմա. և թէ դէպ լիցի ըմբռնել զքեզ, կալջիր դու և զնա. և այնպէս արարեալ՝ չոգաւ առ նա բազում զօրօք: Զոր տեսեալ Բուղայն՝ երկեաւ, և ասէ ցնա. զի՞նչ է այդ բազմութիւն զօրաց. մի՞թէ ապստամբ իցես 'ի Ղանէն, և եկիր սպանանել զմեզ: Եւ ասէ ցնա Աւագն. և դու ընդէ՞ր ժողովեցեր զբազմութիւն արանց չարագործաց Պարսից, և եկիր նենգիւ ըմբռնել զմեզ: Եւ իբրև գիտաց Բուղայն՝ թէ յայտնի է նմա նենգութիւն նորա, խօսեցաւ ընդ նմա 'ի խաղաղութ-

թիւն. բայց հանապազ 'ի մտի իւրում խորհէր նմա 'ի չարութիւն դառնել 'ի դիպող ժամանակի կատարել զկամս չարութեան. և մինչդեռ զայսպիսի չարիս խորհէր, ժամանեցին նմա արդար դատաստանքն Աստուծոյ, եւ վէրս 'ի փողս նորա յանկարծակի և հեղձամղձուկ սատակեցաւ չարն չարեաւ. և այսպէս վերացաւ ամբարիշտն և ոչ ետես զփառսն Աստուծոյ:

Վասն թագաւորին Վրաց երթալոյ առ Ղանն

Թագաւորութիւնն Վրաց յայսմ ժամանակի նուազեալ էր, որ յառաջ քան զակաւ մի ճոխ էր, եմուտ ընդ լծով ծառայութեան Թաթար զօրուն, որ յաւեխս, որոց գլխաւոր Բաչու նոյինն՝ յետ մահու Չարմաղունին: Եւ էր 'ի ժամանակս յայսմիկ թագաւոր Վրաց կին մի՝ Ռուզուդան անուն, որ զօղեալ ամրացաւ յանառիկ վայրս Սուանեթոյ: Եւ գային առ նա դեսպանք յերկուց կողմանց՝ 'ի զօրաց Թաթարին 'ի մեծ զօրավարէն՝ որ 'ի կողմանս հիւսիսոյ, որում անուն էր Բաթու, մօտաւոր ազգական Ղանին, որ ամենից իշխէր, այլ և Ղանն առանց նորա հրամանի ոչ նստէր յաթոռն. և 'ի միւս զօրավարէն՝ որ 'ի կողմանս Հայոց, որ Բաչուն կոչէր, գալ առ նոսա սիրով խաղաղութեամբ, և իշխել տէրութեան իւրոյ՝ նոցուն հրամանաւ: Իսկ նա քանզի կին գեղեցիկ էր, ոչ իշխեաց առ մի

ող 'ի նոցանէ գնալ. զի մի խայտառակեսցի 'ի նոցունց, այլ զորդի իւր մանուկ տիովք թագաւորեցուցեալ, որում անուն էր Դաւիթ, առաքեաց առ Բաթոյն զօրավար։ Իսկ այս գլխաւորքն՝ որ ընդ Բաչու Նուինն էին 'ի կողմանս արևելից, որ բմբռնեալ էին զամենայն աշխարհ իշխանութեան նորա, և իշխանքն նորա առ նոսա կային, իբրև տեսին՝ թէ ոչ եկն առ նոսա թագուհին և զորդին իւր առաքեաց առ Բաթոյն, դժկամակ եղեալ ընդ իրսն, առաքեն առ Ղիաթադին Սուլտանն Հոռոմոց և բերեն անտի զեղբօրորդին Ռուզուդանայ՝ զորդին Շալայ Գիորգեայ Վրաց թագաւորին, զոր նոյն Ռուզուդան առաքեաց զնեա դստերն իւրոյ, որ էր կին Ղիաթադին Սուլտանին, և նա եդ զնա յարգելս, զի մի զաւլեցի զօքանչին իւրոյ վասն թագաւորութեանն։ Եւ սոցա ածեալ զնա անդուստ, տան զիշխանութիւն նորա 'ի ձեռս նորա, և առաքեն զնա առ արքայն իւրեանց Ղանն հաստատել զնա յիշխանութեանն. և ինքեանք դեսպանս առաքեն սաստկով մի զմիոյ կնի առ թագուհին Ռուզուդան գալ առ նոսա կամայ և ակամայ։ Նոյնպէս և Բաթոյն առաքեաց զորդի նորա առ Ղանն, և յինքն կոչէր զՌուզուդան երթալ առ նա։ Եւ նորա նեղեալ յերկոցունց կողմանց, իւրովի դեղ մահացու էառ և վճարեցաւ 'ի կենացս. և գրեաց գիր կտակի առ իշխանն Աւագ, և յանձնեաց 'ի

նա զորդին իւր, եթէ դարձցի 'ի Ղանէն։ Իսկ նոցա գնացեալ առ Ղանն Գիուգ, և նա սիրով ընկալաւ զնոսա։ Եւ սահմանեաց նոցա ըստ կարգի ունել զթագաւորութիւնն. նախ որ աւագն էր 'ի նոցունց Դաւիթ, որդի Շալային Գիորգեայ. և յետ վախճանի նորա, թէ կենդանի իցէ միւս Դաւիթ, որդին Ռուզուդանայ՝ նորին հօրաքեռ որդին։ Եւ զգանձս թագաւորութեան յերկս բաժանեալ, զթագն պատուական և զանգին, և զթագն հրաշալի, զոր ոչ ունէին այլ թագաւորք, զոր առեն Խոսրովու լեալ հօրն Տրդատայ մեծի, Հայոց արքայի, և անդ մնացեալ դաղթականութեամբ վասն ամրութեան տեղւոյն, և 'ի թագաւորսն Վրաց անկեալ, և մնացեալ մինչև ցայսօր. զայն և զայլ պատուականս 'ի գանձուցն առաքել Ղանին, և զայլսն բաժանել 'ի վերայ ինքեանց. զոր եկեալ արարին այնպէս միջնորդութեամբ Աւագին՝ որդւոյն Իւանէի։ Եւ նստէր Դաւիթ որդի Շալային 'ի Տփխիս քաղաքի, և միւս Դաւիթն 'ի Սուանեթ։

Վասն երթալոյ առ Ղանն Սմբատայ զօրավարին
Հայոց եւ որդւոյ Ղիաթատնի Սուլտանին

Արքայն Հայոց Հեթում, որ 'ի Կիլիկիա, առաքեաց զեղբայր իւր Սմբատ զօրավարն առ Ղանն երևելի պատարագօք. և նորա երթեալ խա-

դադուԹեամբ զերկայնուԹիւն ճանապարհին, և և յոյժ մեծարեալ 'ի նմանէ, դարձաւ երևելի փառօք, և հաւատարիմ հրովարտակօք տուեալ նմա զաւառս բազումս և բերդս յոլովս, զոր յառաջ լեալ էր Լևոնի արքայի, և զկնի մահուանն առ 'ի նոցունց Ալադին Սուլտանն Հոռոմոց: Մեռաւ Ղիաթատին Սուլտանն, և մնացին նորա որդիք երկուք մանուկ տիովք. և ընդ հակառակս լեալ նոցա, չոգաւ մինն 'ի նոցանէ առ Ղանն, և առ 'ի նմանէ զիշխանուԹիւն հօր իւրոյ, և դարձաւ ընդ Սմբատայ զօրավարին Հայոց. և եկին առ Բաչու Նուինն և առ այլ աւագանին. և նոցա հաստատեալ զհրամանս արքային իւրեանց, տան զօրս զկնի նոցա տանել զնոսա յերկիր իշխանուԹեան իւրեանց: Եւ իբրև հասին 'ի քաղաքն, որ կոչի Եզնկայ, լուան եԹէ եղբայրն ՂիաԹատին Սուլտանին փեսայացուցեալ Լեշքարեայ Հոռոմոց Սուլտանին, որ յԵփեսոս, և նորին օգնականուԹեամբն Սուլտանացաւ 'ի Կոնն. և եղբայր նորին տղայն Ցալալիայ, 'ի բուն աԹոռն, երկեաւ երԹալ անդր, այլ անդէն դադարեաց յԵզնկայն, տեսանել Թէ զի՞նչ լինիցի վախճան գործոյն. Եւ զօրավարն Սմբատ եմուտ յերկիր իւր առ եղբայր իւր արքայ ՀեԹում:

Վասն կոտորածին՝ զոր արար զօրն ԹաԹար յաշխարհին Վրաց

Մինչդեռ սակաւ մի կազդուրեալ երկիրս 'ի հէնից և յասպատակելոյ, բորբոքեալ աշխարհակալ հրոյս և մարդիկ 'ի սոսա ապաստանեալ էին տուեալ քան յԱստուած, իշխանքն զրկէին և կողոպտէին զաղքատս, և 'ի զրկանաց անտի գնէին հանդերձս մեծագինս և ագանէին. ուտէին և ըմպէին և մեծամեծս փքանային, որպէս է սովորուԹիւն ամբարտաւանուԹեան Վրաց, Թոյլ ետ Աստուած խոնարհիլ 'ի բարձրուԹենէն և ճանաչել զչափ տկարուԹեանց, որք առաջնովն ոչ խրատեցան: Յարոյց նոցա սատանայ զնոսա, յորս նոքա յուսային, յանկարծակի խորհուրդ արարեալ ամենայն աւագանին ԹաԹար զօրուն, և վառեցան զինու, և կազմեցան առ հասարակ կոտորել զամենայն աշխարհ Հայոց և Վրաց՝ զհնազանդեալս իւրեանց, վասն այսպիսի պատճառի. Թէ ապստամբիլ կամի Թագաւորն Վրաց ամենայն իշխանօքն, և զօրաժողով են զալ կոտորել զնոսա. քանզի երևէր իսկ զօրաժողով են ամենայն իշխանքն առ Թագաւորն Վրաց ԴաւիԹ 'ի Տփխիս. և մինչ ըմպէին զինի, բարձրացան սիրտք իւրեանց, և ասացին 'ի նոցանէ արք խակ. ընդէ՞ր ծառայեմք մեք սոցա, ունելով զայսքան բազմուԹիւն զօրաց. այլ եկայք յանկարծակի անկ-

ցուք 'ի վերայ նոցա, և կոտորեալ ջնջեսցուք զնոսա, և մեք կալցուք զաշխարհս մեր: Եւ խափանեաց զայս խորհուրդ մեծ իշխանն Աւագ. և 'ի Թաթար զօրուն պատահեալ 'ի տեղւոջն՝ լուան զայն և ազդեցուցին գլխաւորացն. և իբրև ցրուեցան զօրք իշխանացն յիւրաքանչիւր տեղիս, ապա նոցա այսպէս զինեալ կամէին առ հասարակ կոտորել զամենեսին. և յիշխանացն՝ զորս գտան առ իւրեանս, 'ի կալանս արարին. և որք ոչ էին անդ, հրաւիրակս առաքեցին փութով առ իւրեանս կոչելով: Իսկ ողորմածն Աստուած ոչ ետ թոյլ իսպառ լինիլ իրին, խափանեաց այսպիսի պատճառաւ. մի ոմն յաւագ գլխաւորացն, որ զօրավար էր ամենայն զօրուն, Չաղաթա անուն նորա, որ բարեկամն էր Աւագին, եկաց 'ի մէջ վառեալ զօրացն, և ասէ ցնոսա. մեք ոչ ունիմք հրաման 'ի Ղանէն կոտորել զայնոսիկ, որ հնազանդեալ են մեզ, և կան մեզ 'ի ծառայութիւն, և հարկատուք են Ղանին. և իրք ապստամբութեան նոցա ճշմարտեալ. արդ եթէ կոտորէք զնոսա առանց պատճառի, դուք տայք պատասխանի Ղանին. և լուեալ զայս, դադարեցին ստուգել զիրն: Եւ գնացեալ առ նոսա մայրն Աւագին, որում անուն էր Խոշաք, երաշխաւոր լինէր վասն որդւոյն իւրոյ միամտութեան առ նոսա. և թէ ինքն իսկ ընդ հուպ գալոց է առ նոսա, որ եղեն իսկ. զի եկն վաղվաղակի իշխանն Աւագ, և եցոյց

զիւր մտերմութիւնն առ նոսա բազում վկայիւք: Եկն և թագաւորն Դաւիթ, և այլ իշխանքն, և կապեալ զամենեսեան ուժգին ըստ օրինի իւրեանց զձեռս և զոտս բարակ չուանօք, և թողեալ այնպէս աւուրս կապեալ՝ ձաղէին և անարգէին զնոսա վասն հպարտութեանն և ապստամբ խորհրդոյն. և ապա առեալ զամենայն երիվարս և զգինս զլխոց նոցա, թողին զնոսա. և ինքեանք յարձակեցան 'ի կողմանս Վրաց 'ի վերայ բազում գաւառաց, որք ապստամբ, և որք ոչ, և զբազումս կոտորեցին, և զևս բազմագոյնս գերի վարեցին, զարս և զկանայս և զմանկունս զետամոյն առնէին անթիւ 'ի բազմութենէ. և այս գործեցաւ 'ի ողթ թուականին Հայոց: Յետ այսորիկ մեռաւ իշխանաց իշխանն Աւագ, և թաղեցաւ 'ի Պղնձահանքն 'ի գերեզմանի հօր իւրոյ Իւանէի: Եւ ետուն զիշխանութիւն նորա Զաքարէի որդւոյն Շահնշահի, հօր եղբօր որդւոյ Աւագին. զի Աւագն որդի ոչ ունէր. բայց միայն դուստր մի երեխայ, և 'ի պոռնկութենէ որդի մի երեխայ, զոր յետ մահու նորա ասացին թէ 'ի նմանէ է. զոր առեալ քոյր նորա սնուցանէր. և ապա հանեալ 'ի Զաքարէէ ետուն կնոջ Աւագին, որում անուն էր Գոնցա:

Վասն Դաւթի Մոլեցուցչի

Կատարած աշխարհիս մօտեալ է, և վասն
այնորիկ կարապետք նեռինն բազմացան, որպէս
յառաջագոյն ասաց կենարարն. «մերձ 'ի կատա-
րածն յարիցեն սուտ քրիստոսք և սուտ մարգա-
րէք տալ նշանս և արուեստս դիւականս, մինչև մո-
լորեցուցանել, թէ հնար ինչ իցէ և զընտրեալսն»։
Արդ 'ի ողթ թուականիս Հայոց եղև այսպիսի
ինչ. համբաւ հանին թէ 'ի սահմանս Խաչենոյ
կարկուտ եկն, և խառն ընդ կարկտին ձկունք
բազումք անկան յերկիր, չափ թզոյ միոյ։ Աչօք
մեր ոչ տեսաք, բայց բազումք էին՝ որ հաւա-
տարմացուցանէին, թէ ականատես լեալ եմք։
Ընդ այնոսիկ և միւս ևս յօդուած բանի հան-
գոյն առասպելեաց ասէին՝ թէ յեզր ծովուն Գե-
ղամայ աւան մի է, Կոթ անուն. 'ի սահմանս
այնր գեղջ հուպ 'ի լեառն գտին մարդ մի նախա-
յաձև՝ մեռեալ և կիսաթաղ, նոր հանդերձ ունե-
լով, և կօշիկս նորս, և հանդէպ սրտին ծակ, որ-
պէս թէ խոցած աշտէիւ, և 'ի վերայ սակաւ մի
բամբակ. և յորժամ առնուին զբամբակն, սաս-
տիկ արիւն վիժէր 'ի նմանէ. և իբրև դնէին զար-
ձեալ 'ի վերայ զբամբակն, արգելոյր զարիւնն.
և թէ այլ նոր բամբակ դնէին՝ և ոչ զհինն, նոյն-
պէս հոսէր արիւնն, մինչև դնէին զառաջինն.

զայսոսիկ յոլովք շագակրատէին, թէ ճշմարիտ
է՛ և թէ սուտ, մեք ոչ գիտեմք։

Բայց այս եղև ստուգութեամբ, զի 'ի սոյն
ամի յարեաւ մոլար ոմն, Դաւիթ անուն, դիւա-
կան հոգւով շարժեցեալ՝ հանգոյն Յուդայի և
Դեւթային մոլորեցուցչաց։ Գիւղ մի է 'ի սահ-
մանս Գեղարքունոյ ծովուն, 'ի կողմ Խաչենոյ
հուպ 'ի բերդն, ուր Ջերմուկն է։ Ծար անուն,
'ի նմա էր այս չար 'ի չքաւորաց և 'ի տնան-
կաց, պահէր զջրաղացս նոցա, և յայնմանէ կե-
րակրէր ինքն և կինն իւր և որդիք։ Եւ 'ի գիշե-
րի միում երևեալ նմա սատանայ 'ի կերպ լու-
սոյ, և իշխեաց ասել թէ ես եմ քրիստոս, և եկի
առնուլ զքեզ ինձ քարոզ. և ածից առ քեզ յա-
մենայն կողմանց զմարդիկ, և որք գան առ քեզ
'ի պէտս բժշկութեան, համարձակ դիր զձեռս
քո 'ի վերայ նոցա, և առ զգերան ձիթահանաց
գեղջն, և արա խաչ, և կանգնեա 'ի դուրս եկե-
ղեցւոյն, և զայլ ամենայն հնարս խորամանկու-
թեան ուսոյց նմա։ Եւ նա սկսաւ քարոզել թէ
քրիստոս երևեցաւ ինձ և ասաց. թէ դարձո զաշ-
խարհս, և բժշկութիւնս կատարեա. և յարեցան
'ի նա այլք, և նոքա սկսան համբաւել զնա, և
կոչէին նմա Դաւիթ միայնակեաց և սքանչելա-
գործ։ Եւ առեալ բռնութեամբ զգերան ձիթա-
հանացն 'ի տեառնէ իւրմէ, արարին խաչ բարձ-
րաբերձ, և կանգնեցին զնա 'ի դուռն եկեղե-

ցւոյն, և զենլին նմա զուարակս, և տային 'ի մսոյն
և յոսկերաց զուարակին, և 'ի տաշեղէ խաչին և
'ի հատէ կորեկին՝ որ 'ի Ջրաղացքն, որպէս նըշ-
խարս օրհնութեան ամենայն ուխտականացն,
որք գային յամենայն կողմանց։ Քանզի նոյն
բանսարկուն՝ որ յորդորեաց զնա, զրգեաց զա-
մենայն զաւառս երթալ 'ի համբաւն յայն, արք
և կանայք և մանկտի. նա և երիցունք ևս, և
ազատ մարդիկ, և ամենայն ախտացեալք և ցա-
ւագնեալք։ Եւ նա զառաջինն կեղծաւորեալ բառ
նմանութեան զերաքրիստոսին՝ այսպէս քարո-
զէր. «մի եմ ես աղքատ և մեղաւոր. բայց քրիս-
տոս հրամայեալ է ինձ քարոզել. զշաբաթ օրն
պահեցէք, և յիշոցք մի տաէք, և եկայք՝ համ-
բուրեցէք զխս, և թողեալ լիցին մեղք ձեր, և
ազգի ձեր, մինչև յեօթն ազգս»։ Եւ յորժամ
դիւահարքն գային, առնոյր բիր մի հաստ, և հար-
կանէր անխնայաբար, և կոխէր ոտիւք զփորսն, և
ասէր. «ել շուն, ել շուն, Դաւիթ միայնակեացն
հրամայէ քեզ»։ և ասէր ցայրն այսահար. «ահա
այլ մի երկնչիր. բժշկեցար»։ Եւ նա երթայր՝
ունելով զնոյն չար ևս բազմացեալ 'ի նմա. և
ուր երթայր և հարցանէին, ոչ իշխէր ասել, թէ
ոչ բժշկեցայ. քանզի պատուէր տայր. թէ յոր-
ժամ ասես՝ թէ ոչ բժշկեցայ, առժամայն ըլլիս
'ի դիւէն։ Եւ նա թէպէտ ոչ իշխէր ասել՝ թէ ոչ
բժշկեցայ, արդ ինքն իսկ յայտ առնէր, որ համա-

պագ ըկէին. որ յառաջն ամօթ և շաբաթով կրէին
զնեղութիւնս, յետ զնալոյն առ նա յամենայն
աւուր չարչարէին. և լեկրորդք՝ որ երթային առ
նա, ասէր՝ թէ խաղացէք առաջի իմ, և պարե-
ցէք. և նոքա առնէին զայս յօժարութեամբ,
քանզի այս ազգ դիւաց ախորժեն զխաղ, և զպար.
և ասէր՝ եկայք՝ համբուրեցէք զխս և զկին իմ, և
երթայք, և այլ մի երկնչիք. Եւ զօդեացն ասէր.
«Աստուծոյ հրաման չկայ այդ ցաւոյդ բժշկել.
բայց զմեղս քո թողում, զի երկիր առխ». և
զկարկամեալսն և զկզացեալսն հրամայէր արանց
չորեցունց ունել երկուցն զգլուխն, և երկուցն
զոտսն, և ասէր. «ձգեցէք և պարզեցէք». և նո-
ցա ձգեալ ուժգնակի, ճարճատէին ամենայն յօ-
դուածքն մարմնոյ. և այրն վայէր ուժգնակի առ
վասնզի ցաւոյն. և նա ելեալ կոխէր զթիկունսն
և զմկանունսն, և ցաւագնեալն անշնչանայր իբ-
րև զմեռեալ, և կամ մեռանէր իսկ։ Եւ նա ասէր
վասն այնոցիկ, որ մեռանին. «եթէ չափ ժամա-
նակի դորա լցեալ էր, և չէր մարթկեալ դորա. բար-
ւոք է՝ զի մեռաւ, որ հանգչի 'ի վշտացն». և
որք ապրէին կիսամահ և ոչ բժշկէին, ասէր.
«ոչ ունին կատարեալ հաւատս առ մեզ, վասն
այնորիկ ոչ բժշկին»։ Եւ դիւահարացն, զորոց
զփորսն կոխէր և նոքա մեռանէին, ասէր. «աս
վաղուց է. և այն, որ շրջեցուցանէր զգա, զեն
էր, զոր հանի այժմ»։ Եւ կուրացն ասէր. «լաւ

է քեզ այն բանամ դաչս քո, թէ թողում զմեղս քո. և ես գիտեմ՝ զի քո ժամանակդ կարճ է, վաղվաղակի մեռանիս». և նա ասէր. «Թէ այդպէս է, լա՛ւ է ինձ՝ որ թողուս զմեղս իմ». և ասէր ցնա. «Թողեալ եմ զմեղս քո»: Եւ այսպէս զամենեցուն միտս յինքն ձգէր. մինչև այնքան լինէր առ նա ժողով բազմութեան, մինչև տեղիք վայրացն ոչ բաւէին տանել. և զի ամառնային էր ժամանակն, 'ի մարգս և 'ի սարս ելեալ՝ անդ ագանէին և գործէին զամենայն չարիս. զի կանայք՝ որք ոչ իշխէին 'ի տան իւրեանց յարանցն և 'ի ծնողացն և յորդւոցն շնալ և պոռնկիլ, ելանէին ուխտի պատճառաւ, և շնային համարձակ ընդ որս և կամէին: Նոյնպէս և արքն չարք զնոյն առնէին, որոց ցանկային. և գնային բազում պատարագօք՝ ոսկւով և արծաթով և զուարակաւ և ոչխարօք. և որք երթային և գային, զայնոսիկ՝ որք ոչ իշխէին երթալ, կշտամբէին և զարշէին 'ի նոցունց, որպէս 'ի մեղաւորաց և յանարժանից նորա տեսութեանն: Այլ և երիցունք եկին և յարեցան 'ի նա ընչից և զօշաութեան ադագաւ. և կային նմա 'ի սպասու, լուանալով զոտս նորա, և զջուրս ցանէին յինքեանց վերայ. և ժողովեցին բազմութիւն. և ինքն կեղծաւորեալ՝ ինչ ոչ առնոյր յումեքէ, այլ 'ի ձեռն քահանայիցն և արբանեկաց իւրոց առնոյր և տէր գեղջն, քանզի Պարսիկ էր, առնոյր

զբաժին իւր յընչիցն. քանզի յոյժ բազումս տանէին, և յօժարութեամբ տային: Եւ թէ ոք 'ի վարդապետաց կամ յերիցանց արգելոյր կամ խափանէր զնոսա յերթալոյ, հայհոյէին և բամբասէին՝ իբրև զնախանձոտս և զյաչաղկոտս, թէ ինքեանք ոչ կարեն գործել զգործս նորա և չկամին զբարեգործութիւն սորոյն այնորիկ:

Ապա գիր սաստից և մեղադրանաց գրեաց մեծ վարդապետն Վանական, որ բնակէր 'ի վանս Խորանաշատոյ՝ հանդէպ Երգեւանից բերդին, «Թէ ընդէ՞ր զերևուսն զիւրն Քրիստոսի համարիք, ո՞վ քրիստոնեայք. զի և սատանայ սովոր է կերպարանիլ 'ի հրեշտակ լուսոյ». և բանադրեաց զայնոսիկ, որ 'ի պիղծ մսոյ ամանի կերեալ էին, և կամ ունէին նշխար 'ի տաշղէն և 'ի կորեկոյն. մի քառասունք պահք և հինգ հարիւր ծունր եդ 'ի վերայ նոցա, և ապա արժանի լինել սուրբ խորհրդոյն: Գրեցաք և մեք նմանապէս նովին սաստիւ և բանադրանօք, և առաքեցաք 'ի յոլով տեղիս: Նոյնպէս գրեաց և եպիսկոպոսն Հաղբատայ տէր Համազասպ: Եկն և Թաթի վանից եպիսկոպոսն տէր Գրիգորէս, և վարդապետն Վարդան՝ զոր Յօժար որդին կոչէին, բազում քահանայիւք 'ի գիւղն յայն, քանզի 'ի նոցա վճակին էր, խաչիւ և աւետարանօք. և արարեալ զիշերապաշտօն, և կանգնեցուցեալ զայրն խաբեալ 'ի միջին, զի թերևս ելցէ 'ի նմանէ ոգին պիղծ: Եւ

յորժամ հարցանէին՝ «թէ զի՞նչ տեսանես», ասէր՝ «թէ անկանիմ 'ի վերայ երկրի, բերանս 'ի վայր յերկրէ աստի երեւի ինձ, եւ խօսի ընդ իս»: Ապա ձեռն արկեալ եպիսկոպոսին եւ երիցանցն, կամէին կործանել զխաչն, զոր կանգնեաց մոլարն: Յարեաւ ամենայն ամբոխ բազմութեանն սրովք եւ բրովք, կամէին սպանանել զնոսա. եւ նոցա արտաքս ելեալ յամբոխէն, անիծեցին սաստիւ նզովիւք զյանդգնեալսն: Ապա ոմանք 'ի նոցանէ զղջացեալք, չոգան աղաչեցին զեպիսկոպոսն եւ զերիցունսն արձակել զնոսա 'ի կապանաց անիծիցըն. եւ գային ետուն 'ի ձեռս նոցա: Եւ մինչ տանէին նոքա, հանդիպեցան նոցա արք Գառնեցիք, որ գային 'ի մեծ դրանէն. աղաչեաց այրն զնոսա, զի խնդրեսցեն զնա յեպիսկոպոսէն. քանզի ասէր զինքն ազգակից նոցա եւ 'ի Գառնոյ. զի այսպէս ասէր նա յառաջագոյն ժողովրդեանն. «Թէ յԱրշակունեաց ազգէն եմ ես, եւ պարտ է որդւոց իմոց լինել միոյն թագաւոր, եւ միւսոյն կաթուղիկոս. եւ սրբոյն Սահակայ տեսլեանն մարթ է 'ի վերայ նոցա կատարիլ»: Ապա ետ զնա եպիսկոպոսն ցնոսա, եւ երդումն պահանջեալ, զի մի՛ այլ մոլորեցուսցէ զմարդիկ. եւ այսպէս հազիւ շիջաւ չարն երեւեալ:

Վասն դիւին՝ որ 'ի կերպարանս կնոջ լեալ, խառնակէր ընդ այր մի

Պատմեաց մեզ վարդապետն Յովսէփ, որ շինեաց զվանսն՝ որ 'ի գերեզման սրբոյ առաքելոյն Թադէոսի է, յԱրտազ գաւառի՝ յետ աւերածոյն եւ ամայի լինելոյն. «Թէ չոգայ ես 'ի գաւառն Գողթան 'ի պէտս ինչ իրաց. ասացին ինձ 'ի գիւղ մի, թէ է աստ այր մի, որ ունի կին դեւ. եւ մեր անհաւան լեալ ասացելոցն, չոգաք 'ի տուն առն, եւ ոչ տեսաք զդեւն: Եւ իբրեւ հարցաք զառն, նա ասաց զպատճառն ստուգութեամբ. թէ կին ունէի ես եւ մեռաւ, եւ եթող ինձ մանկունս մանրունս, եւ ես նստեալ լայի, թէ ո՛ սնուցանէ զոսա: Եւ ահա յանկարծակի երեւեցաւ կին մի եւ ասէ. մի՛ լար, ես եղէց քեզ կին, եւ սնուցից զմանկունսդ: Եւ յայնմ հետէ հանապազ է 'ի տան իմում, եւ առնէ մեզ կերակուր, եւ զամենայն պէտս մեր լնու, եւ սաստիկ սիրով հարեալ եմ 'ի սէր նորա, եւ հանապազ խառնակի ընդ իս, եւ զշաբաթն ամենայն անգործ կայ, եւ յաւուր հինգշաբաթի առնէ մանած երեք լիտր: Եւ իբրեւ հարցի՝ թէ ո՞ւր է այժմ, եւ նա մատամբքն եցոյց, թէ աւանիկ է, եւ երեւի ինձ եւ մանկանց իմոց, եւ ոչ այլ ումեք. եւ յոլով ժամանակք են զի բնակիմք 'ի միասին: Եւ ես յարեալ աղօթել, եւ աւետարան ընթեռնուլ, զի

թերեւս հալածեսցի ոգին մեղսասէր և պիղծ։ Իսկ նորա ոչինչ փոյթ արարեալ զայնմանէ, այլ նառեալ ծիծաղէր. և մեր ոչ տեսեալ զնա, ելեալ գնացաք»։

Վասն խնդրոյն՝ որ եղեւ ՚ի մէջ քրիստոնէից վասն Հոգւոյն Աստուծոյ, թէ ՚ի Հօրէ միայն պարտ է ասել, թէ ՚ի Հօրէ եւ յՈրդւոյ

Ի Հռոմայեցւոց ազգաց շարժեցաւ այս խնդիր ՚ի մէջ քրիստոնէից. քանզի գրեաց Պապն Հռոմայ առ մեծ կաթուղիկոսն Հայոց տէր Կոստանդին, որ յայնմ ժամանակի նստէր ՚ի Կլայն Հռոմայական, քանզի անդ էր աթոռ սրբոյն Գրիգորի ՚ի ժամանակաց Գրիգորի և Ներսէսի՝ երկուց եղբարցն սրբոց, որք էին յԱրշակունեաց ազգէն, որք գիտնականք և վրէժխնդիրք օրինացն Աստուծոյ, «թէ ո՞րպէս խոստովանիք դուք զամենասուրբ Հոգին Աստուծոյ, ՚ի Հօրէ՞ միայն բղխեալ և երևեալ, թէ ՚ի Հօրէ և յՈրդւոյ»։ Նմանապէս գրեցին և առ թագաւորն Հայոց Հեթում, և պատասխանի պահանջէին։ Եւ նոցա ժողովեալ զիմաստունս իւրեանց աշխարհին ՚ի քաղաքն Սիս՝ որ ՚ի Կիլիկիա, Հայոց և Յունաց և Ասորոց և այլ ազգաց քրիստոնէից՝ որք գտան անդ. Յոյնք՝ ՚ի Հօրէ միայն ասացին, և յԱսորւոց ոմանք՝ այլ։ Իսկ Հայոցն ժողով գրեցին ՚ի կողմանս Արևելից ՚ի Մեծ Հայք, և առ գիտնական

վարդապետն Վանական, քանզի ՚ի ժամանակին եբնեալ էր, և առ Վարդան վարդապետն, և առ Յովսէփ, և առ այլս, թէ նոքա զի՞նչ ասեն. և ապա պատասխանի արասցեն Հռոմայեցւոցն։ Եւ նոցա քննեալ զԱստուածաշունչ գիրս առաքելոց և մարգարէից և սրբոց վարդապետաց եկեղեցւոյ, որք մաքրեցին զեկեղեցի ՚ի հերձուածողաց, ըստ պիտոյիցն վարեցեալ երկոքումբք ձայնիւք և ուղղակի զհռոմայեցւոց խոստովանութիւնն. և լի են ամենայն Աստուածաշունչ գիրք այնպիսի ձայնիւք։ Որպէս գրեաց վէմն հաւատոյ երանելի առաքեալն Պետրոս, որ վասն ճշմարիտ հաւատոյն երանեցաւ ՚ի Տեառնէ, թէ յորում և յորպիսի ժամանակի գուշակէր ՚ի նոսա հոգին Քրիստոսի։ Եւ Յովհաննէս աւետարանիչ. «Որ զհոգին Քրիստոսի ոչ ունի, նա չէ նորա»։ Եւ մեծն Պօղոս. «Առաքեաց Աստուած զհոգի որդւոյ իւրոյ ՚ի սիրտս մեր, որ աղաղակէ Աբբա հայր». և այլ բազում այսպիսիս ՚ի գիրս առաքելոցն։ Իսկ սուրբ Լուսաւորիչն Գրիգորիոս, որ ուսոյց մեզ զհաւատոյ խոստովանութիւնն, այսպէս ասէ. «Հա՛յր յինքենէ, Որդի ՚ի Հօրէ, սուրբ Հոգին ՚ի նոցունց էութենէ»։ Իսկ յաղթող սպառազէնն Քրիստոսի Աթանաս ընդդէմ Արիանոսացն այսպէս քարոզէր և ուսուցանէր. «Անսկիզբն Հայր ոչ յումեքէ, Որդի ՚ի Հօրէ, և Հոգին սուրբ ՚ի նոցունց էութենէ», զոր երկրորդէ Սոկրատ պատմագիր։ Եւ Գրիգոր Աստուա-

ծարանն 'ի ճառին, որոյ սկիզբն է՝ «Երէկ պայծառ լուսաւորութեանցն՝ զոր տօնեցաք», ասէ՝ զաղղման առեալ «'ի քէնէ Տէր աղբիւր կենաց, և լուսով քո տեսանեմք զլոյս, այս է՝ Հոգւով զՈրդի»։ Եւ դարձեալ՝ «Որ 'ի Հօրէ ելանէ, որ ըստ որում անտի առաքի, ոչ է ստացուած. ըստ որում ոչ ծնեալ՝ ոչ է որդի, և ըստ որում յոչ ծնիցելոյ և 'ի ծնիցելոյ 'ի մէջ՝ Աստուած է»։ Եւ Գրիգոր Նիւսացի, և մեծն Բասիլիոս, և Աբբա Եփրեմ, և Յոհան Ոսկեբերան՝ 'ի բազում տեղիս յիւրեանց գիրսն, զոր թէ աշխատասիրութեամբ ոք խնդրէ, յոլովս գտանէ։ Եւ Սեբերիանոս՝ Եմեսու եպիսկոպոսն 'ի ճառին, որոյ սկիզբն է «'ի մէջ քրիստոսասիրաց զՔրիստոսէ խոստացաւ ճառել» 'ի կատարածին ասէ. «Անծնին Աստուծոյ Հօր, և ծնիցելոյն 'ի նմանէ Որդւոյն միածնի, և սուրբ Հոգւոյն ելողի 'ի նոցունց յէութենէ, երիցն 'ի միում Աստուածութեան, ամենայն փառք յաւիտեանս ամէն»։ Եւ Մովսէս Խորենացի 'ի մեկնութեան քերականին ասէ. »Սուրբ Հոգին առ ինչունակ է. զի որումն Հոգի է զի 'ի դէմ Հօր, Հօր և Որդւոյ ասի Հոգի»։ Եւ Սիւնեաց եպիսկոպոսն Ստեփանոս. «Բանի զի բղխէ 'ի Հօրէ՝ իբր յակմնէ, անհատաբար դադարէ յաղբեր. 'ի յՈրդւոյ ելանէ անմեկնելի խոհականագոյն գետ արփիաբաշխ լուսապարգև ապնջական զծովունելով, զհրեշտակաց և զմարդ-

կան զխաղութիւն. ուր նա զի հարուստ Որդի՝ որպէս զՀայր, զի թէպէտ սուղ Որդի՝ զի սկիզբն նոյն փառթամ, զի պատճառ Հոգւոյ ելողութեան։ Հոգին սուրբ հարուստ, զի պատճառ է մարդաբէական տուրից»։ Եւ սքանչելին Եղիփան 'ի գիրս մեկնութեան սաղմոսաց և 'ի գլուխ բանիցս. «ամենասրբուհի Աստուածածինն Մարիամ, 'ի բանն հաւատոյ, զոր հրամայեաց աւետարանչին Յոհաննու ուսուցանել սքանչելւոյն Գրիգորի, ասէ. «Մի Աստուած Հայր Բանին կենդանւոյ, իմաստութեանն անձնաւորի, և զօրութեանն, և կերպարան էութեան, կատարեալ կատարելոյ ծնող, Հայր Որդւոյ միածնի, Տէր միայնոյ, Աստուած յԱստուծոյ, կերպարան և պատկեր աստուածութեանն. Բանն Աստուած ներգործական ամենայնի, և եղելոցս ամենայնի բովանդակիչ, և զօրութիւն անսահմանելի, և ամենայն ստացականացս արարիչ։ Որդի ճշմարտի Հօր, անտեսանելի անտեսանելւոյն, անապականին անապական, անմահ անմահի. մի Հոգի սուրբ առ 'ի յԱստուծոյ զէութիւն ունելով, և 'ի ձեռն Որդւոյ երևեալ և յայտնեալ մարդկան, պատկեր Որդւոյ, կատարեալ կատարելոյ. կեանք և կենդանեաց պատճառ, սրբութիւն և սրբութեան պարգևիչ։ Որով յայտնի Աստուած Հայր՝ որ 'ի վերայ ամենեցուն և յամենեսին, և Աստուծոյ Որդին՝ որ 'ի ձեռն որոյ և ամենեքեան։ Երրորդու-

թիւն կատարեալ փառօք և մշտնջենաւորութեամբ, և անբաժանելիք թագաւորութեամբ, և անորոշելիք։ Ոչ ապա ստացական ինչ, և ոչ ծառայ Երրորդութեան, և ոչ 'ի ներքս ածական, որպէս թէ յառաջագոյն ոչ գոլով, և յետոյ 'ի ներքս մտեալ։ Ոչ նուազ Որդի 'ի Հօրէ, և յՈրդւոյ՝ Հոգի, այլ անայլայլ և անփոփոխելի նոյն ինքն Երրորդութիւնն միշտ։ Այսպիսի խոստովանութիւնս ընդունելի է յեկեղեցիս Հայաստանեայց, և յագիս Կիրակոսի, և համարձակ արժան է քարոզել զՀոգի 'ի Հօրէ ելեալ, և յՈրդւոյ երևեալ։ Զայս պատասխանեցաք թղթոյն Արևմտից, և մեք 'ի սոյն հաւատացեալ կամք շնորհօք Երրորդութեանն սրբոյ, որում փառք յաւիտեանս ամէն։

Խոստովանութիւն ճշմարիտ ուղղափառաց

Հաւատամք 'ի Հայր և յՈրդի և 'ի Հոգի սուրբ, յերիս անձինս կատարեալս, և 'ի մի աստուածութիւն փառաւորեալ, սուրբ և զուգափառ Երրորդութիւն, անսկիզբն և անվախճան, աներբ և անուր, միշտ անկարօտ և բերկրեալ, յաւիտենայն կատարեալ բարւոյ իմացեալ, զոր բնաբար ունի, և աննախանձապէս տայ կարօտիցն. Երրորդութիւն կատարեալ, անճառելի և աննուազ, անձամբ բաժանեալ, և է. գի և անուամբ և միութիւն կացեալ և կայ փառաւորեալ և փառաւորի

'ի բնութեան աստուածութեան, 'ի զօրութեանն, 'ի կամսն, յիմաստութեանն, 'ի գործն, 'ի մեծութեան, և մանաւանդ յանհասութեան, և յանասելի ողորմութեան։ Հայր անծին, Որդի ծնեալ 'ի Հօրէ, անախտ և անմարմին, բնութենակից Հօր նախ քան զժամանակս։ Հոգին սուրբ բըղխումն 'ի Հօրէ, և երևումն յՈրդւոյ, ոչ ըստ Որդւոյ ծննդեամբ, այլ յառաջ եկեալ աղբիւրաբար, ինքեան միայնոյ քննելի օրինակն, և յարարածոց անգիտելի. միշտ ընդ Հօր Որդի և Հոգի, Հոգի որպէս Հօր, նմանապէս և Որդւոյ. ոչ փոխեալ Հայր յՈրդի, կամ Որդի 'ի Հոգի, կամ Հոգի յՈրդի և 'ի Հայր։ Հայր ունելով զանձն և զանուն հայրական, և Որդի ունելով զանձն և զանուն որդիական, և Հոգի ունելով զանձն և զանուն հոգիական. անդրադարձութիւն ոչ ունելով կամ փոփոխումն անուանցն և անձանցն. այլ Հայր՝ միշտ Հայր, Որդի՝ միշտ Որդի, Հոգի՝ միշտ Հոգի, յոր հաւատամ։ Յայսմանէ և 'ի սիրոյ եկեալ Որդւոյն անձամբ չափ աւետեօք հրեշտակապետին Գաբրիէլի 'ի կոյսն Մարիամ՝ որ սուրբ էր հոգւով և մարմնով, 'ի պատճառս փրկութեան մերոյ մարդացեալ 'ի նմանէ, սահմանաւ բնութեանս մերոյ՝ հոգի, միտք, շունչ, մարմին, որ ինչ և է կատարեալ մարդ մեղուցեալ բնութեանս Ադամայ, ուստի Մարիամն էր, զոր առեալ աստուածագործեաց առանց շփոթման և այլայլման. ան-

քննին և անճառելի խառնմամբ եղև յերկուց կատարեալ բնութեանց՝ յաստուածայնոյն և 'ի մարդկայնոյ. մի անձնաւորութիւն կատարեալ, անայլայլելի, և անբաժանելի բնութեամբ, ոչ փոփոխելով մարդկային թանձր և յօդական բնութիւնն յանյօդ և պարզական բնութիւն Աստուածութեանն, զիւրն կորուսանելով. և ոչ պարզ և անմարմնական բնութիւն Աստուծոյ խառնելովն ընդ բնութեան մարմնոյ, վրիպեաց յիւրն յաւէտ պարզութենէ, թէպէտ և ասի յաղագս անքակ միութեանն՝ անմարմնոյն մարմնանալ, և բանին թանձրանալ. միայն միածին մի Որդի, մի անձն, մի Քրիստոս, և ճշմարտապէս յերկուց միացեալ բնութիւն, մի կամք, մի ախորժակք, մի գործ, մի ծնունդ կուսութեամբ, մի մայր առանց հօր, որ և նախ քան զյաւիտեանս առանց մօր ծնեալ. և խոստովանիմ զմայրն Էմանուէլի՝ Աստուածածին մինչև յաւիտեան, և զէմանուէլն Աստուած մինչև յաւիտեան. նովին մարմնովն, և որ զհետ ծննդեանն, զամենայն անօրինականսն խոստովանիմ գործ Աստուծոյ, զխոնարհագոյնսն, զբարձրագոյնսն, և զկիրսն անբամբասելի, զոր վասն մեր կրեաց, ոչ բաժանումն, այլ մի յատուկ ասեմ 'ի Տէրն իմ. և ոչ իմանամ շփոթումն, և նզովեմ զիմացողն և զասողն շփոթումն։ Եւ նոյնպէս զկիրսն խաչին՝ խոստովանիմ Աստուծոյ խաչ և մահ, ոչ էական բնութեան ասեմ մահ, կամ

'ի մարմնոյն բաժանումն, այլ զի բնութեամբ միացեալ յաստուածութիւն և աստուածացեալ, Աստուած խոստովանիմ, որով մեռաւ անմահն, զբանական հոգին աւանդելով 'ի ձեռս Հօր։ Աստուածութիւն ոչ բաժանեալ 'ի հոգւոյն և 'ի մարմնոյն, միաւորեալ անքակելի, ըստ որում և զդժոխս աւերէր հոգւովն, և զմահ սպանանէր, և մարմինն լուծանէր զապականութիւն որպէս զԱստուած և զԱստուծոյ մարմին, ընդ ամենայն գերեզմանս արձակելով ճառագայթս, յարուցանելով զբազումս, զխռելով զսահմանեալ ժամանակսն 'ի լանջս երկրի՝ հզօրագոյն, թուովն յառնէր, ոչ միայնաբար ըստ Յունանու 'ի ձկանէն, այլ լրմամբ հոգւոցն մահակուր, որ յԱդամայ 'ի դժոխոց, և յոլովիւք մարմնովք հողացելովք՝ 'ի գերեզմանացն՝ եկանէր կուսութեամբ անկոյծ կնքոյն 'ի գերեզմանէն, որպէս յարգանդէն Մարիամու, և վերացեալ մտանէր յերկինս կուսութեամբ անձեղքելիս, որպէս 'ի վերնատունն դրամբք անբացիւք. զի յայտ լիցի, եթէ 'ի վեր է քան զբնութիւն մարմնոյ. զի մարմնոյ բնութիւն՝ մահկանացու, ապականացու և ախտալի է, թէ յատկացի ընդ ինքեան, և ընդ մարմին ոչ կարէ մտանել անծանօթապէս. այլ տէրունականն և տէրն լիով ունելով զճշմարիտն մարդ իւրով սահմանովն, սակայն շողացեալ և փայլատակեալ աստուածութեամբն՝ ներգործէր զվայելչականսն

բանին, զոր շօշափեցին դասք առաքելոցն, և տեսին երանելի աչօք զանտեսակն տեսակցելոյ։ Գալոց է նովին մարմնովն և փառօք Հօր դատել զկենդանիս և զմեռեալս, որոյ թագաւորութեանն ոչ գոյ վախճան։ Հաւատամ 'ի նոյն յերրորդութենէն եղեալ յոչ էից զեղեալքս ամենայն, և զԱդամ պատկերեալ բարւոյն, և յանցանօք լուծեալ 'ի մահ անձնիշխան կամօք, և 'ի նոյն արարչէ վերստին նորոգեալ, անտեսութեամբ միոյն միածնի՝ կամօք Հօր և Հոգւոյն։ Հաւատամ 'ի համօրէն յարութիւնն բանականացս յԱդամայ 'ի նոյն զօրութենէ ստեղծողին և նորոգողին։ Հաւատամ արդար յիրաւունս աւուրն դատաստանի ըստ արժանեաց, և 'ի հատուցումն յաւիտենական կենաց և տանջանաց։

Այս է մերոյս հաւատոյ համառօտ խոստովանութիւն, և ամենայն ուղղափառաց, որոց մասնաւորեսցէ զմեզ Տէր 'ի շնորհս ողորմութեան, սովիմբ կեալ յաշխարհի անարատ կենցաղավարութեամբ և բարի գործովք, և այսու դաւանութեամբ երթալ առ Քրիստոս յոյսն մեր և վստահութիւն, և արժանի լինել տեսանել համարձակութեամբ զերանելի և զամենասուրբ զԵրրորդութիւնն, յերիս յանձինս յատկացեալս, և 'ի մի աստուածութիւն և տէրութիւն և 'ի թագաւորութիւն փառաւորեալ. և արժանացուսցէ զմեզ և զամենայն ճշմարիտ հաւատացեալս անճառ

բարեացն և անպատում ուրախութեանցն, զոր ակն ոչ ետես, և ունկն ոչ լուաւ, և 'ի սիրտ մարդոյ ոչ անկաւ, զոր պատրաստեաց Աստուած սիրելեաց իւրոց։ Արդ զայս դաւանութիւն յոլով մասն աշխարհի ունի, և պահէ սրբապէս քաղաքավարութեամբ, զոր պարտ է յամենայն քահանայագործութեան տալ զայս դաւանութիւն մեծի քահանայապետին, և պահանջել յայնցանէ՝ զորս ձեռնադրելն կամին։ Եւ ապա յանուանէ նզովէ զգայլսն ապականիչս՝ զամենայն հերեսիովտայսն՝ հարիւր յիսուն ինն հերձուած մինչև ցայսօր ժամանակի, և այլք՝ որ լինելին նման սոցա, և դաւանել զամենայն ուղղափառս, զհովուանի եկեղեցւոյ, որք ընդ ճշմարտութիւն առաջնորդեցին հօտին Քրիստոսի, և յարօտս կենսաբերս մուծին. և ապա իջանէ Հոգին յայնպիսի սեղանն սրբութեան, և հանգչիցի յընծայեալն յայն, որ գիտէ ճանաչել զօտարսն և զընտանիսն, որպէս զգիտնականսն և զիմաստունսն հովիւս կացուցանել, որ կարասցէ 'ի կեանս կոչել զարժանիսն կենաց, այսինքն առ Աստուած ածել. զի այս է պարիսպ պահպանութեան, խաչիւ և արեամբ գնեալ հաւատացելոց, ոչ միայն 'ի չարեացն 'ի բաց կալ, այլ և բարեացն գնեա երթալ 'ի Քրիստոս Յիսուս 'ի Տէր մեր, որում փառք յաւիտեանս ամէն։—Գրեաց և մեծ վարդապետն

Վանական, թէ որպէս մարթ է խոստովանել, և կամ ասել զսուրբ Հոգին 'ի Հօրէ և յՈրդւոյ։

Վանական վարդապետին

Հոգւովն խօսել զհոգւոյն՝ հոգևորացն է գործ. իսկ եթէ ոք և որ 'ի ձեռն հաստատութեան իցէ յօժար առ 'ի քաղել ամարան խղուզին հանդիպել սիրելի է, և թէ հասկի, բայց թէ չնչիցէ հողմ անսօր, Եղիայունն ընթասցի բանն. և փառաւորեսցի մի աստուածութիւն յերիս անձինս՝ միմեամբք երևեալ որպէս լոյս 'ի լուսոյ. զի եթէ արարածականս այս լոյս և հուր ոչ փակի յիւրական ընտանեաց և յայլոց, զիարդ անեղ արարչականն 'ի միմեանց և յարարածս, թէ և մեք ոչ կարեմք գիտել, վասն զի երեք անձնական բաժինս տալ ոչ զօրէ 'ի յօդս, 'ի հուր, 'ի ջուր և 'ի գինի, վասն նրբամասնութեանս, և այսք զի հարկելիք են, թէ և անհարկելիք թուին և անապատելի՝ ապուսելիք, մինչ ես ասել միաք մի ժառեսցի յանեղ, յանարար, յանսահման, միասնական սուրբ Երրորդութիւնն, ոչ զոլ որով եղեբիցի, կամ տեղի ուր գնիցի համիմացութեամբ ճանաչել, այլ զոր գիրք Աստուածաշունչ աւթէ եկեղեցւոյ զոր սկամնելի է, իմացումն իմացական՝ իմացողին որպէս մնունդ եղով և կերակուր. ուրեմն մտաց հրեշտակական էութիւնքն, և նո-

ցս արարչականն, զի իմանալին իմացութեամբ իմացողապէս իմանայ զիմացական իմացումն։ Արդ մտօ դիր դու քեզ ասէ Նախամարգարէն Մովսէս. հայեա յանձն քո։ Խրատէ և Փիլոնիոս, թէ քոյով Երրորդութեամբդ իմա 'ի մարմին քո, որ է հոգի և միտք և բան։ Նոյն օրինակ և Պօղոս գրէ մեզ. Մի է Աստուած հայր, և մի տէր Յիսուս Քրիստոս, և մի սուրբ Հոգի։ Զնոյն աւանդէ սուրբ ժողովն Նիկիայ. Հաւատամ 'ի մի Աստուած Հայր, և 'ի մի տէր Յիսուս Քրիստոս, և 'ի մի սուրբ Հոգի։ Իսկ Յովհաննէս մկրտիչ միութիւն խոստովանի բնութեան զՀայր և զՀո-
զի ա՛ղն զնէ, այսինքն՝ բան, և Որդւոյ ունել ասէ զՀայր և զՀոգի։ Աթանաս երեք էնթակայ ասէ, կամ երեք դէմ։ Աստուածաբանն Գրիգոր ասէ. երեք անձն, կամ երեք երես, կամ ո՛ր քեզ սիրելի է, զայն ասա։ Ինքն Աստուած որ էն ասէ՝ որ է ոչ սկսեալ, և ոչ դադարի։ Գրիգոր Աստուածաբան, և Բարսեղ, և Գրիգոր Նիւսացի՝ անծին և ծնեալ, և ելումն, որում հետևի ամենայն ուղղափառ եկեղեցի։ Յոհան Ոսկեբերանն՝ արմատ, բոյս և բողբոջ։ Պօղոս՝ զՀայր էութիւն ասէ, և զՈրդի նկարագիր, զՀայր լոյս, և զՈրդի ճառագայթ։ Աթանաս՝ զորդի նկարագիր ասէ Հօր, և զՀոգի Որդւոյ, որ է Հօր և Որդւոյ. ինքն տէր զՀայր հոգի ասէ։ Եւ Լուսաւորիչն Գրիգոր զՈրդի հոգի ասէ, և ամենայն գիրք Աստուա-

ծաշունչ զՀոգի հոգի ասեն։ Պօղոս զՀայր աներևոյթ ասէ, և զՈրդի պատկեր աներևութին. յայտ է թէ՝ Հոգի պատկեր է Հօր և Որդւոյ. զի մի է երիցն նկարագիր և պատկեր. ըստ որում՝ թէ արար Աստուած զմարդն 'ի պատկեր իւր, զի էիցն մի պատկեր է, մին սկզբնատիպ միոյ մարդոյն, միոյ բնութեան, և երից անձանց, միոյ աստուածութեան. ամենայն հին և նոր կտակարանք վկայեն. և զի Հայր անսկիզբն և անպատճառ է։ Ինքն իսկ ասէ ցԱբրահամ՝ իմ էն երդնում քեզ. և ցՄովսէս՝ ես եմ էն, որպէս ասել՝ թէ ոչ յումեքէ, և զի Որդի և Հոգի 'ի Հօրէ, Ովսէէ ասէ՝ Հոգի իմ և բանն 'ի միջի քում։ Եւ Ինքն տէր ասէ. Հողմ ուր կամի շնչէ, այլ ոչ գիտես ուստի գայ կամ յո երթայ. նոյնպէս և ամենայն ծնեալն 'ի հոգւոյն։ Զի Հայր՝ անսկզբնութեան է անուն. և երեքն անսկիզբն են 'ի ժամանակէ։ Հոգի ասելն՝ անմարմնութեան է նշան, և երեքեանն անմարմին. Որդի ասելն՝ գոյացութեան և բնութեան է նշան. և զի երեք գոյացութիւն և մի բնութիւն են։ Որդի 'ի Հօրէ ասի, Հայր յՈրդւոյ ոչ ասի, զի սա 'ի նմանէ է, և ոչ նա 'ի սմանէ. Որդի և Հոգի 'ի Հօրէ ասի. Հայր 'ի նոցունց չասուի, Որդի և Հոգի 'ի Հօրէ ասուի, ոմն ծննդեամբ և ոմն ելողութեամբ։ Որդի բղխումն ասի, և Հոգի բղխումն ասի։ Որդի ել ասի 'ի Հօրէ, և Հոգի ել ասի, Հայր հոգի ասի, բայց Որդի չասի.

Հոգի ոչ Հայր ասուի, ոչ Որդի, Որդի 'ի Հօրէ, և Հոգի 'ի Հօրէ և յՈրդւոյ։ Հայր արմատ, Որդի բոյս, Հոգին 'ի յարմատէն և 'ի բուսոյն բողբոջ։ Հայր գոյ, Որդին բերան, Հոգի շունչ։ Հոգւով բերանոյ նորա ամենայն զօրու՛։ Եւ թէ՝ առաքումն քո դրախտ նռնենեաց. և թէ՝ փչեաց յերեսս նոցա և ասէ. առէք հոգի սուրբ։ Հայր անձն, Որդի գոյացութիւն՝ բազուկ, և Հոգի՝ 'ի բազկէն մատն։ Ես մատամբն Աստուծոյ հանեմ զդևս. Որդի 'ի Հօրէ, և Հոգի 'ի նոցունց ասէ սուրբն Եպիփան, Որդի 'ի Հօրէ ելանէ և Հոգի 'ի Հօրէ և յՈրդւոյ ելանէ։ Որդի 'ի Հօրէ առնու, նմանապէս և հոգի 'ի յՈրդւոյ առնու։ Ասէ Ինքն տէրն. Յիմմէ անտի առնու և ուսուսցէ ձեզ. և 'ի հոգւոյն առնու, ըստ որում՝ Որ 'ի նմայն ծնեալ է, 'ի հոգւոյն սրբոյ է։ Երեք արեգական լոյս է, ամենայնիւ մի օրինակ, անհաս, անճառ, անձև, անուբակ, անքանակ, անսահման։ Բայց մինն որ զմեր բնութիւնս էառ, բանն մերովս երևի, և նովաւ ճանաչի, Հայր և Հոգի։ Որդի ծնեալ ասի, որ թարգմանի յումեքէ ասել ունել, որ թարգմանի ոչ զումեք ասել ունել, զի ոչ ունի զանձն Հօր, և ոչ զանձն Հոգւոյ, այլ զիւր որդիականն։ Հոգի ել ասի 'ի Հօրէ և յՈրդւոյ, զի ոչ ունի զանձն Հօր, և զանձն Որդւոյ, այլ զիւր հոգիական անձն։ Այս երեք անուանք հաւասար նշան երից անձանցն, ոչ միոյ միոյ 'ի վերոյ, և ոչ միոյ միոյ

'ի ներքոյ. այլ հաւասար միմեանց ամենայնիւ։ Ոչ ըստ նշան երիցութեան մի լիցի ումեք իմանալ այնպէս. այլ նշան երից անձանց և միոյ բնութեան։ Ոմն Հայր, զի ոչ յայլմէ է. ոմն Որդի, զի 'ի Հօրէ է. և ոմն Հոգի, զի 'ի Հօրէ և յՈրդւոյ։ Հայր անծին ասի, զի ոչ յումեքէ է. և Որդի ծնեալ, զի 'ի Հօրէ է. Հոգի ոչ ասի ծնեալ, զի մի երկու եղբարք թուեսցին. և ոչ երկուորի ընդ որդւոյ, զի մի դուստր կարծիցի. և ոչ յՈրդւոյ միայն, զի մի թոռն համարիցի։ Դու ընդէ՞ր ծանրանաս, ով իմաստուն և ճշմարիտ հաւատացեալ, երկու պատճառ իմանալ։ Բարսեղ հարցանէր զեղբայր իւր զԳրիգոր. զի՞նչ է սկիզբն սկզբանն. և նա ասէ. առաջին պատճառն երկրորդ պատճառին։ Ո՛վ սիրելի, ո՞ւմ այլ ումեք իցէ պատճառ Հայր և Որդի, եթէ ոչ Հոգւոյ իւրոյ։ Գրիգոր Աստուածաբանն զՊղատոնի բանն առնու, որ գրեալ է, որպէս խառնարան յեղեալ, զեղեալ, զխառն և զեղեալն ասել՝ խառն, բայց զառաջինն և զերկրորդ պատճառն ասել՝ հաւանի. դու ընդէ՞ր ըմբռանես խոստովանողդ 'ի յերկու պատճառն. զի ոչ եթէ անուանքս և կարգս զանազանէ զմի բնութիւն յայլ և այլ. այլ նշան է անձանց երից 'ի մի բնութիւն, զի սահման և կարգ խոստովանութեան հաւատոյ՝ անխառնակ և անշփոթ մնասցէ, մի աստուածութիւն, որ զամենայն բառ կարգի և սահմանաւ յօրինեալ է.

զի մի 'ի միտս խոստովանողին խառնակութիւն և շփոթումն անկցի։ Քեզ ասեմ, որ լսողդ ես, զիմրդ քո միտքդ 'ի քեզ կայ, և այլում միտք ծնանի. եթէ զայս ոչ իմանաս, ընդէ՞ր քննես վասն Աստուծոյ, և ընդդիմանաս գրոց. եթէ զլոյսդ՝ որ 'ի խելս քո ծագէ, և զհանճար՝ որ յերի կայ բանիդ, և զըղխումն սրտիդ ոչ կարես տեսանել՝ զոլորեալն 'ի ձայնդ, Աստուծոյ հակառակ և գրոց մի ջանար իմանալ ինչ։ Եւ դարձեալ ասեմ. բանդ քո 'ի մտացդ է, թէ 'ի հոգւոյդ. թէ 'ի մտացդ է առանց հոգւոյդ՝ անհոգի է քո բանդ. և թէ 'ի հոգւոյդ է առանց մտացդ՝ անմիտ է քո բանդ. ապա թէ 'ի հոգւոյդ է և 'ի մտացդ, հոգևոր և մտաւոր է քո բանդ, որպէս և է. ապա թէ շնչաւոր իմացիւք է քո բանդ, վայրապար է։ Զաստուծոյ բնութեանն միութիւն, և զանձին բաժանումն, մարմնական օրինակաւ մի մի տեսաներ. զի մի զայթագղիցիս։ զՀոգին եթէ 'ի Հօրէ միայն ասիցես ել և բղխումն, անբան է Հոգին. և թէ յՈրդւոյ միայն ասիցես, օտար սկիզբն է. իսկ եթէ 'ի Հօրէ և յՈրդւոյ ասիցես, ճշմարիտ է, որպէս և է։ Եւ զորօրինակ հայրութիւնն Աստուծոյ ոչ է մարմնական, և ոչ որդիութիւնն, նոյնպէս և ոչ ելողութիւնն։ Բառ է, զաւառի սովորութեամբ ասեն. այս անուն յայս բանէ 'ի դուրս ելին ողջ, 'ի յայս իրացս բաժանեցաւ ողջ, ոչ յիւրմէն 'ի տեղն

մեաց, և ոչ յայլոց 'ի նմա եկեր, և ոչ յայլոց կորեաց, և ոչ յայլոց հաստաւ. Թէպէտ ողջ ասա, Թէպէտ յատակ ասա, Թէպէտ պարզ ասա։ Այսպէս Հոգի 'ի Հօրէ և յՈրդւոյ, ոչ ինքն պակաս ինչ, և ոչ 'ի նոցանէ հատած։ Մի կատարեալ Աստուած Հայր, մի կատարեալ Աստուած Որդի, մի կատարեալ Աստուած Հոգի սուրբ. մի աստուածութիւն, յերիս անձինս հաւասար ամենայնիւ։—Այս է խոստովանութիւն ուղղափառ եկեղեցւոյ։ Սուրբն Դիոնեսիոս գեղողական անունն 'ի վերայ Երրորդութեանն հաւասար դնէ՝ Հոր և Որդւոյ և Հոգւոյ, այսպէս ասելով. «Եղօղական անուն, իմաստնացուցիչ, զօրացուցիչ, կենդանացուցիչ», և որ յայս ոճիս է. և դարձեալ՝ իմաստնացուցչութիւն, զօրացուցչութիւն, կենդանացուցչութիւն, և որ այլ ըստ այսմ։ Դարձեալ աղաչեմ զքեզ մի կարծեր Աստուծոյ անուն ըստ բնութեան, այլ ըստ խնամոցն՝ որ առ մեզ։ Ապա Թէ ոչ՝ լոյս ասի Աստուած և կեանք. որպէս մերս՝ զի տեսանեմք և կեամք. ոչ, զի ոչ զքո հոգւոյդ անունն և զէութիւնն կարես գիտել. այս խոստումն հանդերձելոցն է, յորժամ յայտնի այն՝ զոր ակն ոչ ետես, և ունկն ոչ լուաւ, և 'ի սիրտ մարդոյ ոչ անկաւ, զոր պատրաստեաց Աստուած սիրելեացն. ասա մի խնդրեր աւելի, զի մի յամենայնէն անկանիցիս։

Վասն վախճանի սուրբ վարդապետին Վանականայ

Աստուածահաճոյ և մեծ վարդապետն Վանական, հասեալ 'ի բարւոք ծերութիւնն. աւերեալ և լի աւուրբք ըստ օրինակի նահապետին Աբրահամու, առ Տէր փոխեցաւ, զընթացս կատարեալ, և զհաւատս պահեալ ուղղափառ խոստովանութեամբ, որ 'ի սուրբ Երրորդութիւն և 'ի տնօրէնութիւնն Քրիստոսի։ Ի տղայական տիոցն աստուածագործ ծառայութեամբ կացեալ, բազում քրտունս և աշխատութիւնս ցուցեալ 'ի բանն վարդապետական, բազում որդիս 'ի փառս ածեալ, և ազգի ազգի ճգնութիւնս կրեալ, և սպանեալ զանդամս երկրաւորս, ըստ խրատու առաքելոյն զմարմինն 'ի խաչ հանեալ՝ կարեօք և ցանկութեամբքն հանդերձ. զի նման էր այրն Աստուծոյ անօսրաթև Թռչնոյն մեղուի, որ Թռուչելով 'ի վերայ բազում և ազգի ազգի ծաղկանց ժողովէ 'ի նոցանէն զպիտանին և զօգտակարն 'ի պէտս իւրեանց, և 'ի կերակուր, և 'ի բժշկութիւն Թագաւորաց և ռամկաց։ Նոյնպէս և սա յանձն իւր հաւաքեալ զամենայն սրբոցն զվարս և զառաքինութիւնս, անկանէր զգործ խորսխին 'ի պէտս անձին իւրոյ և յայլոց օգուտ. քանզի ստացեալ ունէր զարդարութիւնն Աբելի, և զգեղեցկութիւն Սեթայ, և զյոյսն Ենովսայ, և զհաւատսն Ենովքայ, և զկատարելութիւնն Նոյի, և

զհաւատն և զգործն Աբրահամու, և զհնազանդութիւնն Իսահակայ, և զաստուածատեսութիւնն Իսրայէլի, և զողջախոհութիւնն Յովսեփու, և զհամբերութիւնն Յոբայ, և զհեզութիւնն Մովսիսի, և զնախանձն Փենեհեսի, և զկուսութիւնն սրբութեան Յեսուայ, և զանմեղութիւն յաստկամաութեանն Սամուէլի, և զհեզութիւն սրբութեան սրտին Դաւթի, և զիմաստութիւնն Սողովմոնի, և զհամարձակութիւնն Եսայեայ, և զվրէժխնդրութիւն Եղիայի, և զախտակցութիւնն Երեմիայի, ըստ Դանիէլի և Եզեկիէլի 'ի գերութիւն երթեալ ընդ ժողովրդեանն Աստուծոյ, ըստ Զօրաբաբելի և Յեսուայ նորոգող լեալ տաճարի Աստուծոյ, ըստ Պօղոմեայ բազում գրեանս հաւաքեալ յազգաց և 'ի լեզուաց։ Յովհաննու նման յանապատի բնակեալ, և Տեառն հրամանաւ զապաշխարութիւն քարոզեալ, 'ի հին և 'ի նոր կըտակարանս վայելեալ։ Պետրոսի հանգոյն զՏէրն որդի Աստուծոյ դաւանեալ, և գլուխ եկեղեցւոյ լեալ։ Ընդ որդւոցն որոտման զհոգևորն որ ստացեալ և աստուածաբանեալ։ Ընդ Պօղոսի և ընդ հանուրս սերմանեալ զկենաց բանն, և գրով հաստատեալ։ Ընդ վարդապետս եկեղեցւոյ հանդիսացեալ, և զգայլսն վանեալ. կիսոց կաթն ջամբեալ, և կատարելոցն զհաստատուն կերակուրն։ Արդ նա որ զայս ամենայն բարիս ստացեալ ունէր յանձին իւրում, ինքն առնէր և այլոց զնոյն վարդապե-

տէր, առ Տէր փոխեցաւ, զընութեանս պարտն հատուցեալ. և եղև վախճան նորա այսպիսի օրինակաւ։ Ի վանսն՝ զոր իւր շինեալ էր, որ կոչի Խորանաշատ վանս յոլով եկեղեցեացն՝ որ 'ի նմա, ընկալաւ զանունն, որ կայ հանդէպ Երգեվանից բերդին և 'ի թիկանց Գարդմանայ, առնէր նա շինուածս երևելիս, զաւիթ շինելով 'ի կոփածոյ վիմաց 'ի դուռն մեծ եկեղեցւոյն, զոր իւր իսկ շինեալ էր, և զբան վարդապետութեանն ուսուցանէր այնոցիկ, որ ժողովէին առ նա յամենայն գաւառաց։ Յաւուրս սուրբ Ազուհացիցն հիւանդացաւ հիւանդութիւն, որ և մեռաւ իսկ. և նախ քան զաւանդել սուրբ հոգւոյն իւրոյ 'ի ձեռս Աստուծոյ ըստ գրեցելոյն կոչեցեալ զեղբարսն, քաղցր և ախորժ բանիւ մխիթարէր զնոսա, և աղաչէր կեալ հաստատուն 'ի կարգս և 'ի կրօնս ուղղափառութեան և աստուածապաշտութեան։ Եւ ապա քաղցր շնչմամբ մաքուր հոգւոյն արձակեցաւ 'ի կապանաց մարմնոյն, Արեգի ամսոյ 'ի տասն՝ ըստ նոր յեղանակի ճշմարտութեան, և Մարտի 'ի տասն և ութ, ութ օրով յառաջ քան զգարնանամուտն, յաւուր շաբաթու, յորում աւուր յիշատակ էր Կիւրղի Երուսաղէմի հայրապետին, որ զընթերցուածն կարգեաց, և զկոչման գիրսն գրեաց և զվկայութիւն սրբոյն Օրէնզի և վեց եղբարցն իւրոց, որք նահատակեցան 'ի Մաքսիմիանոսէ Թագա-

ւորէ։ Նոցին վարուց լեալ հետեւող, վասն այնո-
րիկ և յիշատակի նոցին արժանացաւ. և ժողո-
վեցան անթիւ բազմութիւնք 'ի թաղումն նորա,
և մեծաւ սգով և տրտմութեամբ ողբային յոյժ.
զի զրկեցան 'ի լուսաւոր վարդապետութենէն
երանելւոյն և 'ի հոգեշահ բանիցն, և տարեալ
թաղեցին զնա 'ի գլուխ վանիցն յարեւելից կու-
սէ, մօտ 'ի փոքրագոյն եկեղեցին, ուր էին գե-
րեզմանք աղքատացն. զի ինքն այսպէս հրամա-
յեաց։ Անդ էր և եպիսկոպոս գաւառին տէր
Սարգիս բազում վարդապետօք և երիցամբք
Զողաւ և կաթուղիկոսն Աղուանից տէր Ներսէս,
և եպիսկոպոսն տէր Յոհաննէս յետ միոյ աւուր
յիշատակի նորա, և ողբացեալ և լացեալ յոյժ 'ի
վերայ գերեզմանի նորա, և մխիթարեալ զեղ-
բարսն՝ որ անդ, դարձան յիւրաքանչիւր տեղիս։
Եւ կալաւ զառաջնորդութիւն վանիցն եղբօրոր-
դի նորա Պօղոս քահանայ, և զվարդապետական
ուսումն Գրիգորիս վարդապետն՝ նորին աշակերտ
և ազգական։ Եւ այս եղև 'ի թուին շ։ Արդ աղօ-
թիւք նորա տացէ Աստուած խաղաղութիւն ամե-
նայն աշխարհի և մեզ մասն 'ի յարութեան նո-
րա և 'ի պսակին։

Վասն Յովանիսի Գառնեցւոյ

Այր ոմն առաքինի, զարմանալի վարուք, գոր-

ծող պատուիրանացն Աստուծոյ և լծաբարձ 'ի
մանկութենէ, արժանացեալ քահանայական պա-
տուոյ, կուսակրօն Յովանէս անուն, 'ի քաղա-
քագիւղէն Գառնոյ, ուր զարմանալի սարաւոյթն
Տրդատայ, 'ի սուրբ ուխտէն Այրի վանից։ Սա
'ի մանկական տիոցն արհամարհեալ զամենայն
ինչ կենցաղոյս, լքեալ զազգ և զտուն, յանա-
պատ տեղիս բնակէր. սիրէր առանձին լինել և
անզբաղապէս խօսել ընդ Աստուծոյ, տուեալ
զինքն ազգի ազգի ճգնութեանց, պահոց և աղօ-
թից գետնատարած անկողնօք և անհանգիստ աշ-
խատութեամբ, շրջելով 'ի տեղւոջէ 'ի տեղիս,
և լուսաւորելով զպատահեալսն։ Տուան նմա և
շնորհք բժշկութեանց, զի ձեռն դնելով և աղօ-
թելով, բժշկէր զբազում ախտաժէտս։ Խնդրէին
'ի նմանէ և գիր պահապան անձանց իւրեանց, և
նա անյապաղ տայր ամենայն խնդրողացն. և
զայս ոչ միայն հաւատացեալքն առնէին, այլ և
բազումք յանհաւատից։ Նաև գրելով զանուն
սրբոյ Երրորդութեանն և խորհրդական բանս աղօ-
թից, տայր նոցա. և նոցա առեալ հաւատով, կա-
պէին յանձինս իւրեանց։ Վասն սորա բազումք
բազում ինչ պատմէին, բայց առաւել սուրբ հա-
րազատն մեր և սքանչելի վարդապետն Վարդան,
որոյ բանքն արժանի էին հաւատարմութեան,
զի նոքա սիրով կապեալ էին ընդ միմեանս. և
մեք մարմնով զնա ոչ տեսաք վասն հեռաւորու-

թեան. նա 'ի մխիթարութիւն մեզ պատմեաց ինչ 'ի վարուց նորա մասնաւոր, և ասաց՝ թէ, ինքն իսկ Յովհաննէս ասաց մեզ. «Թէ չոգայ ես 'ի սուրբ քաղաքն Երուսաղէմ երկրպագել տնօրինականացն Քրիստոսի Աստուծոյ մերոյ, և յամեցի անդ աւուրս ինչս, իջեալ կայեալ 'ի սուրբն Յակոբ: Եւ 'ի գիշերի միում կանխեալ յառաջ քան զհարկանել ժամուն ազդարարի, որ յաղօթս զարթուցանէր զամենեսեան, և մինչդեռ աղօթէի 'ի սուրբ եկեղեցին, վարդապետն՝ որ իշխանն էր սրբոյն Յակոբայ, կոչեաց զիս և ասէ. Եկ, լուր զարմանալի իրս, զոր պատմէ քահանայս իմ մանկագոյն: Եւ իբրև չոգայ առ նա, կոչեաց զերէցն, որ ետես զտեսիլն զարմանալի, և ասէ. արդ ասա, զոր յառաջագոյն պատմեցեր ինձ, զի լուիցէ և սա: Եւ երէցն սկսաւ պատմել, թէ նախ քան զգալդ ձեր յեկեղեցիս էի ես յաղօթս 'ի վերնատան սուրբ եկեղեցւոյն, և յանկարծակի նկարեալ պատկերն Գաբրիէլի հրեշտակապետի, որ կայ հանդէպ պատկերի ամենասրբուհւոյ Աստուածածնին, բարբառեցաւ և ասէ. Ուրախ լեր բերկրեալդ, Տէր ընդ քեզ, օրհնեալ ես դու 'ի կանայս, և օրհնեալ է պտուղ յորովայնի քո: Սկսան և ամենայն սրբոց նկարեալ պատկերքն զնոյն բարբառել ցմեծ ժամս. ուրախ լեր բերկրեալդ, Տէր ընդ քեզ"…. և իմ զարմացեալ՝ փառս ետու Աստուծոյ, և քննեալ զտի տօմարական արուեստիւ, զի երեսուն էր այն օր Արեգ ամսոյ, և եօթն Ապրիլ ամսոյ, և հնգետասան Նիսանայ: Վկայէ այս տեսիլս հրաշից Հայոց անսուտ տօնին, որ ասեմք զօր աւետեաց սուրբ կուսին յերեսուն Արեգի, և Ապրիլի եօթն, և ոչ որպէս հակառակին այլ ազգք, և մանաւանդ Յոյնք, սխալով 'ի քսան և հինգն Մարտի ամսոյ:

Զայս պատմեաց ճշմարտախօսն այրն 'ի հաստատութիւն ուղղափառ հաւատոյս: Դարձեալ միւս ևս սմին հանգոյն, զոր պատմեալ էր սուրբ այրն այս Յովհաննէս: Էի ես, ասէ, 'ի կողմանս Յորդանան գետոյ, աղօթելով 'ի տեղւոջ մկրտութեան Տեառն, և սրբոյն Յովհաննու Կարապետի, եկին առ իս արք երեք, Տաճիկ տոհմաւ, և խընդրէին զկնիք սուրբ մկրտութեանն. և ես յապաղէի յայլում աւուր տալ, և կամ տացեն յայլոց, զի տեսանէի զնոսա արս խուժադուժս, և համարէի կեղծաւորիլ: Եւ որ աւագն էր 'ի նոցանէ, պատմեաց ինձ և ասէ. մեք 'ի Զանկիանայ եմք, 'ի քաղաքէ Պարսից, և եմք Մուղրի դենիւ. շինեցաք մեզ մինարայ մեծ և գեղեցիկ, և պատրաստեցաք որ ինչ պէտք են նուակատեացն. և ելի ես 'ի ծայր գմբեթին ըստ դենին Տաճկաց տալ զանարժան ձայնն, և ահա տեսի յարևելից կուսէ զերկինս պատառեալ, և զվայրն լի անբաւ լուսով. և թագաւոր մի ահեղ և զարմանալի յաթոռ փառաց նստեալ, և շուրջ զնովաւ բազմու-

թիւն լուսեղինաց՝ որք օրհնէին զնա անճառելի
ձայնիւ։ Գային նմա յերկրպագութիւն ամենայն
ազգք քրիստոնէից իւրաքանչիւր առաջնորդօք,
որք զարդարեալ էին երևելի փառօք. և յորժամ
երկրպագէին նմա, ընդունէր զողջոյն նոցա։ Ի
վերջոյ եկին այլ ազգ մի, որ կարի առաւել էին
փառօք քան զառաջինսն, և առաջնորդքն նոցա
կարի զարմանալիք. և յորժամ եկին և երկրպագին
Թագաւորին, և նա յարեաւ ընդ առաջ նոցա, և
համբուրեաց զնոսա առաջնորդօքն իւրեանց, և
մեծարեաց քան զամենայն ազգսն. և մինչ ես
հիացեալ կայի զարմացմամբ և ափշեալ, եկն առ
իս 'ի վեր այս աւագ որդի իմ, և ասէ. ընդէ՞ր
յամեցեր, զի քեզ մնան ամենայն ժողովուրդն.
հայեցաւ և սա յարևելս, և ետես զնոյն տեսիլ,
և եկաց յիմարեալ։ Ապա իբրև կարի յամեցաք,
նեղացաւ ամբոխն ընդ յամելն մեր, եկն՝ եւ այս
կրսեր որդի իմ և մեղադրէր մեզ վասն յամե-
լոյն մերոյ. և քանզի անցեալ էր տեսիլն 'ի գալ
սորա, պատմեցաք սմա զպատճառն յամելոյն և
զիրս տեսլեանն. և իսկոյն կամեցաք 'ի բարձանց
անտի քարոզել զՔրիստոս ճշմարիտ Աստուած,
և զմեզ քրիստոնեայս։ Սա արգել զմեզ և ասէ.
որովհետև այդպէս է, իմաստութեամբ գործես-
ցուք. թէ այժմ քարոզեմք մեք զՔրիստոս, իս-
կոյն սպանանեն զմեզ ամբոխս Տաճկաց, և զնեն
բարուրս, թէ վասն յանցանաց իրիք սպանաք. և

ոք գիտէ զմէնջ. այլ երթիցուք տացուք նոցա
զկերակուրսն՝ զոր պատրաստեցաք, և ապա մեք
երթիցուք 'ի սուրբ քաղաքն Երուսաղէմ, և անդ
լիցուք կատարեալ քրիստոնեայք 'ի ձեռն կնքոյ
աւազանին, և մանաւանդ այնց քրիստոնէից, զոր
դուք ասէք, եթէ կարի խնդութեամբ ընկալաւ
զնոսա Թագաւորն. և նշանակեցաւ ձեզ 'ի տես-
լեանն, եթէ ազգն Հայոց էին այնոքիկ, որք վի-
ճակ հասին Թադէոսի և Բարդուղիմէոսի, և սըր-
բոյն Գրիգորի։ Եւ մեր ունկնդիր եղեալ բանից
սորա, իջաք առ նոսա, ոչ ինչ պատմելով ումեք։
Թաղաք զամենայն գոյս մեր զշարժուն և զան-
շարժուն, և եկաք յԵրուսաղէմ, և աղաչէաք
զԱստուած պատահել մեզ այն ազգի, որ փառա-
ւորք էին 'ի տեսլեանն. և եցոյց մեզ Աստուած
զքեզ, և զնոյն նշան տեսաք 'ի վերայ քո։ Արդ
աղաչեմք զքեզ, տուր մեզ զկնիքն Քրիստոսի և
արա զմեզ կատարեալ ծառայս Աստուծոյն քո։
Եւ իմ տեսեալ զյօժարութիւն նոցա, և թէ 'ի
Տեառնէ է կոչումս, մկրտեցի զնոսա 'ի սուրբ
գետն Յորդանան յանուն Հօր և Որդւոյ և Հոգ-
ւոյն սրբոյ, և հաղորդեցուցի զնոսա 'ի պատուա-
կան մարմին և արիւն Որդւոյն Աստուծոյ. և ող-
ջունեալ զմեզ, ելին 'ի քաղաքէն գնալ 'ի մեծն
Հռոմ 'ի տեսութիւն գերեզմանի սուրբ առաքե-
լոցն Պետրոսի և Պօղոսի 'ի փառս Քրիստոսի։

Ասէր և զայս նոյն սքանչելին Յովանէս.

եթէ որք քառասուն, Հայ ազգաւ, չոգան յանապատն Սինայ 'ի լեառն, ուր երեւեցաւ Աստուած Մովսիսի և ետ զտախտակսն քարեղէն, յոր գրեալ էին տասն պատգամքն, երկիր պագանել Աստուծոյ և տեսանել զսուրբ տեղիսն. և էր 'ի ստորոտ լերինն վանք մի, Հոռոմ ազգաւ, խստակրօն վարուք. անդ օթեւանս կալան, և մինչ կամէին ելանել 'ի լեառն, պատուիրեցին նոցա բնակիչք վանացն և ասեն. զգիշերս մի ագանիք անդ, քանզի ահագին արհաւիրք տեսանեն անդ՝ որք օթագային, այլ և կորուստ անձանց բազմաց պատահեալ է: Իսկ նոքա ելին համարձակութեամբ, ոչ ինչ կերակուրս բարձեալ ընդ իւրեանս, և յամեցին անդ աւուրս ինչ, և զարմացեալ էին բնակիչք վանացն, թէ զի՞նչ եղեն. զի ընդ այլ անց ոչ կայր. և համարէին եթէ կորեան յարհաւրաց անտի: Իսկ նոքա յետ կատարելոյ զպաշտօնն իւրեանց իջին 'ի լեռնէ անտի, փառաւորեալ և հրաշալի երեսօք. և էին քառասուն երկու: Եւ զարմացեալք բնակիչք վանացն, ելին ընդ առաջ նոցա ջահիւ և լապտերօք. և մեծաւ պատուով տարեալ հանգուցին. և զարմանային, զի յորժամ ելին 'ի լեառն քառասուն էին, և իբրև իջին՝ քառասուն երկու. զի գիտէին թէ այլ ոք ոչ.չոգաւ 'ի վեր, բայց 'ի նոցունց: Եւ եդին սեղան առ 'ի կերակուրս. յարեան երկու արքն փառաւորք, որք աւելի էին քան զքառասունսն, պաշ-

տել զնոսա 'ի սեղանն և ոչ տային թոյլ արանց վանիցն ծառայել նոցա, այլ ասէին. «մեր սովորութիւն է զեղբարս մեր մեզ պաշտել»: Եւ իբրև կերան՝ որ ինչ պատշաճն էր, ողջունեալ զնոսա, եղեն աներեւոյթ, որք էին Մովսէս և Եղիա. և ահիւ մեծաւ ըմբռնեալք բնակիչք վանացն, պատուէին զնոսա իբրև զհրեշտակս. և յուղարկեցին մեծաւ պատուով: Զայս պատմէր սրբասէրն Յովհաննէս 'ի դէմս այլոց վասն անձին խոնարհութեան, զի մի գիտասցեն և ինքն ընդ նոսա էր:

Յետ այսորիկ շրջեալ նորա ընդ բազում գաւառս և ընդ քաղաքս, եհաս 'ի քաղաքն Կոզոնիա. և բազումք 'ի Թուրքացն և 'ի Տաճկացն գային առ նա և մկրտէին վասն սքանչելի վարուց նորա և բժշկութեանցն, զոր առնէր: Ապա նախանձեցան ընդ նա Պարսիկքն, և իշխան քաղաքին Կոզոնիոյ ըմբռնեաց զնա և զերէց մի, և կուտեալ փայտ չոր, եդեալ զնոսա 'ի մէջ՝ վառեաց հրով. և նա քաջալերէր զնա յայր երէցն, որ ընդ նմա. և ասէր. «մի երկնչիր, կարող է Աստուած ապրեցուցանել զմեզ 'ի հրոյս, որպէս զերիս մանկունսն». և մինչ բորբոքէր բոցն, մանուկ իշխանին անկաւ ընդ պարիսպ բերդին, և յարեաւ անվնաս. և 'ի հարցանելն, թէ որպէս կեաս կենդանի, պատասխանի ետ. թէ այրն այն՝ զոր ընկեցիք 'ի հուրն, նա եբարձ զիս ձեռօք իւրովք և ոչ ետ ինձ անկանել յերկիր: Եւ առ ժամայն առաքեաց

իշխանն և հրամայեաց հանել զնոսա 'ի հրոյն, և թոյլ ետ երթալ, ուր և կամեսցի։ Եւ նորա շըրջեալ ընդ բազում գաւառս, գնաց 'ի Հռոմկլայն առ մեծ կաթուղիկոսն Հայոց Կոստանդին. և նա ուրախութեամբ ընկալաւ զնա մեծաւ պատուով, և ոչ ետ թոյլ երթալ յայլ ուրեք։ Եւ անդ եկաց մինչև փոխեցաւ առ Քրիստոս և թաղեցաւ 'ի նմին. զընթացս իւր կատարեալ և զհաւատս պահեալ, եհաս անթառամ պսակին և անվախճան կենացն։ Աղօթք նորա մեզ 'ի սատարութիւն և ի թողութիւն մեղաց, և յիշատակ նորա ընդ սուրբս ամենայն 'ի Քրիստոս Յիսուս 'ի տէր մեր, որում փառք յաւիտեանս։

Վասն Սարթախին որդւոյ Բաթուին

Մեծ զօրավարն Բաթու, որ 'ի կողմանս հիւսիսոյ առեալ իւր բնակութիւն առ ափն Կասբից ծովուն և Աթլ գետոյն մեծի, որ ոչ զտանի հանգոյն նմա 'ի վերայ երկրի, քանզի ծովօրէն ընթանայ վասն հարթայատակութեան երկրին, 'ի մեծ և 'ի լայնանիստ դաշտին Խօչախաց զետեղէր նա բազում և անթուելի զօրքն, որ ընդ նմա, քանզի խորանօք բնակէին, և 'ի չուելն զխորանսն սայլիւք տանէին, բազում եզինս և ձիս լծեալ 'ի սայլսն։ Սա զօրացաւ յոյժ և մեծացաւ քան զամենեսին, և հնազանդեաց զաի-

զերս, և 'ի հարկի կացոյց զաշխարհս ամենայն, այլ իւր և ազգայինքն զնա քան զամենեսին մեծ ունէին. և որ թագաւորէր 'ի նոցունց, զոր Ղանն կոչէին, հրամանաւ նորա նստէր յաթոռն. զի եղև մեռանել Գիուգ Ղանին, և ընդ միմեանս անկեալ ազգատոհմ̃ նորին՝ թէ ո՛վ որ նստցի յաթոռն, և ամենեքեան զնա արժանացուցին նըստիլ և կամ զո՛վ կամեսցի և նա, ա՛յն լիցի թագաւոր։ Եւ կոչեցին զնա 'ի կողմանցն հիւսիսոյ գալ յաշխարհն իւրեանց և թագաւորել 'ի վերայ ամենից. և չոգաւ նա հաստատել զթագաւորութիւնն, և եթող զլուխ զօրացն զորդին իւր, որում անուն էր Սարթախ, և ինքն երթեալ ոչ նստաւ յաթոռ թագաւորութեանն, այլ զայլ ոմ̃ կարգեաց յազգայնոցն, որում անուն էր Մանգու, և ինքն դարձաւ առ զօրս իւր։ Իսկ յազգականացն ոմանք տհաճ եղեն ընդ գործն, զի ակն ունէին, կամ ինքեանք թագաւորել և կամ թագաւորեցուցանել զորդին Գիուգ Ղանին, որում անուն էր Խօճա-Ղան. բայց յերես ոչ իշխեցին բերել զիր անհաճութեան։ Իսկ յորժամ դարձաւ նա առ զօրս իւր, նոքա սկսան ցուցանել իրս ապստամբութեան առ Մանգու Ղանն. և լուեալ Բաթոյի, հրամայեաց կոտորել զբազումս յազգականացն և 'ի մեծամեծացն. ընդ որս և զմեծ ոմ̃ զլխաւոր, որում անուն էր Էլչի Գադա, որ հրաման առեալ էր 'ի Գիուգ Ղանէն

զօրավար լինել Թաթար զօրուն՝ որ յարեւելս և յաշխարհս Հայոց, փոխանակ Բաչու Նուինն. և մինչդեռ ՚ի ճանապարհի էր, յաշխարհին Պարսից եհաս նմա համբաւ մահու Գիւգ Ղանին. և անդէն գետեղեալ մնայր, թէ ո՞վ առնու զաթոռ թագաւորութեան: Զամանէ ամբաստան եղեն առ Բաթոյն գլխաւորք զօրուն՝ որ յարեւելս, զի ո՛չ կամէին իշխել ՚ի վերայ ինքեանց, զի այր մեծամիտ էր, և ասեն. «Թէ և սա ես յանձնադանդիցն է Մանգու Ղանին». և հրամայեաց առ ինքն ածել, զոր ըմբռնեալ տարան կապանօք, զոր եսպան չարապէս:

Ապա սկսան երթալ առ նա թագաւորք և թագաւորազունք, և իշխանք և վաճառականք և ամենայն վշտաւորք, որք զրկեալ էին ՚ի հայրենեաց իւրեանց. և նա արդար դատաստանաւ տայր զիւրաքանչիւր զաւառս և զհայրենիս և զիշխանութիւնս ամենայն ումեք երթողացն առ նա, և գիրս նշանաւորս, և ո՛չ ոք իշխէր ընդդէմ դառնալ հրամայելոցն ՚ի նմանէ: Սորա էր որդի մի, որում անուն էր Սարթախ, զոր վերագոյնն յիշեցաք, որ սնաւ քրիստոնեայ դայեկօք. և ՚ի չափ հասեալ, հաւատայ ՚ի Քրիստոս և մկրտեցաւ յԱսորոցն, որք սնուցին զնա: Սա բազում զիւրութիւն արար եկեղեցւոյ և քրիստոնէից, և կամաւ հօր իւրոյ գրեաց գիր ազատութեան քահանայից և եկեղեցւոյ, և առաքեաց յամենայն

կողմանս սպառնալիս և մահ, թէ ոք հարկ առնու յեկեղեցւոյ, կամ ՚ի նորին պաշտօնէից, զինչ ազգ և իցեն, այլ և զՏաճկաց մզկիթն և զնորին սպասաւորսն: Աստուստ ապա համարձակութիւն առեալ չոգան առ նա վարդապետք և եպիսկոպոսունք և երիցունք. և նա սիրով ընդունէր զամենեսին, և կատարէր զխնդրուածս նոցա: Եւ ինքն երկիւղածութեամբ և աստուածպաշտութեամբ կեայր հանապազ, եկեղեցի խորանեայ ընդ իւր շրջեցուցանելով, և զաստուածային խորհուրդն անյապաղ կատարելով: Ընդ որս չոգաւ և առ նա մեծ իշխանն Խաչենոյ և կողմանցն Արցախու Հասան, զոր Ջալալ կոչէին գգուանօք, այր աստուածապաշտ և երկիւղած. և մեծարանօք ընկալաւ զնա, և զոր ընդ նմա էին զիշխանն Գրիգոր, զոր սովորութեամբ Տղայն կոչէին, և էր ծեր յայնժամ, և զԴեսում իշխան պարկեշտ պատանի, և զվարդապետն Մարկոս, և զեպիսկոպոսն Գրիգոր. և տարեալ առ հայր իւր մեծապատիւ, և ետ ՚ի նա զհայրենիքն իւր զՉարաբերդ և զԱկանայ և զԿառկառն, զոր հանեալ էին յառաջագոյն ՚ի նմանէ ազգն Թուրքաց և Վրաց: Ապա և զգիր ազատութեան կաթուղիկոսին Աղուանից տէր Ներսիսի, և ամենայն գոյից նորա և ստացուածոց, զի ազատ և անհարկ լիցի և համարձակ շրջեսցի ՚ի վիճակս իշխանութեան իւրոյ ամենայն

ուրեք. և մի՛ ոք դիմադարձ լիցի ասացելոցն 'ի նմանէ։ Եւ եկն Ջալալն 'ի տուն իւր ուրախութեամբ. բայց զկնի աւուրց նեղեալ 'ի հարկապահանջացն և յԱրղունէն, գնաց առ Մանկու Ղանն։ Եւ թագաւորեաց Մանկու Ղանն յեօթն հարիւր թուականին։

Վասն մարախին, որ եկեր զաշխարհս

Ի յեօթն հարիւր և մի թուականին Հայոց եկն մարախ սաստիկ, այնքան՝ մինչ զի 'ի վերանալն տուեր գործէր, և նուաղ երևէր լոյս արեգականն. և եկեալ 'ի կողմանցն Պարսից, եկեր զաշխարհս Հայոց. ոչ միայն զբոյսս դալարոյ, այլ և զհող երկրի և զաղբս լափէր, և մտանէր 'ի տունս ընդ երդս և ընդ դրունս, թէ պատահէր 'ի բաց. զանի հարաւ երկիր։ Եւ եղև սովութիւն հացի, և հասեալ 'ի ձմերան եղանակն, արկ ձուս յերկիր և մեռաւ. և նեխեցաւ երկիր 'ի հոտոյն։ Եւ 'ի գալ գարնանն յեօթն հարիւր երկու թուականին բուսոյց երկիր զձագս մարախոյն յոյժ թանձրութեամբ, մինչ զի ծածկեցաւ հող և քարինք երկրի, և 'ի ժամ երեկոյին կուտէին 'ի վերայ միմեանց բլրաձև. և սկսաւ ուտել զդալարի և զհող։ Եւ խորհեցան մարդիկ թողուլ զբնակութիւնս իւրեանց և երթալ յօտարութիւն, ուր և գտցեն կերակուր. և զի՛ յառաջագոյն

կերեալ էր զշրջակայ գաւառսն՝ սկսեալ 'ի Սպահնոյ և 'ի Պարսից և 'ի Միջագետաց, վասն այնորիկ տարակուսեալք ոչ գիտէին զինչ գործեսցեն։ Սկսան այնուհետև ապաւինել յամենակարող ձեռն և 'ի բազուկն հզօր, որ յոչընչէ գոյացոյց զարարածս, և ողորմութեամբ իւրով խնամէ զսա միշտ, որ և անհնարինքն հնարաւորք են նմա, և արտասուօք և ուխտիւք հայցէին 'ի նմանէ բառնալ զպատուհասն յաշխարհէ։ Իսկ ողորմածն Աստուած խիստ վիրացն եդ սպեղանիս, և որ եհարն, նոյն և բժշկեաց։ Քանզի եկն բազմութիւն մանր հաւուցն պխակաց, զոր վասն բազմութեանն Տար անուանեն, և կարգ կալեալ յեզերացն, առ հասարակ սպառեալ եկեր զամենայն բազմութիւն մարախոյն այնքան, զի ոչ մի գտանիւր. և անդ էր տեսանել զամենայն բերան 'ի գովութիւն Աստուծոյ, և ամենայն միտք կային 'ի զարմացման։ Բայց զրոյց՝ որ վասն հաւուցս այսոցիկ է, սքանչացման արժանի է։ Ասեն թէ 'ի կողմանս Պարսից աշխարհին, որ կոչի Քիրման, է ջուր ինչ, յոր երթեալ՝ առնուն 'ի ջրոյն 'ի շիշս ապակիս և բերեն անյետս դառնալի, և զջուրն յերկիր ոչ դնեն, այլ կապեն 'ի ձողս և ցցեն. և անդ է դադարք հաւուցն. զհետ ջրոյն՝ որ տանին, ելանեն հաւքն ըստ թուոյ խնդրողին. և այսպէս գան հաւքն զկնի մարախոյն։ Մեք հաւատամք զամենայն գործ լեալ

'ի խնամոցն Աստուծոյ, որ ըստ մեղաց աշխարհի թոյլ տայ գալ պատուհասին, և դարձեալ բժշկէ ողորմութեամբն իւրով որպէս և կամի. որ և յայս պատուհաս մարախոյս զայս ետ դեղ և սպեղանի զբազմութիւն ձագուցս ծախողի։

Վասն աշխարհագրին, որ եղեւ հրամանաւ Մանգու Ղանին

Արդ յեօթն հարիւր և երեք թուականին Հայոց առաքեաց Մանգու Ղանն, և մեծ զօրավարն Բաթու, զայր մի ոստիկան, Արղուն անուն, որ 'ի Գիւգ Ղանէն առեալ էր հրաման վերակացութեանն հարկացն արքունի 'ի հնազանդեալ աշխարհացն, և զմիւս եւս 'ի գլխաւորաց 'ի տանէ Բաթուին, որում անուն էր Թօրա Աղա, հանդերձ այլովք բազմօք, որ ընդ նոսա, աշխարհագիր առնել յամենայն ազգս, որ ընդ ձեռամբ նոցա էին հնազանդեալ։ Եւ նոցա առեալ զայս հրաման, ելին ընդ աշխարհս ամենայն կատարել զգործն. հասին և յաշխարհս Հայոց և' Վրաց և' Աղուանից, և որ շուրջ զնոքօք գաւառք, ըսկսեալք 'ի տասնամենից և 'ի վեր ընդ գրով համարոյ արկանել զամենեսին, բաց 'ի կանանց։ Եւ յամենեցունց պահանջեալ խստագոյն հարկս, աւելի քան զկար մարդոյն, և սկսան չքաւորիլ. և նեղէին անհնարին կտտանօք և չարչարանօք և գելոցօք.

և որ թագչէր՝ ըմբռնեալ սպանանէին, և որ ոչ կարէր հատուցանել զսակն՝ զմանկունս նոցա առնուին ընդ պարտուցն, քանզի Պարսիկ Տաճկահաւատք սպասաւորօք շրջէին։ Այլ և իշխանքն տեարք գաւառացն նոցուն գործակից լեալ 'ի նեղելոցն և 'ի պահանջելն վասն իւրեանց շահելոյ. և այսու ոչ բաւականացան, այլ և զամենայն արուեստագէտս, եթէ 'ի քաղաքս և եթէ 'ի գիւղս, զամենայն 'ի հարկի կացուցին։ Այլ և զձուկս, և զլիճս ձկնորսաց, և զերկաթահանս, զդարբինս, և զշապարարս, և զի՞ պիտոյ է մանրամասնաբար ասել, զամենայն դուռն շահից հատից 'ի մարդկանէ, և ինքեանք միայն շահէին. և զամենայն աղահանս առին, որ 'ի Կողբ, և որ յայլ կողմանս։ Նա և 'ի վաճառականաց բազում ինչս շահեալ, կուտեցին գանձս սաստիկս ոսկւոյ և արծաթոյ և ականց պատուականաց. և այսպէս զամենեսին աղացուցեալ, և վայրի և աշխարհով լցեալ զաշխարհս, թողին չար ոստիկանս 'ի վերայ աշխարհացս զնոյն պահանջել յամենայն ամի, նովին համարով և գրով։ Բայց մեծարեցաւ 'ի նոցանէ այր մի մեծատուն վաճառական, Ումեկ անուն, զոր ինքեանք Սախլ կոչէին. այր բարեգործ, զոր երբեմն յիշատակեցաք, որ ապրեցաւ յաւերելն Կարնոյ քաղաքի 'ի Թաթարացն հանդերձ որդւովքն՝ Յովհաննու և Ստեփանոսիւ, և եղբարբք իւրովք. և էր յայնժամ 'ի Տփխիս

քաղաքի բնակութիւն կալեալ, և հայր անուանեալ թագաւորին Վրաց Դաւթի, և մեծարեալ 'ի Ղանէն զրով, և յամենայն աւագանւոյն։ Սա առատ տուր ետ Արղունին, և որ ընդ նմա, և մեծարեցաւ յոյժ 'ի նոցունց։ Բայց յեկեղեցականացն ոչինչ առին հարկս, զի չունէին հրաման 'ի Ղանէն։ Նոյնպէս և որդիքն Սարաւանին՝ Շնորհաւորն և Մկրտիչն, ընչաւէտք և մեծատունք։

Վասն երթալոյն բարեպաշտ թագաւորին Հայոց Հեթմոյ առ Բաթոյն եւ Մանգու Ղանն

Մեծահաւատ և քրիստոսասէր արքայն Հայոց Հեթում. որ 'ի կողմանս Կիլիկեցւոց նստէր 'ի քաղաքն Սիս, յառաջագոյն առաքեաց զեղբայր իւր զՍմբատ, որ զօրավարն էր նորին, առ Ղանն Գիուգ ընծայիւք և պատարագօք, և դարձաւ 'ի նմանէ պատուով և հրովարտակօք ընդունելութեան։ Իսկ յորժամ թագաւորեաց Մանգու Ղանն, առաքեաց մեծ թագաւորահայրն և զօրապետն Բաթու, որ 'ի կողմանս հիւսիսոյ գետոյ առեալ կայր անթիւ բազմութեամբն որ ընդ նմա առ ափն մեծ և անհուն գետոյն, զոր Եթիլ կոչեն, որ մտանէ 'ի ծովն Կասբից, առ թագաւորն Հեթում գալ տեսանել զնա և զՄանգու Ղանն։ Եւ նա երկուցեալ 'ի նմանէ՝ գայ գաղտագողի, այլակերպեալ զինքն վասն ահին Թուրքաց, որք

սահմանակիցք նորա էին, զոր Հոռմոց Սուլտանն անուանեն, որում անուն էր Ալադին, զի ոխս մթերեալ ունէին ընդ նմա վասն ձեռն տալոյ նորա 'ի Թաթարն. և փութով անցեալ ընդ երկիր նորա յաւուրս երկոտասան, եկն 'ի Կարս քաղաք. և տեսեալ զԲաչու Նուինն, որ զօրապետ էր Թաթար զօրուն՝ որ յարևելս, և զայլ մեծամեծսն, և պատուեալ 'ի նոցունց, զտեղի առ յոտն Արագածու՝ հանդէպ լերինն Արայի 'ի գիւղն, որ կոչի Վարդենիս, 'ի տանն իշխանին, զոր Քուրդ անուանէին, Հայ ազգաւ, կրօնիւք քրիստոնեայ, և որդիք իւր Վաչէ և Հասան, և կին նորա Խորիշահ՝ յազգէ Մամիկոնէից, դուստր մարզպանայ՝ քոյր Ասլան Պեկին և Գրիգորոյ. մինչև բերաւ նմա ինչք 'ի տանէ իւրմէ 'ի պէտս ընծայից և պատարագաց, զոր առաքեաց հայր նորա իշխանաց իշխանն Կոստանդին, յայնժամ ծեր զօրով. և որդիք նորա Լևոն և Թորոս, զոր եթող փոխանորդ իւր, զի փոխեալ էր առ Քրիստոս բարեպաշտ թագուհի նորա, Զապէլ անուն, որ թարգմանի Եղիսաբէթ, բարեգործ և ողորմած և աղքատասէր, դուստր մեծ թագաւորին Լևոնի՝ առաջին պսակաւորին։ Եւ իբրև գիտաց մեծ կաթողիկոսն Կոստանդին, եթէ գնաց նա խաղաղութեամբ և դադարեալ է 'ի Մեծն Հայք, առաքեաց զմեծ վարդապետն Յակոբ՝ զայր բանաւոր և իմաստուն, զոր յառաջագոյն առաքեալ

էին վասն սիրոյ և միաբանութեան առ Թագաւորն Յունաց Յօվանէս, որ ունէր զկողմանս Ասիոյ և մեծացեալ էր յաւուրսն, և առ պատրիարգն նոցուն։ Եւ երթեալ իմաստախօս բանիւք Աստուածային գրոց ընդդիմացաւ հարցաքննութեան ժողովոյն Յունաց, որ յաղագս մի բնութիւն ասելոյ 'ի Քրիստոս բամբասէին զմեզ Եւտիքեանս լինել. և նա խոհեմ բանիւք եցոյց գրով յերկուց միացեալ զՔրիստոս՝ Աստուած և մարդ կատարեալ, երկոքումբք անճառ միաւորութեամբ զաստուածութիւնն ոչ կորուսեալ, և զմարդկութիւնն ոչ շփոթեալ. 'ի մի բնութիւն փառաւորեալ գործով Աստուածաբար և մարդկապէս։ Նոյնպէս և վասն Սուրբ Աստուածին էին բանք, զոր մեք ասեմք 'ի դէմս Որդւոյ՝ ըստ Յոհաննու աւետարանչին վկայութեան. և որ այլ զայթակղութիւնք կային առ նոսա սակս դաւանութեան մերոյ, զամենայնն աստուածիմաստ բանիւք և գրոց վկայութեամբ հաստատեալ՝ շինեաց զմիտս նոցա 'ի սէր և 'ի միաբանութիւն ընդ ազգս մեր, և դարձաւ 'ի նոցանէն պատուով։ Եւ եպիսկոպոսն տէր Ստեփաննոս եկն, և Մխիթար վարդապետն, որ լինէր ի Սկևռայն, գնացեալ անդ 'ի կողմանս արևելից, և Բարսեղ քահանայ, որ դեսպանն էր Բաթուին, ընդ նմա իսկ եկեալ էր և Թորոս քահանայ կուսակրօն, և Կարապետն, որ դրան երէց էր արքային, հեզ

բարուք և գիտնական, և այլ իշխանք յոլովք, զորս ընդ իւր առեալ արքային, չոգաւ ընդ աշխարհն Աղուանից և ընդ դուռն Դարբանդայ, որ է պահակն Ճորայ, առ Բաթոյն և առ Սարթախ որդի նորա, որ էր քրիստոնեայ հաւատով. և մեծարեալ 'ի նոցունց բազում պատուասիրութեամբ։ Ապա առաքեցին զնա առ Ղանն Մանկու ընդ երկարաձիգ ճանապարհն յայնկոյս ծովուն Կասբից. և ելեալք 'ի նմանէ 'ի վեցն Մարերի ամսոյ, և յերեքտասանն Մայիս, անցեալ ընդ Այեխ գետ, եկին յՕրն՝ որ է մէջ ճանապարհին ընդ Բաթոյն և ընդ Մանկու Ղանն. և անցեալ ընդ Երթիճ գետ, մտին յաշխարհն Նայիմանին. և եկեալ 'ի Ղարախորայն, և անցեալ 'ի Թարատայն 'ի չորսն Հոռի ամսոյ, 'ի Սեպտեմբերի երեքտասանն, 'ի տօնի Նաւակատեաց Խաչին՝ տեսին զՄանկու Ղանն՝ երևելի փառօք նստեալ։ Եւ մատուցեալ զընծայսն, մեծարեցաւ 'ի նմանէ ըստ արժանւոյն. և կացեալ ընդ նմա աւուրս յիսուն, և տուեալ նմա հրովարտակ նշանաւոր՝ զի մի ոք իշխեսցէ նեղել զնա և զաշխարհս նորա, ետ և գիր ազատութեան եկեղեցեաց ընդ ամենայն տեղիս։ Եւ ել 'ի նմանէ յաւուրն յիսներորդի 'ի քաներեքն Սահմի ամսոյ, և 'ի մէկն Նոյեմբերի, և յերեսուն օրն հասին 'ի Ղումաղուրն։ Եւ եկեալ 'ի Պերպալեխ և 'ի Պեշպալեխն և յաւազուտ երկիրն, յորում կային մարդիկ վայրենիք մերկ, մազ ունելով

մխայն 'ի գլուխն, և ասինք կանանցն մեծ յոյժ և երկայն, և էին անբանք. յորում կան և ձիք վայրիք դեղին և սեաւ գունով, և ջորիք սպիտակ և սեաւ գունով և մեծ քան զձի, և քան զէշ. և ուղտք ունին երկու կուտկենս։ Եւ անտի եկին առ Լեխն, և 'ի Քուլլուկն և յԸնկախն, 'ի Ճանպալեխն և 'ի Խութափայն և յԱնկիպալեխն։ Եւ ապա մտին 'ի Թուրքաստան. և անտի յԵնկոփրուկն և 'ի Դինկապալեխն և 'ի Փուլատն. և անցեալ ընդ Սուտկօլն և ընդ Կաթն ծով, եկին յԱլուալեխ և յԻշանպալեխն. և անցեալ ընդ գետն՝ որ կոչի Իլանսու, և անձեալ ընդ բազուկ լերինն Տորոսի և եկեալ 'ի Դալաս, և եկեալ առ Հուլաւուն, որ էր եղբայր Մանգու Ղանին, և առեալ իւր բաժին զկողմանս արեւելից։ Եւ ապա դարձեալք յարեւմտից հիւսիս, եկն 'ի Խութուխչինն, և 'ի Պերքանթն, և 'ի Սուղուլղանն, և յՍւրսառյղանն, և 'ի Քայիքանթն, և 'ի Խուզախն, որ է Քամոց, և 'ի Խնդախոյրն, և 'ի Սնղախն, որ է Խարչուխ լեառն, յորմէ Սալչուքիքն են, որոյ սկիզբն 'ի Տորոս լեռնէ, և երթայ մինչ 'ի Փարչինն և 'ի Հասանի։ Եւ անտի եկին առ Սարթախն որդի Բաթուին, որ երթայր առ Մանգու Ղանն. և անտի յԻնդանն և 'ի Սօրանն, որ է սաստիկ մեծ, և 'ի Խարաչուխն, և յԱսոն, և 'ի Սօրի, և յՕթրարն, և 'ի Զուռնուխն, և 'ի Դիզակն. և անտի երեսուն օր 'ի Սամարղանդն,

և 'ի Սարիփուլ, և 'ի Քրման, և 'ի Բուխարայ։ Եւ ապա անցին ընդ գետն մեծ Ճեհուն և եկին 'ի Մրմն և 'ի Սարասխ. և ապա 'ի Տուս, որ կայ ընդդէմ Խորասանայ, որ կոչի Ռօղաստան. և մտեալ 'ի Մազանտարանն, անտի 'ի Պստան, և ապա յաշխարհն Երաղոյ 'ի սահմանս Մուլհետին, 'ի Տամղայն, և 'ի Ռէ մեծ քաղաք, և 'ի Խզուինն. և անտի յԱւահր, և 'ի Զանգիան, և 'ի Միանա, յերկոտասան օրն Թարվէժ։ Եւ յետ քսան և վեց աւուր անցեալ ընդ գետն Երասխ առ Բաչու Նուինն, որ գլխաւոր էր Թաթար զօրուն. և նա յուղարկեաց զնա առ Խօճա Նուինն, զոր թողեալ էր փոխանակ իւր գլխաւոր զօրուն, և ինքն առեալ զգլխաւորս զօրուն, գնաց ընդ առաջ Հուլաւուին՝ եղբօր Մանգու Ղանին, որ գայր յարեւելս։

Իսկ թագաւորն բարեպաշտ Հեթում, եկեալ 'ի տուն իշխանին Քրթին 'ի գիւղն Վարդենիս, ուր թողեալ էր զախ իւր և զկարասի, և Յայր զալաթեան Բարողի քահանայի, զոր յուղարկեալ էր առ Բաթոյն վերստին, զի ցուցցէ նմա զգիրս և զհրաման Մանկու Ղանին. զի և նա ընդ նմին օրինակի գրեսցէ հրամանս։ Ապա եկին առ նա վարդապետքն իւր՝ Յակոբ, զոր աստէն եթող 'ի պէտս գործոյ եկեղեցւոյ, և Մխիթար, զոր դարձոյց 'ի Բաթուէն, մինչչև երթեալ էր առ Մանգու Ղանն։ Այլ և եպիսկոպոսք և վարդապետք և քահանայք

և իշխանք քրիստոնէից, որ գային առ նա, սիրով ընդունէր զնոսա. զի այր քաղցր էր և իմաստուն և գիտնաւոր գրովք. և տայր պարգևս ըստ կարին, և ուրախ արձակէր զամենեսին. տայր և հանդերձս քահանայական 'ի զարդ եկեղեցեացն, զի յոյժ սիրող էր պատարագի և եկեղեցւոյ։ Ընդունէր զամենայն ազգաց քրիստոնեայս և աղաչէր սիրով կալ ընդ միմեանս, իբրև զեղբարս և զանդամս Քրիստոսի, որպէս պատուիրեաց տէր. «Թէ յայսմ ծանիցեն՝ թէ իմ աշակերտք էք, թէ զմիմեանս սիրեցէք»։ Բազում իրս զարմանալիս և անծանօթս պատմէր մեզ զբարբարոս ազգացն, զոր տեսեալ էր և լուեալ։ Ասէր թէ կայ աշխարհ մի անդր քան զԽատայիքն, ուր կանայքն են 'ի ձև մարդոյ բանականաց, և արքն 'ի կերպարանս շանց, և են անբանք, մեծք և մազեղք. և ոչ ումեք թողուն մտանել յաշխարհն իւրեանց շունքն, և որսան որսս շունքն, և այնու կերակրին շունքն և կանայքն. և 'ի խառնակիլ շանցն ընդ կանանցն, արուքն շանց կերպիւ ծնանին, և էգքն կանանց։ Կայ և կղզի մի աւազուտ, յորում բուսանի ծառօրէն ոսկր ինչ պատուական, զոր ձկնատամն կոչեն. և 'ի հատանելն այլ բուսանի 'ի տեղին ըստ նմանութեան եղջերուաց։ Կայ և աշխարհ, յորում բազում կռապաշտք. և պաշտեն կուռս կաւեղէնս մեծ յոյժ, անուն Շակմոնիա. և ասեն

Աստուած երեք հազար և քառասուն ամաց. և կայ այլ ևս երեսուն եօթն թուման ամս, որ է մին թումանն տասն հազար, և ապա հանէ զնա յաստուածութենէն. այլ միւս ևս, որում անուն էր Մայդրին, արարեալ են և նմա պատկերս կաւեղէնս անհնարին մեծութեամբ 'ի գեղեցիկ տաճարի։ Եւ են ազգն ամենայն հանդերձ կանամբք և մանկտովք քուրմք, և անուանին Տոյինք, գերծածք հերօք և մօրուօք. ունին և փիլոն դեղին ըստ նմանութեան քրիստոնէից, բայց զլանջօքն և ոչ զթիկամբքն. և են պարկեշտք 'ի կերակուրս և յամուսնութիւնս. առնեն կին 'ի քսան ամին, և մինչև յերեսուն ամն՝ 'ի շաբաթն երեք անգամ մերձենան. և մինչև 'ի քառասուն՝ յամսեան երեք հետ. և մինչև յյիսուն ամն՝ 'ի տարին երեք հետ. և յորժամ անցանի ընդ յիսուն ամն, այլ ոչ մօտին 'ի նա։ Բազում և այլ ինչ պատմէր թագաւորն իմաստասէր 'ի խժականացն, զոր թողաք մեք. զի մի աւելորդ ումեք թուեսցի։ Յուլթ ամսին ապա եհաս յերկիրս Հայոց՝ յետ ելանելոյ 'ի Մանկու Ղանէն. և էր թուականս Հայոց չԴ։

Վասն կոտորածի երկրին Հոռոմոց

Արդ 'ի սկսանել թուականին Հայոց չԵ մեռաւ Բաթուն՝ զօրավարն հիւսիսոյ, և որդի նորա Սարթախն 'ի ճանապարհի էր, զի երթայր

տու Մանկու Ղանն. և ոչ դարձաւ 'ի տուն իւր թաղել զհայրն իւր, այլ գնաց զառաջի եղեալ ճանապարհն. ընդ որ յոյժ ուրախացեալ Մանկու Ղանն, ել ընդ առաջ նորա, և մեծարեաց զնա 'ի պատիւ մեծ յոյժ, և ետ նմա զիշխանութիւն հօրն իւրոյ իշխել ամենայն զօրացն, այլ և ամենայն զօրացն հնազանդելոց իշխանութեան նորա, և երկրորդ իւր կոչել և տալ հրաման տիրաբար. և յուղարկեաց զնա 'ի տուն իւր։ Ընդ նմա էր և բարեպաշտ իշխանն Խաչենոյ Ջալալն, որ երթեալ էր ցուցանել զաղէտս իւր, զոր կրեաց նա յԱրղուն Ոստիկանէն, որ հազիւ զերծաւ 'ի մահուանէն 'ի սադրելոյ Տաճկացն։ Եւ ետ նմա գիր իշխանութեան իւրոյ տիրել սեպհականաբար, և ոչ երկնչիլ յումեքէ. զի սիրէր զնա Սարթախն վասն քրիստոնէութեան, զի և նա քրիստոնեայ էր։ Եւ եհաս յիշխանութիւն իւր Սարթախն երեելի փառօք. ազգականքն իւր Տաճկահաւատ՝ Բարաքայն և Բարքաչայն, ետուն նմա դեղ մահու և լուծին 'ի կենացս. և մեծ տրտմութիւն եղև քրիստոնէից ամենայն, այլ և գլխովին իսկ Մանկու Ղանին և եղբօր իւրոյ Հուլաւուլին, որ տիրէր ամենայն կողմանց արևելից։ Բայց մինչև եղեալ էին այս իրք, մեծն 'ի զօրավարս Ղանաձևն Հուլաւու հրաման ետ ամենայն Թաթար զօրուն՝ որ յարևելս, որոց գլխաւոր էր Բաչու Նուինն, ամենայն ախիւք իւ-

րեանց և ընչիւք թողուլ զերկիր կալուածոյ բնակութեան իւրեանց զՄուղան և զաշխարհն Աղուանից և զՀայոց և զՎրաց, և երթալ յաշխարհն Հոռոմոց. զի ինքն նստցի փոխանակ 'ի բարի երկիրն, որ յոյժ բազմութեամբ եկեալ է նա, մինչ զի ասեն՝ թէ եօթն ամիս հազիւ բովանդակեցաւ զօր նորա անցանել ընդ մեծ գետն Ջեհուն։ Այլ և ոմանք յազգականաց նորա 'ի կողմանց Բաթոյի և Սարթախին եկին անցին ընդ դուռն Բանդայ յայսկոյս բազում և անթիւ զօրօք, արք մեծամեծք և գլխաւորք իշխանութեամբ, որոց անուանքն էին. Բալախա, Տուտհար Ղուլի, զոր մեք իսկ տեսաք, Թոռունք Զանկըզ Ղանին, զոր և աստուածորդիս ասէին, որք հարթեցին՝ դիւրացուցին զամենայն անցս ճանապարհաց, ընդ որ անցանէին. զի սայլիւք իսկ գային. և բազում տառապանս հասուցանէին ամենայն աշխարհաց հարկապահանջութեամբ և յափշտակութեամբ, ուտելով և ըմպելով անյագաբար. և 'ի դրունս մահու հասուցին զամենայն ազգս։ Այլ և միւս ընդ այլ բազումսն, որ եղաւ յԱրղունէն մալի և փախչուրի. եղաւ հրաման 'ի Հալուէն պահանջման հարկի, զոր Թաղարն ասեն, յամենայն գլխոյ՝ որ մտեալ էր 'ի գիրն արքունի, պահանջէին հարիւր լիտր ցորեան, յիսուն լիտր գինի, երկու լիտր բրինձ և ծնծառ, երեք տոպրակ, երկու չուան՝ մի սպիտակ, մի նետ, մի նալ թող զայլ

կաշառան և քան անասնոյն. մի անասուն և քան սակ. և ոյր ոչ գոյր, զուստերս և զդըստերսն առնուին ընդ պահանջմանն. և այսպէս նեղացաւ և տառապեցաւ ամենայն երկիր։

Իսկ Թաթար զօրն, թէպէտ դժուարեցան թողուլ զերկիր կալուածոյ իւրեանց, յակամայ թողին յահէ նորա, զի յոյժ երկնչէին 'ի նմանէ՝ իբր 'ի Ղանէն, և գնացին յաշխարհն Հոռոմոց։ Եւ Սուլտանն Հոռոմոց ել ընդդէմ նոցա պատերազմաւ և ոչ կարաց ընդդիմանալ, այլ փախստական անկաւ 'նա յԱլայիա կղզի. և նոքա 'ի սուր սուսերի մաշեցին զզաւառս իշխանութեան նորա՝ մինչ 'ի ծով Ովկիանու և Պոնտոսի կոտորելով և յափշտակելով, կոտորեցին և զԿարնոյ քաղաք և զԵզնկայն և զՍեբաստ և զԿեսարիա և զԿօնն, և որ շուրջ զնոքօք զզաւառս, և զախս իւրեանց դարձուցին յետս զնալ յԵջուանս իւրեանց հրամանաւ Հուլաւույին. և ինքեանք ասպատակ սփռեալ ընդ կողմանս կողմանս։ Գնաց ընդ նոսա և Թագաւորն Հայոց Հեթում, որ եկեալ էր 'ի Մանկու Ղանէն, 'ի Բաթոյէն, և 'ի Սարթախէն, և 'ի Հուլաւէն, և էր առ Բաչու Նուինին, որ բազում զօրօք առաքեաց զնա յերկիրն Կիլիկիա 'ի քաղաքն Սիս. որ և բազում ընծայիւք և զօրօք սպասաւորութիւն կատարէր Բաչու Նուինին և զօրացն՝ որ ընդ նմա, մինչև թուղթ գոհութեան և գովութեան գրեաց վասն նորա առ Հու-

լաւուն։ Իսկ մեծն Հուլաւու, զի այր պատերազմող էր, ժողովեաց զամենայն բազմութիւն զօրացն և գնաց յերկիրն Մուլհիդաց յԱլամութ, և կալաւ զնա. զի 'ի բազում ամաց պաշարեալ էր զնա զօրն արքունի, զի որդիք Ալադնին սպանին զհայրն իւրեանց և եկին ինքեանք առ Հուլաւուն. և նա հրաման ետ քակել զամենայն ամուր բերդս, որ կային յԱլամութ։ Եւ ինքն պատուէր հրամանի ետ ամենայն զօրացն և ամենայն հնազանդելոցն ընդ ձեռամբ նոցա գումարել 'ի միասին 'ի վերայ մեծ քաղաքին իշխանութեան Տաճկաց, որ կոչի Պաղտատ. այս է միջոց Պարսից և Ասորոց, զի չև և՛ս էին առեալ զնա։ Եւ Խալիֆայն՝ որ նստէր 'ի նմա, էր ազգական Մահմետի. զի Խալիֆայն յետնամնաց ասի, որում հնազանդեալ էին ամենայն Տաճկահաւատ Սուլտանքն, որ յազգէն Թուրքաց և Քուրթաց և Պարսից և Իսմայելաց, և յայլոց ազգաց։ Եւ նա էր գլխաւոր հրամանատու իշխանութեան նոցա. և նոքա դաշամբք հնազանդէին և պատուէին զնա, որպէս զազգակից և զհամազգի օրէնսդրին իւրեանց՝ առաջին մոլորեցուցչին իւրեանց։ Գնացին յայս դալան և մեծամեծ գլխաւորք կողմանցն Բաթոյի՝ Ղուլն և Բալաղայն և Տուտհարն և Ղատա Ղանն, զի ամենեքին պատուէին զՀուլաւույն, որպէս զՂանն, և հնազանդէին նմա, և երկնչէին 'ի նմանէ։

Վասն աւերածոյն Բաղդատայ

Մեծն 'ի թագաւորս երկրի և տիեզերակալն Մանգու Ղանն 'ի չէ թուականին Հայոց զօրս գումարեաց անթիւ և անհամարս, և գնաց 'ի հեռաւոր աշխարհս ընդ կողմանս արևելից հարաւու 'ի վերայ ազգին, որ կոչի Նանգաս, զի ապստամբ էին 'ի նմանէ, և ոչ տային հարկս, իբրև զայլ աշխարհսն. զի էին արք պատերազմողք, և ամրացեալք աշխարհաւ, և կապաշարք. և ուտէին զծերս իւրեանց և զպառաւունսն, զի ժողովէին ցեղքն ամենայն որդիք և թոռունք և թոռնիկայք, և զծերացեալ ծնողսն իւրեանց մորթէին ընդ բերանն, և հանեալ զմիսն և զոսկերսն, եփէին և ուտէին առանց մնացուածի. և զմնացեալն մորթ՝ զոր հանէին տիկ, լնուին գինեաւ և ընդ առնացի անդամն ըմպէին ամենեքեան՝ որ յազգն էին, և ոչ օտարացեղքն, իբր թէ 'ի նմանէ են սերեալք, և նոցուն սեպհականեալք զայն ուտել և ըմպել. և զոսկր գագաթան պատուելով, նովաւ ըմպէին զբովանդակ տարին: Չոգաւ 'ի նոցա վերայ 'ի մարտ պատերազմի Ղանն Մանգու, և կոտորեաց և հնազանդեաց զօրեղապէս. և 'ի դառնալն 'ի տուն, կալաւ զնա ցաւ մահու և վախճանեցաւ. և կալաւ զաթոռն եղբայր իւր Արիբուղայն: Իսկ մեծն Հուլաւու՝ որ և եղբայր նորուն և գլխաւոր 'ի նմանէ կարգեալ 'ի վերայ զօրուն՝

որ յարևելս, հրաման ետ ամենայն հնազանդելոց իւրոց առ հասարակ գնալ 'ի վերայ մայրաքաղաքին Տաճկաց Բաղդատայ, որ էր նիստ արքայութեանն Տաճկաց: Եւ զթագաւորն՝ որ նստէր 'ի նմա, ոչ կոչէին Սուլտան կամ Մելիք, որպէս սովոր էին զայլսն անուանել՝ որ 'ի Թուրքաց և 'ի Քրթաց և 'ի Պարսից էին բռնացեալք, այլ Խալիֆայ անուանէին, այսինքն՝ յետնամնաց 'ի Մահմետէ: Ի վերայ նորա խաղաց մեծն Հուլաւու անհամար բազմութեամբ ամենայն ազգօքն հնազանդելովք յեղանակս աշնան և ձմերան վասն սաստիկ տօթոյ երկրին. և նախ քան զերթալն իւր հրաման ետ Բաչու Նուինին և զօրացն՝ որ ընդ նմա էին յաշխարհին Հոռոմոց, գնալ պատել զմեծ գետն Տիգրիս, յորոյ վերայ շինեալ էր Բաղդատ քաղաք, զի մի ոք փախիցէ նաւովք 'ի քաղաքէն երթալ մտանել 'ի Կատիսբոն, կամ 'ի Բասրա ամրագոյն: Եւ նոցա անյապաղ կատարեալ զհրամանն, կապեցին կամուրջս նաւեայ 'ի վերայ գետոյն մեծի և ընկեցին ցանցս ամուրս հանդերձ երկաթի կոօք և շամփրօք 'ի մէջ գետոյն և յատակսն, զի մի ոք լողալով զերծանիցի. և 'ի հեռուստ 'ի քաղաքէն. զի մի ոք գիտասցէ: Իսկ Խալիփայն Մուսթասար՝ որ նստէր 'ի քաղաքին, հպարտացեալ և յանձն ապաստան՝ առաքեաց զօր բազում 'ի վերայ այնոցիկ, որ պահէին զգետն, 'ի ձեռն առն միոյ գլխաւորի,

որում անուն էր Դօղար, Ոստիկան տանն նորա, որ երթեալ յաղթեաց զառաջինն և կոտորեաց 'ի Թաթարէն արս իբրև երեք հազար, և երեկոյին հասելոյ նստաւ յուտել և յըմպել անհոգութեամբ. և առաքեաց աւետաւորս առ Խալիփայն Մուսթասար, թէ հարի զամենեսեան, և զակաւ մնացորդս սպանելոց եմ վաղիւն։

Իսկ զօրն խորամանկ և բազմահնար Թաթարին զգիշերն ամենայն սպառազինեալք և կազմեալք, պատեցին շուրջանակի զբանակն Տաճկաց, ընդ որս էր և Զաքարէ իշխանն՝ որդին Շահնշահին, և ընդ լուսանալ առաւօտուն սուր 'ի գործ արկեալ, առհասարակ կոտորեցին զամենեսին և զեմնամոյն արարին, և ոչ ոք մնաց 'ի նոցանէ ապրեալ, բաց 'ի սակաւուց։ Ի նմին առաւօտու և մեծն Հուլաւու շուրջանակի պատեաց զքաղաքն Բաղդատ, տուեալ ամենեցուն գիրկ մի 'ի պարսպէն փլուցանել և պահել զգուշութեամբ. զի մի ոք փախիցէ, և զքաջն Պոօշ և զայլս առաքեաց դեսպանս առ Խալիֆայն գալ նմա 'ի հնազանդութիւն, և հարկել Ղանին։ Նա խստութեամբ ետ զպատասխանին և անարգանօք, գրեալ զանձնէ Ջահանգիր, և տէր ծովու և ցամաքի, պարծելով 'ի դրօշն Մահմետի. զի աստ է, ասէ. և թէ շարժեմ զնա, առ հասարակ կորնչիս դու և ափեզերք. և դու շուն մի ես, ասէ, և ես Թուրք, զիա՞րդ տաց քեզ հարկս, կամ

հնազանդեցայց։ Իսկ Հուլաւուն ոչ ըմբոստացաւ վասն անարգանացն, և ոչ գրեաց ինչ զմեծաբանութիւն, այլ միայն ասաց. «Աստուած գիտէ զինչ առնէ»։ և հրաման ետ փլուցանել զպարիսպն, և փլուցին առ հասարակ. և ասաց դարձեալ շինել, և պահել զգուշութեամբ. և այնպէս արարին։ Եւ լի էր քաղաքն զօրօք և ամբոխիւ, և զեօթն օր կացին 'ի վերայ պարսպին, և ոչ ոք նետաձիգ եղև 'ի նոսա, կամ սուր 'ի գործ էարկ, ոչ 'ի քաղաքէն, և ոչ 'ի Թաթար զօրացն. և յետ եօթն աւուր սկսան քաղաքացիքն խնդրել զխաղաղութիւն, և ելանել առ նա սիրով և հնազանդութեամբ։ Եւ հրամայեաց Հուլաւուն այնպէս առնել. և ելանէին ընդ դրունս քաղաքին անթիւ բազմութիւնք՝ զմիմեամբք ելևելս առնելով, թէ ո՞ յառաջ հասցէ առ նա. և նա զեկեալսն բաժանէր զօրացն, և հրամայէր հեռացուցանել 'ի քաղաքէն և կոտորել 'ի ծածուկ, զի մի գիտասցեն այլքն. և կոտորէին զամենեսին։ Եւ յետ չորս աւուրն ել և Խալիֆայն Մուսթասար երկու որդւովք և ամենայն մեծամեծօքն, բազում ոսկի և արծաթ և ականս պատուականս և մեծագին հանդերձս բարձեալ ընդ իւր 'ի պէտս պարգևաց Հուլաւույն և մեծամեծացն։ Եւ նա զառաջինն մեծարեաց զնա՝ մեղադրելով ընդ յամելն և ոչ գալ առ նա վաղվաղակի, ապա եհարց զնա. «զի՞նչ ես դու,

աստուած ես՝ թէ մարդ»․ և նա ասաց․ «մարդ եմ և ծառայ Աստուծոյ»։ Ապա ասէ Հուլաւուն․ «ասա՛ց Աստուած քեզ անարգել գլխ և շուն կոչել, և ոչ տալ շանս Աստուծոյ կերակուր և ըմպելի․ արդ ՚ի քաղցնուլս շունս Աստուծոյ կերիցէ զքեզ»․ և սպան զնա ձեռօք իւրովք․ «այդ, ասէ, պատիւ քեզ, զի սպանի զքեզ, և ոչ ետու այլոց ումեք սպանանել»․ և զմի յորդւոցն Խալիֆային հրամայեաց որդւոյ իւրում սպանանել, և զմիւս որդին տալ գետոյն Տիգրիսի սուզուած, զի ոչ մեղաւ մեզ, ասէ, այլ գործակից մեզ եղև ՚ի կոտորել զանզգամս, և ասաց․ «այս այր բազում արիւն ետ հեղուլ հպարտութեամբն, երթիցէ՝ տացէ պատասխանի Աստուծոյ, և մեք անպարտ լիցուք»․ կոտորեաց և զայլ մեծամեծսն։ Եւ ապա հրաման ետ զօրացն՝ որ պահէին զպարիսպն, իջանել կոտորել զբնակիչսն քաղաքին ՚ի մեծամեծացն մինչև ցփոքունսն․ և նոցա կարգ առեալ ըստ օրինակի ոճոյ արտոյ, կոտորեցին անթիւ և անհամար բազմութիւն արանց և կանանց և տղայոց․ և զաւուրս քառասուն ոչ դադարեաց սուրն ՚ի գործոյ, և նեղացեալ լքան սպանողքն, և վաստակեցան ձեռք իւրեն անողորմաբար։ Բայց կինն Հուլաւույին՝ աւագ խաթունն քրիստոնեայ էր, որում անունն էր Տօղուս Խաթուն․ սա խնայեաց ՚ի քրիստոնեայսն,

որք էին ՚ի Բաղդատ, Նեստորական աղանդով, և թէ այլ ազգաց քրիստոնեայք, և խնդրեաց յառնէ իւրմէ ոչ սպանանել զքրիստոնեայսն․ և եթող զնոսա ընչիւք և ստացուածովք․ և հրաման ետ ամենայն զօրուն առնուլ զինչս և զստացուածս քաղաքին, և լցան ամենեքեան ոսկւով և արծաթով, և ականբք պատուականօք և մարգարտով, և մեծագին հանդերձիւք․ զի էր քաղաքն փարթամ յոյժ, որ ոչ գտանի իւր նման նմա ՚ի վերայ երկրի։ Եւ ինքն Հուլաւու կալաւ իւր բաժին զգանձս Խալիֆային, և եբարձ ՚ի նմանէ երեք հազար և վեց հարիւր բեռինս ուղտու․ և՛ ձիոյ և՛ ջորւոյ և՛ իշոց ոչ գոյր թիւ․ և զայլ տունսն լի գանձիւք կնքեաց մատանեօք իւրովք, և եթող պահապանս, զի ոչ կարաց բառնալ զամենայն, զի անչափ էր շատութեամբ․ զի հինգ հարիւր և հնգետասան ամ էր, յորմէ հետէ շինեցաւ քաղաքն ՚ի Ջափրէ Իսմայէլականէ ՚ի ՃԴ֊Է թուականին Հայոց ՚ի վերայ Տիգրիս գետոյ, ՚ի վեր քան զԿատիսբոն, հեռի ՚ի Բաբելոնէ իբր հինգ աւուր ճանապարհ ՚ի վեր, և զամենայնն կացեալ էր ՚ի թագաւորութեանն, իբր անյագ տզրուկ կլեալ զամենայն տիեզերս։ Եւ այժմ ՚ի բաց փոխեաց յԶԷ թուականիս Հայոց, տալով վրէժս արեանցն՝ զոր եհեղ, և չարեացն՝ զոր գործեաց։ Յորժամ լցաւ չափ մեղացն իւրոց առաջի ամենագիտին Աստուծոյ, որ հատուցանէ

արդար իրաւամբք՝ անաչառ և ստուգութեամբ, և դադարեաց զօռ և մոլեկան թագաւորութիւնն Տաճկաց, որ տևեաց ամս վեց հարիւր քառասուն ինն. և առաւ Բաղդատ յառաջնում աւուր ապուհացիցն, 'ի շաբաթն օրն յամսեանն Նաւասարդի, որ օր քսան էր ամսոյն ըստ շրջագայութեանս: Եւ զայս ամենայն պատմեաց մեզ իշխանն Հասան, զոր Պռօշն անուանէին, որդին Վասակայ բարեպաշտի, որդւոյ Հասակայ, եղբայր Պապաքին և Մկդեմայ, հայր Մկդեմայ և Պապաքին և Հասանայ և Վասակայ, որ ականատես և ականջալուր էր իրացս, մեծ պատուով պատուեալ յաչս Ղանին:

Վասն աւերածի Մուֆարղին քաղաքին

Արդ 'ի նոյն ամի աւերելոյն Բաղդատայ մեծն Հուլաւու 'ի գալ գարնան ժամանակին զօր գումարեաց և ետ 'ի ձեռն որդւոյ իւրոյ կըրսերոյ, որում անունն էր Ջիասմութ, և զմեծ վերակացու տանն իւրոյ զԻլիգիա Նուինն առաքեաց ընդ նմա գնալ 'ի կողմանս Եփրատ գետոյ զբօսանաց աղագաւ յառ, յաւար և 'ի հնազանդեցուցանել զկողմանսն զայնոսիկ. և մինչդեռ անցանէին ընդ քաղաքն Մարտիրոսաց, որ կոչի Մուֆարղին, կոչեցին զնոսա 'ի հնազանդութիւն տալ զօրս և հարկս, և կեալ անհոգութեամբ:

Եւ Սուլտանն, որ 'ի նմա էր յազգէն Եղլեանց, ոչ առ յանձն. այլ զօրս ժողովեալ, ել զկնի նոցա, և սպան զոմանս 'ի նոցանէ, և եմուտ ինքն 'ի քաղաքն, և ամրացաւ յերեսաց Թաթար զօրուն: Եւ նոցա թողեալ զօրս 'ի վերայ քաղաքին, ինքեանք չոգան մինչ 'ի գետն մեծ Եփրատ և 'ի կողմանս Միջագետաց, առին աւար՝ զոր ինչ գտին, և դարձան յաւելին 'ի զօրսն, որ պահէին զքաղաքն Մարտիրոսաց: Եւ եկեալ առ Հուլաւուն, պատմեցին՝ զոր ինչ արարին, և զապստամբութիւն քաղաքին. և նա յղեաց զօր բազում 'ի վերայ քաղաքին, և գլխաւորս կացոյց 'ի վերայ զօրացն զՋաղատայ ոմն, որ զօրավար էր յառաջ եկեալ Թաթար զօրուն, և 'ի քրիստոնէից զիշխանն Պռօշ, զոր Հասան կոչէին, այր քաջ և անուանի երթալ պաշարել զքաղաքն յամենայն կողմանց, և ոչ տալ թոյլ մտողի և ելողի: Եւ եկեալ նոցա հզօրապէս մարտնչէին, եդեալ բաբանս և փիլիկուանս. հատին և զջուրն, որ մտանէր 'ի քաղաքն: Նոյնպէս և քաղաքացիքն կռուէին ընդ նոսա զօրեղապէս, և զբազումս սպանին 'ի Թաթարէն և 'ի քրիստոնէիցն, որ ընդ նոսա: Եւ այսպէս զամս երկու և աւելի կրեալ պաշարումն, սաստկացաւ սովն 'ի քաղաքին. կերան զսուրբս և զանսուրբս կենդանիս, և ապա սկսան զմարդիկ ուտել առ 'ի չգոյէ կերակրոյն, զի զօրաւորքն զտկարսն ուտէին. և յորժամ սպա-

ռեցան աղքատքն, դարձան 'ի միմեանս և ուտէին հարք զորդիս, և կանայք զդստերս. և ոչ զթա-յին 'ի ծնունդս որովայնի իւրեանց. և ուրացան սիրելիք զսիրելիս, և բարեկամք զծանօթս. և այնպէս պակասեաց կերակուրն, զի մին լիտր մարդոյ միոյ վաճառէին ընդ եօթնասուն դահե-կանի. և ամենևին սպառեցաւ մարդ և կերակուր. ոչ միայն սոցա, այլ և բազմաց այլոց գաւառաց եհաս վտանգ, զի աշխարհ, որ հնազանդեալ էին Թաթարին, նեղացան 'ի հարկապահանջութեանց և 'ի բռնակրութեանց, որք տանէին զկերակուրս և զըմպելիս պաշարողաց քաղաքին. և յոլովք մե-ռանէին 'ի սաստիկ ցրտոյ ձեանն, որ ունէին զլերինս յեղանակս ձմեռնային։ Այլ և ամրագոյն երկիրն Սասնոյ եկին 'ի հնազանդութիւն ծառա-յութեան Թաթարին, ապաւինեալք յիշխանն Սա-դոն՝ յորդի Շէրբարոքին, 'ի թոռն Սադունին, քրիստոնեայ հաւատով և բարի գործով, և մեծ պատուով առ Հուլաւուն. զի այր անձնեայ և քաջամարտիկ էր, մինչ զի ընդ առաջին ախո-յանիցն կարգեալ էր զնա Հուլաւուն. սմա ետ զգաւառն Սասնոյ, զոր յետոյ առեցին երդմամբ, և կոտորեցին զբազումս 'ի նոցանէ։ Իսկ յորժամ Թափուր եղև քաղաքն 'ի մարդկանէ 'ի սաստիկ սովոյն, առին զքաղաքն և կոտորեցին՝ զորս գտին 'ի նմա ներքևեալս 'ի սաստիկ սովոյն. այլ և զՍուլտանն և զեղբայր իւր ածին կենդանի

առ Հուլաւուն. և հրամայեաց սպանանել զնոսա սրով, իբրև զչարժամնիս կենաց և զարեան պարտն ամենայն բազմութեան, որք կոտորեցան 'ի պատ-ճառս նոցա։ Բայց զեկեղեցիսն ոչ քակեցին, և ոչ զանթիւ նշխարս սրբոցն, զոր ժողովեաց սուրբն Մարութայ յամենայն ազգաց և եդ անդ, զի քրիստոնեայքն, որ 'ի զօրուն, ծանուցին Թա-թարին զպատիւ նոցա. այլ և ինքեանք իսկ բա-զում տեսիլս պատմէին զսրբոցն. 'ի վերայ պարապին լոյս սաստիկ ծագեալ, և այս լուսա-տեսիլս երևեալ։ Եւ առաւ քաղաքն ՉԷ թուա-կանին Հայոց, 'ի մեծ պահս քառասնորդաց աղու-հացից։

Վասն որ ինչ գործեցաւ 'ի կողմանս Միջագետաց և խորին Ասորւոց

Դարձեալ մեծն Հուլաւու ժողովեաց զբազ-մութիւն զօրաց իւրոց և չոգաւ յԱսորիս, 'ի Հալապ, 'ի Տմբըշղ, և 'ի Խառան, և յՈւրհա, և յԱմիթ, և յայլ գաւառսն. ասպատակ սփռեալ 'ի կողմանս կողմանս, և ինքն նստաւ 'ի վերայ Հալպայ պա-տերազմել ընդ նմա։ Եւ Սուլտանն՝ որ 'ի նմա, էր յազգէ Ուսուֆ Սալահատինին՝ որ աւերեաց զԵրուսաղէմ, դիմեցաւ նմա, և ոչ եկն 'ի հնա-զանդութիւն, այլ փակեաց զդրունս քաղաքին ընդդէմ նորա, և կռուէր զօրութեամբ։ Եւ մեծն

Հուլաւու պաշարեաց զքաղաքն յամենայն կողմանց, և յետ յոլով աւուրց կալաւ զնա բռնութեամբ. և սկսան կոտորել զքաղաքն։ Ապա Սուլտանն և որք ընդ նմա մեծամեծքն, որ ամրացեալ էին 'ի բերդն, սկսան աղաչել զնա և գալ 'ի հնազանդութիւն նմա. և յանձն առ, և հրամայեաց դադարել 'ի կոտորելոյ զքաղաքն, և կալ նմա 'ի հնազանդութեան, և հարկել։ Գնաց և 'ի Տմբշկ. և նոքա բազում պատարագօք և մեծամեծ ծախիւք ելին ընդ առաջ նորա. և սիրով ընկալաւ զնոսա, յիւր անուն գրաւեալ կալաւ զՀէմս և զՀամա, և զայլ քաղաքս բազումս։ Առաքեաց զօրս 'ի վերայ ամուր քաղաքին Մերտընայ, որ հազիւ կարացին առնուլ զնա յետ բազում աւուրց. կոտորեցին և զբազում յեղուզակս՝ մասիչս ամենայն ազգաց և ճանապարհորդաց, զորս Ղաճարիս անուանէին, Թուրք ազգաւ, ամրացեալք 'ի թաւ մայրիս, և 'ի դժուարին վայրս ամրոցաց, անթիւ բազմութիւն ոչ ունէր հնազանդ, ժողովածու յամենայն կողմանց, արք սրիկայք և ապականիչք, և մանաւանդ քրիստոնէից. զբազումս կոտորեցին 'ի նոցանէ, և զևս բազմագոյնս գերեցին. և թողեալ 'ի զօրացն իբրև քան հազարս կողմնապահս, և ինքն դարձաւ ձմերել 'ի դաշտն Հիմիանայ։ Իսկ Սուլտանն Մարայ ժողովեալ զօրս բազումս, եկն 'ի վերայ կողմնապահաց Թաթար զօրուն, որոց գլխաւոր

էր այր մի, Քիթբուղա անուն, հաւատով քրիստոնեայ, Նայիման ազգաւ, այր մեծ պատուով, որ եւ պատերազմաւ ընդդէմ Սուլտանին, և քաջապէս մարտուցեալ՝ կոտորեցաւ ամենայն զօրօքն, որ ընդ իւր. զի յոյժ բազումք էին Եգիպտացիքն, և կռուեցան 'ի դաշտն Թաբորական լերինն։ Կային ընդ Քիթբուղային 'ի պատերազմի անդ յոլովք 'ի Հայոց և 'ի Վրաց, որք ընդ նմա կոտորեցան. և եղև այս չթ Թուականին Հայոց։

Վասն մահուան բարեպաշտ իշխանին Ջալալին

Իսկ թագաւորն Վրաց Դաւիթ՝ որդի Լաշային, որ կայր 'ի հնազանդութեան Թաթարին նեղացաւ՝ ձանձրացաւ 'ի բազում հարկապահանջութեանն՝ որ նեղէին զնա և՛ զամենայն իշխանսն և՛ զամենայն աշխարհս անհնարին ծանրութեամբ, զոր ոչ կարէին բառնալ։ Եթող նա զքաղաք իւր զՏփխիս, և զաթոռ, և զամենայն ինչ՝ զոր ունէր, և փախեաւ 'ի խորին Ափխազք, և յամուրսն Սուանեթոյ. ընդ նմա և այլ մեծամեծ իշխանք գաւառաց, նեղեալք և տառապեալք, ծախեալք և զրաւ եդեալք զքաղաքս և զգաւառս, և ոչ կարացեալք յագեցուցանել զանյագն ըստ նմանութեան չար տզրկաց։ Եւ այնպէս տագնապաւ փախեաւ, զի զկինն իւր՝ զԳոնցա թագուհի, և զնոր

ծնեալ որդի իւր՝ զԴեմետրէ, ոչ կարաց ընդ իւր տանել, բայց միայն զԳիորգի զանդրանիկ իւր։ Իսկ մեծ Ոստիկանն Արղունն զօր բազում գումարեալ, գնաց զհետ փախուցեալ Թագաւորին Դաւթի, զի ըմբռնեսցէ զնա. և իբրև ոչ կարաց ժամանել նմա, զբազում գաւառս Վրաց կոտորեաց և գերեաց անխնայաբար. այլ և զգերեզմանատունն Թագաւորացն Վրաց՝ զԳելաթ, սաստկապէս կոտորեաց և քանդեաց. և զկաթուղիկոսարանն՝ զԱծղուր, նոյնպէս կոտորեաց անողորմաբար։ Բայց յանկարծակի եկին գունդ մի հեծելոց 'ի Վրաց և ցուցին մեծ քաջութիւնս, զի զբազումս կոտորեցին 'ի զօրաց Արղունին՝ իբրև հուր ընդ եղէգն ընթացեալ, և ինքեանք գնացին ողջանդամ. և էին արք իբրև չորս հարիւր։ Եւ երկուցեալ Արղունին, ոչ իշխէր այնպէս համարձակ մտանել խուզել զվայրսն։ Ապա դարձաւ առ Հուլաւուն, և նիւթեաց 'ի սրտի իւրում չարութիւն, և 'ի կալանս արար զԹագուհին Վրաց՝ զԳոնցայն, և զդուստր իւր զԹոշաքն, և զիշխանն մեծ զՇահնշահ, և զՋալալն Հասան՝ զտէրն Խաչենոյ, և զայլս բազումս պատճառանօք պարտուց և հարկի, յորոց բազում գանձս առեալ, հազիւ զերծան 'ի մահուանէ։ Իսկ զբարեպաշտ և զառաքինի իշխանն Ջալալ նեղէր անհնարին կտտանօք, բազում հարկս պահանջելով 'ի նմանէ՝ առաւել քան զկարն, եղեալ փայտ 'ի

պարանոց նորա, և երկաթ յոտս նորա։ Եւ զայս առնէր ընդ նմա վասն առաւել քրիստոնէութեան նորա, զի թշնամիք էին ամենայն Տաճկահաւատքն, որք յորդորէին զԱրղունն 'ի սպանութիւն նորա, զի ասէին՝ թէ սա առաւել թշնամի է դենիս մերոյ և օրինաց. զի և Արղունն ևս Տաճկակրօն էր. և առեալ տարաւ զնա 'ի Ղազուինն։ Իսկ նա զոհութեամբ տանէր ամենայնի, զի յոյժ տեղեակ էր աստուածային գրոց, և պահող, և աղօթական, և պարկեշտ 'ի կերակուր և յըմպելի, և ցանկայր մարտիրոսական մահուան։ Իսկ դուստր Ջալալին, Ռուզուքան անուն, որ կին լեալ էր Պօրա Նուինին՝ որդւոյ Չարմաղունին, առաջին գլխաւորի Թաթարին, գնաց առ Տօղուս խաթունն՝ կին Հուլաւունին, զի թափեսցէ զհայր իւր 'ի ձեռաց Արղունին։ Եւ գիտացեալ անօրէն Ոստիկանին, առաքեաց վաղվաղակի դահիճս և 'ի գիշերի ետ սպանանել զսուրբ և զարդար այրն. և երթեալ անօրէն դահճացն՝ անդամ անդամ յօշեցին զնա ըստ նմանութեան սուրբ վկային Յակովբայ. նորին չարչարանացն հաղորդեալ, և պսակի նորին արժանացեալ լիցի 'ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ։ Այսպէս կատարեցաւ այրն անարատ և աստուածապաշտ, զընթացսն կատարելով, և զհաւատս պահեալ, յչժ թուականին Հայոց։ Եւ առաքեաց որդի նորա Աթապակն արս հաւատարիմս և ետ գողանալ զնշխարսն հօր իւրոյ, զի ընկե-

ցեալ կայր 'ի Չրհոր մի ցամաք, զի Պարսիկն՝ որ 'ի տան իւրում ունէր զնա 'ի կապանս, տեսեալ աստուածայինս 'ի վերայ նորա, զի իբրև սպան զնա, իջեալ լոյս սաստիկ 'ի վերայ, խնամարկեալ ընկէց զնա 'ի Չրհորն, զի յետ աւուրց թաղեսցէ զնա պատուով։ Նա եցոյց խնդրողացն զմարմինն նորա, և պատմեաց զսքանչելի երեւումն. և նոցա ժողովեալ խնդութեամբ, և բարձեալ տարան զնա 'ի տուն իւր, և թաղեցին 'ի վանքն Գանձասար 'ի գերեզմանս հարց իւրոց։ Այլ և բերողքն նշխարացն տեսին 'ի ճանապարհի զնոյն տեսիլ լուսոյն 'ի վերայ նշխարացն։ Եւ կալաւ զիշխանութիւն նորա որդի նորա Աթապակն հրամանաւ Հուլաւույին և Արղունին, այր սրբասնունդ, պարկեշտ և խոնարհամիտ և աղօթական, որպէս զմի 'ի սուրբ միայնակեցաց, զի ծնողքն նորա այսպէս սնուցին զնա։ Սպան Հուլաւուն զիշխանն Զաքարէ՝ զորդին Շահնշահի, բարուրս եդեալ 'ի վերայ նորայ։ Յայսմ ամի փոխեցաւ առ Քրիստոս մարդասէր և հեզ կաթուղիկոսն Աղուանից՝ տէր Ներսէս, կալեալ զկաթուղիկոսութիւնն ամս քսան և եօթն. և յաջորդեաց զաթոռն տէր Ստեփաննոս՝ մանուկ տիօք։

Վասն մահուան իշխանին Շահնշահի, եւ որդւոյ նորա Զաքարէի

Մեծ իշխանն Շահնշահ՝ որդին Զաքարէի, ետ զիշխանութիւնն յաւագ որդին Զաքարէ, զի որդիք բազումք էին նորա. Զաքարէ և Աւագ, Սարգիս և Արտաշիրն և Իւանէ։ Եւ ինքն խնամէր զտուն իւր, և Զաքարէ ընդ Թաթար զօրուն երթայր 'ի գործ պատերազմի, և արիութեամբ քաջութեամբ ցուցեալ, մեծարեալ լինէր 'ի մեծէն Հուլաւուէ և յԱրղունէ Ոստիկանէն։ Դէպ եղև՝ զի Արղունն զօրօք բազմօք էր 'ի կողմանս Վրաց, ընդ նմա էր և Զաքարէ. և գաղտ յԱրղունէն և յայլ զօրացն գնաց Զաքարէ 'ի տեսութիւն կնոջ իւրոյ, որ էր առ հօր իւրոյ Սարգսի՝ իշխանին Ուխտեաց, որ ապստամբ էր ընդ Թագաւորին Վրաց Դաւթի։ Եւ իմացեալ Արղունին, ազդ առնէ Հուլաւուին. և նա առ ինքն հրամայեաց տանել կապանօք, և այլ բարուրս կուտեաց 'ի վերայ նորա, և հրամայեաց սպանանել զնա և անդամ անդամ յօշել, և արկանել շանց։ Եւ յորժամ լուաւ զգոյժն հօր իւրոյ Շահնշահ 'ի գիւղն Օձուն, 'ի նեղասրտութիւն անկեալ՝ 'ի տրտմութենէն մեռաւ. և տարեալ թաղեցին զնա 'ի Քոբայրն, զոր առ կինն նորա 'ի Հայոց։

Վասն մեծ պատերազմին՝ որ եղեւ ընդ միմեանս Հուլաւոյին եւ Բերքային

Աշխարհակալք և մեծ զօրավարքն, որ կային յարևելս և 'ի հիւսիս, ազգականք էին Ղանին Մանգուի, որ մեռաւ յետ պատերազմին Նենդբանայ. և երկու եղբարքն նորա հակառակէին ընդ միմեանս վասն թագաւորութեանն՝ Արիբուղայն և Ղուպիլայն: Եւ յաղթեաց Ղուպիլայն, կոտորելով և սպանելով զզօրս Արիբուղային, և փախստական հանելով զնա յաշխարհէն, և ինքն թագաւորելով: Եւ Հուլաւուն եղբայր էր նոցունց և Մանգու Ղանին. օգնէր նա Ղուպիլային: Եւ Բերքայն, որ 'ի կողմանս հիւսիսոյ, օգնէր Արիբուղային. և միւս ևս ազգական նոցին, այլ զօրագլուխ որդի Շան Զաղաթային՝ անդրանիկ որդւոյն Չանկզ Ղանին, Ալղու անուն. նա պատերազմէր ընդ Բերքային, թէ նոցունց խրատու կոտորեաց Մանգու Ղանն զազգս նորա, և առաքեաց առ Հուլաւուն օգնել նմա յայսմ կողմանէ ընդ դուռն Դարբանդայ: Իսկ մեծն Հուլաւու եւ մեծամեծ և փառաւորագոյն իշխանն՝ հանդերձ ինքեան, որ կային առ նմա, 'ի կողմանց Բաթոյին և Բերքային, զՂուլն, զԲալախայն, զՏութարն, զՄեղանն՝ զորդի Ղուլին, զՂատա Ղանն, և զայլս բազումս հանդերձ զօրօք իւրեանց, կոտորեցին յանխնայ անողորմաբար զծերս և զտղայս, և

սպառեաց զնոսա կոտորմամբ սրոյ, զի առ նմա կային, և խառնէին ընդ միմեանս իշխանութեամբ. և սակաւք 'ի նոցանէ մազապուրծ զերծեալ 'ի նոցանէ առանց կանանց և մանկանց և ընչից, գնացին փախստական առ Բերքայն, և առ այլ ազգականքն: Եւ լուեալ զայն Բերքային, ժողովեաց զօրս անթիւ և անհամարս գալ առնուլ զվրէժ արեան ազգականացն 'ի Հուլաւուէն: Իսկ մեծն Հուլաւու՝ ժողովեաց նոյնպէս զզօրս իւր բազմաձեռն, և արար երիս յառաջս. զմին ետ 'ի ձեռս որդւոյն Ապաղային, գումարեաց ընդ նմա և զոստիկանն Արղունն, և առաքեաց ընդ Խորասան օգնել Ալղուին յայնմ կողմանէ, և զմի բաժինն գումարեաց 'ի դուռն Ալանաց, և զայլ զօրսն ընդ իւր առեալ՝ գնաց եմուտ 'ի ներքս քան զդուռն Դարբանդայ, զի այս երկու մուտք են՝ որ յԱլանս և 'ի Դարբանդ: Եւ աւերելով զմասն բաժնի Բերքային, և եհաս մինչ 'ի գետն մեծ և ահագին՝ ասպնջական հոլովից գետոց, զոր կոչեն Թերքն Եթիլ, որ ծովորէն ընթանայ և մտանէ 'ի ծովն Կասբից: Եւ եկ ընդդէմ նորա Բերքայն հզօր ձեռամբ, և եղև խառնուրդ պատերազմին առ մեծի գետոյն, և բազումք անկան յերկոցունց կողմանցն: Եւս առաւել 'ի կողմանէ Հուլաւոյին, զի պաղեցան 'ի սաստկութենէ ձեանն և ցրտին. և բազումք գետամոյն եղեն, և ապա դարձաւ Հուլաւոյն, և եկն եւ 'ի

դուրս քան զդուռն Դարբանդին. և մի ոմն 'ի զօրագլխաց Հուլաւուին այր քաջ և պատերազմող զօրօքն իւրովք, Սիրամոն անուն, որդի Ջարմաղունին, առաջի գլխաւորի Թաթարին, ընդդէմ կացեալ զօրացն Բերքային, յետս նահանջեաց. և 'ի նա պատսպարեցան փախուցեալքն և ապրեցան. և մեղմով ընդդէմ կալով, ել և նա 'ի դուրս քան զԴարբանդն, և կացուցին պահակս 'ի դրանն Դարբանդայ, և ինքեանք եկին 'ի դաշտն Մուղան 'ի ձմերոց: Եւ այսպէս զամս հինգ պատերազմեալք ընդ միմեանս, սկսեալք յՉԺ թուականէն, մինչ յՉԺԴ թուականն Հայոց. յամենայն ամի զօր ժողովելով և ընդ միմեանս բախելով 'ի յեղանակս ձմեռնային, զի յամառայնի ոչ կարէին վասն տօթոյն և գետայարոյց լինելոյն: Յաւուրս յայսոսիկ սկսաւ մեծն Հուլաւու շինել քաղաք բազմատար և բազմամարդ 'ի դաշտին Դառնոյ. և եդ հարկս 'ի վերայ ամենայն հնազանդելոցն բազմութիւն փայտից բերել յամենայն կողմանց 'ի պէտս շինուածոյ տանց և ապարանից քաղաքին, զոր շինէր 'ի տեղի հովացաց իւրոց յաւուրս ամարայնւոյ. և տառապէին մարդ և անասուն 'ի խիստ և 'ի դառն վերակացուացն, որ դառնագոյնք էին քան զՓարաւոնին 'ի վերայ որդւոցն Իսրայէլի: Քանզի լուծս հարիւր եզանց լծէին 'ի փայտ մի յամենայն կողմանց, և ոչ կարէին շարժել վասն մե-

ծութեան և հաստութեան փայտից, և հեռաւորութեան և դժուար ճանապարհացն ընդ գետս և ընդ լերինս, և յանխնայ հարկանելով, մեռանէին մարդիկ և անասունք: Այլ և տունս մեծամեծս կոոց շինեաց, անդր գումարեալ զամենայն արուեստաւորս՝ քարանց և փայտից և նկարուց. զի ազգ մի, զոր Տոյինք ասեն, և են դիւթք և կախարդք, որ տան խօսել ձիոց և ուղտուց, և մեռելոց, և բաղձեալ պատկերաց, դիւթական արուեստիւ: Եւ են ամենեքին քուրմք, գերծեալք գլխօք և մօրուօք, և ունին փիլոն դեղին զկրծօքն. և պաշտէին զամենայն ինչ, առաւել զՇակմոնիա և զՄադրին. նոքա խաբեցին զնա, և ասէին պահել զնա անմահ. և բանիւ նոցա կայր և շարժէր, և հեծնոյր, տուեալ զինքն ամենևին կամաց նոցա. և խոնարհեալ երկիր պագանէր գլխաւորին նոցա յոլով անգամ յաւուրն, և ուտէր 'ի նուիրական սեղանոյն 'ի տան կոոցն, և առաւել մեծարէր քան զամենեսին զնոսա: Վասն որոյ տաճար կոոց նոցա առաւել մեծարգի յարդարէր: Իսկ աւագ կանանց նորա քրիստոնեայ էր, որում անուն էր Տօղուս խաթուն, թէպէտ բազում անգամ յանդիմանէր զնա, ոչ կարաց զերծուցանել զնա 'ի դիւթացն. այլ ինքն աստուածպաշտութեամբ կացեալ, ձեռնատու և օգնական էր քրիստոնէից: Իսկ յՉԺԴ թուականին նշան մեծ երևեցաւ յերկինս. աստղ

մի երեւեցաւ՝ գալով 'ի կողմանց հիւսիսոյ յարեւելս և 'ի հարաւ. և երկայն ճառագայթք լուսոյ սիւնաձև երևէին առաջի նորա. բայց աստղն նուազ երևէր և երագ ընթանայր, և էր իբրև աւուրբ ամսոյ միոյ. և ոչ այլ ևս, ոչ իբրև զաստղ գիսաւոր՝ որ ընդ ժամանակս ժամանակս երևի ընթանալով յարևմտից 'ի հիւսիս, այլ սա երկայնաձիգ շառաւիղօք, և օր քան զօր աճէին շառաւիղքն, մինչև կորեաւ։ Եւ 'ի սոյն ամի վախճանեցաւ Հուլաւուն, և կինն իւր Տօղուս խաթունն։ Եւ կալաւ զտեղի իւր Աբաղա Ղանն յՉԺԴ թուականին, և առ կին զդուստր Հոռոմոց թագաւորին, որում անուն էր Դեսպինա խաթուն, որ եկն երևելի փառօք. և պատրիարքն Անտիոքու, և այլ եպիսկոպոսք ընդ նմա, զոր երեր ածէր Սարգիս Եզընկային եպիսկոպոսն, և Բենեբ վարդապետն. և մկրտեալ զԱբաղա Ղանն ետուն զաղջիկն նմա կին. և նորա զօր գումարեալ բազում յոյժ, գնաց ընդդէմ կալ պատերազմաւ զօրաց Բերքային, որք եկին ընդ դուռն Դարբանդայ, և հարին զբանակս իւրեանց առ ափն Կուր գետոյ. և կալան սոքա աստի և նոքա անտի, ամրացուցեալ զեզր գետոյն ցանկով և փոսիւք խորագունիւք։ Եւ Քրիստոսի յուսոյն մերոյ փառք անլռելի ձայնիւ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Վախճան

ՑԱՆԿ ԳԼԽՈՑ

Երես։

1. Յառաջաբան Հեղինակին . . . . 7.
2. Համառօտ պատմութիւն և ցոյցք անուանց Սրբոյն Գրիգորի և որք յետ նորա յաջորդեցին զաթոռ նորա . . . . 15.
3. Գիր հաւատոյ խոստովանութեան Հայաստանեայց եկեղեցւոյ . . . . 112.
4. Վասն թագաւորութեանն Լևոնի, որ 'ի կողմանս յԱրևմտից . . . . 147.
5. Վասն իշխանացն որ յԱրևելս Հայաստանեայց Զաքարէին և Իւանէի եղբօր նորին . . . 154.
6. Վասն ժողովոյն, զոր արար Զաքարիայ վասն խնդրոյ ինչ իրաց . . . . 157.
7. Վասն կաթուղիկոսին Աղուանից գալոյ առ մեծ իշխանն . . . . 168.
8. Վասն վարդապետացն երևելեաց՝ որք էին 'ի կողմանս Վասպուրականի . . . . . . 172.
9. Վասն մահուան Զաքարէի Զօրավարի . . 175.
10. Վասն Լևոնի արքային և վախճանի նորին . 176.
11. Համառօտ հիւսուածք պատմութեանց կողմանցըն Աղուանից, ընդ նմին զբօսաւորական 181.
12. Վասն ելանելոյ Թաթար զօրուն և փախստական առնելոյ զթագաւորն Վրաց . . . . 190.
13. Վասն որ 'ի սահմանս Գանձակայ անկումն եղև զօրացն . . . . 192.
14. Վասն վարդապետին Մխիթարայ՝ թէ ուստի էր, և կամ որպիսի որ . . . . 195.

15. Վասն շինութեան վանացն Նորն Գետկայ . . 199.
16. Թէ ո՛յք էին, որք երեելիք էին յաշակերտսն նորա . . . . 205.
17. Վասն վարդապետին վախճանի մեծին Մխիթարայ՝ որ Գօշն կոչի . . . . 207.
18. Վասն որք յետ նորա կալան առաջնորդութիւն 209.
19. Վասն Սուլտանին Ջալալադնին և կոտորելոյն զզօրսն Վրաց 'ի ոհգ Թուականին . . . . 211.
20. Վասն կորստեան Սուլտանին Ջալալադնի և բառնալոյ . . . . 215.
21. Թէ որպէս ել Թաթարն ապականել զաշխարհս ամենայն. . . . . 217.
22. Վասն աւերման քաղաքին Գանձակայ . . . 221.
23. Վասն աւերածոյ Հայոց աշխարհիս և Վրաց 'ի նոյն . . . . 224.
24. Վասն առման քաղաքին Շամքորոյ . . . . 228.
25. Վասն գերութեան վարդապետին Վանականայ և որոց ընդ նմա . . . . 230.
26. Վասն աւերման քաղաքին Լոռէոյ . . . . . 239.
27. Վասն անկանելոյ 'ի ձեռս նոցա իշխանին Աւագին . . . . 241.
28. Վասն քաղաքին Անւոյ, թէ որպէս մատնեաց Տէր 'ի ձեռս նորա . . . . 244.
29. Վասն աւերածին Կարուց . . . . 246.
30. Վասն յուղարկելոյ զիշխանն Աւագ առ Խաղանն յԱրևելս . . . . 248.
31. Վասն կոտորածին՝ որ 'ի կողմանս Խաչենոյ, և վասն բարեպաշտի իշխանին Ջալալին . . 253.
32. Վասն եկեղեցւոյն զոր շինեաց . . . . . 256.
33. Վասն ցուցման կերպարանաց Թաթարին բացայայտութիւն սակաւուք . . . . 257.
34. Վասն Ռաբանին Ասորւոյ . . . . 261.
35. Վասն աւերման Թէոդուպօլեայ . . . . . 363.
36. Վասն պատերազմին, որ եղև ընդ Սուլտանն և ընդ Թաթարն . . . . 265.
37. Վասն թագաւորին Հայոց Հեթմոյ և զոր ինչ գործեցաւ . . . . 269.

38. Վասն Կոստանդեայ իշխանի Լամբրոնին, և զոր ինչ գործեաց նա ընդ աշխարհն Կիլիկեցւոց . . . . 270.
39. Վասն թագաւորութեան Դաւթի . . . . . 273.
40. Վասն կոչելոյն 'ի մեծ դուռն զկաթուղիկոսն Աղուանից զտէր Ներսէս . . . . 274.
41. Վասն ապստամբելոյ նորա ընդ կողմանս Վասպուրականի 'ի վերայ բազում գաւառաց . 276.
42. Վասն կանոնական հրամանաց կաթուղիկոսին Հայոց Կոստանդնի . . . . 278.
43. Թուղթ տեառն Կոստանդեայ 'շրջաբերական 279.
44. Սահմանք կանոնականք տեառն Կոստանդեայ Հայոց կաթուղիկոսի . . . . 285.
45. Վասն հարկահանացն՝ որք եկին 'ի Ղանէն . 297.
46. Վասն թագաւորին Վրաց երթալոյ առ Ղանն 299.
47. Վասն երթալոյ առ Ղանն Սմբատայ զօրավարին Հայոց և որդւոյ Ղիաթատնի Սուլթանին . . . . 301.
48. Վասն կոտորածին՝ զոր արար զօրն Թաթար յաշխարհին Վրաց . . . . 303.
49. Վասն Դաւթի Մոլեցուցչի . . . . 306.
50. Վասն Դիւին՝ որ 'ի կերպարանս կնոջ լեալ խառնակէր ընդ այր մի . . . . 313.
51. Վասն խնդրոյն՝ որ եղև 'ի մէջ քրիստոնէից վասն Հոգոյն Աստուծոյ, թէ 'ի Հօրէ պարտ է ասել, թէ 'ի Հօրէ և յՈրդւոյ . . . . . 314.
52. Խոստովանութիւն ճշմարիտ ուղղափառաց . 318.
53. Վանական վարդապետին . . . . 324.
54. Վասն վախճանի սուրբ վարդապետին Վանականայ . . . . 331.
55. Վասն Յովհաննիսի Գառնեցւոյ . . . . . . 334.
56. Վասն Սարթախին որդւոյ Բաթուին . . . . 342.

57. Վասն մարախին, որ եկեր զաշխարհս . . . 346.
58. Վասն աշխարհագրին, որ եղեւ հրամանաւ Մանգու Ղանին . . . 348.
59. Վասն երթալոյն բարեպաշտ թագաւորին Հայոց Հեթմոյ առ Բաթոյն և Մանգու Ղանն . . 350.
60. Վասն կոտորածի երկրին Հոռոմոց . . . . 357.
61. Վասն աւերածոյն Բաղդատայ . . . . 362.
62. Վասն աւերածի Մուֆարղին քաղաքին . . . 368.
63. Վասն որ ինչ գործեցաւ 'ի կողմանս Միջագետաց և խորին Ասորւոց . . . . 371.
64. Վասն մահուան բարեպաշտ իշխանին Ջալալին . . . . 373.
65. Վասն մահուան իշխանին Շահնշահի, և որդւոյ նորա Զաքարէի . . . . 377.
66. Վասն մեծ պատերազմին՝ որ եղև ընդ միմեանս Հուլաւոյին և Բերքային . . . . . 378.

ՑԱՆԿ ՅԱՏՈՒԿ ԱՆՈՒԱՆՑ

Աբասաձոր գիւղ 199, 204
Աբաս թագաւոր Բագրատունի 79, 81
Աբաս իշխան՝ որդի Կիւրիկէի 145
Աբաս մանուկ՝ որդի Գ. Կիւրիկէի 145
Աբաս (Տէր Աբաս Աղուանից) 184
Աբգար թագաւոր 254
Աբդիսոյ 59
Աբդլա կամ Ապտլայ ամիրապետ 67
Աբդլա ամիրապետ այլ (Ապտլ-դանդի) 67, 72
Աբդլա կամ Ապտլայ ամիրապետ միւս 74
Աբդլ մէլիք ամիրապետ 62, 185
Աբել 331
Աբիսողոմ 13
Աբլապասն Աշոտ 72
Աբրահամ առաջնորդ Գետկայ 210
Աբրահամ տէր (յաշակերտացն Սահակայ և Մեսրոպայ) 10, 31
Աբրահամ կաթուղիկոս 45, 46, 50, 51
Աբրահամ նահապետ 57, 60 133, 135, 326, 331, 332
Ագաթանգեղոս 9
Ադամ նախահայր 8, 50, 115, 117, 118, 134, 209, 318, 332
Ադամայ ապաշխարութիւն (գիրք) 50
Ադդէ իմաստասէր 43, 201
Ազկերտ. տես Յազկերտ
Աթանագինէս 23
Աթանաս սուրբ 34, 119, 120, 125, 292, 315, 325
Աթանաս իմաստասէր 43
Աթանաս պատրիարք Ասորւոց 65
Աթաբէկ որդի Ջալալի 375, 376
Աթլ (Էթիլ) գետ 342
Ալադին Ալայէտտին 179, 215, 216, 302, 351, 361
Ալամութ 361
Ալայիա կամ Յալայիա կղզի 302, 360
Ալանաց դուռն 379
Ալանք 39, 379

Ալաւիկ (կամ Ալօկ) 107, 188
Ալբիանոս եպիսկոպոս 26
Ալէքսիոս պրոտօստրատոր 112
Ալէքս կայսր Ա. 79
Ալէքս Բ. 99, 101, 111, 142
Ալէքսի կոմս 143
Ալի 55, 56
Ալիս գետ 67
Ալհարակ լեառն 108, 189
Ալղու Թամար 378, 379
Ալուալեխ 354
Ալփասլան 78, 86, 97
Ախուրեան գետ 82
Ածգոր 374
Ականա 345
Ակներ վանք 151, 177
Ահարոն (Հարուն) ամիրապետ 72
Ահարոն կաթուղիկոս Աղուանից 186
Ահմատ ամիրապետ 74
Ահր կամ Աւահր աւան 355
Աղբուղա կամ Սաղպուղա որդի Վահրամայ 155, 228, 249, 265, 269, 273
Աղէքսանդրիա 38, 91, 200
Աղթամար 77, 93, 142
Աղիովիտ 57
Աղուանք և Աղուանից աշխարհ 10, 17, 20, 21, 32, 52, 75, 84, 91, 93, 168, 171, 172, 180—188, 190, 197, 211, 217, 221, 224, 248, 263, 265, 268, 274, 276, 295, 297, 334, 345, 348, 353, 359, 376
Աղուանից կաթուղիկոս 168, 171, 181, 188
Աղսարթան հայր Կիւրիկէի 92, 146, 147, 229
Աղսարթան որդի Կիւրիկէի 147
Աղստև 210
Աղստևոյ գետ 197
Ամարաս գաւառ 184
Ամարի թագաւոր 99
Ամիթ քաղաք 217, 277, 371
Ամիրայ Մամիկոնեան 259
Ամիր Օմար 171
Ամիրմումինիք 58, 77
Ամր ամիրապետ 58
Այեխ գետ 353
Այրարատ 154
Այրի-վանք 295, 335
Անագուրակ—Նուրին 296
Անանեանք 236
Անանիա Մոկացի կաթուղ. 79, 80, 81, 82, 187
Անանիա կաթուղիկոս Հայոց 187
Անանիա կաթուղիկոս Աղուանից 186
Անանիա վարդապետ Շիրակացի 59

Անանիա վարդապետ Սանահնեցի 104
Անանիա Սեբաստացի 141, 142, 150
Անապատ վանք 146
Անաստաս կաթուղիկոս 59, 60
Անաստաս կայսր 39
Անաստաս վարդապետ 68
Անբերդ գաւառ 154, 295
Անդրէ առաքեալ 16
Անդրէաս իմաստասէր 43, 44, 200
Անդրէի ս. վանք 295
Անդրոնիկոս 101, 147
Անեցիք 84, 85
Անի 81, 82, 84—86, 93, 154, 161, 162, 164, 244
Անկիւրանք, որ և Անկուրք 219
Անկպալեխ քաղաք 354
Անտաք-Անտիոք 99, 104, 108, 143, 150, 382
Անտիոքայ Բրինձ 177
Անտոն ճգնաւոր 110, 205
Աշաւա 204
Աշոտ Աբլապան 72
Աշոտ Բագրատունի թագաւոր 18
Աշոտ իշխանաց իշխան 74, 75, 78, 79
Աշոտ Մարզպան Բագրատունի 61, 72
Աշոտ Գ. Ողորմած 81, 82, 85,
Աշտիշատ 22
Աշրափ իշխան 215
Աշրափ սուլթան 156
Ապալիկ Ապութորոսպ 77
Ապաղան 379, 382
Ապլ-ալուփ (Էպիւ Թալէպ) 77
Ապողինար 124, 125
Ապուբաքր 58, 61
Ապուսահակ Մահմէտ 72
Ապուսէթ կամ Ապսաճիտայ ոստիկան 73, 75, 77
Առլեխ կամ Լեխ 354
Ասիա 352
Ասիացիք 99
Ասիլ որ և Ումէկ 349
Ասլան-պէկ 259
Ասորեստան 99
Ասորիք 29, 43, 50, 56, 58, 65, 74, 89, 109, 139, 150, 201, 277, 314, 344, 361, 371
Ասոն քաղաք 354
Ասպուրակէս կաթուղիկոս 27
Աստուածածնայ եկեղ. 'ի Գետիկ 204
Աստուածատուր Աղբայրկայ որդի 172
Ատան տես Սիր Ատան 177,
Ատանա 101
Ատտիկոս պատրիարք 33

Ատրպատական աշխարհ 154, 221
Արաբիա 43
Արագած լեառն 351
Արագածոտն 71, 315
Արամ հայկազն 93
Արամունիք 66
Արայի լեառն 351
Արգու-Խաթուն 203
Արիոս կամ Արիանոս և Արիանոսք 24, 54, 55, 315
Արիստակէս կամ Ռստակէս (եպիսկոպոսապետ Հայոց) 17, 19
Արիստոտէլ 31
Արիբուղա 362, 378
Արծրունեաց իշխանք 31
Արծրունիք 10, 77
Արկադէոս կայսր 27, 33
Արկադուպօլիս 71
Արձան (յաշակերտացն Սահակայ և Մեսրոպայ) 31
Արղուն ոստիկան 297, 346 348, 350, 358 359, 374–379,
Արճէշ քաղաք 172
Արմենք 93
Արշակ 23–27
Արշակաւան 25, 26
Արշակունիք 12, 26, 34, 35, 75, 312, 314
Արշարունիք 79
Արշարունեաց գաւառ 79
Արուճ աւան 60
Արտազ գաւառ 313
Արտաշատ քաղաք 21
Արտաշիր կամ Արտաշէս թագաւոր 33–35, 52
Արտաշիր որդի Շահնշահի 377
Արտաւիլ քաղաք 175
Արտեմոն հերձուածող 53
Արցախ 345
Արփասլան տես Ալփասլան
Արփասուս գիւղ 49
Արքակաղին վանք 159, 176
Արքայութիւն քահանայ 107
Արքեղայոս իշխան 19
Աւագ իշխան, որդի Իւանէի մեծի 176, 210, 224, 241–243, 247, 248, 250–252, 265, 269, 273–276, 295, 298, 300, 301, 304, 305
Աւագ—Սարգիս որդի Շահնշահի 377
Աւալիկ 77
Ափխազէթ 274
Ափխազք 373
Ափշին 77
Ափսիմերոս 62

Բաբիլական խել 154 (Բաբելական ?)
Բաբգէն կաթողիկոս 38
Բաբգէն Սիւնի 69
Բաբելոն 74, 367
Բագարան կամ Բագրան գիւղ 51
Բագարատ իշխան Տարօնոյ 73
Բագնայր վանք 83
Բագուան 59, 175
Բագրատունիք 12, 75, 87, 91, 92, 146,
Բագրեւանդ 40, 62
Բաթու Ղան զօրավար Թաթար, 274, 299, 300, 342–344, 348, 350, 352–355, 357, 359, 361, 378
Բալախա Թաթար 359, 361, 378
Բահլաւան որդի Կիւրիկէի 147
Բաղաց գաւառ 81
Բաղդատ քաղաք 362–364, 367, 368
Բանդա դուռն (Դարբանդայ դուռն) 359
Բաչու—Խուրչու զինաւոր 263
Բաչու—Նուին 266, 267, 269 270, 299, 300, 302, 344, 351, 355, 358, 360, 363,
Բառնաբաս առաքեալ 205
Բասիլիոս մեծ 316
Բասիլիա վրացի 208
Բասրանուին 275
Բասրացւոց քաղաք 77
Բասրա ամրոցոյն 363
Բարաքա (Թաթար) 358
Բարթուղիմէոս առաքեալ 181, 280, 339
Բարշապուհ (ասորի) 65
Բարի-Հրեշտակ (Ագաթանգեղոս) 9
Բարիոք 197
Բարձրբերդ 95
Բարսեղ սուրբ 25, 34, 325, 328
Բարսեղ եղբ. Խաչատրոյ վարդապետի 211
Բարսեղ եպիսկ. (արքայեղբայր) 263
Բարսեղ եպիսկ. Հաղբատայ 92
Բարսեղ Ա. կաթողիկոս 91 93, 100, 102
Բարսեղ քահանայ դեսպան 352, 355
Բարքաչա (Թաթար) 358
Բեթանիա 32
Բեդժէն կաթողիկոս Աղուանից 168, 171, 189
Բեդղէհէմ 122
Բելուկուն քաղաք 191
Բեղամէջ 191
Բենեդիկտոս (ս.) 103
Բենէր վարդապետ 382
Բեսելիէլ 203

Բերդակ գաւառ 186
Բերքայ զօրավար Թաթար 378, 379, 380, 382
Բզնունեաց ծով 77
Բզնունիք, 57, 156, 215, 276
Բէքխարուխ սուլտան 98
Բիւզանդ պատմիչ 10
Բիւղու քաղաք 71
Բիւրատեան Սմբատ 62
Բիւրինէ քոյր Արտասայ 145
Բորա-Նուրին կամ Պօրա-Նուրին 375
Բոր 52
Բուխարա 355
Բուղա հարկահան Թաթար 297, 298
Բուղա ոստիկան 73, 77, 295
Բուրդեն մարզպան 52
Բջնի 89, 161, 171, 204, 295
Բրքիշօ Ասորի 35

Գաբրիէլ հրեշտակ 319, 336
Գաբրիէլ վարդապետ բանսարկու 65
Գագ բերդ 155, 238
Գագիկ Ա. թագաւոր Արծրունեաց 77, 101
Գագիկ թագաւոր Բագրատունեաց Ա. 82, 83, 87
Գագիկ Բ. 84, 85, 87, 93, 94—96
Գագիկ թագաւոր Վանանդայ 87, 93—96 97, 100
Գագիկ Ա. կաթուղիկոս Աղուանից 187
Գագիկ Բ. (Գրիգ.) 188, 189
Գամիրք 43, 201
Գայանէ 18
Գայլ (Պետրոս) եպիսկոպոս 46
Գանձակ քաղաք 107, 108, 168, 170, 171, 189, 192—195, 211, 213, 214, 221, 224
Գանձասար վանք 256, 376
Գառնեցիք 312
Գառնի գիւղաքաղաք 75, 76 212, 335, 380
Գառնիկ ճգնաւոր 17, 38
Գառնոյ դաշտ (Դառնոյ?) 380
Գարդման 146, 155, 229, 333
Գելաթ 374
Գեղամայ ծով 62, 306
Գեղաքունւոյ ծով 154, 242, 307
Գետաբակ բերդ 53, 229
Գետակիցք վանք 147
Գետիկ վանք 6, 155, 158, 162, 163, 197, 198—200, 203, 207, 239, 295
Գերմանոս պատրիարք Կ. Պօլսոյ 32
Գէորգ (Ս.) եկեղեցի 210
Գէորգ եպիսկոպոս Հաղբատայ 92
Գէորգ կամ Գիօրգի Գ. թագ. Վրաց 105, 108, 154, 157, 176, 199, 224
Գիօրգի Շալա 176, 273, 300, 301
Գէորգ թոռն Լաշայի 374
Գէորգ կաթուղիկոս Խուլ-Որբուկ 71
Գէորգ Բ. Գառնեցի 75, 76, 187
Գէորգ վարդապետ Մեղրիկ Լոռեցի 89, 90, 93, 102
Գիգան Ասորի 201
Գիւգ Ղան կամ Ղան Գիւգ 297, 301, 343, 344, 348, 350.
Գիս 182
Գիւտ կաթուղիկոս 37
Գնէլ Արշակունի 24
Գողգոթայ 16
Գողթան գաւառ 63, 313
Գոնցա թագուհի Վրաց 373, 374
Գոնցա կին Աւագի 305
Գոշ տեր. Մխիթար Գոշ 162, 207, 208
Գորգ կամ Գէորգ վարդապետ Կարենացի 172
Գորգոզ իշխան Թաթար 276
Գորտոսակ (գիրք) 50
Գուրջի Բագրատին 169
Գրատիանոս կայսր 25
Գրիգոր Աստուածաբան 25, 105, 109, 134, 315, 317, 325, 328
Գրիգորեանք 34
Գրիգոր Դունեցի 162
Գրիգոր եղբայր Վախթանկայ տեառն Հաթերքոյ 203
Գրիգոր եպիսկոպոս (քեռորդի Վկայասէրի) 90
Գրիգոր եպիսկոպոս Բջնոյ 295
Գրիգոր եպիսկոպոս Խաչենոյ 345
Գրիգոր որդի Հաղբակայ իշխան Խաչենոյ 194, 265, 269
Գրիգոր իշխան Մամիկ՝ եղբայր Ասլան—պէկի 259
Գրիգոր որդի Ասլան—պէկի 351
Գրիգոր Լուսաւորիչ 5, 9, 10, 17—20, 22, 23, 35, 38, 45, 48, 50, 52, 53, 58, 65, 71, 81—83, 91, 100, 109, 122, 131, 138, 141, 179, 181—184, 199, 202, 210, 233, 280, 285, 288, 314, 315, 325, 339
Գրիգոր Կապալեցի 210
Գրիգոր կաթուղիկոս Բ. Վկայասէր 89, 90, 93

Գրիգոր կաթուղիկոս Գ. Պահլաւ. 91, 100, 102, 108, 112, 188, 314
Գրիգորիս կաթուղիկոս Դ. Տղայ 141, 142
Գրիգոր կաթուղիկոս Ե. Գահավէժ 141
Գրիգոր կաթուղիկոս Զ. Ապիրատ 142
Գրիգոր Մագիստրոս 89
Գրիգոր Մամիկոնեան պատրիկ 60
Գրիգոր (Մանաճիհր) 42 (տես. Ռաժիկ Գրիգոր)
Գրիգոր Նիւսացի 25, 316, 325, 328
Գրիգոր Պապ 103
Գրիգոր Սքանչելի 317
Գրիգոր վարդապետ (առ Մօրկաւ) 48
Գրիգոր վարդապետ Գանձակեցի 189
Գրիգոր վարդապետ Երգէվանից 334
Գրիգոր վարդապետ Թոքակերի որդի 107, 188
Գրիգոր վարդապետ Մոնմոնիկ 162, 166
Գրիգոր Տղայ Խաչենացի 242, 265, 269
Գրիգոր Տղայ որդի Իւանէի 210, 345
Գրիգոր Տուտէորդի 84, 85, 162
Գրիգորիս եղբայր Վախթանկայ Հաթերքոյ 203
Գրիգորիս եպիսկոպոս Դադի վանից 311
Գրիգորիս եպիսկոպոս Հաղբատայ 92, 161—163
Գրիգորիս կաթուղիկոս Աղուանից 21, 183
Գրիգորիս վարդապետ Խաչենոյ 256
Դադի վանք կամ Թաթի վանք 204, 311
Դալաս քաղաք 354
Դամասկոս 148, 156, 180
Դանիէլ եպիսկոպոս Սսորի 22, 29
Դանիէլ մարգարէ 32, 140, 236, 332
Դաստակերտ 186
Դարբանդ (տես. և Բանդադուռն) 62, 190, 192, 274, 353, 359, 378, 379, 380 382
Դարդման 185 (Գարդման)?
Դաւիթ Ալաւկայ որդի 106, 188
Դաւիթ Անհողին թագ. 91
Դաւիթ Անյաղթ, փիլիսոփայ 31, 37
Դաւիթ Բագրատունի կորիկեան 'ի Մածնաբերդ 145
Դաւիթ Դունեցի 60
Դաւիթ Ա. թագաւ. Վրաց 105
Դաւիթ թագաւոր Բ. Դեմետրեան 105, 108
Դաւիթ թագաւոր Գ. որդի Լաշայի 274, 301
Դաւիթ թագաւոր Դ. որդի Ռուզուդանայ 253, 273, 274, 300, 301, 303, 305, 350, 373, 374, 377
Դաւիթ իշխան Նոր-բերդոյ 146, 147
Դաւիթ կաթուղիկոս Ա. (յԱրամունեաց) 66
Դաւիթ կաթուղիկոս Բ. ('ի Մաղազայ) 72
Դաւիթ կաթուղիկոսԴ (յԱրքակաղնոյ) 142, 159, 160, 161, 176
Դաւիթ կաթուղիկոս Աղուանից Ա. 184
Դաւիթ կաթուղիկոս Աղուանից Բ. 186
Դաւիթ կաթուղիկոս Աղուանից Գ. 186
Դաւիթ կաթուղիկոս Աղուանից Դ. 187
Դաւիթ կաթուղիկոս Աղուանից Ե. 187
Դաւիթ կաթուղիկոս Աղուանից Զ. 188
Դաւիթ Հոռոմայրեցի 68
Դաւիթ մարգարէ 8, 65, 103, 105, 111, 124, 332
Դաւիթ Մոլորեցուցիչ 303—308
Դաւիթ Սահառունի մարզպան 52, 54
Դաւիթ Սիւնեաց եպիսկոպոս 69
Դաւիթ վարդապետ Քոբայրեցի 162
Դաւիթ Քրթին որդի 197, 203
Դեղ բերդ 298
Դեմետրէ թագաւոր Վրաց 105, 108, 154, 189, 374
Դեսում իշխան 345
Դեսպինա Խաթուն 382
Դերենիկ Արծրունի 77
Դերենիկ Բագրատունի 91
Դեթայ (դիւաշարժ) 307
Դիոսկորոս Սանահնեցի 84, 104
Դըղուշ կամ Դուղուշ որդի Ալփասլանայ 98, 99
Դիաթեկ տես. Տիաղեկ 50
Դիզակ 354
Դիլմա կամ Դիլմաց աշխարհ 77, 221

Դինկապալեխ քաղաք 354
Դիոնէսիոս Արիսպագացի 111, 330
Դիուժէն կայսր 97
Դմշկ 371, 372 (տես. Տըմըշղ կամ Տմշկ)
Դուին 21, 58, 60, 66, 69, 70, 75, 77, 99, 154, 161, 162, 184, 187
Դուկիծն կամ Տուկիծն կայսր Յունաց 97
Դումանիս քաղաք 240
Դուռն Ալանաց (տես. Ալանաց դուռն)
Դոփին Խաչենեցի 265, 269
Դպրէվանք 79
Դրազարկ վանք 102
Դօղար Ոստիկան 364

Եբիոս կամ Սեբիոս (գիրք) 50
Եգիպտացիք 56, 90, 139, 373
Եգիպտոս 55, 90, 93, 116, 144, 156, 180, 215
Եգլեանք 145, 369
Եզեկիէլ 32, 236, 332
Եզնակ 31
Եզնկա 268, 302, 360, 380
Եզր կաթողիկոս 53, 58, 65
Եզրաս Անգեղացի 40
Ելթինա Խաթուն 269, 274, 275
Ելլենախորհք 77
Ելոգս (Իլոգս) 43
Ելտամղա (գիր կամ թուղթ) 270
Եկոփորուկ 355
Եղապատրուշ գիւղ 70
Եղիա կաթողիկոս 61, 63, 185, 186
Եղիա Հաւուցթառեցի 162
Եղիա մարգարէ 117, 324, 332, 341
Եղիա վարդապետ Խաչենոյ 256
Եղիաբ կամ Ելիաբ 203
Եղիազար եպիսկոպոս Աղուանից 185
Եղիշէ առաքեալ 181—183
Եղիշէ պատմիչ 10, 31
Եղիսաբէթ (սուրբ) 122, 123
Եղիսաբէթ (Զապէլ) 351
Եղիսէ եպիսկոպոս 87
Եղիսէ կաթողիկոս 79
Եմեսիա 316
Ենովս 331
Ենովք 331
Եպիփան Կիպրացի 317, 327
Եռինէ 71
Եսայի կաթողիկոս 70
Եսայի մարգարէ 332
Եվաղեն կամ Վաղեն 182
Երազգաւոր 72
Երազոյ աշխարհ 355

Երասխ գետ 355
Երգէվանք 146, 155, 229, 230, 311, 333
Երեմիա եպիսկոպոս Աղուանից 184
Երեմիա մարգարէ 208, 332
Երճիթ գետ 353
Երուսաղէմ 16, 32, 40, 51, 72, 99, 108, 122, 143, 144, 156, 157, 181, 200, 201, 222, 254, 279, 333, 336, 339, 371
Եւա 209
Եւսեբիոս Մեծն 8
Եւտիքես 124, 125
Եւտիքեանք 352
Եփեսոս 302
Եփրատ գետ 180, 368, 369
Եփրեմ (սուրբ) 104, 316
Եփրեմ վարդապետ 68

Զանգիան 337, 355
Զապէլ (Եղիսաբէթ) 177, 271, 351
Զարմանդուխտ 52
Զաւէն կաթողիկոս 26, 27
Զաքարէ Սպասալար Շահնշահ—սպարապետ 84, 92, 145, 154, 156, 157—159, 161, 162—167, 172, 175 176, 198, 201, 203, 204, 207, 209, 210, 224, 249, 254, 274, 277
Զաքարէ եղբայր Սարգսի 154
Զաքարէ որդի Շահնշահի 254, 303, 364, 376, 377
Զաքարիա եպիսկոպոս Աղուանից 184
Զաքարիա (այլ) 184
Զաքարիա կաթողիկոս 72, 75
Զաքարիա հայր Յովհաննու Մկրտչի 122, 123, 183
Զաքարիա որդի Վահրամայ 145, 155
Զենոն կայսր 18, 38, 39
Զոմզոմայ Ստեփանոս 105, 106
Զուռնուխ 354
Զորաբաբէլ 332
Զօրոձոր 204

Էաս Աղէքսանդրացի 43, 201
Էթիլ կամ Եթիլ գետ 350
Էլչի-Գաթա 343
Էմմանուէլ 143, 320

Ըռստակէս կամ Ռըստակէս Լաստիվերտցի 11
Ընկախ 354

Թաբորական լեառն 373
Թադէոս առաքեալ և վանք 181, 280, 285, 296, 313,

339
Թաթար ազգ 12, 92, 179, 190, 211, 217—219, 222, 230, 242, 244, 247, 249, 253, 257, 261—263, 265, 268, 271—274, 278, 296, 297, 299, 303, 304, 344, 349, 351, 355, 358, 360, 364, 365, 369, 370—373, 380
Թաթարստան 353
Թաթի վանք կամ Դաղի վանք 311
Թաթուլ եղբայր Վարոսի 38
Թալիլէ 186
Թալին 68
Թաղիաթին 147
Թամար թագուհի 92, 154, 157, 176, 197, 199, 201, 224
Թամթա 157, 215, 276, 277
Թանատեաց վանք 69
Թանգրի 102 տես. և (Տան Ղրիլ) 260
Թավրէժ 262, 275, 355
Թաղենիք 162
Թերք գետ 379
Թէոդոս Մեծն 25, 26, 27, 110
Թէոդոս Փոքրն 9, 33, 34, 37
Թէոդոս սպասաւոր Կոստանդին կաթուղիկոսի 296
Թէոդորա կին Յուստինիանոսի 40
Թէոդոր աշակերտ Մովս. Խորեն. 31
Թէոդորոս կաթուղիկոս 79
Թէոդորոս Ռշտունի 54, 59
Թէոդորոս սուրբ 38, 139
Թէոդուպօլիս 34, 263, 264, 277
Թէոփիլոս կայսր 74
Թիլ գիւղ 75
Թովմա վարդապետ պատմագիր 10, 74
Թոդոր (տես. Կիռ Թոդոր) 97
Թորա կամ Թէորա (Թէորիանոս) 109
Թովմաս առաքեալ 135
Թորդան գիւղ 17, 38
Թորոս աշ. Մխիթ. Գոշի 206
Թորոս կամ Տէր Թէոդորոս Աղուանից եպիսկոպոս 186
Թորոս իշխանաց իշխան կամ Թէոդորոս 101, 102, 147
Թորոս որդի Կոստանդնի Առաջնոյ 351
Թորոս քահանայ 352
Թումայ աշակերտ Թաթլոյ 38
Թունի-Թանջահ 214
Թուրա կամ Թօրա Աղա 348
Թուրքաստան 354
Թուրք 73, 78, 148, 211,

296, 297, 341, 344, 345, 350, 361, 363, 364, 372
Թոքակեր 107, 188
Թրակ կամ Թիրակ 99, 214

Իգնատիոս եպիսկոպոս մեկնիչ Ղուկասու Աւետ. 103
Իգնատիոս վարդապետ 162
Իզիտ ամիրապետ Ա. 62
Իզիտ ամիրապետ Բ. 63
Իզիտ ամիրապետ Գ. 67
Իլանսու գետ 354
Իլիգիա-Նուին վերակացու 368
Իլչի-Դաղաի տ. Էլչի-Գաթա
Իլոգս (Ելոգս) իմաստասէր 44, 201
Իկօն քաղաք տես. Կօն 302
Ինանի 145
Իշանպալեխ 354
Իպնդօկլ հարկահան 70
Իսահակ որդի Աբրահամու 332
Իսահակ վարդապետ Մռուտ 75
Իլամացիք Իսլամացիք 361
Իսմայէլ (ազգ) 54, 58, 60, 61, 62, 65, 67, 68, 71, 72--74, 75, 76, 85, 149, 158
Իսմայէլ (որդի Աբրահամու) 60, 62, 168
Իսրայէլ կաթուղիկոս 60
Իսրայէլ (Յակոբ նահ.) 332
Իսրայէլ (Հրէայք) 8, 380
Իսրար-Նուին 261
Իտուղատա 241, 242
Իրիոն տօմարագէտ 44, 200, 201
Իւանէ Աթաբէկ 92, 145, 154—157, 172, 175, 176, 192, 195, 198, 199, 204, 207, 208, 210—212, 224, 225, 241, 273, 301, 305
Իւանէ եղբայր Շալուէի— 212 215
Իւանէ թոռն Զաքարէի 380

Լամբրոն բերդ 103, 270—272
Լաշա թագաւոր Վրաց 191, 192, 224, 273, 300, 301, 373
Լեխ 354
Լեոն Մեծն կայսր Ա. 37
Լեոն որ և Լեոնդ կայսր 62
Լեոն Գ. (Իսաւրացի) 62, 67
Լեոն Դ. 71
Լեոն Ե. (Հայկազն) 71, 74, 79
Լեոն Ռուբինեան Ա. 101, 147

Լևոն Բ. թագաւոր 96, 101, 141, 148, 149—153, 154, 159, 160, 161, 167, 176—178 270, 271, 302, 351
Լևոն Գ. թագաւոր 270
Լէշքարիս սուլթան Հոռոմոց 302
Լիբանանու մայրք 214
Լոռէ քաղաք 66, 79, 86, 99, 145, 161, 239

Խաղայ 256
Խազիրք 51, 60, 62, 219
Խամշի վանք 172, 190, 263, 275, 276
Խաչատուր վարդապետ Գետկայ 211
Խաչատուր վարդապետ Տարօնեցի 199
Խաչենեցիք 194, 269
Խաչէն գաւառ 92, 164, 169 170, 197, 203, 242, 249, 253, 256, 265, 306, 307, 345, 358, 374
Խաչիկ կաթուղիկոս Ա. 82
Խաչիկ կաթուղիկոս Բ. 88
Խաչիկ վարդապետ 68
Խառան 60, 61, 379
Խարախըտայ (Գարա Խիտա) 353
Խարաչուխ 354
Խարչուխ լեառն 354
Խաքան կամ Խաղան թագաւոր Խազրաց 51, 220, 232, 248, 251, 252, 258, 261, 263, 274, 277
Խզըլ բռնաւոր 99
Խզուլին քաղաք 355 կամ Ղազուլին 375
Խիւչախք (Խօչախք) 342
Խլաթ, Խլիաթ քաղաք 156, 276, 277
Խնդրախոյր (Խնդախոյր) 354
Խոյական բերդ 298
Խոյթ կամ Խութ լեառն 73
Խոյղան 203
Խունան դաշտավայր 191
Խոշակ տիկին 372
Խորիան կամ Խուռեան զօրավար պարսիկ 51, 52
Խոսրով եպիսկոպոս 79
Խոսրով արքայ Բ. 20, 21
Խոսրով արքայ Գ. 27, 28, 33
Խոսրով պատմիչ 10, 31
Խոսրով Մեծն արքայ Պարսից 42, 301
Խոսրով Բ. արքայ Պարսից 50, 51, 52, 184
Խոսրով Գ. արքայ Պարսից 52
Խոսրովեան ոճ 110
Խորազմեան 277
Խորանաշատ վանք 311, 333

Խորասան աշխարհ 77, 100, 172, 209, 211, 220, 335, 379
Խորենացի Մովսէս 9, 10, 31, 38, 40, 316
Խորէն Խոստովանող (Նահատակ) 10
Խորիշահ կին Քուրդ իշխանի 351
Խորին Ասորիք 371
Խուզախ աշխարհ 354
Խութաքա քաղաք 354
Խութուխչի-Ղան 354
Խուլ-Որբուկ, Խոյլորբուկ 71
Խուչախք (Խիւ-չախ) 192
Խուռխան զօրավար 51, 52
Խցկունք վանք և գիւղ 83
Խօխանա-բերդ 255, 256
Խօճա-Ղան 343
Խօճա-Նուրին 355
Խօշաք մայր Աւագին 304
Խօչախաց դաշտ 342

Ծաղկոցաձոր 82
Ծայրաքար վանք 83
Ծար ջերմուկ 307
Ծիրանաքար բերդ 238
Ծովք կղզի 100
Ծոփք 19

Կաթին ծով 354
Կալօժան 142
Կածարէթ 155, 229
Կակաղ գիւղ 72
Կաղանկատուացի Մովսէս 10
Կայան աշխարհ տ. Կայենոյ աշխարհ
Կայենոյ բերդ 198, 241, 295
Կայենոյ աշխարհ 197, 198, 295
Կայեն գաւառ 155, 197, 198
Կապուտաքար (կապոյտ Քարն) 79
Կապպադովկացիք 49, 100, 216, 267
Կապպադովկիա 49, 139
Կասպից ծով 342, 350, 353, 379
Կատմ ոստիկան 62
Կատիսրոն 363, 367
Կատրամիտէ թագուհի 83
Կարապետ Ս. վանք 43
Կարապետ քահ, դրան երէց Հեթմոյ Ա. 352
Կարին գաւառ 163, 264
Կարկառ 345
Կարմրջաձոր 79
Կարնոյ քաղաք 34, 53, 71, 154, 188, 196, 264, 265 277, 295, 349, 360
Կարուց քաղաք (Կարս) 87, 93, 154, 161, 162, 246, 247, 295, 351
Կաւալինոս կայսր Կոստան-

դին 67, 71
Կաւատ Ա. 39
Կաւատ Բ. 52
Կեսարիա Կապպադովկացւոց 24, 87, 93, 216, 267, 360
Կեչառուք 162, 163, 166, 295
Կերինթոս 54
Կիլիկիա և Կիլիկեցւոց աշխարհ 19, 78, 83, 95, 96, 111, 112, 147, 159, 160, 215, 263, 269, 270, 279, 287, 301, 314, 360
Կիլիկեցիք 19, 83, 101, 147, 350
Կիպրոս կղզի 151, 152, 178
Կիրակոս Գանձակեցի պատմիչ 4, 5, 6, 13, 236, 318
Կիրակոսակ (գիրք) 50
Կիր-Ժան 79, 83
Կիւրապաղատ 70
Կիւրեղ Աղեքսանդրացի 104, 124
Կիւրեղ Երուսաղէմացի 53, 65
Կիռ Թոդոռն 97
Կիւռղի 96
Կիւրիկէ Բագրատունի Ա. 86, 91, 145
Կիւրիկէ Թագ. Բ. 145, 147
Կիւրիկէ Թագ. Գ. 229
Կիւրիոն կաթուղիկոս Վրաց 11, 45, 46
Կլայ-Հռոմկական տ. Հռոմկլայ
Կոգովիտ 51
Կոթ աւան 306
Կողբ 53, 349
Կողոնիա 341
Կոմանայ 28
Կոմիտաս կաթուղիկոս 52
Կոնտոփրի 99
Կոստանդին կաթողիկոս Ա. 179, 278, 279, 285, 295, 342, 351
Կոստանդիանոս Մեծն 9, 15, 16, 21, 109, 139
Կոստանդին կայսր Բ. 20, 21, 43
Կոստանդին կայսր Գ. 62
Կոստանդին կայսր Դ. (Կաւալինոս) 67, 71
Կոստանդին կայսր Ե. 71
Կոստանդին կայսր Զ. 79
Կոստանդին կայսր Ը. 96
Կոստանդին որդի Հերակլ կայսեր 54, 56
Կոստանդին Պայլ (Մեծ իշխան) 177, 178, 179, 263, 270—272, 291, 351
Կոստանդին Ռուբինեան Ա. 101, 147
Կոստանդնուպօլիս 18, 25, 27, 32, 38, 41, 47, 90,

99, 109, 143, 150
Կովկաս լեառն 192
Կոտայք կամ Կուտայք (գաւառ) 66, 72
Կորիւն սքանչելի 10, 31
Կուզ Սուլտան Իկոն 156
Կուտայք 175
Կուր գետ 382
Կօն 272, 302, 360

Հաբել եպիսկոպոս 50
Հաբէլ երէց 29
Հագար 55
Հագարացիք 67, 86
Հաթերք 197, 203
Հալաւու կամ Հուլաւու տես. Հօլաւու
Հալէպ (Հալապ) 143, 152, 371
Հաղարծին վանք 199, 211, 295
Հաղբակ Խաչենացի 194
Հաղբատ գաւառ և վանք 91, 92, 99, 104, 106, 161—164, 204, 206, 211, 295, 311
Համա 372
Համադօլայ դեսպան 277
Համազասպ եպիսկոպոս Հաղբատայ 93, 107, 295, 311
Համազասպ մարզպան 59, 60
Համակար վերակացու 42
Հայաստան, Հայոց աշխարհ և Հայք 9, 10—12, 15, 17—19, 22—24, 26, 28, 31, 32—37, 40, 42—48, 50, 53, 54, 56, 57, 59, 60—63, 65— 68, 70, 72, 73—75, 78, 79, 82, 83, 88, 89, 91, 93, 98—105, 109, 111, 111, 122, 126, 127, 129, 130, 138—142, 144, 146, 149, 150, 153, 154, 157—160, 168, 172, 175, 176—178, 180—190, 200—203, 206, 209—211, 215, 218, 224, 225, 256, 263—266, 268, 269, 274, 278, 279, 285, 294, 295, 297, 299, 301, 303—306, 314, 318, 337, 339, 340, 342, 344, 346, 350, 357, 359, 360, 362, 367, 371, 373, 375, 377, 380
Հայկ 182
Հայկազն Արամ 93
Հայք տես. Հայաստան և այլն
Հանբերդ 295
Հասան որ և Ջալալ 249, 254, 269, 298, 345, 346, 373, 374, 375
Հասան որդի Վասակայ տես. և Պռօշ 194, 369
Հասան որդի Պռօշի 368

Հասան Քրդի որդի 351
Հասրակ 368
Հատանի 354
Հարք գաւառ 26
Հաւախաղաց 253
Հաւարծին տես. Հաղարծին.
Հեթանոսք 16
Հաւուց—Թառ 162, 295
Հեթում արքայ Ա. 5, 178, 179, 180, 263—269, 270, 271, 279, 287, 291, 301, 302, 314, 350, 355, 360
Հեթում տէր Լամբրոնի 103, 270
Հեղինէ կին Աբգարու 254
Հեմս 42
Հերակլ կայսր 10, 51—54, 61, 65
Հերդ գաւառ 171
Հեպերիքոս վկայ 158
Հեփթաղք 39
Հէմս 372
Հէշմ 63
Հիմիանայ պաշտ 372
Հմայեակ Մամիկոնեան 39
Հուլաւու տես. Հօլաւու
Հոնք 192, 193, 219
Հոռոմեցի կամ Հոռոմոց վանք 79, 295
Հոռոմոց աշխարհ, Սուլտանք և Հոռոմք (Լաոյնք) 56, 68, 79, 93, 95, 96, 102, 111, 112, 138, 141, 142, 147, 179, 182, 215, 247, 264, 265, 272, 273, 300, 302, 340, 351, 355, 357, 360, 363, 382
Հոքթա-Խաղան 219
Հռիփսիմեայ վկայարան 52
Հռիփսիմեանք 18, 31
Հռիփսիմէ 204
Հռոմ 9, 15, 56, 68, 71, 89, 91, 103, 150, 314
Հռոմայեցիք (Լատինք) 148, 149, 150, 314, 315
Հռոմայեցիք (Յոյնք) 21, 99, 102, 142, 143, 144
Հռոմայեցւոց քաղաք 148, 149
Հռոմկլայ 100, 141, 159, 161, 176, 180, 263, 295, 314, 342
Հռոմանոս Սամոստացի 31
Հրէայք 16, 17, 44, 56, 201
Հրէաստան 43, 122
Հօլաւու (Հուլաւու) Ղան 354, 355, 358, 359, 360—368 369—372, 374—380, 382

Ձագ գիւղ 72

Ղազար (Տէր) 183
Ղազար Փարպեցի 10, 31, 39
Ղազուին 375

Ղաճար (ազգ) 372
Ղան տես. և Խաքան կամ Խաղան 249, 252, 258, 261, 263, 274, 277, 361, 364, 368
Ղանաձև Հուլաւու (Հօլաւու) 358
Ղատաղան—Նուին 229, 361, 378
Ղատայիք 356
Ղատխա 218
Ղատխացիք 219
Ղարա-Բահատուր 247
Ղարուզլում աշխարհ 218
Ղարս քաղաք տես. Կարս կամ Կարուց քաղաք
Ղևոնդ երէց 10, 31, 36
Ղևոնդ կաթուղիկոս 39
Ղևոնդեանք 105
Ղիաթատին սուլթան Բ. 265, 276, 300—302
Ղութուն—Նուին 259, 261, 275
Ղուկաս Աւետարանիչ 122, 123
Ղուլն կամ Ղուլի զօրավար Թաթար 361, 378
Ղուկասու Մեկնութիւն 103
Ղումաղուր 353
Ղուպիլայի (Ղոպիլա) 378
Ղօճա Ղան կամ Խօճաղան 343

Ճիհուն գետ 355
Ճիհր—Բուրզէն 52
Ճիհր—Վզոն, Միհրան 52
Ճիհր—Վշնասպ Սուհեն 52
Ճինկիզխան տես. Չանկըզղան, Չինկիզղան
Ճիոն Օրհնութեան 50
Ճորա Պահակ (դուռն) 353
Ճամպալեխ քաղաք 354

Մաղխամ 56
Մաղխանացիք 56, 57
Մաղրին (կուռք) 357, 381
Մաղաղ 72
Մազանդարան 355
Մաղդեղն 36
Մախոժ 42
Մածնաբերդ 92, 93, 145, 146, 229
Մակարայ վանք 204
Մակեդոն 24, 25
Մահադի 72
Մահամատ ամիրապետ 72
Մահկանաբերդ 197
Մահմէտ 10, 54—58, 67, 194, 361, 363, 364
Մահմէտ Ապուսահակ 72
Մահմէտ զօրավար 60, 61
Մահմէտ միւս 62
Մահմուտ ամիրապետ 72, 74
Մահմուտ Սալչուկ 78
Մամբրէ Վերծանող 31,

32, 40
Մամեստիա կամ Մամուստիա քաղաք 111, 112
Մամիկոնեանք 253, 351
Մամքան 256
Մայմուն 99
Մայրավանեցի 53
Մայրագոմեցի 53
Մանազկերտ 26, 65, 97
Մանաճիհր Գրիգոր 42
Մանդնոս եպիսկոպոս 43
Մանդնոս մարզպան 37
Մանգու Ղան 343, 344, 346, 348, 350, 353—355, 357, 358, 360, 362
Մանեայ այրք 38
Մանեայ Մեկնութիւն 50
Մանիլ (Մանուէլ) կայսր 111, 142, 143
Մանկոն կայսր տես. Մարկիանոս
Մանուէլ Մամիկոնեան 27
Մաշտոց կաթուղիկոս 76 81,
Մասիաց—Ոտն 143
Մատթէոս կաթուղ. Աղուանից Ա. 183
Մատթէոս Բ. 186
Մատթէոս երէց Ուռհայեցի 11,
Մարանդ քաղաք 175
Մարաշ 78
Մարզպան Մամիկոնեան 351
Մար (տես. Օմար) 61
Մարի (Սուրբ) 247
Մարիամ սուրբ կոյս 115, 122, 124, 317, 319, 321
Մարկիանոս կայսր 37, 62
Մարկոս կաթուղիկոս Աղուանից Ա. 188
Մարկոս Բ. 188
Մարկոս քահանայ աշակերտ Վանականի 231
Մարկոս վարդապետ 345
Մարկոսի աթոռ 91
Մարկոս մետրոպօլիտ Կեսարու 93, 95
Մարմարաշէն վանք 82
Մարտիրոս առաջնորդ Գետակայ 207, 209, 210
Մարտիրոսաց քաղաք (Նփըրկերտ) 368, 369
Մարութա 371
Մարք 57
Մաւիէ 56, 61 62
Մաքենացիք 186
Մաքենացւոց վանք 71
Մաքսիմիանոս 184, 333
Մեժեժ (Մժէժ) Գնունի 42
Մեժեժ մարզպան 44
Մելտինէ 206
Մելտինի 150
Մեծ Հայք 314, 351
Մեղան իշխան Թաթար որդի Ղուլին 378

Մեսրոպ վարդապետ (սուրբ) 28, 30—32—34, 36, 105, 182, 184, 237
Մերհաւան թագ. Աղուանից 182
Մերտին 143, 372
Մելիք 363
Մէլիք Աշրաֆ 145, 180, 277
Մէլիքշահ Ա. Սուլտան 78
Մէլիքշահ Բ. 97
Մէլիք Քէլմ 145, 156, 180
Մէհմէտ 77
Մըրձ 355
Միանա քաղաք 355
Միափոր գաւառ 172, 189, 263, 275
Միհրդատ Պարսիկ 56
Մինաս եպիսկոպոս 161, 162
Միջագետք 144, 180, 277, 347, 369, 371
Միջնաշէն 199
Միրհաւան (Մերհաւան) 182
Միքայէլ կայսր Ա. Բ. և Գ. 71, 74, 75
Միքայէլ (Միխայէլ) կայսր Գ. 96, 97, 99
Միքայէլ կաթուղիկոս Աղուանից 186
Մլհեաք կամ Մուլհեաք 214 250, 261, 355, 361
Մխիթար առաջնորդ Գետակայ 210
Մխիթար Գոշ 155, 158, 163—165, 195—197, 207
Մխիթար հիւսն 209
Մխիթար վարդապետ352, 355
Մծբին 277
Մծխիթա 274
Մկդէմ որդի Վասակայ 194, 368
Մկրտիչ եպիսկոպոս Համբերդոյ 295
Մկրտիչ որդի Սարաւանին 350
Մոգն գաւառ 69, 70
Մոլար-Նուին 228, 230, 238
Մոնոմախ 96
Մովսէս Բագրեւանդայ եպիսկոպոս 40
Մովսէս Խորենացի քերթողահայր 10, 31, 38, 40 316
Մովսէս Կաղանկատուացի 10
Մովսէս Մարգարէ 5, 85, 90. 117, 325, 326, 332, 341
Մովսէս կաթուղիկոս 42, 43, 45, 46
Մովսէս կաթ. Աղուանից Ա. 183
Մովսէս կաթ. Բ. Աղ. 186,

187
Մովսէս վարդապետ 68
Մովսէս Ցուրտավայ եպիսկոպոս 45, 46
Մուլհէտք տես. Մլհետք 214
Մուղալ կամ Մողալ Թաթար 219
Մուղան դաշտ 221, 228, 248, 265, 275, 359, 380
Մուղրի (գետ) 337
Մուշեղ սպարապետ Մամիկոնեան 27, 56, 68
Մուշէ կաթողիկոս 31, 39
Մուսթասար խալիֆայ 363—365
Մուսէ ամիրապետ 72
Մուֆարղին (Նփրկերտ) 368
Մսրայ Սուլտանք 372
Մրեն 52, 68
Մրվան 62, 63, 67
Մօրիկ 46, 47, 48—51

Յաղ 56
Յազկերտ արքայ Բ. 36, 52, 56, 182
Յալայի կամ Ալայի 302
Յակոբայ վանք 16, 336
Յակոբ Ս. Մծբնայ Հայրապետ 110
Յակոբ եպիսկոպոս Կարուց 295
Յակոբ եպիսկոպոս Սիւնեաց 72, 80
Յակոբ վարդապետ Հռետոր 351, 355
Յակոբոս երէց 158
Յակոբ Սուրբ վկայ 375
Յակոբոս Տեառնեղբայր 53, 65, 66, 181
Յարութեան եկեղեցի 16
Յաւղագան թագաւոր Աղուան, 182
Յեսու 332
Յեսուանց վանք 150
Յիսէ 77
Յոբ 32, 68, 203. 332
Յոբիանոս կայսր 24
Յոյնք 24, 27, 28, 33, 37, 40, 43, 45, 46, 48, 51, 65, 68, 74, 85—89, 93, 94, 97, 100, 101, 109, 140, 150, 184, 185, 200—203 314, 337, 352
Յովաբ կաթողիկոս յոստանէն՝ի Կուրապաղատէն 70
Յովասափ առաջնորդ Գետկայ 210
Յովել զօրավար 56
Յովհաննէս Արմանեցի 211
Յովհաննէս Աւետարանիչ 74, 103, 131, 134, 315, 317, 352
Յովհաննէս Գառնեցի 334—336, 337, 339, 341

Յովհաննէս (յաշակերտացն Սահակայ և Մեսրոպայ)—31
Յովհաննէս եպիսկոպոս կարուց 162, 164
Յովհաննէս եպիսկոպոս Ա. Հաղբատայ 92
Յովհաննէս եպիսկոպոս Բ. Հաղբատայ 92, 204
Յովհաննէս եպիսկոպոս Գ. Հաղբատայ 92
Յովհաննէս թագաւոր Յունաց 352
Յովհաննէս կամ Յոհան Մանդակունի Ա. կաթ. Հայոց 10, 37, 38
Յովհաննէս Բ. կաթ. Հայոց 42
Յովհաննէս կամ Յոհան ՝ի Կոգովրէ Գ. 51, 52
Յովհաննէս Դ. կաթ. Հայոց Օձնեցի 63
Յովհաննէս Ե. կաթ. Հայոց 72
Յովհաննէս Զ. կաթ. Հայոց 10, 76, 79
Յովհաննէս Է. կաթ. Հայոց 141, 150, 159, 161, 176, 179
Յովհաննէս Ա. կաթ. Աղուանից 84, 171, 174
Յովհաննէս Բ. կաթ. Աղուանից 184
Յովհաննէս Գ. կաթ. Աղուանից 186
Յովհաննէս Դ. կաթ. Աղուանից 188
Յովհաննէս Ե. կաթ. Աղուանից 171, 189, 263, 271
Յովհան Մայրավանեցի կամ Մայրագոմեցի 53, 54
Յովհաննէս Մկրտիչ 42, 117, 184, 325, 332, 337
Յովհաննէս պատրիարք Յունաց 27
Յովհան Ոսկեբերան 28, 34, 46, 104, 131, 316, 325
Յովհաննէս Սանահնին հայր 162
Յովհաննէս որդի Ումեկի 349
Յովհաննէս Սարկաւագ կոչեցեալ 104
Յովհաննէս թագաւոր 83, 84
Յովհաննէս վարդապետ Տաւուշեցի 5, 195, 196
Յովհաննէս եպիսկոպ. Տուեցի 146, 295, 334
Յովհաննէս Տօմարագէտ 43 (տես. Յոհան յԱրաբիոյ)
Յովհաննու Կարապետի վանք 200, 295
Յովսէփ յաշակերտացն Սահակայ և Մեսրոպայ 31
Յովսէփ Ա. կաթողիկոս Հայոց 31, 36, 37

Յովսէփ Բ. կաթուղիկոս Հայոց 71, 72
Յովսէփ Ա. կաթուղիկ. Աղուանից 91, 186
Յովսէփ Բ. կաթողիկ. Աղուանից
Յովսէփ մարտիրոս 71
Յովսէփ վարդապետ առաջն. Թադէի Վանուց 296, 313, 315
Յովսէփ եպիսկոպոս Անտիոքացի 104, 150
Յովսէփեանք 10
Յովսէփ Նահապետ 332
Յորդանան 117, 122, 144, 337, 339
Յուդայ կախարդ 289, 307
Յուդայ Յակոբեան 181
Յուլիանեանք 65
Յուլիանոս ուրացող 21, 22, 38, 139
Յունան մարգարէ 321
Յունան կաթուղիկ. Աղուանից 187
Յուսիկ կաթուղիկոս 21—23
Յուսկան որդի 183
Յուսուփ եղբայր Ափշինի 75, 77
Յուսուփ կամ Ուսուֆ Սալահատտինեան 371
Յուստիանոս (Յուստինիանոս) Ա. 39, 42, 44, 46, 62, 200, 201
Յուստինիանոս Բ. 40, 46, 62
Յօժար-որդիք 311

Նախջաւան 62, 27, 175, 213, 262
Նայիման աշխարհ 353, 373
Նայնգաս ազգ 362
Նանան սարկաւագ ասորի 73
Նենգրան աշխարհ 378
Նարեկացի Գրիգոր 110
Նարկեսոս 72
Նեոն 306
Նեստոր 50, 124, 125, 133
Նեստորաց ազգ 12, 26, 218, 273
Ներսէհ Կամսարական 61
Ներսէս Լամբրոնացի 102, 103, 150
Ներսէս Ա. կաթուղիկոս Մեծն 12, 23, 24, 26, 218
Ներսէս Բ. կաթուղիկոս 40, 42
Ներսէս Գ. կաթուղիկոս (Շինող) 58, 59, 83
Ներսէս կաթուղիկոս (Շնորհալի) 100, 102, 105, 109, 112, 140, 314
Ներսէս Ա. (Բակուր) կաթուղիկոս Աղուանից 185, 186
Ներսէս Բ. կաթուղիկոս Աղուանից 93

Ներսէս Գ. կաթուղիկոս Աղուանից 190, 263, 274, 295, 334, 376
Ներսէս Շիրակացի 60
Ներսէս վարդապետ առաջն. Կեչառուաց 166
Նիկիա քաղաք 325
Նիկիոյ ժողով 17, 34, 325
Նիկիփոր Ա. կայսր 71
Նիկիփոր Բ. 79
Նիկոմիդիա 184
Նինուէացիք 110, 138, 139
Նոյ Նահապետ 70, 331
Նորբերդ 146, 229
Նուին 242

Շաթախագր 184
Շաթայ քաղաք 184
Շաթառ քաղաք 184
Շալայ տեռ. և Լաշայ 191, 224, 273, 300, 301 373
Շալուէ իշխան Վրաց 212
Շալուէ որդի Սարգսի 154
Շակմոնիս 356, 382
Շահակ կաթուղիկոս 26
Շահի-Արմէն 155
Շահնշահ որդի Զաքարէի 92, 176, 224, 239, 240, 244, 247, 249, 252, 265, 269, 274, 277, 305, 364, 374, 376, 377
Շամ Խալիֆայ 63
Շամ-Հէշմ 63
Շամ[illegible] 184
Շամբին աշխարհ 277
Շամիրամ 224
Շամշոյլտէ 240
Շամքոր քաղաք 146, 155, 184, 190, 228, 229
Շապօրան քաղաք 185
Շապուհ Բ. թագաւոր Պարսից 20—24, 26, 27, 139
Շապուհ Բագրատունի պատմագիր 10, 73
Շաքի քաղաք 194, 187
Շեխ 77
Շէրբարոք 370
Շիրակ գաւառ 59, 79, 164
Շիրակաւան 72
Շիրուան քաղաք 184
Շմուէլ կամ Շանվէլ 35
Շնորհաւէր որդի Սարաւանին 350
Շորաձոր տեռ. Զօրաձոր 204
Շուշմա 126
Շուփհաղիշոյ կաթուղիկոս Աղուանից 183

Ոլորուտ գիւղ կամ Լորուտ 230
Ոզիա 106
Ոնղան 354
Ոնորիոս կայսր 27
Ումառ 63

Ովայից գիւղ 72
Ովկիանոս 142, 360
Ովսէ 326
Որ 353
Որմիզդ արքայ Պարսից 50
Ուխտանէս եպիսկոպոս պատմիչ 10, 46, 184
Ուխտիք 377
Ումեկ վաճառական 349
Ուռելանջ 203
Ուռնայր թագաւոր Աղուանից 182
Ուսուռ-Նուրին 275
Ուրհայ 10, 277, 371
Ուրոսոյդան 354
Ուսուֆ Սալահատին 371

Չաղատա 219, 239, 250, 261, 304, 369, 378
Չանկզղան (Ճինկիզղան)218, 258, 259, 278
Չարաբերդ 345
Չարեք բերդ 168, 172, 229
Չարմաղան-Նուին կամ Չարմաղու և Չարմուղան 220, 242, 244, 251, 260, 263, 269, 299, 380
Չարմա-Նուին տես. Չարմաղան-Նուին 220
Չմանկատուկ 266
Չորրորդ Հայք 19
Չուչու-ղան 237
Պաղակծիակ 83
Պաղեստին 51, 56, 77, 144
Պաղտատ 67, 74, 361—364
Պաղտոյն 99
Պանտ կաթողիկոս Աղուանից 183
Պանտալեոն բժիշկ (ս.) 184
Պապ թագաւոր 23, 26. 27
Պապաք որդի Վասակայ 194, 368
Պապաք որդի Պռօշի 368
Պապշէր 197
Պարթեւք 57
Պարսիկք 10, 20, 22, 24, 28, 34—37, 39—42, 44. 48, 50—52, 56, 97, 99, 139, 145, 154. 155, 158 182, 184, 193, 194, 211, 213, 214, 221, 228, 234, 255, 297, 298, 337, 341, 344, 346, 347, 349, 361, 363, 376
Պարսկաստան կամ Պարսից աշխարհ 51, 79, 145, 155, 221, 337, 344, 347, 361
Պարսումայ ս. Վանք 150
Պարտաւ 183—186, 191
Պետրոս Առաքեալ 15, 16, 89, 108, 110, 143, 149, 3 5, 332, 339
Պետրոս Գետադարձ 83, 84, 85, 87, 88, 100
Պետրոս կաթողիկոս Աղուանից 186
Պէշպալըխ քաղաք 353
Պերպալըխ քաղաք 353
Պերոզ արքայ Պարսից 36, 37, 39
Պերքանթ քաղաք 354
Պլատոն կամ Պղատոն 328
Պղնձահանք 210, 225, 305
Պոնտոս 260
Պորփիւր 31, 32
Պռօշ 194, 364, 368
Պստան 455
Պտղոմէոս 332
Պրոտոստրատոր կամ Պատօստրատոր 112
Պօղոս Առաքեալ 15, 89, 110, 149, 315, 325, 326, 332. 339
Պօղոսի Մեկնութիւն 103
Պօղոսի տեսիլ (գիրք) 50
Պօղոս քահանայ 234, 334

Ջաբու խաքօն կամ Ջեբու խաքան 184
Ջալալ Դօլա 253, 254, 269
Ջալալատին Սուլթան Խորազմեցի 172, 209, 211, 215, 217, 220, 230, 277
Ջալալ—Հասան տես. Հասան—Ջալալ 346, 358
Ջահանգիր 364
Ջամասպ 39
Ջամբր (Ջափր) 73, 74, 297 367
Ջերմուկ 306
Ջեհուն գետ կամ Ճեհուն 355, 359
Ջիասմութ որդի Հուլաւուի 368
Ջողբուղա 251

Ռաբան կամ Ռպան Ասորի 261, 262, 274, 275
Ռաժիկ Գրիգոր 43
Ռէ քաղաք 221
Ռըսակէս վարդապետ Լաստիվերացի 11
Ռոմանոս Ա. կայսր 78
Ռոմանոս Բ 78, 79, 96
Ռուբէն Ա. 101, 147
Ռուբէն Բ. 101
Ռուբինիանք 78
Ռուզուդան թագուհի Վրաց 224, 241, 252, 273, 274, 277, 299, 300
Ռուզուքան դուստր Ջալալի 375
Ռուզք 274
Ռօղաստան 355

Սաբատա Բահատուր 192
Սագաստան աշխարհ 50
Սագեղ-աղա 268

Սադուն Շէրբարքի որդի 370
Սադուն Քրթի որդի 197, 203
Սալահատին 143, 156, 200, 371
Սալահատնեանք 144
Սալչուխիք (Սէլչիւկք) 354
Սալչուկ կամ Սարչուկ 78
Սահակ Ա. Հայրապետ կաթողիկոս (Պարթև) 10, 27 28, 30, 32—36, 52, 105, 312
Սահակ Բ. կաթողիկոս 39
Սահակ Գ. կաթողիկոս 60, 61
Սահակ Բագրատունի 31
Սահակ եպիսկոպոս Կարնոյ 188
Սահակ եպիսկ. Ուշտունեաց 31
Սահակ և Յովսէփ վկայք 71
Սահակ արքեպիսկոպոս Պարտաւայ 183
Սահակ կաթողիկոս Աղուանից 187
Սահառունի տես. Դաւիթ Սահառունի
Սաղպուղա կամ Աղբուղայ 155
Սահմանախաչ 186
Սամարա քաղաք 73
Սամարղանդ 354
Սամուէլ մարգարէ 332
Սամուէլ կաթողիկոս 38, 39
Սամուէլ քահանայ Անեցի 11, 78
Սամուէլ վկայ 68
Սամուէլ կաթողիկոս Աղուանից 187
Սանահին վանք 79, 84, 91, 92, 99, 104, 162, 175, 295
Սանատրուկ Արշակունի 20
Սասուն երկիր 370
Սասունք 73, 370
Սաստրաստէս 182
Սարավան 350
Սարասխ 355
Սարգիս Ա. կաթողիկոս 82, 83
Սարգիս եպիսկ. Անւոյ 162
Սարգիս եպիսկոպոս Երզնկայի 380
Սարգիս եպիսկ. Կարնոյ 277, 395, 334
Սարգիս եպիսկ. Հաղբատայ 91
Սարգիս Միայնակեաց 162
Սարգիս վարդապետ 103
Սարգիս ոմն 137, 138
Սարգիս Սուրբ 139, 238
Սարգիս ս. (եկեղեցի) 83
Սարգիս ս. (Խաչ) 238

Սարգիս ս. (Վկայարան) 58
Սարգիս աղանդաւոր 53
Սարգիս Բխիրա 55
Սարգիս Վեստ 83
Սարգիս Զաքարեան 145, 154
Սարգիս Իւանեան տես. Աւագ. 176
Սարգիս Աւագ տես. Աւագ Սարգիս
Սարգիս Մամիկոնեան 259
Սարգիս Շալուէի հայր 154
Սարգիս Շահնշահի որդի 377
Սարգիս իշխան Ուխտեաց 377
Սարգիս իշխան 192
Սարտախ, Սարթախ, Սարտաք 342—344, 353, 354, 357—360
Սարիփով 355
Սարկաւագ (քոր եպիսկ. Աղուանից) 168
Սարկաւագ վարդապետ 78, 103, 197
Սեաւ Լեառն 196
Սեբիոս գիրք 50
Սեբաստիա 87, 88, 100, 141, 150, 268, 360
Սեբերիանոս Եմեսու եպիսկոպոս 316
Սեբիոս եպիսկոպոս պատմիչ 10
Սեթ Նահապետ 331
Սելևկիա 101, 178
Սեղբեստրոս 9, 15, 17 109
Սևան 62, 77, 81, 162
Սևաստ տես. Սեբաստիա
Սիմ լեառն 67
Սիմէոն Ա. կաթողիկոս Աղուանից 186
Սիմէոն Բ. կաթողիկոս Աղուանից 187
Սիմէոն Ասորի 261
Սիմէոն Սիւնական 38
Սիմոն կախարդ 289
Սին անապատ 55
Սինա անապատ 340
Սիոն կաթողիկոս 67
Սիոն (վերին) 286
Սիս 101, 160, 177, 314, 350, 360
Սիրաման 380
Սիրատան 177
Սիւնեաց բերդ 80
Սիւնիք 69, 70, 79, 80, 81, 154 316
Սկեւռայ վանք 103, 356
Սկիւթացիք 77, 85, 99, 100
Սմբատ Բագմաղայթ Բագրատունի մարզպան 50, 72
Սմբատ Բիւրատեան փոքր 61, 62
Սմբատ Ա. Թագաւոր Բագ-

րատունեաց 75, 77—79
Սմբատ Բ. Շահնշահ—82, 83
Սմբատ Գ. տես. Յովհաննէս
Սմբատ Սպարապետ 68, 72—74
Սմբատ եղբայր Հեթմոյ Ա. 179, 263, 301, 302, 350
Սմբատ հայր Արասայ 79
Սմբատ Մագիստրոս 83, 85
Սնչախ 354
Սոկրատես Պատմագիր 9, 315
Սողոմոն իմաստուն 30, 103, 140, 332
Սողոմոն կաթուղիկոս 70
Սողոմոն Ա. կաթուղիկոս Աղուանից 186
Սողոմոն Բ. կաթ. Աղ. 186
Սողոմոն հայր Մաքենոցաց 186
Սոնէթ տես. Սուանէթ
Սոթենէս 231
Սուանէթ 274, 299, 301, 373
Սուլէման Ամիրապետ 62, 63
Սուղուլ-ղան քաղաք 354
Սուհէն (Ճիհր-Վշնասպ) 52
Սուտ-գօլ (Սիւտ-կէօլ) 354
Սուրացւոց աշխարհ (Ասորեստան) 101
Սուրբ-Մարի քաղաք 247
Սուրհան 60
Սուրմակ 35
Սոփար 76, 77
Սպահան քաղաք 170, 221
Սպանիա 347
Սպրամ 185
Ստեփանէ եղբայր Թորոսի 101, 147
Ստեփանոս Ա. կաթուղիկոս 70
Ստեփանոս Բ. կաթուղիկոս 79
Ստեփանոս Գ. 81
Ստեփանոս Ա. Աղուանից կաթուղիկոս 168, 180, 171
Ստեփանոս Բ. Աղուան. կաթ. 189, 197
Ստեփանոս Գ. Աղուան. կաթ. 188, 189
Ստեփանոս Դ. Աղուան. կաթ. 376
Ստեփանոս Ասողիկ 11
Ստեփանոս որդի Ումէկի 349
Ստեփանոս Մեծն Սիւնեաց եպիսկոպոս 32, 68, 69, 70, 316
Ստեփանոս եպիսկոպոս Սիւնեաց 31
Ստեփանոս եպիսկոպոս Նուիրակ 352

Ստեփանոս դրան երէց 68
Ստեփանոս Ջամգամայ 105, 106
Ստեփանոս Կոն իշխան 74
Ստեփանոս որդի Յուսկան 172
Սօսլան 376
Սօրան (Սիհուն գետ) 354
Սօրի 354
Վախտանգ իշխան Հաթերքոյ 197, 203
Վախտանգ Տանկիկ 254
Վահան Գողթնացի 63
Վահան (Վահանիկ) կաթուղիկոս 81
Վահան Մամիկոնեան 39, 42
Վահրամ իշխան հայր Աղ-պուղայի 82, 145, 146, 155, 265, 269, 273, 274
Վահրամ որդի Զաքարէայի 154, 224
Վահրամ (Գրիգոր Վկայասէր) 89
Վահրամ թոռն Վահրամայ տեառն Շամքորոյ 155, 228, 229, 232, 249
Վաղարշ եղբայր Պերոզի 39
Վաղարշակ 27, 182
Վաղէս կայսր 24, 25
Վայոց Ձոր 70, 154
Վանական եպիսկոպոս Բջնոյ 295
Վանական Յովհաննէս վարդապետ Տաւուշեցի 5, 11, 167, 195, 206, 230, 295, 311, 315, 3[illegible]4, 331
Վախշէ գիւղ 210
Վաչագան 182, 183
Վաչէ Ա. Թագաւոր Աղուան 182
Վաչէ Բ. 182
Վաչէ որդի Բրդի 351
Վասակ Բագրատունի 146
Վասակ Խաչենեցի 194
Վասակ միւս 203
Վասակ հայր Պռօշայ 368
Վասակ մարտիրոս 89
Վասակ Սիւնի ուրացեալ 36
Վասիլ Ա. կայսր 18, 78, 83, 96
Վասիլ Բ. 75
Վասպուրական 62, 81, 93, 172, 276
Վատնեան դաշտ (Վատնիանեան կամ Վատնայ դաշտ) 21, 183
Վարազդատ Արշակունի 26, 27
Վարդ եղբայր Վահանայ 42
Վարդան վարդապետ Բարձրբերդացի, պատմիչ 5, 162, 279, 284, 294, 295, 311, 315, 335

Վարդան Մամիկոնեան Մեծն 10, 33, 34, 36
Վարդանանք 31, 110, 158, 182
Վարդանակերտ աւան 62
Վարդենիս գիւղ 351, 355
Վաղեն 182
Վարոս ճգնաւոր եղբ. Թաթլոյ 38
Վեհմիհրշապուհ 35
Վեստ Սարգիս տես. Սարգիս Վեստ
Վիրոյ կաթուղիկոս Աղուանից 52, 184
Վիրք և Վրաստան 11, 17, 32, 44, 45, 46, 81, 92, 105, 145, 154, 156—158, 167, 169, 172, 176, 182—186, 189—193, 197—201, 203, 208, 210—212, 224, 225, 241, 248, 251, 252, 273, 374, 277, 296, 297, 299, 300, 301, 303, 305, 345, 348, 350, 359, 373, 374, 377
Վլիթ 62, 63
Վղոն 52
Վշնասպ 52
Վռամ Բ. 34, 36
Վռամշապուհ 28, 29, 33
Վրախճա (Վահրիճ) 29
Վրթանէս եպիսկոպոս Բըջնոյ 162, 171
Վրթանէս կաթուղիկոս 19—21, 183
Վրթանէս վարդապետ 48
Վրթանէս քերթող 45
Վրկան աշխարհ 50
Տաճիկք 52, 58, 60, 61, 67, 77, 100, 148, 154, 164, 173, 175, 180, 185, 190, 192, 194, 197, 202, 211, 213, 216, 248, 261, 264, 266, 276, 297, 337—339, 341, 345, 358, 361, 363, 364, 368
Տաճկաստան 52, 99
Տամղայն 355
Տանձուտ գիւղ 199
Տանձուտայ Ձոր 199
Տանդրիլ 99, 102
Տաշիր (Արտաշիր) 154
Տարսոն 19, 101, 150
Տարօն 22, 47, 57, 73, 75, 157
Տաւուշ բերդ 145, 146, 155, 206, 229, 230
Տզրկածոլ 204
Տէրունական բերդ 146, 155, 229
Տիադեկ մանկութեան Տեառըն (գիրք) 50
Տիբեր կայսր 46, 47, 49

Տիգրիս գետ 74, 363, 366, 367
Տիմոթէոս երէց 38
Տիրան Բ. թագաւոր 21, 22
Տիրացու եպիսկոպոս 172
Տիւրիկէ քաղաք 268
Տղայ տես. Գրիգոր Տղայ
Տոյինք (քուրմք) 357, 381
Տուեցի 146
Տութուն-Նուին 261
Տութար Թաթար 378
Տուղլու-պէկ 78
Տուս 355
Տուղհար Ղուլի 359, 361
Տուրքիկ 162
Տրապիզոն քաղաք 88
Տրապոլիս քաղաք 144
Տրդատ թագաւոր 5, 9, 10, 15, 16, 19, 20, 105, 109, 158, 182, 183, 301, 335
Տրդատայ թաղթ կամ Սարաւոյթ 335
Տրդատ Ա. կաթուղիկոս (յՕթմսոյ) 67
Տրդատ Բ. կաթուղիկոս (միւս) 67
Տփխիս քաղաք 51, 190, 213, 240, 273, 274, 301, 303, 349, 373
Տօղուզ-խաթուն 366, 381, 382
Տօնղուզ աղա 252
Տօրոս լեառն 354
Յուրտաւ կամ Յրտաւ 45
Փախչուրի (հարկ) 359
Փառանձեմ 24
Փառխասայ վանք 187
Փառներսեհ 22
Փարաւոն 380
Փարչին 354
Փարպեցի տես. Ղազար Փարպեցի
Փաւստոս Բիւզանդ 10
Փենէհէզ (քահանայապետ) 332
Փենէհէս կամ Փենէս հրէայ իմաստասէր 43, 201
Փիլարտոս 78
Փիլիկոս Վարդան 62
Փիլիտոս (Փիլոթէոս) 158
Փիլիպպոս 178
Փիլոնիոս 325
Փոկաս կայսր 50
Փոստ եպիսկոպոս 24
Փոտ պատրիարք Կ. Պօլսոյ 75
Փուլատ 354
Քաղիւն գաւառ 68
Քաղկեդոն 37—39, 44—46, 48, 53, 65, 79, 81, 83, 157, 185
Քամոց 354
Քայիքանթ 354
Քարաշթաւ վանք 103

Քարներձ 155
Քէլմ—215 տես. և Մէլիք Քէլմ.
Քիթբուղա 373
Քիրման 347, 355
Քոբայր 162, 377
Քողին 68
Քուլուկ 354
Քուրդ Իշխան 197, 198, 203, 351, 355
Քուրդոյ Իշխան 69
Քուրդք 143, 154, 361, 363
Քրիստափոր կաթուղիկոս 39, 53
Քրիստոս 8, 10, 11, 13, 16, 17, 28, 32, 36, 37, 42, 43, 45, 51, 54, 57, 60, 63, 65, 66, 73—76, 83, 106, 109, 115, 119, 121, 125—127, 131—134, 136, 140, 143, 152, 155, 165, 174, 180, 184, 194—196, 200, 201, 205, 216, 221, 231, 235, 236, 261, 279, 281, 282, 285—287, 293, 294, 296, 311, 315, 316, 320, 322—325, 331, 336, 337, 339, 342, 344, 352, 356, 375, 376, 382

Օթման 56, 58, 61
Օթլմուսգիւղ 67
Օթրար քաղաք 354
Օձնեցի տես. Յովհան Օձնեցի 63, 294
Օձուն գիւղ 63, 66, 377
Օշական 47
Օշաւա տես. Աշաւա 204
Օշին որդի Հեթմոյ Լամբրոնացւոյ
Օմառ 63
Օմար (տես. Մար) 61
Օսէթք 274
Օրէնդ 333
Օրդան 214

Ֆրանգք կամ Փռանկք 90, 99, 108, 129, 140, 144, 148, 150, 151, 178, 215, 294

БИБЛИОТЕКА

ՀՈՒՇԱՄԵԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

Ա. Եղիշէի պատմութիւն Վարդանանց . 20

Բ. Ղազարայ Փարպեցւոյ պատմութիւն Հայոց և թուղթ առ Վահան Մամիկոնեան 30

Գ. Կիրակոսի վարդապետի Գանձակեցւոյ պատմութիւն Հայոց 30

ՍՏՈՒԳՎԱԾ Է 1971 Թ.

ՍՏՈՒ[illegible] Է 1971 Թ.